225

60 - 10/XII 76
DIS 3 - 19/XII 38

2000

[illegible] N 801

№ 453

N 2922

453
1408-122

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՑ
ԵՒ ԳՈՐԾՈՑ ՆԱԴԸՐ ՇԱՀ
ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Հանեալ 'ի գրոյն պատմութեան ազգին պարսից Արտաքելոյ յաւմեծն անգլիացւոյ մստր Հանուէ կոչեցելոյ :

Եւ Թարգմանեալ յանգլիացւոց բարբառոյ 'ի Հայ բարբառ' 'ի Միրզայեան Պօղոսէ Ամիթեցւոյ մի 'ի յանպիտան աշակերտացն 'ի վսմ Հանգուցեալ Եղիա Ածիմաստ և Հեզահոգի Վարդապետին որ էր մի 'ի յընտիր միաբանից Վանացն Ամենափրկչի 'ի Ջուղայ, 'զբօսանս ազգիս Հայոց, և 'ի յօգուտ հետախոյզ եղբարց որք 'ի խնդիր են նորանոր պատմութեանց, և նորալուր իրաց

'ի Հայրապետութեան Տեառն Սիմէոնի ամենայն Հայոց կաթողիկոսի։

Յամի մարդեղութեան բանին. 1780
Եւ 'ի թուին Հայոց. 1229

'Ի Հնդիկս 'ի քաղաքն Մադրաս
'Ի Տպարանի Յակոբայ Շահամիրեան կոչեցելոյ

8539-5Կ

9(55)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍԽ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պատմութիւն Ծննդեան և վարուց Նատըր Ղուլեայն ՚ի 1687: Թուոյն մինչև ՚ի 1727: յորում գիշխանութիւն Մաշատոյ Որարձոյ ՚ի Շահ Թահմազն

Անուն Պարսիկ Յափշտակողին. Ծնունդ. Գերութիւն Ալապակութիւն, և Յարուցմունքն ՚ի Բէկն որ գինի տպան. և Ամուսնանալն նորա ընդ Դստերն պանեայ Բէկին, Բնակութիւն նորին ՚ի Լերինս. և Հրաւիրումն ՚ի Ծառայութիւն Խորասանոյ Խանին. և կարգումն ՚ի վերայ զօրաց ընդդէմ Մաշտոյն որ ՚ի Օզբէկս և ընդունիլ նորին զՇնորհս Մեծամեծս. և զկին ի Նախատելն

Յամի Տն 1727

Ընդ Հանրական Թշուառութիւն որ Հաստատեալ կարգէ զժամանակս և. անձն զվայրենի փառամոլութիւն խիզախնաց այժմ պատրաստեաց զանօթ վրէժխնդրութեան իւրոյ առ ՚ի պատժել զԱղուանս որոց անօրէնութիւնք լցեալ էին զերկիրն պարսից արեամբ. Արդ առ սակս մերձեցաւ փոխման մեծութեան փառաց նոցա, և Հասժամայրում ազգն պարսից հանդերձեալ էր ընդունել լուծ զհաւասարումն ՚ի վրէժ ապականութեան զորս յափշտակել չէին այնուքիկ գործեցին ՚ի մահուանէն Գորգին խանին մինչև ՚ի մի լինել նոյն երկրին պարսից. նա և ՚ի վրէժխնդրութիւն սարսափելի նեղութեան և չարչարանաց առ Հասարակ գործածին ՚ի վերայ երկրին պարսից յայնմ ժամանակի:

Մահ Գորգին խանին պատահեցաւ յամին 1709: Մահմուդ Աղուանից ՚ի Պարսկաստան եղև ՚ի 1722: և Նատըրն Յայտնեցաւ յամին 1727:

Ողջոյն ժամանակաւ յայտնեցաւ Նատըրն քաջաքանչելեօք, որոյ փառք և գործոյն պատմութիւնք միշտ սքանչելի թուեսցի. քանզի է Տշմարիտ եթէ յերկ զպաշտօնս Տանս Տատաս որպէս կամ որոց քանս գովեալ այլ՝ Համբաւ սորա բորբոքէ զփափագս և ՚ի զգօշութիւն հրաւիրէ զապագայսն՝ այնքան մինչ զի իբրև զփառս մեծագունից և զպատմութիւնս զերագոյն գործոց ԵՆթակայ Թեայ պատմաբանական քննութեան՝ Ահա աստանօր տեսանեմք զայր մի՝ որոյ ծնունդ և սկիզբն է այնքան խոնարհ մինչ զի դժուարաւ կարէ յայտնել Սա ընտանի Ջողերոյ դէպ առ որ ժամանակին (զորս աւելի է վն անձին) խորհէր ժամանել ՚ի փախճանն իւր քաջախոհ ձեռամբ և Հաստատութեամբ ձևակերպէր զշինուածս ապագայ բախտին իւրոյ՝ Հաստատութեամբ և Նախախնամութեամբ և ՚ի կատար Հասուցանէր զդիտաւորութիւն իւր՝ անփառակ քաջութեամբ, նման հզօր բանակայաց որք յառաջ քան զինքն էին, առ եղև սարսափելի ՚ի Յասիա կանխերկբայելի ամ Անեալ:

Այս մեծ քաջամարտս փոխեաց զանունն իւր զոր օրինակ փոխեաց զկացութիւն բախտին իւրոյ որ սպառմառեաց զերկրայութիւն, զի խաչքէս անուն իւրէր Նատըր Ղուլի, Նատըր ասելն Թուրքերէնկամ պատկերէն քանչելին շանակէ. Մակադրութիւնս այս մահմետականք յաւէտ ՚ի կիր արկանեն և յատու-

կա

կապեաւ առ ամծութի վերաբերի. զոր օրինակ Նատըր Ալլահ. Դատըր Ալլահ' որ 'ի մեզ ամենակարող Թարգմանի Թէպէտ պարսիկք զ մակամունս այս զնեն 'ի վ՞ր շինականաց ևնուաստից. սակայն յորժամ Շահ Թամազն շնորհէ այն նմա զիշխանութի (ով առաջիկայ մեզ ասել յապագայ պատմութեն) պատուեաց զնա դնելով զանուն ի վ՞ր նորա. անունս այս նշանակէ մեծի աստիճանի զոր Թագաւորք պարսից շնորհեն. ուստի այնու կոչեցաւ Թահմազ ղուլի խան. այսինքն. խան որ ծառայ Թահմազին - Թէպէտ ղուլն ծառայ Թարգմանի, սակայն յայտնիկ տեղւոջ մեծ պատուոյ նշանէ 'ի յարևելս Եւ զկնի յորժամ՝ Թագաւորեաց 'ի վ՞ր պարսից կոչեցաւ զինքն Նատըր Շահ. ով զի միշտ պարտիցէ զխաբէլզնա իբրև դլախշտակիչ, իսկ անունն որով յաւետ ճանաչէին զնա (և կարելի է թէ միշտ այնու-

անուամբ ծանիցի ապայգ աիցն 'ի յեւրոպիայ է) Թահմազ ղուլի խան:

Եւ Թէպէտ Երևի զի հեղինակքն համեցան ընդ բնական անուն, և զանազան պամութիս գրեն յաղագս ծննդեան. տոհմի ևնախնին կացից նորին. բայց ինքն երբեմն պարծէր վ՞ն նուաստութե իւրոյ ցեղին և երբեմն խորամանկութի և մնասպարծութի հարկէր զնա ասել թէ՝ եմ 'ի տոհմէն ճինճիզխան մեծ մյաղթ Թուրքմանին և Թամուրլանկին, իսկ ես տակաւին ոչ գտի զայնպիսի պատմութիւն ինչ որ իցէ այնքան բաւական և հաստատ քան զայս զոր ես ընկալայ 'ի պարսկաստան. ընդ որում յոյժ համեցայ քանզի սակաւ գտանին անդ պատմութի ք իբրաց զորօրինակ պատմեցէն. սակայն այսու հանգամ-

անօք որովք ես պատմել կամիմ միօրինակ համոյ եղև մեծամեծ գիտնոց և ջանասիրաց:

Եւ ըստ պատմութեցս այսոցիկ Նատըրն էր ծնեալ 'ի թուին 1687: 'ի գեղջ միում և կարի հասանականէ Թէ՝ 'ի վերանի. սակաւ առաւել հեռի 'ի Մաշատոյ 'ի հարաւոյ և յարևելից կողմանէ ևոչ հեռի 'ի Քալաթոյ. և էր 'ի տոհմէ Աֆշարից որք են 'ի ցեղէ օզբէկից. և հնազանդ կամ աւրուկ պարսից ազգին Եւ ըստ մեծի մասին էն հօվապործք մշակք, և լնուն զազգն պարսից ձիովք և խաշամբ, և անունն հօր նորա էր իմամղուլի. և կեանք իմամղուլուն էին այսպիսի, զ հաց իւր աստանայր՝ գործելով զարտախուրակ Թաղէա (այսինքն Թաղէ քուլահ և քաթանակ) որ է ազեաս նուաստիցն 'ի պարսկս. և ինքն Նատըր չէր հրաժանգեալ յայլ ինչ գործ, բայց յաւղտապանութ. և էր երեքս ամաց. յորժամ մեռաւ հայր նորա իմամղուլի որև այնպես ողորմելի եթող զնա յաշխարհի, մինչ զի պարտաւորեցաւ գիտիս ծառայ ժողովել. և բառնալ 'ի վ՞ր ուղտոյ միոյ և իշոյ (որք միայնքին սոտացուած ք մնացեալք նմա 'ի հօրէ) և տանիլ զայն 'ի շուկայն 'ի վաճառել առ՝ 'ի պարէնս (կամ ապրուստ) իւր և մօրն:

Ոայլ և գրեալ է վ՞ն նորա թէ 'ի դառնալն իւր փառօք 'ի յաղթութեն աշխարհին հնդկաց. դէպ եղև նմա անցանել ընդ տեղեաւ ծննդեան իւրոյ. ուր խոսիլ սկսաւ ընդ մեծամեծս և ընդ նախարարս իւր ցև պատմէր նոցա թէ զիարդ կամ որով օրինակաւ անցուցի զկեանս աստ 'ի տխուր աղքատութե իմոյ, և յաստ կալէս պատմէր նոցա թէ աստ արածէի զուղտ հօր իմոյ, և աստ արածէի զ բաժս իւր այսպէս: Ահա տեսանէք, զի յորքան վերագոյն աստիճան համեցաւ տրն բարձրացուցանել զիս. յորինակ յառաջանէ

պարտիք ուսանիլ միարհամարհել զոք 'ի նուաստից:

Արդ առ 'ի հաստատութի սյսր՝ զարժանի ինձ. սքանչանայ ընթերցաք 'ի պատմութէց. թէ զկնի բարձրանալոյ նորին յաթոռ պարսից Թագաւորութե, Այր մի Սայիդար անուանր երբեմն. ընկերակից լեալ երնմա. և 'ի միասին ժողովէին ըզ խռիւս, Սա ընկալաւ զ խանութի. և 'ի ծախակողմն գլխոյն զ փետուր կրէր. որ է նշան մեծագոյն պատւոյ 'ի պարսիկս զի Թագաւորք պարսից զ փետուրին զայն 'ի յաջ կողմն կրեն. Այրս այս մեռանի 'ի դղլար 'ի դեսպանութի յղեալ 'ի ռուսս, յորժամ Նատըրն պարգևէր նմա զայն շնորհս, ասաց նմա թէ մի հպարտ լիցիս այլ 'յիշեա զէշն և զ ժողովէլ զ խռիւս Այլև 'ի թուին 1745: քէլէքբէկ անուն հարուստ մի պատմէր թէ Նատըր ղուլին յիսուն լիտր ցորեան փոխառէլեր յինքենէ, որոյ հատուցման վ՞ն բազմիցս Թախանձեալէր զնա և զեղբայր նոա (որզկնի իբրահիմխան եղև) մինչև վճարեալէին զերեսուն լիտրն : Եւ չինչ է առաւել զարմանալի. զի յորժամ նստաւ նայաթոռ պարսից Թագաւորութե. յիշէր զայն 'ի հրա-

պար

պարսկի, և ներխուժէր զքէլէքբէկն վն անգութ թախանձանաց նորա, բայց ոչ վճարեաց զխնա-

ցորդ պարտուցս աղքատութե. և ոչ գայլ ինչ յիշեաց վասն առնս

Ի թւին 1704: մինչ դեռ Նատըրնէր ամաց իբրև գօմնու տասնից կամ ութուտասնից, յարեան օզբէկքն 'ի վր խորասանու, և աւար հարին զերկիրն. գերգեալ 'ի բնակչացն կուսակալին, և զայլսն 'ի գերութի վարեցին. ընդ որս և Նատըրն և մայր նորին գերեցան և, մայր նորա մեռաւ յայնմիկ գերութե, իսկ 'ի թւին 1708 ինքն զերծաւ 'ի գերութենէն դարձաւ անդրէն 'ի խորասան, և յայնմ հետէ լուր ինչ ոչ լուաք զնմանէ մինչև 'ի ժամանակ յափշտակելոյ նորա զջոկմի ոչխարս աւարառ ընկերօքն իւրովք. և գնովք ոչխարացս կարողացաւ նա խոյսատալ 'ի լերինս. բայց ընդ երկայն ոչ ինչ այր 'ի գործ աւազակութե, այլ 'ի թւին 1712. յարեցաւ 'ի բէկ մի, և եղև նմա հրեշտակ կամ պատգամաւոր այսինքն չափաւ եդեալ լինէր երբեմն յղել զնա 'ի դուռն թագաւորին 'ի սպահան յաղագս մեծամեծ իրաց յարկաւորաց. և զայլ չափաւ ընդ նմա յղէին ըստ պարսից սովորութ ըստ առնէն 'ի հարկաւոր ժամանակի, իսկ Նատըրն սպանանէ զմիւս չափաւն 'ի ճանապարհի. բայց թէ որդեօք վն փառամոլութե իւրոյ, եթէ զի ինքն միայն տարցէ զլուրն կամ. թէ միւս չափաւն ոչ կարէր հաւասար ինքեան արշաւել. կամ թէ զայլ ծածուկ պատճառ ինչ ունէր վն նորա, և իբրև եհաս 'ի սպահան այնչափ բազկարգի և ճարտարութեք խօսէր, մինչև ընդունելի լինիլ նախարարացն Շահսուլթան հուսէնին. որոց նա և այնքան զիրս աւագի պատճառս ցուցանէր յաղագս անցիցն 'ի ճանապարհի, մինչ զի ոչ միայն փրկեցաւ, այլ և պարգևս ընկալեալ 'ի նմանէ առաքեցաւ յետս հանդերձ պատասխանեաւն թղթոյն զոր բերեալ էր, և եւ իբրև առ բէկն հասանէր ոչ զուարթադէմ ընդունէր զնա բէկն յորմէ ազդ իմն լինէր Նատըրն թէ բէկն կորուսանել խորհէր զնա, վասն որոյ և 'ի սպանանել զտէրն իւր խելոյն 'ի մտի դնէր, ոչ վն այսորիկ միայն յայսպիսի խորհուրդ սուզանէր, այլ մանաւանդ յաղագս նախանձուն զոր ունէր ընդ բէկին. վն դստերն զոր 'ի կնութե խնդրեալ էր և խանն

հրաժարէր տալ:

Որդ զկնի կատարման գործոյս սպանութե էառ զտիկինն. այսինքն զդուստրն խանին և խոյս ետ 'ի լերինս, և արդ իւն գործոյ լինէր ծնունդ ըռըզայղուլի միրզային՝ որոյ ճոխութի վ. այն՝ և վայրք՝ բազմի հանդիպանայր հօրն, էր յուսահատական գործովս այսուիկ զհամբաւ մեծ և զարիութիս առանայր, ուստի բազումք 'ի ծառայից տեառն իւրոյ սպանեալ բէկին՝ եկեալ միաբանեցան ընդ նմա. և եղեն աւազակք. և ժամանակ ինչ յայս գործ յապաղէին. և զյափշտակութիս 'իդեալ ժամանակի գործէին, և 'ի վաղճանի մատուցանէր զինքն նատըրն 'ի ծառայութի բաբալուխա-

նին բէկլարբէկւոյն խորասանոյ. և լինէր նմա էշիկաղասի:

1714: Էւ արդ զարմանք մեծ այսուն թէ 'զիարդ աւազակագետն յաջոնի և համարձակ՝ ընդունելի լինէր մաւլ 'ի մէջ ընտանեաց Պատաուորի մոյ և իշխանի, և ընդունէր զայսպիսի պատւոյ պաշտոն, բայց այսոոչէ այնքան զարմանալի. եթէ մտածեսցուք զընդարձակութիս երկրին, զի՝ աւազակութի նատըրին էր մանաւանդ 'ի կողմն մազանտարանու, որ երեք. կամ չորս հարւր մղոնաւ հեռի է 'ի մաշատոյ, և զայս և ս ասեմ. զի այր քաջակորով և արի միշտ շնորհաց հանդիպի 'ի պարսկաստան. և զվարս նորին ոչ յոյժ քննէին: և բաց յասյանէ ապստամբութի միրվէիսին խռովեալէր զդաւառս արևելից. և այնու օզբէկքն զօրացեալէին ասպատակել զճանապարհս, վնորոյ արք անձամբ յաղթահասակք. և քաջագործք (կամ կորովիք) մտաղ իւր ընդունելի լինէին, ուստի պարտ-

իմք համիլ ընդ գործ խորասանոյ խանին. որ զնատըրն յէշիկաղասութի ընկալաւ:

Բոլոր ազգն պարսից 'ի հարկաւոր ժամանակի զինուորք համարին. և գրեթէ՝ էն այնպէս, և համբաւորութե և անձին զօրեղութե նատըրին առաւել գովաբանելիէր քան զգիտութի և քան զմհնարիցկատարելութի, բայց ինքն առանց յարքունիս հրահանգելոյ 'ի ձեռն բնական զօրութե արագամտութե և հանճարոյ՝ հմուտէր ամ հնարախօսութեց և քաղ վարս ցուցանելոյ յանձին. և ունէր զմիտս անխափան յամբարայական մտածմանց, զտանէր շնորհս առաւօքի այնոսիկ զորս զկնի սպան-

անել

անկելոյ երկմտեաց, եւ անքան բարեկարգութեամբ վարէր յայսմիկ նորա պաշտօնի մինչ զի զ սիրտ մեծ իւ-
րոյ յինքն յանկուցանէր եւ զ փափաք փառաց իւրոյ թագուցանէր ընդ նենգաւոր եպատմառանօք
ցանկութեան հաճելոյ զ միտս նոցա, (իբրու թէ այլում իրիք ոչ ցանկայր, ոչ հաճել զ ժողովուրդն) եւ զ-
բաւականութիւն զոր եցոյց 'ի ներկայ պաշտօնի իւրում, պատուարժանս կընկեր իւր հաւատալ թէ՝
հաւատարիմ էր 'ի գործն՝ յորս ձեռնամուխ լինէր. եւ թէ առաքինութիւն էր միայն զոր նա որոնէր,
ուստի ոմանց զ հեզութիւն ցուցանելով՝ զայլս 'ի նախանձ իւր շարժէր. բաստառ-էութեան կամա-

կութեան անձանց, գժտարկելոյն 'ի յօգուտ իւր:

1717: Ցասուցանք եւ թշնամութիւնք որ ընդ որ յաճախէին 'ի պարս. եւ Նատիրն աչյետ բազում
ժամանակի յարելոյ 'ի ծառայութիւն Բաբուլու խանին՝ փութով զ հրաման ընկալաւ իշխել զօրաց,
յորում պաշտօնի յաջողութեամբ ծծաւ վարէր 'ի պէսպէս պատերազմունս ընդ օզբէկս խէյվայու եւ բու-
խարու, որք յաճախ ասպատակ տային 'ի շրջակայս գաւառս խորասանու, եւ զպատալոյ խանն էր
տէր եւ իշխան Հերաթու, եւ զգոն մարդորք 'ի յարձակելումէին՝ առեալ աւար առնէին զ կողմանս
իրաղայ, 1719: Ի նյասմ ամի եկին օզբէկքն թուով՝ աւելի քան զ տասն հազար, եւ սկսան
ասպատակել զ բազմաւառ դաշտս խորասանու, զ բնակիչսն յափշտակէին. եւ զ բազում հազարս
գերեվարէին, մէ 'ի յանկարծահաս դիպուածս յայսմիկ Բաբուլու խանն հանդերձ առնէր զօրաց
իւրոց. որք էղեն ոչ աւելի քան զ վեց հազար՝ հեծեալք եւ հետեւակք, եւ զօրապետք խանին
ջան դնէին փորձել զ բախտ իւրեանց. (այսինքն զ փորձառնել յաջողութիւն) այսպիսի անհաւա-
տար զօրօք, եւ 'ի մարտ կռուել նոքօք ընդդէմ այնպիսի ազգի. եւ քաջ ազգանց, եւ փորձառութեամբ
քաջութեան զօրացն խանին յառաջ մատուցանէր զինքն՝ ընդ առաջ կռուել ընդդէմ ասպատակա-
չացն այնոցիկ, եւ ասէր թէ եղիցի զանձ իմ առ 'կատար հասուցանել զայս գործ. Արդ թէպէտ
Նատըրն ոչ էր աւելի քան զամաց երեսուն եւ երից, սակայն զինուորական հնարագիտութիւն նորա
յայտնապէս առաւելեալ երեւէր քան զայլ զօրապետացն խանին, եւ խանն եւս իրազեկ էր զօրու-
թեանն Նատըրին, եւ արդէն իսկ հազարապետ արարեալ էր զնա, եւ զ կասկած ինչ ոչ կրէր վն
նորին հաւատարմութեան, ուստի առժամայն հաճեցաւ ընդ խնդրուածս նորա. եւ շնորհեաց նմա
զ հրաման զօրաց իւրոց: Արդ մինչդեռ պատրաստութիւն պատերազմին լինէր, եւ մինչդեռ Նա-
տըրն 'ի քաղաքին էր. առ 'ի բարեկարգութիւն պահել զամենեսեան. եւ արգելուլ զբնակիչսն 'ի հրա-
պուրանաց եւ 'ի հետեւելոյ օրինակին բնակչացն Հերաթու, որք երբեմն ամօք յառաջ վտարան-
ջեալ էին, բազումք 'ի զօրագլխացն խանին հրաժարեցան 'ի կեալ եւ 'ի գործել ընդ ձեռամբ նոր
ասպարապետին բայց խոհեմն փոխանակ նոցա կացուցանէ այլ զօրապետս զորս Նատըրն ընտրէր
Եւ Օզբէկքն արդէն հասեալ էին առ եզերս թեճան գետոյն որ էր [illegible] հեռի 'ի
Մաշատայ, իսկ Նատըրն մեծագոյն ջանիւք. եւ մտադրութեամբ պատրաստեալ զամ ինչ որք հար-
կաւոր էին յաղագս մարտին, եւ եկեալ զօրովք իւրովք 'ի խնդիր թշնամւոյն՝ որք աւար հարկանէ-
ին զերկիրն առ հասարակ: Եւ յուր հասանելոյ զօրացն պարսից պատրաստէր զնոսա 'ի միգա-
մարիլ, եւ պատրաստել 'ի պատերազմ, եւ զօրք նոցին կրկնապատիկ էին քան զ Նատըրին, Արդ
մեք զ մանաւոր ինչ ոչ ընթերցաք յաղագս պատերազմին, իսկ որ ինչ հաստատօրէն պատմի էր
այսպէս, թէ Օզբէկքն ըստ հասարակ սովորութեանց իւրեանց սաստիկ ցասմամբ 'ի վերայ պարսիցն
յարձակէին, իսկ Նատըրն յառաջագոյն ընտրեալ էր ինքեան զ լաւագոյն տեղին, եւ քաջալերէր
զզօրս իւր զ դիմաւորել թշնամեացն. եւ ընդդէմ կալ հարուածոյն. եւ այնպէս ընդդէմ կային մինչ
զի 'ի յուժգին յարձակմանէն 'ի շփոթութիւն ինչ անկանէին Օզբէկքն եւ յայնժամ զօրքն պարսից առ-
հասարակ զ հրացանս իւրեանց արձակէին. եւ այսպէս հանկարծ զ սուրս եւ զ մուրճս իւրեանց դիմէին 'ի
վերայ նոցա. եւ փախուստ դարձուցանէին զնոսա, եւ իբրեւ զերիս հազար անձինս կոտորէին եւ թա-

փէին 'ի նոցանէ զ կողոպուտսն եւ զ գերիսն որք էին յոյժ բազում:

Եւ

Եւ Նատըրն փքացեալ Նախկին յաղթութեամբ դառնայր փութով 'ի Մաշատ . ուր ընկալեալ եղև մեծաւ խնդութեամբ . և հուր փառամոլութե որ սկսանէր բորբոքիլ և ոչ կարէր հանդուրժել ' այլ կամէր զի և ևս հռչակեսցին քաջագործութիւնք իւր զորոց գիտակ էին . ուստի խնդրէր 'ի խանէն սպարապետ կարգիլ զօրացն 'ի նոյն պաշտօնի ընդ հրամանաւ խանին . և Թաբուլու խանն խոստացաւ նմա թէ' գրեսցի զ քաջութի քո 'ի դուռն Արքունի . և ևս թէ' 'ի կողմանէ իմմէ ոչ պակասեսցէ առ 'ի վարձահատոյց լինիլ քեզ փոխանակ արդեանց քոց . Արդ հաստատուն . և իրաւն անյայտ մեծ. թէ արդեօք խորագիտութեամբ աչ կատարեաց զոր խոստացաւ , և թէ Շահ Հուսէնն ըստ տկարամտու. է իւրում վարելոյ զ պաշտօն իւր զանց արար զ քաջութեն Նատըրին ուստի Նատըրն մեծաւ սրտմտութեամբ ծանրացաւ և լեալ տրտմէր յաղագս ուխտազանցութեանս , և յաւէտ 'ի վր ցաւոյն յաւելուին եւև եւս զի և զ հրաման զօրացն առեալ յինքենէ ետուն պատանւոյ միում . որ տիօք փոքրէր յոյժ քան զինքն . և էր ազգական Թաբուլու խանին . և ընաւ իմն անփորձ և անհմուտ հնարից Սա կալաւ զ պաշտօն Նատըրին . Վ սորոյ Նատըրն հարցանէր 'ի խանէն զ պատճառ այսպիսի անիրաւ գործոյս , և ըստ խրոխտ բնութե իւրոյ ոչ երկբայեր ասել նմա թէ գործ քոյ տմարդի էր , Արդ այս բանք անզգամութի Նատըրին' այնքան փոխարկէր . զ միտս խանին , մինչ զի թողեալ զայն քան բարձրագոյն գովաբանութիւս արիութե նորա զ ատապարտէր զ նա 'ի խստագոյն պանդխտան , և որ արկանէր զ նա յայս նախատինս էր նախանձ պատերազմական քաջութե նր . 'ի մէջ այնքան ընտիր զօրավարացն պարսից գնդին , Ուստի զ ուրաւ իմանի . զի այր մի այսպիսի հրամանատար որտիւք ոչ կարէ հանդուրժել նախատանաց այլ' գետեղէ զ չարիսն 'ի սրտի իւրում , և սպասէ դիպող ժամու , Վ սորոյ խոյս

տուեալ 'ի Մաշատոյ գնայր զ նոր հնարս որոնել ինքեան :

Գնալն Նատըրին 'ի Քալաթ . և ընդունելն 'ի հօրեղբօրէն և անտի գնալն 'ի լերինս . և լինել զօրապետ գնդի միոյ . Աւազակութի նորին 'ի բազում ժամանակս , Եւ տիրել Աղվանին սպահանոյ , փախուստ Սէֆօդ ին խանին 'ի Շահ Թահմազէն . և և թէ որպ և զ իարդ հօրեղբայր Նատըրին թողութի հանէ 'ի Շահ Թահմազէն յաղագս եղբօր որդւոյն . և որպ Նատըրն խորամանկութեամբ տիրէ Քալաթոյ և թէ զ կնի զի արդ հարկանէ զ գունդն Աղուանից և տիրէ Նիշաբուրայ , և աճեցուցանէ զ թիւ զօրաց

իւրոց մինչև 'ի հազար :

Արդ Նատըրն այսպէս դատարկ և թափառեալ մնայր 'ի վր երկրի . և խորհէր թէ զիարդ նորոգեսցէ զ բախտ իւր . և հասցէ 'ի վր իրաւանց իւրոց' զոր Թաբուլու խանն ոչ արար , Եւ հօրեղբայր Նատըրին էր մինն 'ի կլխաւորացն Աֆշարից տոհմին . և էր իշխան Քալաթոյ . որ էր տեղի յոյժ ամուր . և ~~[illegible]ապարհաւ~~ հետի 'ի Մաշատոյ , առ սա դիմէր Նատըրն և գանկատէր վն նախատանացն զոր կրեալ էր 'ի ծառայութե Թագաւորին . և նա մխիթարէր և հանկուցանէր զ նա ժամանակ ինչ մինչև խորամանկութեամբ իւրով զ խորհուրդ փառամոլութե իւրոյ յայտնել սկսանէր , յորմէ նախանձ

իմն լինէր 'ի մէջ նոցա որոյ պատճառաւ պարտաւորիւր 'ի բաց գնալ անտի :

Եւ հաստատէր 'ի մտի զ գնութի գտանել ինքեան 'ի ձեռն բռնաւորական հնարից որոց կատարելապէս էր հմուտ , և զի փորձառութեամբ գիտէր զի այլով իւիք զօգնութի ինչ ոչ կարէր հնարել մեծամեծ-բաղձանաց իւրոց' և կարելի էր թէ արդ էն իսկ 'ի մտի դնէր տիրել Քալաթու . զի արդ և իցէ' այս երր-

որդ անգամ եղև նմա խոյս տալ 'ի լերինս . և գործել զառաջին գործ իւր աւազակութեամբ :

Արդ զարմանք իմն թուի թէ' Հայր Նատըրին էր արտախուրակ գործօղ . զիարդ հօրեղբայր իւր եղև ցեղագլուխ և Դիտաւոր Քալաթու , այլ այս ոչ է այնքան զարմանալի որքան եղև բախտ Նատըրին . և դ իւրաւ կարեմք իմանալ ստ . զի եղբայր մի զ կեանս երջանիկս վարէ և միւսն 'ի տառապանս կեայ . որպ բազմիցս տեսանեմք զ յեղափոխութիս 'ի մարդկային իրողութինս 'ի կերպս իմն և

յա.

յաւէտ. ՚ի պզիսյ:

1722: Եւ Մահմուտն յաղթահարեալ զպարսկաստան ՚պաշարեաց զԹշուառ Շահ Հուսէնն յանձնել ինքեան զարքայանիստն իւր հանդերձ թագիւն, եւ ամ գաւառք փակեալ կային ՚ի վրդովմունս, Եւ դի պատահած այս ի նոյն ժամ տայր Նատրըրին զգունդ խմն գումարել ՚ի յարանց յուսահատից (որոց բազումք արդէն իսկ ծառայեալ էին ընդ հրամանաւ նորա իբրեւ զգլխաւորս) եւ ապստամբել նոքօք զբազում կարավանս, Եւ ստացաւ գանձս որով բաւական լինէր ժողովել իբրեւ զարս եօթն կամ ութն հարիւր, քաջամարտիկս. եւ բարձեալ ըզ Դրօշակ իւր ՚ի կատարս լերանց, ասպատակ տայր մինչեւ ցխորասան. եւ ՚ի գաւառսն շուրջ զխորասանու, եւ այսպէս ձանձրէին զերկիրն ՚ի նեղու-թեն որքան ձեռնհաս էին:

Եւ Թէպէտ Աղվանքն կալեալ էին պարսից տէրութիւնն, սակայն Թիւ նոցա չէր բաւական առ ՚ի զբոլոր իշխանութի երկրին փութով յինքեանս դարձուցանել, եւ զի բազումք ՚ի գաւառացն եւ ՚ի քաղաքացն որք ՚ի մէջ պարսկաստանի եւ ՚ի շրջակայս նորին ոչ հաձեցան հնազանդիլ Աղվանից, ուստի գործ նոցա արտաքին ժամանակ ինչ խափանիւր. Եւ Թահմազ չորրորդ որդին Հուսէնին զերծաւ ՚ի սպահանայ. եւ զսա համարէին իբրեւ զօրինաւոր ժառանգ Թագաւորութե պարսից. բայց եւ նորա դեգերեալ աստ եւ անդ էր Թափառական, եւ հազիւ կարէր հրամաել եւ իշխել գաւառացն որք ոչ հնազանդ էին Աղվանից, եւ կամ կառավարել զնոսա:

1724: Եւ կայր զայսու ժամանակաւ անշուք եւ կարօտեալ կենօք ՚ի գաւառս մազանտրանու. Եւ ՚ի ժամանակի յայսմիկ ազգն Օսմանցւոց տիրեալ էր գաւառացն արեւմտից որք ՚ի մէջ հարաւոյ եւ Արեւմտից, եւ ռուսն եւս կալեալ ունէր զեզերս կասպից ծովուն. եւ զմասն Գիլանու, իբրեւ լուեալ Թահմազին Թէ հայր իւր Արքայ ՚ի բաց Թողեալ էր զԹագաւորութե իշխանութի իւր ինքն իբրեւ զժառանգ եւ փոխանորդ Թագաւորութե նորա ընկալաւ զանուն Շահի. եւ մեք այսպէս կոչեսցուք զնա: Թէպէտ եւ ոչ կարեմք առաւել ինչ համարել զնա քանթէ անուամբ միայն Թագաւոր:

1726: Եւ մինչ զեռ նա ձեռնամուխ լինէր ՚ի ծածուկ զաշինս ընդ հաւատարիմ գաւառացն. եւ զդեսպանս առաքէր զօգնութի խնդրել ՚ի շրջակայից տէրութեէ իւրոյ, Նատրըրն տարածեալ էր զբռնաւորական իշխանութի իւր ՚ի կողմանս արեւելից, եւ շրջեալ ասպատակէր եւ պահանջէր զօրեւ հարկաւոր համարէր վասն օգտի իւրոյ եւ արանցն:

1727: Եւ այսպէս անցուցանէր զկեանս իւր իբրեւ զամս հինգ, եւ յայսմ վարի Թահմազն զումարեալ էր զգունդ մի սակաւ զօրաց բայց սակայն ցարդ եւս կրէր զանցս հօր իւրոյ՝ քանզի միոյն ՚ի զօրապետաց նորա Սեփօղին բէկ անուն. եւ զլուխ բայաթից իբրեւ զանարժան ինչ գործեալ էր եւ տազ լինէր ինքեան զի հանդերձեալ էր կրել զպատիժ պատուհասի յաղագս այնր՝ փախուցեալ ՚ի բանակէ Թահմազին զօրօքն հանդերձ որք ընդ իւրով իշխանութեբն էին. եւ էին իբրեւ արք հազար եւ հինգ հարիւր. միաբանէր նոքօք ընդ Նատրըր ղուլեոյն՝ որ մինչեւ ցարդ կայր ՚ի գաւառս խորասանու, որով Թիւ զօրացն նոցա լինէր իբրեւ երեքհազար, որոց զպետս ամ կարեաց շրջակայ գաւառքն բռնութեբ լցուցանէին:

Արդ զունդս այս ահաւոր երեսուն փարսախաւ. կամ իննսուն մղոնաւ հեռի էր ՚ի Ֆալաթու, ուստի հօրեղբայր Նատրըրին ՚ի սաստիկ վրդովմունս անկնէր. եւ վարանէր յանձին իւրում. զուցէ Թէ եղբօրորդի իւր ջանայցէ ՚ի բաց վանել զինքն ՚ի յամուր տեղոջէ իւրմէ, վասնորոյ օգուտ ինքեան կարծելով յղէ նմա զԹուղթ սիրոյ, որով ծանուցէ նմա. Թէ՝ ահա եհաս դիպող ժամ յաջողութեն քոյ ՚ի մատուցանել զքեզ ՚ի ծառայութի օրինաւոր Թագաւորին մերոյ Շահ Թահմազին՝ յորմէ կասկած ինչ ոչ ունիմ առ ՚ի Թողութի շնորհելոյ քեզ եւ արանցդ. Եւ առաջադրութիս այս հաճոյ եղեւ ՚ի միտս Նատրին, խնդրեաց ՚ի հօրեղբօրէն զի Թողութի հանցէ նմա ՚ի Թագաւորէն - եւ սեր

ցնծու.

ցնծութբ ընկալայց զԹողութիւն Արշակայ. ուստի հօրեղբայր նորա յայտնէր զբանն Շահին. Եւ թէպէտ բազում ինչ շտեմարանեալ էր 'ի սրտի Շահին յաղագս հռչակաւոր ապականիչ գոլոյ Նատըրին, սակայն պէտս ունէր այնպիսի փորձեալ զօրավարի՝ որ ունէր այնքան զօրս ընտիրս. ուստի վաղվաղակի դրոշմէր զգիրն Թողութեան յղէր 'ի Քալաթ :

Եւ հօրեղբայր Նատըրին իբրև ընկալաւ զգիրն՝ փութով առաքեաց առ եղբօրորդին. և 'ի հասանել թղթոյն չուեաց խաղաց Նատըրն անտի և եկն 'ի Քալաթ, ունելով ընդ իւր զդաս մի հարիւր ընտիր զինուորաց. և երբ նմա դիպող ժամ 'ի գործ ածել զխորամանկութիւնս իւր 'ի հնարս խաբէութե և հօրեղբայր նորա մեծաւ գթով ընկալաւ զնա. մեծարէր և պատուէր զնա՝ և զզօրսն նորա. որոյ զԹողութիւն Արշակունի հանելով իբրև զյատուկ գերութագէտս համարէր, ուստի զկասկած վաանգ ինչ ոչ ունէր 'ի նոյանէ. և բազում պատուոք մեծարէր զիւրաքանչիւրն ըստ արժանւոյն և ըստ կարգին, իսկ Նատըրն ոչ էր մոռացեալ զնախատինս զոր հինգ ամօք յառաջ կրեալ էր 'ի նմանէ. նա և ոչ երբէք պատճառին թէ՝ զի այդ հօրեղբայր իւր զԹողութիւն զայն եհան, թէ վասն էր Թագաւորն աւ փութով շնորհեաց զայն. բայց զուգէ բարոյական մտաւորութիւն պարտէր ուղղել զգնացս նորա. իշխանութեան խափանէր, և ոչ Թողացուցանէր առաջնորդել խղճի մտաց նորա. ուստի զդիպող ժամ բարեկամութեան ողջունել 'ի մտի դնէր. և իբրև զպատրաստեալ և զերախտագէտ իւր զինքն պատճառելով՝ զբարերարն իւր սպանանել մտաբերէր, յանհոգոյ գաղտնի հրաման տուեալ ոմանց հինգ հարիւրոց յընտիր զօրաց իւրոց՝ առ ինքն աճապարել 'ի վաղիւն և թագչիլ շուրջ զբերդաւն Քալաթու. և սպասել նշանին զոր ժամադրեալ էր նոցա :

Եւ իբրև հաստատեաց զխորհուրդ իւր 'ի գիշերի երկրորդ աւուր զկնի հասանելոյ իւրոյ 'ի Քալաթ. հրաման ետ հարիւր զինուորաց իւրոց՝ որք էին 'ի բերդի անդ, սպանանել զպահապանսն. և զդռնապանս զօրականաց բերդին՝ որք էին երկու հարիւր՝ ամրափակեալ 'ի բնակարանս իւրեանց, և ինքն մտանէր 'ի սենեակ հօրեղբօր իւրոյ և սպան զնա անդ. և իբրև եղև ընդ նշանն զոր ժամադրեալ էր արանց իւրոց. խոյս տուեալ հինգ հարիւրքն ընթացան և կալան զդրունս բերդին, և ինքն եղև գլխովին տէր և իշխան բերդին. առանց բազում արեանց հեղմանց. և որք միանգամ 'ի զօրացն բերդին ոչ կամէին մտանակից լինել յաջողութեան նորա. արձակէր զնոսա խաղաղութեամբ. և ընդ այսն ընդ առաւօտն դիւանս առաքէր՝ տանել զլուր յաջողութեան իւրոյ. և հրամայել 'ի զօրացն առ ինքն հասանել, և փոխանակ փոխօրէն զբնակութիւն իւր (որ կամ մտածմունք թշնամեաց կամայլ հարկաւորութիւնք հարկէր զինքն հանապազ) այժմ այս զընտիր 'ի զօրաց իւրոց յայսմ ամրոցի հաստատէր, և Քալաթ պարփակէ յինքեան զերկիր յոյժ լայնածաւալ. և բնականն դիրք տեղւոյն՝ ծածանց ակութեամբ [illegible] ոմանց զժուարամատոյց է արարեալ զնա. ուստի յաջողումն խորհրդոյս առաւել հաճելի լինէր Նատըրին, քանզի տեղիս այս ոչ էր հեռի 'ի տեղւոյն ծննդեան իւրոյ. և բազմութեան ազգային և բարեկամք նորա, որք 'ի շրջակայ գաւառս էին լեալ պէս պէս յազգեցան առ աստուածեռնութեան նորին. և գթութիւն. (որով վարէր ընդ բնակիչս շրջակայ գաւառացն) զբազումս պարտաւորէր գալ և զօրական լինել նմա. և ինքն 'ի Քալաթ ամիս բազում. և ժողովէր զմուտս երկրին, և սկսաւ այնուհետև ընդ իրաց ինչ ինքնակալ երևիլ, մանաւանդ զի՝ Թագաւորութիւն Շահ Թահմազին ընդունելի չէր 'ի Մաշատաւ և զի Մելուք մահմուտն. գլխաւոր ոմն 'ի յապստամբեանց անտի տիրեալ էր Մաշատոյ սակաւ ամօք յառաջ քան զդաշնադրութիւն ընդ Մահմուտի յափշտակչին :

Եւ այսպէս ահարկու լինէր Նատըրն. և խորհրդովք իւրովք զեր 'ի վերոյ համդիսանայր. և ոչ կամէր կորուսանել զանապատեանն զիւղականսն. այլ՝ խնդրէր և արժանէր զազատութիւն երկրի իւրոյ 'ի ձեռաց տարաթշնամեացն՝ և յատկապէս 'ի ձեռաց աղվանից, որք վարէին զպարսից տէրութիւն յոյժ բարբարոսութեամբ զամս հինգ, արդ թէպէտ Նատըրն ինքնագլուխ ունէր. սակայն ոչ կարէր պատերազմ

յարու

յարուցանել ընդ ապստամբութիւն այլոյ ուրուք՝ եթէ ոչ Շահ Թահմազին, զի բարւոք գիտէր թէ՝ Թահմազն վրէժխնդրելոց էր յինքենէ յաղագս սպանման հօրեղբօր իւրոյ 'ի պատճառս Արքունական Թողութեան, ուստի խորհէր զերեւելի եւ զնշանաւոր գործ ինչ գործել 'ի կողմանէ Թագաւորին որով հետ նա խաղաղ ծածկեսցէ զյիշատակ գործոյ իւրոյ որ 'ի Քալաթ:

Եւ սովին դիտաւորութեամբ ճակատ յարդարէր 'ի պատերազմ ելանել ընդ Աղվանս որք տիրէին քաղաքին Նիշապուրայ. որ մերձ էր նմա, եւ բանակ նոցա էր աւելի քան երեք հազար արանց պատերազմողաց, իսկ զօրք Նատըրին առաւել էին քան զնոսայն, սակայն անհմուտ էին պաշարելոյ զքաղաքս վասն որոյ հնարս խորհէր առ 'ի հանել արտաքս զթշնամին 'ի պատնիշէն. եւ Աղվանքն կարծէին զՆատըրն գոլ մանաւանդ ասպատակիչ ոմն քան թէ սպարապետ ահագին գնդի միոյ, ուստի կասկած վտանգի ինչ ոչ ունէին վասն լինելոյ նորա սահմանակից. եւ արք վեց հարիւրք 'ի զօրաց նոցա աներկիւղ շրջէին եւ ասպատակ տային ընդ երկիրն. նոյնժամ առաքէ Նատըրն զգունդ մի նովին չափով 'ի հեծելոց անտի իւրոց, որք յանկարծուրեամբ հասին 'ի վերայ նոցա եւ կոտորեցին զնոսա Եւ իբրեւ լու եղեւ իշխանին Նիշապուրայ փոյթ ընդ փոյթ համայն բանակօքն արտաքս ընթանայր. առ 'ի անկանիլ 'ի վերայ պարսկական գնդին, իսկ նոցա փաղփաղակի չուեալ անտի զկնի 'ի Բանրահաթ ճեպէին, որ է կիրճ մի լերանց որ անջատէ զգաւառս Խորասանու եւ Աստարապատու, զի այսէր ժամադրեալ տեղի ժողովելոյ նոցա. եւ Աղվանքն պնդէին զհետ նոցա բազում մղոնաւ 'մինչ եւ 'ի կիրճն այն հասանէին: Յայնմ վայրի չուէր խաղայր Նատըրն. հազար եւ հինգ հարիւր արամբ եւ օգնութեամբ ծառոյն որք ծածկեալ էին զերեսս լերանցն' թագուցանէր զզօրս իւր 'ի մուտս անցիցն իսկ Աղվանքն երկիւղ ինչ ոչ ունելով յայլ ինչ ընթերակայ թշնամւոյ, պնդէին զհետ վեց հարիւր հեծելոցն սաստիկ արշաւմամբ առ 'ի վրէժ առնուլ վնասուն զոր արդէն իսկ կրեցին 'ի Նիշապուր. Եւ իբրեւ առ հասարակ 'ի կիրճն մտանէին, եւ տեղին էր յոյժ նեղագոյն, եւ պարսիկքն շուրջ զտեղեաւն կային. յայնժամ Նատըրն ելեալ 'ի դարանէն զօրօքն իւրովք անկանէր յետուստ 'ի վերայ նոցա, այնքան յուժգին յարձակմամբ. զի զարհուրեալ Աղվանիցն ամենեւին ոչ կարէին յաջ կամ յահեակ խոտորիլ հեծելովքն իւրեանց, եւ կարծէին թէ՝ զօրք բազումք պաշարեալ էին զնոսա. եւ այսպէս դիւրաւ որսացան 'ի պարսիցն. եւ սակաւք 'ի նոցունց ապրեցան 'ի սրոյ նոցա:

Եւ զկնի բաժանելոյ զաւարին դարձաւ անդրէն Նատըրն 'ի Նիշապուր. եւ դրունք քաղաքին բացեալ նմայն նմա. եւ տիրեաց քաղաքին յանուն Շահ Թահմազին. եւ հրաման առնէր զօրաց վնաս ինչ ոչ առնել բնակչացն. եւ ասէր՝ զի լաւ թուի ինձ՝ փրկել զձեզ 'ի բռնութենէ Աղվանից եւ 'ի ճշմարիտ Թագաւորին ձեր հաստատել զձեզ 'ձերին հնազանդութիւն, եւս բարւոք գիտեմ զի յանճարութէ պարտաւորեալ հնազանդէիք Աղվանին. եւ յետ բանիս այսորիկ. զամենայն ստացուածս Աղվանիցն զօրացն իւրոց բաժանէր, եւ զթուութիւն (որով վարէր ընդ բնակիչսն) էր կարի մեծ, եւ առանց բռնադատելոյ զօրք յաւելոյր 'ի զօրս իւր իբրեւ զերս հազար:

Նատըրն լսէ զվիշտս Թահմազին, եւ խնդրէ 'ի նմանէ թողութիւն, որ եւ ընդունի, եւ միաբանէ զզօրս իւր ընդ զօրացն Ֆաթհի Ալիխանին. եւ զկնի սպանանէ զնա, եւ լինի միայնակ իշխան զօրաց, եւ տանէ զՇահ Թահմազն 'ի Նիշապուր. եւ անտի 'ի Մաշատ եւ Թահմազն առնէ ուխտ 'ի գերեզման Իմամ Րըզային:

Մինչ դեռ Նատըրն պատրաստութիւն առնէր 'ի Նիշապուր կրկին անգամ 'ի մարտ ելանել. լուաւ զի Շահ Թահմազն 'ի ծանր տառապանս կայր. զի խափանեալ մնայր 'ի Մազանտրան իբրեւ հնա-

զան

զանդեալոք փաթի Ալիխան Ղաջարին, որ 'ի ժամանակի խռովութեց կալեալ ունէր զ դաւառն զայնոսիկ նաև զԱստապատ և այս տեղիք ամրացեալքէն լերամբք որք շուրջէն զնոքօք, ուստի բնակիչք տեղեաց ոչ միայն Աղվանին տէրութեն՝ այլև օրինաւոր թագաւորին իւրեանց ոչ հնազանդէին

Եւ թահմազն առաքեաց զգունդ միզօրաց և Ղաջարքն յետս վարեցին. և յորժամ երդուաւ թագաւորն առ հասարակ թողութի շորհել նոցա, նաև ոչ երբէք. և ոչ իմն պատճառաւ մերձենալ յանձն փաթի Ալիխանին. և վարիլ ընդ նմա իբրև ընդ ծառայի հաւատարմի, և խանն և այլ իւրմէ կողմանէ երդուաւ հնազանդ լինիլ թագաւորին, յայնժամ Ղաջարքն (որք 'ի բնէ հնազանդութի ունէին Սէֆաւ տանն) ինքեանք անձնապահապան լինէին թագաւորին:

Եւ զայսու ժամանակաւ Շահ թահմազն դաշինս խաղաղութե դնէր ընդ Օսմանցիս և ընդ Ռուսս բայց ոչ ոք զօգնութի ինչ առնէր նմա. այ որին հակառակ ընդ ձեռամբ նուաճեալ զտէրութին նորա մեծի մասին պառակտէին, մինչ զի պարտաւորիւր խոյս տալ զօրովք իւրովք 'ի փարապատ. զի եթէ վտանգ ինչ հանդիպելոց իցէ անձին իւրոյ՝ վաղվաղակի ճաւեսցէ անտի 'ի ծովն կասպից. և այսոքիկ դիպուածք կարի օգտակար լինէին Նատրրին, ուստի ոչ երկբայէր թողութի առանալ 'ի թագաւորէն յաղագս գայթակղութեց իւրոց, և զիրաւացի պատճառս ունէր յուսոյ թողութե, քանզի զ վերջին գործն զոր գործեաց 'ի յաղմանս՝ և քանզի և մեծայոյս զհամբաւ քաջութենորա, այնքան մինչ զի ոմանք կերպիւ իմն ասէին թէ՝ դա է Անոթն շնորհեալ 'ի նախախնամութենէ Աստուծոյ փրկիչ լինիլ երկրի իւրոյ. և այսու գիտաւորութե հրաման տայր զօրաց իւրոց չուել խաղալ 'ի սահմանս Մազանտրանոյ և ազդ առնէր Շահին զանցսն որ 'ի նիշապուր, և հաստատէր զնա թէ ես և զօրք իմ բստ յամի պատրաստեմք ծառայել Տեառն մերում Արքաի, և յորժ ցանկամ ունիլ շնորհս առաջի քո. և անձամբ անձին երևիլ առաջի երեսաց Տեառն իմոյ և պատմել տէրութե քումը զպատճառս գործոյ իմոյ որ 'ի քալաթ՝ ուր մտիրեալ եմ հրամանաւ քով տէր իմ Արքայ: Արդ թէպէտ թահմազն զբազում ինչ լուեալ էր 'ի վնաս Նատրրին սակայն բանք Նատրրին զվաղճան երջանիկ խոստմնայր նոցա, վասն որոյ յոյժ հաճելի լինէին բանք նորա միտս Շահին, և պատասխանի յղէր նմա թէ կարող ես գալ առ իս անվնասյամի, և իբրև զծառայ հաւատարիմ ընկալայց զքեզ յայնժամ Նատրրն թողեալ զզօրս իւր սակաւ հեռի՝ եւ ինքն հարիւր հեծելովք եգնաց 'ի փարապատ:

Եւ քանզի Ղաջարքն խոստացեալ էին Շահին թէ՝ 'ի դիպօղ ժամու յորժամ գտցուք պարապ և յաջողութի առցուք զՄաշատ 'ի ձեռաց ապստամբեալ մէլուք մահմուտին. վասն այսորիկ և փաթի Ալի խանն բազմիցս գովաբանեալ էր զՆատրրն առաջի թագաւորին թէ՝ քաջ զօրավարէ՝ որոյ օգնութի կարի հարկաւորէ մեզ, յայսմ վայրի խանն ընկալաւ զՆատրրն 'ի գիրկս իւր. և խոստացաւ մուծանել զնա առաջի թագաւորին, և արք Նատրրին կարի զազրագոյն տեսլեամբ երևէին յաղագս ձևոյ հանդերձից նոցին, իսկ արդ ինքն նոցա յանդիման երևէր 'ի կորովութեց նոցին Եւ արդ իբրև ոչ անցանէին աւուրք բազումք 'ի վր զկնի լինելոյ նր 'ի յապարանս թագաւորին տեսանէր զի ամենեքեան զարքունի պատիւս նուիրէին փաթի Ալիխանին, և թահմազն անուամբ միայն էր թագաւոր. և թէ պէտ Նատրրն բնականապէս մտածէր գերազանց գոլ ինքեան արդեամբ քան զխանն բայց սակայն առ 'ի ոչ ցուցանել զխէթ իւր՝ բազում խոնարհութի ցուցանէր խանին, այնքան մինչ զի ոչ կամէր նստիլ առաջի նորա առանց բազում թախանձանաց, և առանց ստէպ ստէպ խնդրոյ խանին:

Եւ յանդիման լինէր Նատրրն Շահին. և մեծապէս գոհանայր զնմանէ. և բազում շնորհակալութիս

մասու

մատուցանէր Նմա յաղագս ձրի թողութեան շնորհման․ և ասէ նա թէ՝ որքան և աստ (կամ զարմանք) ինձ իցէ գործ իմ․ սակայն քաւ լիցի եթէ սպանումն հօրեղբօրն իմոյ նախատ ինչ իցէ Արքունի շնորհացս, այլ՝ պարտիս համարել զայն իբրև զնշան երախտագիտութեան իմոյ զոր ունիմ առ տէրդ իմ Արքայ․ և զի այժմ վճարեալ եղև ընդ իշխանութեամբ տէառնդ իմոյ Արքայի, և ասա զի և գիտասցէ բարձրութիւն քո զի եթէ հօրեղբայր իմ էր իշխան տեղւոյն տակաւին վճարեալ ոչ լինէր ընդ հրամանաւ քով Եւ յետ բանիցս այսոցիկ սկսաւ պատմել թագաւորին զանցս Նիշապուրոյ․ և յայտնապէս ասէր թէ այնպիսի մեծամեծ հարուածովք հարին զԱղվանն որք յայն կողմանս էին․ մինչև զի ի նոցանէ ոչ լինել մեզ այսուհետև տիրել Հերաթու․ նաև ասէր թէ ոչ է կամիմ ասել թէ, ՚ի սուղ ժամանակի․ Փաթի Ալիխան Ղաջարն․ և ես դարձուսցուք զբոլոր տէրութիւն երկրի մերոյ ՚ի ճշմարիտ տոհմն Սեֆեան զոր վայրենաբարոյ ապստամբ Աղվանքն յափշտակեցին։

Զբանս զայսոսիկ այնքան պատկառանօք և քաջ վստահութեամբ արտասանէր, մինչ զի Շահն ոչ գոյր ինչ կարէր պատասխանել Նմա, եթէ ոչ՝ զհաճութիւն ցուցանել և խոստանալ զհատուցումն․ և ասէր ցնա յուսամ զի եկեսցէ ժամանակ յորում կարասցիս վարձահատոյց լինել աշխատանաց քոց ըստ մեծագոյն արդեանց և արժանաւորութեանց քոց և ՚ի նոյն ժամու թողութիւն ընկալաւ Նատրըն վասն Սեֆիողլին խանին և բոլոր զօրաց իւրոց․ և ասէ ցթագաւորն՝ թէպէտ զտեսիլ կերպարանաց զօրաց իմոց ոչ կարեմ գովաբանել․ այլ՝ սակայն կրթութեանց քաջութեանց, և հաւատարմութեանց նոցին առ ճշմարիտ թագաւորդ մեր երաշխաւոր կարեմ լինել։

Եւ այսպէս վախճանելոյն զբանս, և հաճեցեալ Շահն և Նոր սպասաւորութիւն իւր․ և ել հրաման յարքայէն զի զօրքն Նատրին (որք էին իբրև հինգ հազար) մտցեն ՚ի գաւառս Մազանտրանու, և խառնեսցին ընդ զօրս Փաթի Ալիխան Ղաջարին, և բոլոր զօրքն նոցա եղեն աւելի քան ութ հազար, և Նատրըն ջանդնէր բարուք միաբանութիւն առնել ընդ խանին․ և ՚ի ձեռն խոնարհ վարուց իւրոց յարէր զինքն ՚ի շնորհս խանին, մինչ զի թուէր ինքեան զի չարակնութիւն ինչ ոչ լինէր վասն իւր, և ՚ի ձեռն գերագոյն հնազանդութեան զոր ցուցանէր՝ յայտնապէս յաճախէր զպատիւ իւր առաջի Շահին։

Արդ ՚ի ժամանակս այսոսիկ Նատրըն (որոյ փառասիրութիւն ոչ էր հասարակ այլ՝ գուզնաքեայն էր չափազանց) ծածկաբար խրատ տայր արանցն իւրոց զանգատել զգնացից Փաթի Ալիխանին յաղագս անկարգութեանց Նորին․ և վասն ոչ հատուցանելոյ ըզռոճիկս զօրացն․ և վասն անարգարոյն հանդերձից Նոցա և ինքն Նատրըն միշտ զել և մուտ խանին զզուշութեամբ պահէր․ և ետես զի թագաւորն արդէն իսկ լսէր զբանս ՚ի Նաս խանին, ուստի ինքն ևս զդիպող ժամ գտանէ ասել թագաւորին․ թէ՝ պատրողական միաբանութիւն ինչ յայտնեցաւ ինձ գոլ ՚ի մէջ Փաթիալիխանին՝ և ապստամբեալ Մելուքմահմուտին իշխանին Մաշատոյ, և զի պատճառանօք տանելոյ զարքայդ առ ՚ի տիրել Մաշատոյ (ըստ պայմանին զոր ունի ընդ Մելուքմահմուտին) մատնել կամի զքեզ ՚ի ձեռս Նորա և զայն եղ եալ է ընդ Նմա․ զի յորքան ժամանակ Մելուք մահմուտն կացցէ յիշխանութեան քաղաքին և բոլոր գաւառացն զորս միաբանեալ զօրօք իւրեանց Նուաճել կարասցեն․ Փաթիալիխանն ևս կացցէ հարաբայլին սահմանացն կապից ծովուն, և առ ՚ի հաստատել զբանս իւր՝ ցուցանէր թագաւորին թուղթս ինչ և ասէր թէ՝ խանն է գրեալ Մելուքմահմուտին և ես կալայ զնոսա։

Արդ անկարելի թուի մեզ ունել խանին յիրաւի զայնպիսի միաբանութիւն ինչ ընդ Մելուքմահմուտին՝ որովհետև Շահ թամազնէր ժամանակ ինչ ՚ի ձեռին իւրում․ նաև անհաւատալի իմն է թէ փոխարկութիւն ինչ պարագայից պարտաւորեաց զնա ունել զայնպիսի յուսահատական գնացս․ արդ

զիարդ

զիարդ և իցէ չունէր Թահմազն բարեբախտութիւն՝ որով իմաստնագոյն լինէր քան զհայր իւր Հուսէյնն. ուստի դիւրաւ հաւատայր բանից Նատրրին. և յիշէր թէ ժամանակ բազում ոչէր անցեալ ՚ի վերայ որժամ փաթիալիխանն ապստամբեալ էր ընդդէմ թագաւորութեան իւրոյ. և Նատրրն (որ քաջ գիտէր զնշան հաւատարմութեան ցուցեալ էր ինքեան) օգուտ ինչ ոչ գտեալ ՚ի պատուելն զնա ՚ի վերին ասպականութիւն առն՝ որ արդէն իսկ յանձնեալ էր զնա ՚ի շնորհս իւր և Նատրրն յոյժ կարեկից լինէր թագաւորին և ասէր՝ թէ զպ արտօրութիւն անձին իմոյ առ տէրդ իմ արքայ նախամեծար ընտրել պարտ է քան զայլ ամենայն նուաճութիւն. արդ անկարելի է ինձ իմում անձն ունիլ իւիք ինչ նուաճելոյ զտէրութիւն քո յորժամ մնուցանես զօձն ՚ի դիրկս քո. և յանձնեալ ես զանձն քո ՚ի պահպանութիւն արանց՝ որք ամենևին թափուրեն և զուրկ ՚ի հաւատարմութենէ:

Եւ հաւատայր Թահմազն բանից Նատրրին. և փարանէր ՚ի սրտի իւրում յաղագս երդմանն զոր երդուեալ էր առ ՚ի ոչ երբեք մնաս ինչ առնել փաթիալիխանին կամ բառնալ զկեանս նորին. որում պատասխանի ետ Նատրրն և ասէ՝ եթէ տէրդ իմ արքայ երդուեալ իցէ այդպէս սակայն ես ոչ, արդ այսպիսի թերի հաւանութեամբ խորհեցաւ զկորուստ բարեկամին իւրոյ և բարերարին. իսկ փաթիալի խանն ամենևիմբ ոչ կարծէր թէ այնպիսի նենգութիւն ինչ լինէր կենաց իւրոց. եկն յապարանս թագաւորին ըստ սովորութեան, յայնժամ Նատրրն պատուէր տայր հազարապետի միում. (որ էր ձեռնասուն իւր) պատրաստ լինիլ և ՚ի դիպօղ ժամու սպանանել զխանն: Սակայն ՚ի համբաւոյ և յազնիւ դիմացն խանին այնքան պատկառէր հազարապետն. մինչ զի յանձնէր զգործն ծառայի իւրում Եւ իբրև կատարեաց զայսպիսի պատրողական ծառայութիւն թագաւորին. տարաւ զգլուխ խանին ՚ի վերնիգակի և ցուցանէր զօրացն՝ յայտնելով նոցա. զպատճառ մահուանն նորա և ասէր թէ ոխք հաւատարիմ իցէ թագաւորին իւրոյ չէ պարտ նմա տրտմիլ վասն մահուան առն միանչի, և ես ըստ կարգի իմում հաստատեալ եմ ՚ի մտի ՚ի բաց մերժել զամ խորհուրդս բարեկամութեան և զնենգութեան իմոյ յաղագս բարութեան երկրի իմոյ և դարձուցանել զիշխանութիւն երկրիս առ տէրն իմ Արքայ. արդ բանքս այսոքիկ զբազումս (որք ընդ իշխանութեամբ խանին էին) հաճեցուցանէին, իսկ ոմանք տրտնջէին, ասելով. դաւէ, զի զխանն նենգութեամբ Նատրրին և իւրոյ ձեռնասուն ծառայիցն սպանին, և զայնպիսին իսկոյն կալեալ ՚ի բանտ արկանէին:

1728: Եւ այսպէս ներարձ զայն որ խոչընդոտն լինէր փառամոլութեան իւրում. և ՚ի հաստատութիւն իբրու հռչակաւոր փառաց իւրոյ այսպիսեաց՝ ՚ի խանութիւն կարգեցաւ, որով կոչեցաւ Նատրր դուլիխան. և ընկալաւ հրաման իշխել բոլոր զօրաց, Եւ սկսաւ այնուհետև առաւելուլ զամ մասամբ իբրև հզօր նախարար և մեծ Սպարապետ, այնքան մինչ զի Թահմազն բոլորովիմբ հաւատայր զնացից նորին, իսկ նա հնարս հնարէր՝ բազմացուցանել զօգուտս իւր. և գիտէր զի հաստատութիւն և ապագայ յառաջադիմութիւն բախտին իւրոյ՝ կախեալ կայր ՚ի զօրացանոն, որոց ինքն էր այժմ գլխաւոր, քանզի մինն ՚ի յատուկ նշանաց իւրոց էր կարի քաջ ճանաչելն զմարդիկ վասնորոյ զմտաւ ածէր թէ՝ զոր ՚ի գլխաւորացն պարտէր ՚ի բաց մերժել. և զորն ՚ի տեղի նոյն կացուցանել. և զայս առնելով զսէր առհասարակ զօրացն յինքն ձգէր, անդստ մարդ գուն գործէր բազում անօրէնութեամբ զօգուտս նոցին աճեցուցանել, զռոճիկս նոցին ուղղութեամբ տայր՝ և զհանդերձս վայելուչս:

Եւ փոյթ ունէր զառաջինն՝ հրաւիրել զտէր իւր՝ խաղալ զօրովք և գնալ ՚ի խօրասան, և հաստատէր զնա բանիւ թէ՝ բնակիչք խօրասանու պատրաստեն զաւր առնուլ ՚ի վերայ թշնամեացն առհասարակ, և պատրաստեցան ըստ բաւականին ամրացուցանել զանցս Բանդահաթոյ և բանակ զօրացն չուեալ անտի զնայր ՚ի Նիշապուռ. և թագաւորն անձամբ անձին գլխաւոր երթայր զօրացն, և ՚ի հինգետասան երրորդն (ըստ լաթենացոց) մայիսի ամսոյն եմուտ Շահն ՚ի Նիշապուռ և ժողովուրդ

քաղաքին

քաղաքին ձայնիւ մեծաւ և անպատում խնդութեամբ աղաղակ բարձեալ գոհութիւն իւրեանց առուգլե հռչակէին և փափաքանօք ակն ունէին վերստին զօրանալոյ նորա, առ յայսպայն, որում և մտադիւր հաւատային. և յորժամ խնդային զի՝ առաջին եղև քաղաքն այն որ ազատեցաւ ՚ի ձեռաց Աղուանից յայնպիսի ժամանակի՝ յորում բնաւին այնպիսի երջանիկ փրկութե ակն ինչ ոչ ունէին. և խնդութի նոցա առաւել բազմանայր մինչ տեսանէին՝ զի վերադարձութի այս եղև ՚ի ձեռն առն՝ զոր մինչ իբրև զաւազակ նշմարէին. և յորմէ այնքան սարսէին՝ որքան ՚ի յաղուանիցն սարսափէին: Այժմ տեսանէին զի հաստատեաց ըզյոյսն՝ որով յուսադրեալ էր զնոսա, ամսովք ինչ յառաջ նշանակեալ էր թէ՝ դարձուցից զպսակն պարսից ՚ի գլուխն ճշմարիտ ժառանգին Շահութեան հուսկնին:

Եւ Աղուանքն որք ՚ի կողմանս յայնուիկ էին սրտաբեկ լինէին յաղագս սաստիկ վնասուն զոր ՚ի բանրահաթ կրեցին կարողութի ինչ ոչ ունէին կրկին կանգնելոյ, խոյս տուեալ գնային ՚ի Նիշապուր առանց աշխատ լինելոյ միաբանիլ ընդ Մելուքմահմուդին Դատաւորին Մաշատոյ և այսու պատահմամբ դիւրին լինէր Նատրըին աճեցուցանել զզօրս Շահին, և բաղձանք ժողովրդեանն առ ՚ի ազատ տեսանել զինքեանս ՚ի ձեռաց Աղուանիցն՝ և իղձ նոցին առ ՚ի հաստատել զօրինաւոր թագաւորն իւրեանց՝ փութով կազմէին բանակ մի մեծ և հզօր, և այսպէս Նատրըն լինէր այժմ գլուխ իբրև ութևտասն հազար զօրաց. և այսքան զօրք չէր երբէք երևեալ յայն կողմունս:

Արդ Նատրըն չհանդուրժեալ վանջանց էպս յապաղելոյ՝ փութով պատրաստութի առնէր չուել գնալ համան բանակօքն իւրովք ՚ի վր Ապտալեանցն որք տիրեալ էին Մաշատոյ. և կային ընդ իշխանութեամբ Մելուքմահմուդին. արդ Ապտալեանքս այսոքիկ յորժամ լուեալ էին զհարուածս Աղուանիցն որ ՚ի կիրճն բանրահաթոյ. և և թէ՝ Շահ Թահմազն մտեալ էր ՚ի Խորասան ծանր զօրօք փաղփաղակի պատրաստեալ էին պատսպարել զինքեանս, իսկ Մաշատ ոչ էր տեղի ինչ ամուր, և ժողովուրդք քաղաքին ամենևին տաղտկացեալ և սրտնջացեալ էին յապստամբեալ իշխանութենէ անտի վասնորոյ յորժամ եհաս Նատրըն զօրօքն իւրովք անդ, մեծաւ փառօք եմուտ Շահն ՚ի քաղաքն առանց ինչ հեղման արեան:

Եւ ժողովուրդք քաղաքին ազատեալ ՚ի ձնշմանէ ընկալան զԹահմազն մեծաւ ցնծութեամբ. և Նատրըն էր ծանօթ նոցա ՚ի ժամանակի Բաբուր խանին՝ որ այնքան ծանր նախատանօք նախատեալ էր զնա անդ, և այժմ բաձրագոյն պատուով պել ձանոյր. և ներկայ կացութին Շահին անձեռնհաս առնէր զինքն շնորհակալ լինիլ ՚ի Նատրըէն պարգևօք զանձուց, տակաւին յոյժ փոքրինչ եղև իւրոյ իշխանութեանն, և այնզի արդէն նշանակեաց հաստատել զնա մանաւանդ իշխող ինքեան քան սպարապետ զօրաց, և քանզի գերագոյն աստիճանն զոր շնորհեաց նմա ըստ կանոնի պարսից Թագաւորաց՝ էր անուն իւր, այնուհետև հրամաեաց կոչել զնա Թահմազղուլիխան, Այսու անուամբ յայտնէ ծանիցուք զնա, և զանազանեսցուք ՚ի Շահէն, մինչև ՚ի ժամանակ յափշտակելոյ նորա զպսակ թն իւրոյ:

Արդ Շահ Թահմազն որ այսպէս վաճնիչէր շնորհաց իւրոց՝ կարծիս տայ թէ՝ վս երախտագիտութե իւրոյ առնէր. քանզի ուղիղ և ազատ անձինք առ հասարակ պարտաւորութի անձանց իւրեանց համարին զայս գործ, սակայն յորժամ այսպիսի տուրք շնորհաց երախտագիտութեննէ և պատիառն որում տուեալ լինի, յայնժամ ոչ է մարթ այլում իմիք ակն ունիլ բայց եթէ պատկանաւոր հատուցման: Զիարդ և իցէ Թահմազն երևէր տգէտ, և ոչ զմտաւ ածէր թէ՝ յորժամ իշխանք կամ թագաւորք զամենայն իւրեանց շնորհեն. և չիք այլ ինչ առ ՚ի շնորհել ուրուրեք ընդունին (կամ

առ

առնուն) զհատուցումն արդեն պարգևեալ շնորհայն. Եւ ոչ օտար իմն է լինիլ այսպէս 'ի մէջ իշխանաց կամ Թագաւորաց որովհետև զմամաւուրս տեսանեմք զայս և 'ի մէջ հասարակ մարդկանց

Այս Թագաւոր յոյժ հետևէր վարուց հօրեւրոյ ըստ կրօնից մասին, ուստի խնդայր վ այսպիսի բարեբախտութե. և դներ 'ի մտի ջերմեռանդական պաղատանս մատուցանել զերեզմանին իմամըռըզային, զի' 'ի վաղուցհետէ իբրև ըզպարտաւորութի լեալէր Թագաւորացն պարսից' անգամ մի 'ի կեանս իւրեանց յուխտելանել 'ի նոյն գերեզման, որպէս Օսմանցիք 'ի գերեզման Մահմետին. Եւ տեսանելով զերծեալ 'ի պէսպէս վտանգից զկնի գունապաթայ պատերազմին, այլև յաղագս նախախնամական Աճապարգև վերադարձութե իւրոյ 'ի ձեռն սպարապետին իւրոյ Թահմազղուլի խանին, բնաւորապէս բորբոքիւր մտօք սաստիկ երախտագիտական մտածմամբ առած:

Տիրումն Գլուխառայն խորասանոյ 'ի 1728: Թուոյն մինչև 'ի բացվարումն Սուլթան Աշրաֆին 'ի սպահանոյ որ էղև 'ի թուին 1729:

Գլուխ Ա

Թահմազղուլիխանն նուաճէ զխոյասան և զՀէրաթ, և դառնայ յաղթանանակաւ 'ի Մաշատ. և բերէ ընդ իւր զգլուխ իշխանին Հէրաթոյ, Շահ Թահմազն զգեսպանս առաքէ առ թագաւորն Օսմանցւոց և նոքա զՍուլէյման աֆէնտին յղեն 'ի պարսս, Աշրաֆն սպանանէ զՄեհտ Ամամախանն զիշխանն Քըրմանիոյ, և պատրաստէ զինքն գնալ 'ի վր Շահ Թահմազին: Աշրաֆն չուեալ գնայ 'ի Դամղուն, և ըզ հարուածս մեծամեծս ընդունի. և յետոյ փախչի 'ի սպահան, և կազմէ զբանակ իւր 'ի Մուրչախոր:

Մինչդեռ Շահ Թահմազն զաղօթս առ Աճուղին մատուցանէր, Թահմազղուլիխանն խունկս կըոց փառամոլութե' և զինուորական փառասիրութեր, որոց միայն և ետառնէր յարգութեի:

Եւ կարգ օրինացն պարտաւորէր զՇահն նալ 'ի Մաշատ, մինչև զործ իւր բաւականացին' առ 'ի կարօղ լինիլ նորօք գնալ 'ի սպահան, և Թահմազղուլիխանն ցուցանէր Շահին զայս ճանապարհ ոչ զինքն բացարձակ կարեղութե. և զատ իշխանութե արասցէ ըզգործս իւր 'ի բանակիանդ: Եւ երկին խորասանոյ հանայն գաւառօքն ծանօթէին նմա' յաղագս բազմիցս ապստամբ տալոյ նր 'ի գաւառս անդ, թէ 'ի զօրապետութե և թէ յաւագակութե իւրում, վասնորոյ 'ի սկիզբն ամին բազումզօրք էլ նէր առ 'ի նուաճել և 'ի հնազանդութի ածել զքաղաքս և զգիւղաքաղաքս գաւառացն այնոցիկ' որք էին ապստամբեալք, ոմանք զինքնագլուխ իշխանութի ինչ (կամ հասարակապետութի) հաստատելով 'ի մէջ իւրեանց. և այլքն հնազանդելով Աղվանիցն:

Եւ համբաւ մտանելոյ Շահ Թահմազին յաղթանակօք 'ի Մաշատ յաջողէր զգործս Թահմազղուլիխանին, քանզի ըստ մեծագոյն մասին քաղաքք և գիւղօրէք դեսպանս առաքէին առնա, և զինքեանս բոլորովիմբ յօժարամիտս ցուցանէին յաղագս օգտի օրինաւոր Թագաւորին իւրեանց, և նախքան զլրանալ տարւոյս ամ գաւառք խորասանոյ 'ի հնազանդութի դառնային. և Աղվանքն առանց ընդդիմութե և թարց պատերազմի պարտաւորէին 'ի բաց մեկնել անտի և նասըրն յետս դառնայր 'ի Մաշատ ոչ այնքան կամակար, այլ' միայն վ երևելի յարգութի ինչ առնելոյ ն իւրում. նաև վ խորհուրդ առնելոյ յաղագս ապագայ գործոց պատերազմին:

Եւ

Եւ էին մնացեալք իբրեւ ամս տասն 'ի ժամանակին յորում բնակիչք Հերաթու (որք միջնին գաւառայն խորասանոյ) 'ի ձեռն յաղթութե Ագատալահ երիտասարդին Թօթամիշեանին 'ի լծոյ պարսից ներտ իրաց ինչ հաստատեալին իշխանութի, (կամ հասարակապետութի) 'ի մէջ իւրեանց' հանդերձ ամպատառ օջն Հերաթու, եւ ոչ ուրեք երեւի մեզ. թէ' յափշտակիչ երիտասարդս այս տակաւին միացեալ իցէ յայսմ իշխանութե' որոյ հիմնարկութի լեալեր գլխովին ձեռամբ նորա, եւ ժամանակ ինչ կառավարեալեր զիշխանութին զայն. եթէ եղեւ այնպէս. Արդ զկարդեցէ տէրութիս այս ահարկու բին լեալեր շրջակայ սահմանայն, եւ յայսմ ժամանակի 'ի խորհուրդ խորմտանէին առ ար հարկանել ընդ խորասան, իսկ յաղթութի Թահմազղուլիխանին 'ի վր Աղվանից որ 'ի Նիշապուռ, եղկնի 'ի բոլոր գաւառն խորասանոյ խափանէր զկատարումն խորհրդոց նոցա:

Արդ Թահմազղուլիխանն զկնի յայտնելոյ Շահին ընդ իրադրյն ճանապարհն որով կարէր նուաճել զՀերաթ, ընկալաւ հրաման գնալ 'ի վր գաւառայն Հերաթու իբրեւ երկոտասան հազար զօրօք, եւ 'ի բանակելն շուրջ զպարսպաւն քաղաքին' իսկոյն բնակիչք նորին (որք 'ի բնէ անհաստատ եւ անյոյս էին 'ի կարողութեց իւրեայ առ 'ի ընդդիմանալ բազդին եւ քաջութեն Թահմազղուլիխանին) հնազանդ էին նմա. եւ մատնէին զզօրագլուխս իւրեանց զօրօքն հանդերձ 'ի ձեռն Թահմազղուլի խանին, Անդ էր տեսանել թէ ոչի խոհեմ դատողութբ (զքաղցրութին ընդ աստուածութե խառնեալ) վարէր ընդ բնակիչս քաղաքին ըստ պէսպէս հանգամանաց իւրաքանչիւրոյն գործոյ, եւ հնազանդութի հաստատէր զնոսա. եղկնի այնորիկ զունտի 'ի զօրաց իւրոց 'ի քաղաքի անդ կացուցանէր. եւ ինքն պատրաստ լինէր յետս դառնալ 'ի Մաշատ ըստ հրամանին զոր ընկալաւ 'ի Շահէն: Եւ այս պէսյաղթութբ դառնայր 'ի Մաշատ հանդերձ գլխովն իշխանին Հերաթու: Եւ սկսաւ զկատարեալ եւ զկարեւոր խորհուրդ խորհել, քան ընդ հարաւ չուել 'ի վայրն Սեճեստանու, ուր Աղվանքն արարեալէին հինգ ամօք յառաջ:

Եւ առ 'ի արգելու լզօսմանցին յոգնականութե Աշրաֆին զոր կարի ակամայ թագաւոր պարսից ընդունէին, վաղվաղակի ընդդեսպանս առաքէ Շահթահմազն 'ի դուռն Օսմանցւոց. եւ նոքա մեծ ազգին պատուով ընկալան զնա' որում ակն ոչ ունէր. եւ այն զի համբաւ մեծամեծ գործոյն Թահմազղուլի խանին հասեալէր 'ի կոստանդնուպօլիս, որով 'ի կասկած անկ ինչ անկեալէին յորպիսութեց կացին Շահթահմազին. Եւ թէպէտ խոնարհումն պարսից օգուտէր ինքեանց, սակայն դժուարինէրնա ցայժմ արկ լառ 'ի սկսնել յափշտակչի միում, որոյ հրամանատար եւ խրոխտ սիրան այնչափ բարձրացուցեալէր զինքն, մինչզի հանգիտանալ կամէր խոնդքարին, եւ համարձակագոյն նմա Սուլթան անուանիւր, բայց սակայն առ 'ի տեղեկանալ զերկոցունց իրակութեցն. եւ 'ի հաճել զնոսա. զՍուլէյման Աֆէնտին, որէր հաւատարիմ նախարար, 'ի պարսս առաքէին. եւ 'ի նմանէ փութով իրազգարծ լինէին թէ' Շահթահմազն (որ արդէն իսկ տէրէր խորասանոյ եւ Հերաթոյ) բազմախումբ եւ ընտիր զօրօք եւ մեծահռչակ սպարապետիւ միով փոխարկութի իմն խոստանայ 'ի մնալ սուտ պարսից թագաւորութե:

Արդ յայնմիկ ժամանակի Աշրաֆն, իբրու հարուած ինչ առեալ Օսմանցւոց բանակին, (թէեւ էր այն մանաւանդ պատահմամբ քան զօրութբ պատերազմի) զերկիւղ ինչ ոչ կրէր 'ի հալածակւոյն Թահմազէն. եւ ստէպ յիշէր զնա մեծաւ նախատանօք եւ ասէր թէ հաւաստեաւ գիտեմ զի անկարելի է վնաս ինչ հասանիլ ինձ 'ի նմանէ:

Եւ զկնի երկար ժամանակ պաշարելոյ նորա զքաղաքն Եզդ, եւ առ զնա. զի քանիցս անգամ արիւնք բազմաց Աղվանից հեղեալէին անդ եւ ոչ կարացեալէին առնուլ զքաղաքն զայն. աստ ի վերամնալ

ևս հնազանդիւր Աշրաֆին: Քանզի Մէիտ Ահմատխանն, որ մերձաւոր ազգականէր Թագաւորական տոհմի Մէֆոյն, 'ի ժամանակի խռովութեանս հասարակապետութի, կամ զինքն իշխան տէրութի ինչ հաստատեալէր 'ի Քիրմանիայ, և Աշրաֆն ոչ դադարէր յառաջ բերելոյ զզօրս առ 'ի յափշտակել զՔիրմանիայ 'ի ձեռաց նորին. Եւ սէիտ Ահմատն բազում պակասութիւնս ունէր զանձուցյաղագս Թոշակի զօրացն. և չքաւորութի գաւառայն զեկամուտս երկրին նուազեցուցանէր, ուստի զօրք նորին 'ի վախճանի փախչէին 'ի նմանէ, և ինքն անճարացեալ հնազանդէր Աշրաֆին, որ ոչ միայն մերձակայէր և հզօր, այլ' 'ի սմա միայն երևէին շնորհք Արքունի իշխանութե, և խնդրէր 'ի նմանէ թէ յիշեա, զի ես միայն մնացի 'ի կարգի' յորում եսդ դու, ուստի յուսամ զի այնպիսի պատուով ընդունիցիս զիս որ իցէ վաելուչ իմում զերակայութե. և աներկեան արասցես զիս վս կենաց իմոց. և այսպիսի դաշամբս լիապէս հաւատարմութիս և ջերմեռանդութիս ցուցանէր կեալ 'ի սպասու Աղվանից իշխանին:

Եւ Աշրաֆն զպահպանութի խոստանայր խանին' հաստատութբ անջնջելի հրովմանց, և գրեաց առ նա գալ 'ի սպահան զօրովքն իւրովք խաղաղութբ ընդ յիմի: Ահա աստանօր նենգաւոր Աղվանն այս հաստատեաց' օրէնք իւր օգնիչէր իւրոյ խորամանկութե, և քանզի 'ի հասանել խանին 'ի Շիրազ, իշխանն Շիրազոյ արգելանօք յղեաց զնա 'ի սպահան և զգլխատեցին զնա անդ. Գաւառքն Քիրմանիոյ և ծովեզերքն միանգամայն մինչև 'ի բանդար աբաս. Հնազանդեցան Աշրաֆին, և այնքան ձգտեցաւ իշխանութի նր, մինչ զի զօրքիւր չէին բաւական պահպանել զնս, անողորմութինք. և յափշտակութիւք' որք մինչև ցարդ լինէին 'ի ձեռս Աղվանից, 'ի յետոյն աղքատութիս ածին զբնակիչսն, որով և Աշրաֆն տկարանայր, և ոչ կարէր զզօրս բազումս պահել առ 'ի իշխել 'ի վերայ այսպիսի լայնածաւալ երկրի. և պարսիկքն այնքան աւ ախորժէին մտանել 'ի ծառայութի Աղվանից' որքան Աղվանքն զերկբաւութիս կրէին 'ի նոցին հաւատարմութենէ: Եւ դժուարինէր նոցա ակնունիլ զմեծամեծ զօրս ածելոյ 'ի Ղանտահարոյ, քանզի Հուսէյնխանն որ տէրէր գաւառայն այնոցիկ, զկնի սպանման եղբօր իւրոյ Մահմուտին 'ի սպահան. մանաւանդ թշնամի ճանաչէր զԱշրաֆն քան բարեկամ. և բայց յայսմանէ բնականապէս կարծելիէր թէ Աշրաֆն 'ի բաց փախչելոյէր 'ի սպահանայ. ուստի դժուարինէր Հուսէյնխանին զօգնութի ինչ առաքել Աշրաֆին. զուցէ թէ խոյս տայցէ նոքօք 'ի Ղանտահար, և իշխանութբն' որով սպան զՄահմուտն, պահանջեսցէ զիշխանութի գաւառայն այնոցիկ:

Հոգևոր և մարմնաւոր կարևորութիւք սերտիւ միացեալէն 'ի Մահմետական կրօնս, որով խոնդկարն համարի Թագաւորել 'ի վր Օսմանցւոց իբրև իմամ. (որէ գլուխ օրինաց) և էփոխանորդ խալիֆայից ուստի զհնազանդութիս պահանջէ յամ Մահմետականաց սուննի ցեղին, վասնորոյ Աշրաֆն սուննի գոլով ոչ կարէր իմնկերպիւ հրաժարիլ 'ի խոստովանելոյ զնա այնպէս, առանց պատճառելոյ զինքնակալ իշխանութի իւր, զիարդ և իցէ' խորագիտութբ խորհեաց հնազանդութբ յուզել զօգուտն իւր. քանզի հաւանութի ընկալեալ 'ի սուլթանէն Թագաւորել 'ի պարս, և զայսպիսի աստիճան և կալողութի օրինօք ունելով, այլև' ունելով զայնպիսի հզօր պահպանիչ 'ի զարհուրելի թշնամւոյ 'ի քուն մուծանիւր հաստատութբ և ապահով լինէր, և կարծէր զտէրութի իւր շինեալ հաստատուն 'ի վր խարսխաց ուստի բազում խնամօք, ընկալեալէր Ռուրշիտ էֆէնտիփաշայն 'ի սպահան, և բազում նշանս պատուոյ և յարգութե ցուցեալէր նմա:

Եւ առ 'ի ոչ պակասեցուցանիլ 'ի համահաւասար վճարմանէ, Օսմանցիքն ևս զմեծամեծ պատրաստութիւնս արարին առ 'ի ընդունիլ զԱղվանի էլչին. որ յայսմ ամի յամսեանն յուլիսի եհաս 'ի կոստան-

դնու

8539.57
903
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

դնուպօլիս, և անչափ խնդութեամբ ընկալան զնա, առաւել քան զԹագաւոր ոմն յաղթանակօք դարձեալ. բայց զարմանք իմն լինէր անդ, քանզի Դեսպանն այս այնքան մեծամեծ տեսարանս միանգամայն առ ոչինչ համարէր, այսինքն զօրաց կարգադրութիւն. և թնդանօթից և այլ հրացանից և մեքենայից 'ի գործածութիւն, այլ մտանէր 'ի Կոստանդնուպօլիս, առանց յաջ կամ յահեակ ակնարկելոյ ակնաւ ըզզօրանն իւր ընթեռնուլ:

Եւ այսու պատահմամբ բնականապէս կարծել լինէր, զի՝ Դեսպանն այս զհամբաւ ազգին իւրոյ 'ի մեծագոյն արբութիւն յօժարեալ ցուցանել ջանայր, և զնախանձն Ածային 'ի սիրտս Մահմետականաց շարժել կամէր, ըստ Օսմանցւոց սովորութեան: Եւ այսպիսի արարողութիւն սակաւ ժամանակաւ յառաջ՝ գլխաւոր պատճառ լեալ էին իւրոյ Աշրաֆին, և զօրաց նորին 'ի մեծամեծ վտանգից: Սակայն Դեսպանն այս զգործ առաւել գործեաց քան զհրամայեալն ինքեան, որով զնշան ինչ եցոյց Օսմանցւոց 'ի վնաս ազգին իւրոյ:

Արդ Աշրաֆն վայելէր զքաղցրութիւն խաղաղութեան. Եւ զի՝ սէր վայելչութեան բնութիւն է ազգի մարդկան, և ազատութիւն 'ի յաշխատանաց 'ի հասարակին՝ միջոց հասանելոյ առ այն. և զի Աշրաֆն էր այր՝ այր խորագէտ, յոյժ շրջադէտ և քաջասիրտ պատերազմօղ՝ բայց սակայն զորէն արևելեան ընտիր քաջամարտկացն ըստ մեծի մասին, ըզբնական օրէնս ոչ գիտէր, վասն որոյ թուէր նմա 'իբրու թէ հասեալ իցէ 'ի վախճան գործոյն զոր սկսեալն էր, ուստի և բնական էր նմա խնամել զհաճոյս կամաց իւրոց. և ցուցանել զտարփանս անձին, որոյ վասն և զմասն բանակին իւրոյ արտաքոյ պահէր, և յանկուցանէր զինքն 'ի յորս և 'ի կերուրս պալատից, իսկ որքան առ սէր կանանցն էին յոյժ չափաւոր, և ոչ ըստ բնական բղջախոհութեան Մահմետականաց, թէ և անզուսպ օրէնս ունէին առ այն:

Եւ մինչցայրդ Աշրաֆն իբրև զաւազակ ոմն կարծէր զՆատըրն. իսկ այժմ սկսաւ իբրև զհզօր Թշնամին համարել զնա. Եւ Շահթահմազն այնքան ծաղր համարիւր 'ի մէջ Արքունի պալատին 'ի սպահան, մինչ զի համբաւ այնքան յաջողութեանց որ 'ի կողմանս արևելից նորին տէրութեան. ոչ երբէք խռովեցուցանէր զզօրս Աղվանից և զզօրագլուխս 'ի բանակին նոցա, և եդեալ էին նմա զանուն. Սակզատայ, փոխանակ կոչելոյ զնա Շէխզատայ, (սակն շուն է, և զատայն զաւակ) և խնդալով առէին թէ՝ 'ի դիպուկ ժամու, սակզադայն անկանելոց է 'ի ձեռս մեր: Եւ այսպէս պատշաճէր նոցա խօսիլ առ 'ի քաջալերել զզօրս իւրեանց. զայսպիսի նախատանաց կարծիս հաստատելով 'ի վերայ թշնամւոյն իւրեանց և Աշրաֆն զկացութիւն զօրաց իւրոց և զզօրութիւն գնտից նոյին հաստատապէս գիտելով՝ պատկանաւոր ժամանակ համարէր, պատրաստ լինել ընդդէմ Մրրկին որ սպառնալով երկեցուցանէր զնա, վասն որոյ հրամանս առաքէր համայն զօրացն որք 'ի մերձակայ գաւառսն կային, սոյնպէս և նոցա որք 'ի բուն տէրութեան իւրում էին վաղվաղակի 'ի սպահան գումարել: Եւ առ 'ի զգուշանալ զի ապստամբութիւն ինչ ոչ լինիցի յօգուտ Շահթահմազին 'ի քաշան, 'ի Ղում. 'ի Թեհերհան, յեզտ. յայլ մեծամեծ քաղաքս և 'ի գիւղաքաղաքս որք ընդ իշխանութեամբ իւրովն էին, հրամայեաց, զի ազգն պարսից որք բնակիչք էին տեղեացն, և որք զսուր առնուլ կարէին, միանգամայն 'ի բացթողուցուն զբնակութիւնս իւրեանց, և խոյս տայցեն 'ի տեղեացն. և այս հրաման սպառնմամբ մահու լինէր, և սոյնիսկ հրաման 'ի սպահան ևս լինէր:

1729: Եւ զկնի այսպիսի կարգադրութեանց՝ թիւ բոլոր զօրաց իւրոց ոչ կարէր առաւել քան զերեսուն հազար, մասն ինչ նոցին Դարկաղնցիք, հասարակիցքն էին, որք չէին տկարագոյնք քան զզօրսն. որով նախնին իւր, տիրեալ էր պարսից տէրութեան և 'ի սկիզբն սեպտեմբերի ամսոյն եհան զբանակ իւր արտաքոյ սպահանոյ, և եբեկու հարիւր զինաւորս միայն եթող 'ի քաղաքին անդ, և դու տես ինձ թէ՝

յորքան

որքան ողորմելութիւն էր անկեալ ապերջանիկ քաղաքս այս, յանխափան սրածութենէ՝ զոր Մահ-մուտն և ինքն գործեալ էին ՚ի նա, մինչ զի այսպիսի սակաւ զօրս բաւական համարէր ՚ի հնազան-դութեան երկիւղի պահել զլայնատարած քաղաքս այս, և զսակաւս ՚ի բնակչացն ապրեցուցեալ էին այնոքիկ ևս էին ծերք, կանայք, և մանկտիք. և յետ սակաւ աւուրց չուէր խաղայր բանակօք իւրով ըստ հասարակ կանոնի պարսից թագաւորաց՝ մեծաւ փառօք, և ուղղեաց զէնքն դէպ ՚ի դաշտս Դամղունայ. ՚ի գաւառս Ղումաշոյ, և ՚ի վերջումն սեպտեմբերի ամսոյն հասանէր անդ. և էր իբրև չորս հարիւր մղոն ճանապար մինչև յանդ, և խորհէր ՚ի խօրասան մտանել և յանկարծակի անկանել ՚ի վ(երայ) Շահթահմազին ՚ի ժամանակի նորոգ հաստատութեան թագաւորութեան նորին, որով և խափանել զաճումն խմբից նորին:

Արդ Թահմազղուլիխանն զմեծագոյն մասն տարւոյս անցուցանէր ՚ի գումարումն զօրաց իւրոց և ՚ի կրթութիւն նոցին, և զդժուարութիւն ինչ կրէր առ ՚ի ամրացուցանել զնոսա, քանզի ժողովուրդ երկրին դեռևս ոչ էին մոռացեալ զսոսկումն զոր ՚ի հզօրագործութենէն Աղվանին յինքեանս կրէին, և գիտէին զի փութով ՚ի մէջոտ ելանելոյն ՚ի վ(երայ) պարսից, վասն որոյ յապաղելով գային առ Նատըրն. և ժողովեաց Նատըրն զօրս իբրև քսան և հինգ հազարս, և որքան առ կրթութիւն և առ կատարելութիւն զօրացս՝ այնքան մարզեալ էր զնոսա, և այնու այնքան նշանս հնարագիտութեանց ցուցեալ, մինչև ՚ի մեծամեծ յաջողութիւն հաստատութեան բորբոքել զՇահն: Եւ ճանապարհն զոր հնարեալ էր Աշրաֆն առ ՚ի արգելուլ զապստամբութիւն յօգուտ Շահին՝ այժմ առիթ լինէր բազմաց մատուցանել զինքեանս ՚ի ծառայութիւն Շահին, և զի մերժեցան ժողովուրդ ՚ի բնակութեանց իւրեանց՝ նախանձն և չքաւորութիւն տանէր անդ, ուր զհաստատութիւն ունէին ընդունելութեան:

Սաստկագոյն փափագ Շահին առ ՚ի դառնալ յաթոռ նախնեաց իւրոց՝ սաստիկ բորբոքէր զինքն վրէժ առնուլ նախատանաց հօր իւրոյ, և արեանց այնքան ժողովրդեան, ուստի կամէր չու առնել զօրօքն իւրովք և գնալ ՚ի սպահան, որով ստիպեսցէ զԱշրաֆն ՚ի պատերազմ ելանել ընդ նմա, իսկ զգօնամիտ սպարապետ իւր Նատըրն դիմադարձ լինէր խորհրդոյն, և յայտնէր նմա զիւր խորհրդոյն անպատշաճութիւն և զգլխովին որ պատահելոց էր ինքեանց, յաղագս հեռաւորութեան ճանապարհին, նա և առ երթէ՝ էլք գնացից Աշրաֆին պարզապէս ցուցանէ, զի՝ ինքն Աշրաֆն ելանելոց է ՚ի խնդիր արքայիդ, և այնժամ ՚ի հարկէ զվնաս մեծ կրեսցեն Աղվանքն՝ յաղագս աշխատանաց ճանապարհին, և զօգուտ ինչ ոչ գտանիցեն գումարմամբ նորոգ զօրաց: Քանզի տեսանէր Նատըրն զի՝ Աշրաֆն արդէն իսկ հաւաքեալ էր զօրս բազումս, և հաւաստիւ կարծէր զնոսա նաև գիտէր թէ՝ որքան թշնամին հեռանայ ՚ի սպահանոյ այնքան առաւել դժուարին և վտանգաւոր լինի դարձն նորին անդրէն, և արդ առ ՚ի չմուծանել զպատերազմ ՚ի խօրասան, նաև ոչ կորուսանել զարդիւնս աշխատանաց ծառայութեանցն Ղաճարից, Բայաթից, և այլ մերձակայ գաւառացն որք հաւատարմապէս հնազանդ էին Շահին, խորհուրդ արարին յառաջ խաղալ սակաւ ինչ, ընդդէմ Աշրաֆին հանդարտաքայլ՝ և թագաւորն հանդերձ բոլոր բանակօքն մերձ առ Դամղուն հասանէր նախ քան մտանելն Աշրաֆին ՚ի դաշտս Դամղունայ, և տեղիս այսոքիկ էր հեռի ՚ի կասպից լայնատարած լերանցն՝ որք հասեալ էին մինչև ՚ի հարաւային սահմանս կասպից ծովուն, և Թահմազղուլիխանն բարւոք համարէր այսոցիկ տեղեացս, ուստի եթէ նեղութիւն ինչ հանդիպէր իւրեանց՝ դիւրաւ կարէին խոյս տալ անդր և արդ ժամ էր նմա զբարեգոյն տեղին ընտրել՝ և անդ բանակել զզօրս իւր զովացուցանէր և ապահովացուցանէր զնոսա յաւուրս ինչ, մինչև մերձենալ Աշրաֆին բանակօքն իւրովք:

Եւ Աղվանքն ժամանակ ինչ սովորէին մանաւանդ կոտորել զպարսիկս՝ քան մարտնչիլ ընդ նոսա

և աղաղակ

Նաղարկաւ միայն կատաղի յարձակմամբ իւրեանց ՚ի փախուստ դարձուցանել զնոսա քան զօրութբ բազկաց. Հնարիւք մեքենայից, ուստի առ Հասարակ յաղթութե ակնունէին, եւ յորդորէին զզօրագլուխն իւրեանց ՚ի վր պարսից անկանել, բայց տեսանելով Աշրաֆին զյարմար կարգադրութիս պարսից բանակին ՚ի մարտ մտանելոյ, վասնորոյ պարտէր բազում զգուշութբ ընդ առաջ ելանել նմա, մանաւանդ զի կեանք ողջոյն իւր, կախեալ կայր ՚ի վախճանէ պատերազմիս, եւ տակաւին չէր կատարեալ զխորհուրդս իւր, մատեան առ նա զօրապետք իւր եւ ասեն; Եթէ՝ յառաջնումն նուագի լու լինիցի թէ՝ երկնչիմք դիմել ՚ի վր պարսից բանակին, զի ուղականքն ոչ եւս բերեն զկերակուրս ՚ի բանակ մեր, եւ յնուհետեւ դժուարին լիցի մեզ պատերազմել, եւ յնու յաղթեալ գտանիցեմք:

Եւ իբրեւ լուաւ Աշրաֆն զբանս զօրավարաց իւրոց, իսկոյն յարմարապէս դասակարգեաց զզօրսիւր, եւ յերկրորդումն հոկտեմբերի ամսոյն ըստ Հասարակ սովորութե իւրեանց ուժգին խիզախմամբ ՚ի ՚ի վր պարսկական գնդին դիմեին, եւ զօրք Թահմազղուլիխանին զդէմ կալեալ դիմանային Հարուածոյն եւ զՀրացանս իւրեանց կարգաւ առ Թշնամին արձակէին, եւ Աղվանքն ինչ ոչ կարացին ազդել ՚ի նս, յորմէ Աշրաֆն թէպէտ ոչ խռովեցաւ, սակայն զարմանայր յոյժ ընդ կրթութի եւ ընդ լռութի պարսկական զօրացն. եւ վաղվաղակի զնոսա ՚ի Հեծելոցն ՚ի բաց Հանէր ՚ի պատերազմէն, եւ յայլ Հնարս ձեռնամուխ լինէր նոքօք, որ կարի օգտակար էր լեալ նմա յանցեալ պատերազմին որ ՚ի Թուրքս, եւ բաժանեաց զնոսա յերկուս գունդս, յորոց իւրաքանչիւրն պարունակէր զերիս Հազարս, եւ կացոյց ՚ի վր նոցա զօրագլուխս Համաւս եւ քաջս, եւ Հրամայեաց նոցա զԹշնամեօքն պատել շուրջանակի, եւ Հարկանել զնոսա յետուստ եւ կողմնակի. եւ իբրեւ նա զայս Հրաման առնէր Թահմազղուլիխանն որ արթուն եւ պատրաստ կայր՝ յամենից կողմանց զդիմունիլ Թշնամւոյն, Հարեալ յետս վանէր զնոսա, այնքան սաստիկ Հարուածովք, մինչ զի ՚ի շփոթումն անկանէին. եւ զկնի զՀրացանսն ՚ի գործածելոյ՝ դիմէր Նատըրն ՚ի վր բանակին նոցա մեծաւ ցասմամբ, խորտակէր եւ Հալածական անՀետ առնէր զնոսա, եւ այսպէս դիւրաւ յաղթահարէր զպատերազմն:

Արդ զՀաստատուն ոչ գիտացաքթէ՝ որքան Հոգիք անկան յերկոցունց կողմանց յայնմիկ պատերազմի, բայց կարծեօք ասեն թէ յոյժ բազումք յաղվանիցն անկան, քանզի երկոտասան Հազար անձինք միայն ելին ՚ի սպաՀանոյ, յորժամ փախեան ՚ի սպաՀանոյ, որով իմանամք թէ տասն Հազար, Հոգիք անկան ՚ի նոցունց. արդ ուղտք, զամբարակ, եւ ամ պէտք բանակին ի ձեռս յաղթողին անկանէին. եւ ինքեանք այսպէս արմատախիլ եղեալ դէպ ՚ի Թեհրան փախստական լինէին, եւ թէպէտ միջոյ ճանապարհին էր իբրեւ երկու Հազար մղոն, սակայն յաւուրս երկուս անդր ժամանէին, եւ յետ կողոպտելոյ զբնակիչս տեղւոյն եւ դադար առնելոյ, Հապճեպ ստիպմամբ դէպ ՚ի սպաՀան դիմէին

Եւ զկնի միոյ աւուր Հասանելոյ իւրեանց ՚ի սպաՀան, Հրամայեաց Աշրաֆն բոլոր Աղվանից որք անդ բնակէին, ելանել ՚ի քաղաքէն ամ ընչիւք իւրեանց եւ գնալ ՚ի բերդն (բերդս այս էր շինեալ մերձ քաղաքին զկնի գալոյ Աղվանին) եւ Հրամանս այս այնպիսի ամբոխիւ կատարիւր, մինչ զի՝ թուէրթէ՝ քաղաքն պատերազմաւ առաւ: եւ Աղվանքն վարէին եւ արտաքսէին զայլ բնակիչսն քաղաքին ՚ի տանց իւրեանց. եւ աւերեալ ապականէին զինչս նոցա զորս տանիլ ընդ ինքեանս ոչ կարէին, եւ կրպակսն կողոպտէին, եւ յետ կատարելոյ զայս ամ ելեալ Աշրաֆն զօրօքն իւրով գնաց ՚ի Մուրչախոր, եւ անդ եհար զբանակ իւր բարւոք կարգաւորութբ:

Գլուխ Բ

Թահմազղուլիխանն Հրաւիրէ զՇահն մնալ ՚ի Թեհրան, Պատեր-

ազմն

ազգի Մուրչախորու, Աշրաֆն սպանանէ զՇահ Հուսէյնն և փախչի՛ի սպահանայ պարսիկքն առնուն զքաղաքն, և վրէժ առնուն յաղվանիցն, մուտք Շահ Թահմազին ՚ի սպահան, և տալն զիշխանութիւն սպարապետին ի բուն Թահմազղուլիխանին ժողովել զզօրսն:

Արդ Թահմազ ղուլիխանն այժմ զակատէր նախանձու զհետ փառաց իւրոց և վարէր քաջում զգուշութբ առ ՚ի խափանել զփութարկութի բախտին իւրոյ, իսկ Շահն կարծելով զանձնէ հաստատուն ՚ի յաղթութիւն ի բ՚ ՚ի վր փախստական Աղվանից, անծայծ ցանկայր տեսանել զսպահան. և սակայն Թահմազ ղուլիխանն այլ ինչ ածէր զմտաւ, այսինքն թէ՝ թագաւոր իւր և ազգն նա առաւելագոյն մասն առնէր ինքեան ՚ի համբաւոյ յաղթութեց իւրոյ, նաև թէ զինուորք իւր համարէին զանձինս իւրեանց իբրև մարտիկս ընդ իշխանութբ մանաւանդ թագաւորին իւրեանց քան թէ՝ սպարապետին, և զի այսու ոչ լցուցանէր զիղձ ինքնիշխանութե նորա ՚ի վր զօրացն, և ոչ զփառամոլութի իւր, այլև ոչ զփափաք պավանաց, ուստի ՚ի դիպուկ ժամու ասէր Շահին թէ՝ այսուհետև չէ հարկ ՚ի ձեռն խռով արքայի ՚ի քաջալերել զզօրս քո ներկայութբ քով, և պատկանաւոր է եած գերագանց քաջութեանցն ՚ի Դամղուն, և թշնամին մեր այսուհետև է մանաւանդ արհամարելի քան երկնչելի. նա և ամենևին կասկած ինչ ոչ ունիմ յարմարոյ ջնջել զնոսա ՚ի սուղ ժամանակի, և ժողովուրդ քոյ ամիւ կախեալ կան ՚ի կենդանութե քումէ, զի եթէ՝ ձախորդութի ինչ հանդիպեսցի ՚ի ձեռն խռով, ողորմելի ժողովուրդ քոյ ամենևին ոչ կարեն ազատիլ ՚ի լծոյ Աղվանիցն, քանզի զսիրտն զոր տերդ իմ արքայ ետուր նոցա՝ զսէր և զքաջանս նոցին ՚ի քեզ նուաճեցեր ցուտի և ջանս կենդանութե անգին անձին ցանկան, և այս զոր առաջադրեմ, ոչէ իմ միայն այլ կամք և կարծիք առհասարակ բանակին, որք խոնարհութբ աղաչեն զպետութի քո տէր իմ արքայ, մնալ քեզ ՚ի Թեհրան վեց կամ ութն հազարօք ՚ի պահպանութի անձին քո:

Այդ առաջադրութիւս այսպիսեան տպաւորեցաւ ի միտս Շահին՝ որքան խորամանկ ղուլիխանն ցանկայր, և Շահն հաւատ մեծ ունելով ՚ի սպարապետ իւր թողլ զայդ նմա ունիլ զայնպիսի պերճութի, զոր իբրև զփրկիչ երկրի իւրոյ իրաւամբ պահանջել կարէր, եթէ հիմունք գործոյ իւրոյ լինելոց բարի: Եւ արդ առանց արգելման չուառնէր թագաւոր ղուլիխանն, ամուր ուր հռչակելով ըզյաղթութիւնս իւրյաւուն Շահ Թահմազին, նյմատեղիս գելապոյն պատուով նյութ ընդունելութե ընդունելին զնա, և զօրք իւր մշտնջենաւոր աձէին և քաղուած կամաւ որոպէսս նուիրէին զինքեանս իծառայութի նորա, առ ՚ի ենաջինջ առնել զաղվանս:

Եւ Աշրաֆն սպասէր պատերազմին, և զամ հարկաւոր պատրաստութիւն արարեալէր ընդդէմ թշնամւոյն, քանզի ոչ միայն թագաւորութին՝ այլև կեանք իւր կախեալ կայր ՚ի վախճանէ պատերազմիս, և նոյնոգի յուսով (առ ՚ի վերանորոգել զինքն ՚ի հարուածոյն որ ՚ի Դամղուն) զամ փոյթ յանձին կալեալ յարմարապէս կազմէր զբանակ իւր, զմարտկոցս շինէր, զպարիսպս կանգնեցուցանէր յաղագս թնթանօթից և հրացանից, և պատնիշօք պատէր զնոսա, և քաջութ կարգադրութիւն առնէր զօրաց իւրոց:

Եւ յերեքտասան երրորդ Նոյեմբերի ամսոյն ընդ այգն, երևեցաւ Թահմազ ղուլիխանն իւրով զնդաւն՝ տալ պատերազմ ընդ Աղվանս, և զօրք պարսից յառաջ խաղային ընդդէմ Աղվանից, և զդէմ կալեալ հանդուրժելին թնթանօթից, հրացանից և այլ ամ մեքենայից՝ առանց շփոթման և խռովութե, մինչև մերձ լինել նոցա թշնամեաց, և հասարակապէս զհրացանս իւրեանց ՚ի գործ ածէին.

և

նայնպիսի կարգաւ և վստահութեամբ 'ի լինոցա դիմէին, մինչ զի զբարւոք մարզեալ զօրս 'ի խռովութի ածել կարէին, վասնորոյ խուճապարեալ Աղվանիցն տեսանելով զանկումն այնքանից հոգւոյ, (եղի գնդակի նոյին հողի ընդունայն անցանէր) զոչ այլ ինչ խորհիլ կարէին, բայց միայն փրկել զանձինս իւրեանց, ուստի սաստիկ խուճապմամբ փախստեայ լինէին անտի, և հոգիք իբրև չորեք հազարք արդէն անկանէին 'ի նոցունց, և փախստեայքն ըստ մեծի մասին 'ի սպահան փութային, և յիններորդ ժամու աւուրն անդր ժամանէին. իսկ Աշրաֆն սակաւ արամբք գիշերայն դառնայր 'ի սպահան, և զինքեանս յաղթողս հռչակէին, իսկ լալումն և ճչումն կանանց և մանկանց իւրեանց որք էին յամրոցի անդ, զներհակն հաստատէին, և աղմուկ մեծ անկանէր յամ կողմանս քաղաքին, այնքան՝ մինչ զի որորմելի ժողովուրդն յիշելով զսպառնալի գործսն Աղվանից՝ ասէին ցմիմեանս, եթէ ձախորդութիւն ինչ յորում ժամանակի և հանդիպեսցի նոցա, առ հասարակ 'ի սուր մաշեսցեն զինքեանս.

Արդ Աշրաֆն յոյժ տագնապէր կատարել զգործն զոր ոչ էրէք դիտէր, ուստի առ 'ի լնուլ զնախանձ իւր, շաղախէ զձեռս իւր յարիւն Շահ հուսէյնին. զոր մի Մահմուտն ամ սարսափելի բարբարոսութեամբ իւրով խնայեալ էր, և այժմ սպանանի 'ի ձեռաց նենգաւոր փոխանորդ ի նորին. և կաւ Աշրաֆն զչուտերս և զայլ կանայսորքէին ազգականք Շահ հուսէյնին առ 'ի սպանանել զնոսա ընդ ինքեան:

Եւ Աղվանիցն այլոց հնարից ակն ինչ ոչ ունելով զփախուստ առնուլ պատրաստէին, ուստի սպառազեալ էին 'ի ժողովումն աւարաց, և բաց 'ի գրաստուցն յորոց վերայ զկանայսն և զպիտոյսն իւրեանց բարձին, այլև զբազում ջորիս և ս բառցին, և իբրև զերիր հարիւր ուղտս և ստանէին՝ յորոց վերայ (ըստ մեծի մասին) բարձին զգանձս, ըզպատուական զարդս, զկահս, և զստացուածս արքունի պալատին: Եւ յայնմ գիշերի ելին 'ի քաղաքէն, և էին իբրև երկոտասան հազար, թագաւորեալ 'ի վերայ Պարսից ամս եօթն և աւուրս քսան և մին, Արդ կարելի էր թէ՝ Աշրաֆն սարսափեալ յաղթողորմ գոչմանէ Շահ հուսէյնին 'ի սպանանելն իւր զնա, կամ պատրաստեալ մտօք 'ի ժողովել զգանձս իւր կամ 'ի գուն գործել փրկելոյ զանձն իւր, ոչ էր մտածեալ թէ՝ զանցառութիւն թագ մազգրլիխանին զիպուկ ժամէր իւրնգլապես վրէժ առնուլ 'ի Պարսից 'ի ձեռն այլ բազում անօրոմութեանց իւրոց, վասնորոյ մինչդեռ տակաւին չէր հեռացեալ 'ի քաղաքէն երկու փարսախս՝ վաղվաղակի զօվլաթն իւր յետս առաքէ գնդաւ միով, և ասէ նմե հրաման առեալ էր նոցա՝ հրձիգ առնել զքաղաքն, և սպանանել զայնոսիկ որոց և հանդիպեսցին 'ի ճանապարհի. Եւ էկին սոքա մինչև յայգեստանս արքունի մղոնաւ միով հեռի 'ի քաղաքէն զորս տեսեալ հասարակ ժողովրդոցն քաղաքին, իսկոյն ծանեան թէ՝ 'ի չար խորհուրդ ինչ եկեալ էն, ուստի փութով զարապանս բազում ժողովէին և հարկանէին զայնս այնպիսի կերպիւ՝ յորմէ Աղվանքն կարծեցին թէ զօրք պարսից մտեալ էին 'ի քաղաքն, և վաղվաղակի յետս փախչէին՝ առանց գործելոյ զչարս ինչ, և կալեալ զճանապարհ շիրազոյ գնային:

Արդ այսպիսի տագնապաւ փախուստ նոցին անտերունչ եթող զքաղաքն, ուստի ոչ միայն զեղականք՝ այլ և բնակիչքն և ս սկսան կողոպտել, ոչ միայն զտունն որք ամայի էին, այլև զմիմեանց. և այսպիսի անսանձ անկարգութիւն՝ բազում վրդովմունս պատճառէր 'ի քաղաքի անդ, և աւուրս երկուս յայսպիսի թշուառութեան մնայր, քաղաքն և ոտկարքն հզօրայ հնազանդ էին, զի ոչ ունէին տեղի ապաստանի առ 'ի դիմել 'ի քաղաքական, կամ 'ի զինուորական իշխանութիւն ինչ վասն զանկատելոյ:

Եւ

Եւ 'ի վեցտասաներորդն Նոեմբերի առաջէ Թահմազ ղուլիխանն գունդ մի հազար և հինգ հարիւր զօրաց, առ 'ի փլանել զպնդգունսն, և զկողոպտիչսն եւտիրել քաղաքին Արքունի պալատին, և զբանից քաղաքին՝ յորմոտանելոյեր, ինքն. արդ դժուարին իմն թուիթէ՝ զիարդ Թահմազ ղուլիխանն զկնի Մուրչախօրու պատերազմին ոչ հետամուտ լինէր Աղվանիցն. և թոյլ այր նոցա կողոպտել և տանել զստացուածս քաղաքին, այլ մեք նկատմամբ ցաւակցութե իւրոյ որ 'ի յազգն Պարսից պատիմք կարծել զնա իբրև այր անաչառ, և ուղիղ ամ յատկութ, նաև թէ փառք իւրդ եւ և ոչէր 'ի կատար հասեալ, և բայց 'ի պարտականութենէ սպարապետի՝ որում հարկէր զգուշանալ յամ չար ժուածս իւր ընդ թշնամւոյ խորապ խոր ոմ զաղվանս, եթէ մտածեսցուք և զվարս նր՝ զկնի մանելոյ իւրոյ 'ի քաղաքն, արդարև կարեմք ասել թէ՝ խորհուրդ իւր ոչ այլ ինչէր, եթէ ոչ պաաերազմ 'ի կատար հասուցանել զուցեթէ ջանք սպարապետի միոյ՝, իբրև զինքն, անպիտան լինելոյեր։

Եւ իբրև եմուտ խանն 'ի քաղաքն. զամ փոյթ յանձին կալեալ խաղաղեցուցանէր զքաղաքն, և զաղմուկ ծողովրդեան հանդարտեցուցանէր, և զկնի հրաման առնէր սաստկապէս ջանիւ քորնել զաղուանս՝ որք յաղագս հարկաւորութեց ունէին անդ մնացեալ էին՝ թագուցեալք 'ի տունս ազգականաց և բարեկամաց իւրեանց՝ սգաստութե ակնունելով 'ի ձեռս այլոց զողայն, որոց կալեալ զկաղումս 'ի հրապարակ անդր ածէին և սպանանէին։ Եւ այսգործ կերպիւ իմն վճար լինէր հողւոյ բազմաց՝ զորս փառաւորեալ և խոյս տուեալ Մահմուտն չարաչար 'ի կոտորածէր վասնեայ, և այնց որ 'ի պատճառանօք կոտորեալ էին յամ ժամանակս Աղվանից տէրութե։ Եւ արդ զարմանալի իմն լինէր անդ քանզի Թահմազ ղուլիխանն ապրեցուցանէր զայնս՝ զորոյ զբարերարութիւս բնակիչք քաղաքին պատմէին նմա, յաղագս ինաածոյն զոր ցուցեալ էին իւրաքանչիւրոցն։ Եւ 'ի սմին ժամու պատգամաբերք հասին առնա յաղվանիցն Ղազվինոյ, որք ոչ միայն զհնազանդութի խոստանային Շահին այլև՝ զանձինս 'ի ծառայութի նր մատուցանէին, և այսոքիկ զօրք 'ի հարկէ յոյժ հաճոյանային 'ի միտս պարսից սպարապետին, ուստի յանուն և եառն իւրոյ Շահ Թահմազին՝ ինամօք ընդունիլ զնոսա խոստանայր։

Եւ արդ կոտորումն Աղվանից որք 'ի սպահան՝ ոչ բաւական վրէժխնդրութի լինէր զայրացեալ հոգւոյն ժողովրդեան, քանզի յորժամ զմտաւ ածէին զամ տեսակս անցեալ չարչարանաց իւրեանց սիրտ նոցին 'ի բարկութի բորբոքիւր, Եւ թէպէտ Մահմուտն 'ի մերձենալ վաղճանի իւրոյ բռնութի բարձաւ 'ի միջոյ, սակայն իբրև զհիմնարկող Աղվանից տէրութե՝ 'ի Պարսս, 'ի փառաւորեալ շիրմի եդաւ, զոր բազում ծախիւք շինեալ էին 'ի յիշատակ նորա 'ի ծառաստանի միում, և պարիսպ եդեալ շուրջ զնովաւ, թէպէտ և ինքն էր այնքան անողորմ մարդասպան, սակայն աւելոր դապաշտութիք նոցա՝ որք մասնակից եղեալ էին նմա 'ի յաղթութիւն նր, պատուաբէին զնոսա աղօթս առնել 'ի վր գերեզմանի նր, և այս գործ զյասուն ժողովրդեան սպահանոյ և զքան զև աճեցուցանէր, ուստի անժուժօրէն տապնապէին աւերել զշիրիմն զայն, և իբրև հրաման կալան 'ի խանէն, բազմութիք կատաղի և սանձարձակ արանց 'ի մի ժողովէին, և կործանեալ զշիրիմն՝ հարթ հաւասար առնէին, մինչ զի տակերայն նր դադար ոչ տային, և առ 'ի յաւելուլ զնախատինս նորին՝ զտեղին զայն աղբանոց առնէին։

Եւ տակաւին Շահ Թահմազն էր 'ի Թիրհան, և անդ լսէր զանցս սպահանոյ, և պատրաստիւր գնալ և տիրել աթոռ իւրում, և առեալ զմեծ մասն զօրաց իւրոց գնայր 'ի Սպահան, և յիններորդն դեկտեմբերի ամսոյն հասանէ 'ի գիւղն կէզ կոչեցեալ, որ իբրև վեց մղոնաւ հեռի է 'ի Սպահանոյ ուր հանդիպէր Սպարապետին իւրում Թահմազ ղուլիխանին, և իբրև ետես զնա Շահն, էջ երիվարէն

վարէն 'ի պատիւ Սպարապետին, և Սպարապետն ևս վաղվաղակի իջանէր յերիվարէ իւրմէ, և ընթանայր ընդ առաջ նորա մեծաւ պատուանօք, և արգելոյր զնա՝ ցուցանել զայնպիսի նշան մեծի խոնարհութե, իսկ Շահն ոչ ունկնդիր լինէր նմա, այլ՝ սակաւ ինչ քալէր ընդ նմա, և ասէր թէ՝ ոչ կարացի ըստ արժանւոյն պատուել և մեծարել զայր՝ որ եղև փրկիչ երկրի իմոյ, և եհան զթշնամին իմ 'ի Սպահանոյ, Եւ զկնի սակաւ ինչ խօսակցութե կրկին հեծեալ յերիվար իւր յառաջ գնայր սուրհանդակօքն, և խանն զօրօքն իւրովք յետոյ նր գնայր:

Եւ իբրև եմուտ Շահն 'ի Սպահան, այնքան խնդութբ ընկալան զնա, որքան յանկարծահաս զերծումն յանիծեալ բռնաւորութենէ Աղվանիցն 'ի քաղաքս բարւոք օրինաւոր թագաւորին իւրեանց՝ բորբոքէր զնս; և յիշումն տարաբախտութե նորին առնել 'ի գութ շարժէր զյաւակից ժողովուրդն 'ի փառս հաւատոյ, քանզի սա միայն երևէր ժառանգ և շառաւիղ 'ի տոհմէ սէֆոյն: Եւ իբրև լուաւ զսպանումն հօր իւրոյ և ետես զպալատն որում ամօք յառաջ ամ հանգամանօք պայծառացեալ փայլէր՝ զի այժմ լուկ որմունք նորին երևէր, տրտմութի բարձաւ 'ի նմանէ, այնքան՝ մինչ զի յիշումն վերադարձութե յաթոռ իւր հայրենի ոչ բաւէր հանդարտեցուցանել զսաստկութի զթոյն որ տպաւորեալ կայր 'ի քաղցր սիրտ նորա, ուստի թէպէտ և թագաւորէր, 'ի լալ և յարտասուելոյ չպատկառէր: Եւ իբրև եմուտ 'ի հարէմխանայն՝ կին մի պառաւ անկաւ զպարանոցաւ նորա յոյժ խնդալով և կարի զարմացոյց զթագաւորն. և էր մայր իւր: քանզի բարւոք գիտէր զի Աշրաֆն զքորս և զայլ ամէն ընտանիսն իւր տարեալէր: Իսկ տիկինս այս զկնի գալոյ Աղվանին 'ի Սպահան միշտ ծպտեալ 'ի զգեստս աղախնոյ շրջէր յանձն առեալ համբերութբ զամ ազգ անարգ սպասուց և պաշտօնից որք վայելէին աղախնոյն մէջ:

Բազում խնդութեամբ լուաւ թագաւորն իբրև էտես զի մին 'ի ծնողաց իւրոց էր կենդանի, և ապա սկսաւ զկարգ թագաւորին լնուլ, և այնքան հեզութբ ընդունէր զամենեսեան որք գային առ նա՝ մինչև զսիրտ ամենեցունց յինքն յանկուցանել, և թէպէտ ժողովուրդքն յոյժ չքաւորեալ էին սակայն առատապէս օգնէին տակաւին բանակին, որոյ թիւ էր իբրև քառասուն հազար: Արդ Շահ Թահմազն (որոյ զթած բնութի լինէր ինքեան վնաս և պատճառ չարեաց) փոխանակ հրամայելոյ Սպարապետին իւրում պնդել զհետ թշնամեացն և ջնջել զնս յարմատոյ, 'ի հօգս դառնագոյնս անկանէր, իսկ Թահմազ ղուլիխանն բազում պատկառանօք մխիթարէր զնա. և ասէր, տէր իմ արքայ. պարտ է քեզ այժմ 'ի բաց թօթափել 'ի քէն զյիշատակս անցեալ չարեացն, որում պատասխանի ետ թագաւորն և ասէ՝ զիարդ է կարելի սրտի իմոյ ուրախանալ, և այս վս տարաբախտութեան իմոյ և վս ձախորդութե ժողովրդեան իմոյ ապաքէն մոռասցայց զի սպանողք հօր և եղբարց իմոց տակաւին են 'ի Շիրազ, ուր քորք իմ և այլ ամ էգ ազգայինքն իմ գերին 'ի ձեռս վայրենաբարոյ Աղվանից. և զայս 'ի նախատինս Սպարապետին ասէր, յաղագս զանցառութե նր. և քանզի նմա էր փոյթ պնդել զկնի թշնամեացն, և ոչ թողուլ տայր նոցա 'ի նորագոյն հնար ինչ դիմել առ յապայն, իսկ Թահմազ ղուլիխանն ըստ աներկբայելի նախադասութեց իւրոյ կանխաւ գիտէր՝ զի յիշատակ գործոց իւրոց ջնջեսցի 'ի միտաց ժողովրդեանն մինչև ոչ յաւելցէ 'ի վր աստիճանի Սպարապետութե իւրոյ զիշխանութի եպարքոսութե. կամ զկարողութի ինչ համահաւասար այնմ. ուստի 'ի դէպ 'ի պահու ժամու ասէր Շահին թէ ես պատրաստեմ, և յոյժ հաստատ զհետ թշնամեացն պնդել և զամ տէրութիւնս քոյ առ տէրդ իմ արքայ դարձուցանել, սակայն բարւոք գիտես զի՝ զօրքն առանց թօշակի ոչ կան, և զի՝ Լութֆալիխանն ինձ օրինակ կայ, քանզի խորամանկութիք 'ի մէջ տէրութե բազմիցս խափանէ նա զյաջողութի գործոց պատերազմականաց՝ որքան և քաջ իցեն զօրքն, և վս որոյ եթէ տէրութի քո կամիցի յաւարտ հասուցանել զգործն՝ զոր երջանկաբար սկսաք, պարտիս շնորհել ինձ զիշխան

խանութի պահանջելոյ զգանձս յաղագս Թոշակի զօրացս:

Եւ Թագաւորն (որ արդէն իսկ 'ի միտի եդեալ էր տալ զմօրաքոյր իւր 'ի կնութի Սպարապետին, և շնորհեալ էր նմա զբէկլարբէկութի Խորասանու) 'իբրև լուաւ ըզխնդիրս նորին զարհուրեալ խռովեցաւ, քանզի չափազանց կարողութի էր զոր խնդրէր նա, և խանայր զի ճանապարհն այն կերպիւ ծնէր նշան ինքնակալութե, ուստի 'ի խորհուրդ մտանէր ընդ գլխաւորս նախարարաց իւրոց և ասէր, եթէ գտանիցի այրմի կարող և հզօր՝ որում շնորհեցից զիշխանութի զօրացս արդ ոչ գիտեմք, արդեօք նախարարքս այսոքիկ ցաւակիցք և խորհրդակիցքէին Սպարապետին՝ թէ ոչ, պատասխանի ետուն Թագաւորին, թէ՝ ըստ կարծեաց մերոց՝ զօրքն յօժարաբար ոչ մարտնչին ընդ ձեռամբ այլ Սպարապետի՝ որպէս ընդ ձեռամբ Թահմազ ղուլիխանին, ուստի պարտիս շնորհել նմա զխնդիրս իւր առժամանակմի, և զկնի վրէժխնդիր լինիլ նմա, յաղագս անզգամութեա այսորիկ, յորժամ զայսպիսի սաստիկ հարկաւորութի ինչ ոչ ունիցիմք զնմանէ. և արդ այսպէս փառամոլ Թահմազ ղուլիխանն ընկալեալ զկատարումն փափագանաց իւրոց՝ ջերմեռանդ սրտիւ խոստանայր ծառայել ամն իւրում, և 'ի հաստատութի այսորիկ՝ իսկ և իսկ կամէր 'ի վր Աղվանիցն արշաւել, որև նախքան զկատարած ամսեանն դեկտեմբերի խաղայր գնայր պարսկական զօրօքն դէպ 'ի Շիրազ

Պատմութի սկսեալ
'ի Ջնջմանէ Աղվանից (զոր եղև յամի ամն 1730: յամսեանն յունվարի)
մինչև Թագաւորելն Թահմազ ղուլիխանին, որ եղև յամի ամն 1736:
յամսեանն Մարտի:

Գլուխ Ա

Աշրաֆն զկայ առնու 'ի Շիրազ, և Թահմազ ղուլիխանն երթեալ հարկանէ զաղվանս 'ի հնգետասաներորդն յունվարի ամսոյն 1730 փախուստ վիշտն, և մահ, Աշրաֆին: Թահմազ ղուլիխանն գնայ 'ի վր տաճկաց, այսինքն Օսմանցւոց, և առնու զհամատան, և զԴաւրէժ և զժամանակաւոր դաշինս դնէ ընդ տաճկաց, և հետս դառնայ 'ի Հերաթ, և զբոլոր գաւառս Հերաթոյ նուաճէ, և անտի գնայ 'ի Խորասան, և Շահն գնայ յերևան, սակաւ ինչ յաղթութիս առնէ 'ի վր տաճկացն, և զկնի յաղթի 'ի նոցանէ մերձ երասխ գետոյն և կրկին անգամ 'ի Համատան:

Արդ Աշրաֆն ամենևին ոչ խորհէր թէ՝ զգաստն և արթունն Թահմազ ղուլիխանն այնքան յապաղէր 'ի Սպահան, այլ կարծէր թէ՝ հետամուտ լինէր ինքեանց. և բայց 'ի զօրաց իւրոց զմեծագոյն կարաւան մի էր կազմեալ, 'ի կարաւանի սէին բազմութիք ուղտոյ՝ որք բարձեալ տանէին զկողոպուտն Սպահանոյ, սակայն տակաւին 'ի նախկին աւուրն վաթսուն մղոն փախչէին, և կամէր Աշրաֆն գնալ ընդ ճանապարհն Քրմանիու, սակայն լուաւ զի բալուջեանքն վառեալ կային 'ի զէն, և գիտաց, զի 'իբրև զփախստական իշխանմի ևտէր թագումգանձուց, քամահելոցեն զինքն, և իբրև լու լինէր նմա թէ՝ զօրք պարսից տակաւին յապաղին 'ի Սպահան, հարեալ աւերէր զերկիրն՝ ամայի և անբնակ թողոյր, սոյնպէս և զքաղաքն, և թոյլ տայր ամն բարբարոսութեց, այնքան՝ որքան սաստկութի նախանձու և ագահութե բորբոքել կարէր զմիտս անողորմ ազգիս 'ի նէ, և որ առաւել հարկէր զնա յայս գործ անողորմութեն՝ էր լուր գործոյն պարսից՝ որովք ընդ Աղվանսն վարէին 'ի Սպահան:

Եւ

Եւ արդ Թահմազ ղուլիխանն տանէր խստութե եղանակին յոյժ քաջութբ, նչետ քան աւուրց հասանէ յաւթախար. զօրօքն ծանրագոյն չարչարանս կրեցին յաղագս սաստկութե եղանակին, եւ չքաւորութե կերակրոց, եզի՛ աղվանքն ամայի թողեալէին զերկիրն, որ զբազումս պակասութիս պատճառեաց պարսից զօրացն, զի բազումք ՚ի նոցանէ փախչէին, եւ յոլովք մեռանէին. եւ աղվանքն կազմեալէին զբանակ իւրեանց բարւոք կարգաւորութբ, եւ խորհեցին փորձել ըղջախտս իւրեանց միւսեւս պատերազմաւ ընդ զօրս պարսից ըղվախճանական հարուածն տալ նոցա տագնապեալ փութային,

1730: Եւ ՚ի հնգետասաներրորդն յունվարի ամսոյն Թահմազ ղուլիխանն յարձակէր մարտիւ ՚ի վր Աղվանից բանակին՝ համայն զօրօքն նորին իսկ սաստկութբն՝ որով եհար զնս ՚ի Մուրչախոր, եւ առժամայն ՚ի փախուստ դարձուցանէր զնս, այնքան փութով մինչեւ կարծել Թահմազ ղուլիխանն, զի՝ տկար ընդդիմութբն իւրեանց ՚ի դարան ածել կամէին զինքն. բայց այս կանոնէր նատըրն ՚ի բնէ, ոչ անջատել զգունդս իւր, եւ գիտէր զի՝ եթէ գունդ մի ՚ի պարտութի մատնիցի, զբոլոր բանակն ՚ի չփոթութիւն անկանէ, նաեւ իւ ճանաչեալ փախուստն Աղվանից էր միայն անհաստատ փրկութի վն նոցա, որովհետեւ ձեռնյաղթողին գտանելոցէր զնս:

Արդ զգուշութի առնել քանզչափն ՚ի նոյն վաղճանածէ զմարդ իկ՝ յորեածէ գահավիժութիւն, (այսինքն անկարգաբար արագ ընթանալն,) վասնորոյ մեծապէս շրջահայեցութի խանին յայս գործ՝ ժամտայր Աղվանից ըզմիջոց իմն հնարել վասն ապաստան գտանելոյ անձանց իւրեանց, եւ ամպատուական ընչից իւրեանց, եւ յաճախութիք այգեստանեացն անճզագոյն ճանապարհաց եւ կրճիցն, որք զքաղաքաւն կային, դժվարամատոյց արարեալէին զտեղին, եւ խանն ոչ կամէր զոր ինչ ընդվայր ՚ի վտանգի դնել, որովհետեւ պարզապէս երեւէր նմա զի ամբարտաւանութի Աղվանից խոնարհեալէր հաւասար հողոյ:

Եւ խորհեցան Աղվանքն զմուտս կրճիցն կալնուլ ՚ի հիւսիսայն կուսե լերանցն, ուստի զզօրս իւրեանց ՚ի բազում գունդս բաժանէին, եւ բազմիցս զհրացանս իւրեանց ՚ի Պարսից բանակն արձակէին, եւ տեսին զի՝ այնու եւ ոչ կարէն արգելուլ զմիօրինակ ընթացսն նոցին զկնի իւրեանց, փախչէին անտի ՚ի Շիրազ. Աշրաֆն տեսանելով զինքն ՚ի վերջին թշուառութի անկեալ, առաքէ զերկուս ՚ի նախարարաց իւրոց առ Թահմազ ղուլիխանն, եւ խոստանայ նմա դարձուցանել զօրէորդւոյն, զգանձս եւ զամ ստացուածսն Արքունի, եթէ Թահմազ ղուլիխանն թոյլտայցէ ինքեան եւ զօրաց իւրոց, խաղաղութբ ելանել յերկրէն Պարսից, եւ անել միայն զնստանիսն զգէնս, եւ զպիտոյս իւրեանց, որոց պատասխանի ետ խանն թէ ոչ ընդունիմ զբանդ զայդ, այլ՝ եթէ ոչ մատնեսջիք զաշրաֆն ՚ի ձեռս իմ, զամենեսեանդ ՚ի սուր մաշեցից, իսկ նախարարք Աշրաֆին պատճառանօք ասէին նմա, եթէ խնամ տանիցիս մեզ, մեք զգլխաւորն մեր ՚ի քեզ յանձնեսցուք, բայց նատըրն ոչէտ պարզապէս պատասխանի խնդրոյն, եւ հրամաեաց նոցա ՚ի բաց մեկնել ի բանակէն:

Յանժամ գիտաց աշրաֆն թէ՝ ոչ ուսանէք յոյս զոյր նմա՝ այլ՝ դառնագոյն մահուամբ կորնչի եթէ անկցի նա ՚ի ձեռս Պարսից, վասնորոյ գիշերայն չուեալ գնայր անտի, եւ մինչեւ եւերադդ եղեալ Թահմազ ղուլիխանն հեռանայր նա սակաւ ինչ ՚ի Շիրազոյ, եւ արդ կարծելիէ թէ՝ ամենեւին փոյթ ոչ լինէր Թահմազ ղուլիխանին վն զանցարարութե իւրոյ առ ՚ի չըմբռնել զօրէորդն եւ զամ մեծարաւոր ընտանիսն Թագաւորին, այլ սակայն յաւէր յաղագս գանձուց զոր Աշրաֆն տանէր: Արդ աղվանքն առ ՚ի հեշտացուցանել զփախուստ իւրեանց ՚ի բազում գունդս բաժանէին, ուստի դժուարին լինէր զփախուստ նոցին խափանել: Եւ ըստ կարծեաց զօրացն խանին, կարելիէ թէ՝ փոյթ ոչ լինէր նմա զփախստէն նոցին, որովհետեւ ամ հանգամանօք Օզբէկաւիրս երեւէր նա, եւ առնուլ խնամք

տանէր

տանէր ազգին յանմիկ՝ քան Պարսից ազգին, ուստի մեքևս ըստ իրաց ինչ մտածել կարեմք, զի գնացքն՞ն աստանօր յայտնապէս ներհակն երևէին բնական փոյթեռանդն հանճարեղութե՛ նորին, արդ զիարդևիցէ 'ի ժամանելն իւր 'ի Շիրազ, զբազումս յաղվանիցն, զորս անդ գտանէր իսկոյն սպանանէր, և զմեծամեծս նոցին կապանօք յղէր 'ի Սպահան հանդերձ համբաւով յաղթութե՛ն իւրոյ:

Թէպէտ Աշրաֆն յանկարծ և թագատեամբ փախուս յերեսաց Պարսից, սակայն զունդք ոմանք 'ի Պարսից բանակէն զհետ նր արշաւէին. և հասանէին նմա, և դարձեալ պատերազմ լինէր, իսկ Պարսիկքն յետս դառնային: Արդ ոչ կարեմ դիւրաւ նկարագրել զվիշտն զորս Աշրաֆն աստանօր կրէր, զանձն առ ոչինչ օգտէր նմա, բայց միայն ըղվտանգ նորին յաճախեցուցանէր, և բայց 'ի նեղութենցն զորս կրէր վս պակասութե պաշարի և ճարակի զրաստուցն 'ի սաստկութե՛ն ձմերայնոյ, գեղականքն և անխափան պաշարէին զնա, որով պարտաւորեցաւ 'ի բաց ընկենուլ զամ կահս և զպիտոյս բանակին, նաև զամ պարսիկ կանայսն և զմանկտիս՝ զոր 'ի գերութի վարեալ տանէր: Աստանօր ոմանք 'ի զօրաց նորին 'ի նախանձու բարկութե բրդեալ՝ զկանայս իւրեանց սպանանէին, զի մի անկանիցին 'ի ձեռս թշնամեաց իւրեանց:

Եւ այսպէս դժուարին լինէր նոցա խմբովին գնալն, և բազմանութե՛ նոցին ժամ տայր զերեայն փախչել և ազատիլ 'ի ձեռաց նոցա, 'ի մէջ որոց էին հօր քոյրն, և քոյրն Շահ Թամազին: և իբրև հասին սոքա 'ի Շիրազ վաղվաղակի առաքեցան 'ի Սպահան մեծաշուք պատուով, և ըզ հօր քոյրն Շահին զկնի ետուն 'ի կնութի Թահմազ ղուլիխանին: Արդ քաղցն, և ծարաւն, ցուրտն, և աշխատանքն հանդերձ անխափան հարուածովք՝ փութով ցրուեցին զաղվանս, և Աշրաֆն երկու հարիւր արամբ միայն գնաց, և պաշարեցին զնա պալուչեանքն. որոյ արիաբար զդէմ կալեալ յոյժ քաջապէս մարտնչէր ընդ նս, իսկ 'ի վաղճանի յերկիր անկանէր, և սատակեցին զնա և զամենեսեանն որք ընդ նմաէին:

Եւ այսպէս բռնաւորութիւք Աղվանից բարձաւ յերկրէն Պարսից. իսկ վիշտք, և տառապանքն ոչ բարձան, զանզի մահ Աշրաֆին միայնէր սկզբնաւորութի չարեացն. զոր պատուհասն երկնային նատրըն ածելոցէր 'ի վր թշուառացեալ երկրիս, որոյ գլխաւոր պատճառ յայտնապէս լեալէր տկարութի թագաւորութե հուսէյնին, որոյ եղեալ իբրև զշղթայ ոչ պակասեաց ընկղմիլ զողորմելի ազգս յայլ տառապանս, ոչ նուազ քան զայնս՝ զորս 'ի յանողորմ Աղվանիցն կրեալէին:

Եւ եկաց Թահմազ ղուլիխանն 'ի Շիրազ իբրև ամիսս երկուս. և զօրացուցանէր զզօրս իւր, և 'ի մերձենալ գարնան եղանակին՝ խաղայր գնայր 'ի Համատան: Եւ համբաւ նորին արդէն իսկ զարհուրելի լեալէր տաճկացն, այսինքն Օսմանցւոց, որք լսելով զքաջութի նորին, երկնչէին գուցէ թէ՝ կորուսէն զերկիրսն զորս նուաճեալէին ընդ ձեռամբ 'ի Պարսից տէրութենէն 'ի ժամանակի անցեալ խռովութենցն Աղվանից: Արդ եթէ ինքն այնքան ահարկու լինէր նոցա, որքան առաւել վարք նորին 'ի նախանձ արկանէր զնախարարսն որք էին 'ի յարքունի պալատն 'ի Սպահան, քան զի գերագոյն փառօքն զոր ընկալաւ նա՝ իշխելով 'ի վր այնքան բազմամբոխ զօրաց, յոյժ վեհագոյն երևէր նոցա յաչս ժողովրդեան:

Իբրև Շահ Թահմազն կարգեաց սահմանս և օրէնս ներքին մասանց տէրութե իւրոյ և կատարեաց, վաղվաղակի առաքեաց դեսպան 'ի կոստանդնուպօլիս առ դէլ Սուլթանին զվերահաստատութի

իւր

իւր յաթոռ Պարսից թագաւորութե՛, և խնդրէր 'ի խաղաղութե՛ կեալ ընդ նմ՛, Նաև խնդրէր դարձուցանել նմա զերկիրս իւր, զորս նուաճեալ ունէին, և անջատեալէին 'ի տէրութենէն Պարսից 'ի ժամանակի խռովութեց, սոյնպէս և զամ՛ կալանաւորս Պարսից ազգին, արդ Դեսպանս այս մինչ դեռ տակաւին զոչ ինչէր առաջարկեալ յաղագս իրացն զոր պատուիրեալէր նմա շահն, լուր հասանէր 'ի կոստանդնուպօլիս թէ՝ զօրք Պարսից առին զՀամատան, ուստի նախարարք Սուլթանին կարի յոյժ խռովեցան 'ի գործոյն, և ոչ կամեցան այլ ինչ խօսիլ ընդ Դեսպանին, իսկ նա ասէր կարծեմ թէ՝ լուրս այս ոչէ ճշմարիտ, եթէ իցէ և ստոյգ, չապա անպատշաճ գործն այն հակառակ կամաց տն իմոյ գործեալ 'ի ձեռս ապստամբաց ումանց, արդ եթէ այսպէս և եթէ այնպէս՝ խորհուրդ արարին տաճիկքն 'ի գէն պատրաստիլ, և պատերազմ յարուցանել ընդդէմ Պարսից՝ և պատրաստութիւս այս յոյժ սաստիւ լինէր:

Եւ արդ ինքնիշխանութի՛, և անարգելի կարողութի՛ Թահմազ ղուլիխանին ըստ ամի՛ հակառակ ցուցանէր զնա խաղաղական Դնարից, և իրաւի էր այդպէս, քանզի հաստատութի՛ փրկութե՛ իւրոյ կախեալ կայր 'ի Սպարապետութենէ իւրմէ, ուստի հաստատապէս հարեալէր զԱպտալայ փաշայն, և առեալ զՀամատան և հետամուտ լեալ տաճկացն գնայր 'ի Քրմանիայ, և կլիապէս հարկանէր զնոսա, և զօրս կարգէր 'ի վե՛ր քաղաքացն, և ինքն գնայր ի՛ Դավրէժ նկարտաւիլ: Եւ հրաման եղև Քեօփրուլու օղլու փաշային պահպանել զտեղիսն քառասուն հազար զօրօք, սակայն Թահմազ ղուլիխանն խոյս տուեալ 'ի նմանէ այլ ճանապարհաւ եկն և էառ զայնտեղիսն, և տաճկացն տեսանելով զյաջողութի՛ Պարսից երկեան յոյժ, և զժամանակաւոր դաշն խնդրեցին 'ի նոցանէ ընդ որ Թահմազ ղուլիխանն յոյժ հաճեցաւ, քանզի ապդալիքն Հերաթոյ ապստամբեալէին, և զօրաժողով եղեալ, և յետ վերոյիշեալ դաշին վաղվաղակի գնայր Թահմազ ղուլիխանն 'ի վե՛ր նոցա բազում զօրօք և սաստիկ աշխատանօք ոչ տալով դադար զօրաց իւրոց և հասանէր յերկիրն Աղֆարան, և յանկարծակի ուժգին յարձակմամբ անկանէր 'ի վե՛ր նոցա, և սաստիկ հարուածովք հարկանէր զնոսա, և վաղվաղակի կալաւ զկիրճս, և զամ՛ անցս ճանապարհացն Հերաթոյ, զի մի կարասցին պատրաստել 'ի պատերազմ. կամ ամրացուցանել զքաղաքն, ուստի փութով պարտաւորեցան 'ի հնազանդութի՛ մտանել, և իբրև եմուտ 'ի քաղաքն իսկոյն սպան զիշխանն քաղաքին, և զամ՛ մեծամեծսն՝ որք խորհրդակիցք էին ապստամբութե՛ս, և եդեալ գունդ մի 'ի զօրաց իւրոց պահապան քաղաքին ինքն գնաց անտի 'ի Մաշատ:

Եւ խորհէր Շահ Թահմազն 'ի միտի իւրում թէ՝ դաշն զոր եդեալէր ընդ տաճիկսն ոչ վճարի խաղաղութի՛, և իրաւի էր այսպէս, քանզի ոչ գոլն ներկայ Թահմազ ղուլիխանին ժամ տայր նոցա զմեծամեծ պատրաստութիւս առնելոյ յաղագս մարտին, վասնորոյ ել Շահն 'ի Սպահանոյ յամսեանն հոգտեմբերի իբրև քսան հազար զօրօք և գնայր 'ի Դավրէժ, և միաւորէր զզօրս իւր ընդ զօրս Սպարապետին իւրոյ Թահմազ ղուլիխանին, զոր եդեալէր անդ 'ի պահպանութի՛ քաղաքին, և չուեալ անտի 'ի սաստիկ ձմերայնի գնայր 'ի վե՛ր լերանցն Հայաստանեայց և բազումք 'ի զօրացն կոտորեցան 'ի ցրտոյն, և 'ի լրումն փետրվարի ամսոյն հասանէր յԵրևան:

1731: Ալիփաշայն որ ապատալար (կամ սարասքար) էր գաւառացն այնոցիկ՝ բարւոք զգուշացեալէր ընուլ զքաղաքն ամենայն պիտոյիւք, և ոչ միայն ամրացուցանել զնա, այլև՝ 'ի պատկանաւոր, և 'ի դիպուկ ժամու անկանել 'ի վե՛ր Պարսիցն պատերազմաւ, ուստի զվեց հազար արս պատերազմօղս հանէր 'ի պատնիշէն և առաքէր զնոսա ընդդէմ Պարսից գնդին, և պատուէր տայր նոցա յառաջնում նուագի պատերազմին ընդ կրունկն դառնալ և փախչիլ յերեսաց Պարսից, և հրա-

մանս

մանաւանդ այնպէս վայելուչ և պատշաճաւոր կարգաւ կատարիւր, մինչև կարծել Պարսիցն թէ՝ յաղթեցան տաճիկքն, և պնտեցան զհետ նոցա, և նոքա դարանամուտ եղեն, քանզի պատնէշ մի թագուն կանգնեալ էին անդ մեքենայիւք և բազում թնդանօթովք զորս յայսմ վարի մեծաւ ջանամբ ՚ի գործ ածէին, որով զբազումս ՚ի Պարսից զօրաց յերկիր կործանէին: Եւ էլ փաշայն ՚ի բանակէ իւրմէ, եդ իմէր ՚ի վր̅ նոցա ընդ մի կողմն, և մարտ սաստիկ լինէր անդ, և արիւնահեղութիւք մեծ լինէին յերկոցունց կողմանց, Պարսիկքն սաստկացուցանէին ՚ի վերայ նոցա զպատերազմն, և տաճիկքն յետս դառնային ՚ի քաղաքն, և Շահն զկնի պաշարէր զքաղաքն, սակայն տաճկացն աւերեալ համայն թողեալ էին զերկիրն, ուստի զօրք Շահին առ ՚ի չգոյէ կերակրոյն փութով վշտանային, վասն որոյ պարտաւոր լինէր Շահն ՚ի բաց կալ ՚ի քաղաքէն:

Եւ գնաց անտի զօրօքն իւրովք դէպ ՚ի Դաւրէժ, և Ալիփաշայն գնայր զհետ նր̅, և պատահեցան զօրացն Քէօփրիւ օղլուին, և միաբանութիւք երկոցունց զօրացն հզօրագոյն գործէր զբանակն տաճկաց քան Պարսիցն, և հասին ՚ի վր̅ Պարսից բանակին՝ մերձ սաստապատաւ, և հարին զն̅ս, և վարեցին զմասն ինչ զօրացն նոցին ՚ի գետն զանկուցի զբազումս նոցանէ գետահեղձ առնէին, և զբազումս ըմբռնէին, ՚ի մէջ որոց էր Սէֆիղուլիխանն, որ էր Սպարապետ ընտիր և մեծահռչակ, որ յառաջ Աթհիմաթ դօվլաթնէր Շահ Հուսեյնին. Նախարարս այս թէպէտ և իբրև վաթսուն ամեայ էր, սակայն գիտութբ̅ և արիութբ̅ էր յոյժ զարմանալի, և իբրև բերին զնա ՚ի Կոստանդնուպօլիս, և հարցանէր Սուլթանն, ընդէր ՚ի վաղճան պատերազմին Թաւրիզու թոյլ ետուր սպանանել զմեծ մօլայն, և զնմանիսն նորին ընդ սրով արկանել, որում պատասխանի ետ Սէֆիղուլիխանն. բազում վստահութբ̅, թէ՝ յանդգունք բազումք ոմն ՚ի Պարսկաստան, ոչ սաստ ՚ի Հռոմաստան, յորժամ զքաղաքս մի պատերազմաւ առնուն և յաղթակամամբ մտանեն ՚ի նա, անկարելի է Սպարապետաց զանկարգութիւնն արգելուլ: Արդ զինչ պատճառ խրատանցանէին տաճիկքն, այսպէս անողորմաբար վարիլ ընդ քաջ Նախարարիս այսմիկ, քանզի հրամայեաց Սուլթանն զձեռս նորին ՚ի յետս կապել, և շքեղ զարդիւք զգեստաւորել տանիլ զնա ՚ի տեղի մի մերձ Սերային, և անդ գլխատեցին զնա յանդիման Սուլթանին, որոյ տեսութբ̅ն յագեցուցանէր զնախանձ իւր: Եւ յայսմ վարի զԴիւնգանն Պարսից յոյժ անարգանօք յետս յղեցին, մինչև կողոպտել զնա ՚ի ճանապարհի: Եւ իբրև տեսին տաճիկքն թէ՝ ոչ ՚ի գլուխ ելանէր հաշտութբ̅ ընդ թշնամիս իւրեանց՝ ՚ի մտի եդին աւերել զսահմանս Պարսից հրով և սրով:

Եւ Շահ Թահմազն մինչ չև էր յաղթեցեալ ՚ի յՍաստապատ, խորհեալ էր ՚ի բաց թողուլ զԴաւրէժ և պատրաստութբ̅իս առնել առ ՚ի ամրացուցանել զհամատան զոր Ահմէտ փաշայն պաշարելոյ էր, և յամսեանն սեպտեմբերի զօրք Պարսից մտին ՚ի դաշտս Համատանոյ, որք յիսուն հազար գոլով միացեալ էին երեսուն հազար, և միաբանէին ընդ զօրս քաղաքին. և պատերազմ սաստիկ լինէր ՚ի մէջ երկոցունց զօրացն, կրկին անգամ զօրք տաճկացն յաղթող գտան ՚ի վր̅ Պարսից, և Շահն յետս դարձաւ ցրուեալ զօրօքն ՚ի Ղազպին, և Համատան կրկին անգամ անկաւ ՚ի ձեռս տաճկացն և այսպէս զօրք Օսմանցւոց զոր կորուսեալ էին յանցեալ ամին՝ յայսմ ամի գտանէին:

Արդ մինչ դեռ պատերազմն այսպէս կայր ՚ի մէջ երկուց ազգացս հանգամանք կարգաց իրացն տաճկաց փոփոխեցան ՚ի ներքին ամբոխմանէ, որ զկործանում մեծ գուշակէր նոցա, և զօգուտ ամենևին ոչ, ուստի հաշտութբ̅ յոյժ հարկաւոր լինէր նոցա, և յաղագս յաղթութեանցն զոր Ահմէտ փաշայն Բաղդատու առնէր ՚ի վր̅ Պարսից, և յաջողութեանց նորին՝ հրաման լինէր նմա խաղաղութբ̅ն առնել ընդ Պարսիկս պատշաճաւոր և օգտակար դաշնադրութբ̅:

Եւ

Եւ արդ Իբրահիմ փաշայ մեծ վէզիրն իբրեւ զգաց զխառնակիլ ինքնայաջս ժողովրդեան, գիտացի էթէ յաջողեալ Պարսից գրաւն առնել վերստին զաւառացն զորս ինքեանք յափշտակեալ էին 'ի Պարսից տէրութենէն 'ի ժամանակի Աղվանիցն, անհաստատ լինի փրկութի իւր:

'Ի վերջնում սեպտեմբերի ամսոյն յանցեալ ամին 1730: ամբոխ մեծ լինէր 'ի Կոստանդնուպօլիս: Արդ որովհետեւ դիպուածս այս նշանաւոր հանգամանօք յառաջագայեցաւ՝ ոչ ինչ օտար թուի բնաբանի մերում զհամառօտ պատմութի ինչ առնել անտի:

Պատմութի ամբոխին որ եղեւ 'ի Հռոմաստան կամ 'ի Թուրքս, և սպանումն Իբրահիմ փաշայ մեծ վէզրին, և այլ մեծամեծ նախարարացն, նաեւ անկումն 'ի գահէ երրորդ Սուլթան Ահմէտին, և ստանալն Մահմուտին զիշխանութի երկրին, այլեւ սարօրինակ պատմութիւն Փաթրօնայ Խալիլին՝ գլխաւորին ապստամբաց:

1730: Բազում անգամ նախախնամութի այ զմեծամեծս գործել 'ի ձեռն նուաստ գործեաց: Արդ Փաթրօնայ Խալիլն էր ծնեալ 'ի Ալպանիայ (այսինքն Ալպանիացի կամ Առնաուտ) սա երբեմն էր հասարակ նաւաստի մի, և այժմ լոկ էնկիչէրի, սա եղեւ գործի իջուցանելոյ զերրորդ Սուլթանահմէտն 'ի գահէ, 'ի վրէժխնդրութի չարաչար պաշտօնատարութե նախարարացն, և անյագելի ագահութե Իբրահիմ փաշայ մեծ վէզիրին:

'Ի քսան և ութներորդ աւուրն սեպտեմբերի ամսոյն սոյն իսկ Փաթրօնայն յառնեցաւ. զինուք սակաւ արամբ յուսահատօք, ընդ որս դաշնադրութիւնէր հաստատեալ յերիս գունդս բաժանել և կալնուլ զերիս ճանապարհս, և անտի լցանել 'ի Էթմէյտանն, որ էր տեղի մի արտաքոյ քաղաքին և անդ կրկին միաբանիլ, և այնէր հասարակ տեղի ժողովոյն նոցա: Եւ զկնի այսպիսի կարգադրութեանս ինքն Փաթրօնայն յառաջ ընթանայր՝ ունելով զդրօշակ մի բարձեալ 'ի ձեռին իւրում, և ընկերակիցն իւր և ընդ նմա սուր 'ի ձեռին աղաղակէին ահաւոր ձայնիւ նաեւ այսպէս, ամ կրպակաւորք և արուեստաւորք վաղվաղակի փակեսցեն զկրպակս իւրեանց, և ամ բարի մուսուլմանք եկեսցեն զկնի դրօշակի մերոյ, 'ի Էթմէյտանն, և անդ ծանուսցուք նոցա զպատճառ սուսերամերկ երեւելոյ մեր ընդդէմ ներկայ տէրութեանս, և միւս երկոքին գունդքն նոյն և սոյնպէս աղաղակէին, խռովեալ սարսեցաւ քաղաքն ամ, և փակոյն փակեցան կրպակքն բոլոր, և որք 'ի ստամբօլոյն ոչ կամէին միաբանիլ ընդ նոսա, փութային ցրուել իւրեանց և փակէին զդրունս: Արդ 'ի սմին ժամու թագաւորն և Իբրահիմ փաշայն էին 'ի Սկիւտարին Պալատն՝ որ յՍկիւտար, բէյլերպէյն մենաւոր 'ի միում պալատին իւրոյ որ շինեալ էր յեզր ջրոյն որ խաղայր ընդ ծովն սեաւ, և այն նախարարէր 'ի բնէ անփոյթ, սա առ ոչ ինչ համարեցաւ բնաւ զլուր ընդդայն, և ոչ ունէր իր եղեւ բանիցն որք հասին նմա յանբոխ անտի, Եւ ոչ գոյր այլ քաղաքն որ կարողն լինէր 'ի բաց հերքել զամբոխն 'ի քաղաքէն՝ բայց էնկիչէրի աղասայն, և 'ի Վէքիլ քեահեայոյն, սա (այսինքն Վէքիլ քեահեայն) խնկոյն գիտաց զի մեծէր վտանգն, և վաղվաղակի չոգաւ և թաքեաւ, իսկ էնկիչէրի աղասին յառաջ մատուցեալ արամբք իւրովք դիմէր 'ի վր ամբոխին առ 'ի բաց վանել զապստամբսն, բայց խնկոյն ետես զի միոք զօրացն իւրոց էր բոլորովին թիւրեալ, զի փոխանակ վանելոյ զամբոխն, չի ջուցանելոյ զբոյն ապստամբականն, տուանչէին դնմանէ թէ՝ ընդ երոշմբանի ընդ ապստամբացն, առ 'ի վրէժխնդիր լինելոյ մեծի վէզիրին:

Եւ

Եւ ընդ պատահել իրայն այսպէս, Էնկիչէրի աղասին 'ի տագնապ մտանէր, և ոչ գիտէր թէ զինչ հնարս գտցէ, խնդրոյն էհաս նմա լուր թէ՝ ահա մասն ինչ յապստամբացն չոգաւ կողոպտել զպալատն քո, վասնորոյ հապճեպ տագնապաւ յետս դառնայր առ 'ի հոգալ վասն պահպանութեան անձին իւրոյ, իսկ ապստամբքն ժամէ 'ի ժամ աճէին և բազմանային, և որք 'ի տաճկացն հանդիպէին նոցա փութով պարտաւորէին զնոսա միաբանիլ ընդ ինքեանս, և որք ոչ հաճէին միաբանիլ մահու երկեղուցանէին, գիտէր աւելի ոմանք 'ի նոցանէ որք հրաժարեցան, 'ի միաբանութենէ այնպիսի յուսահատական խորհրդոյ առժամայն զրկեցան 'ի կենաց սրովքն ապստամբաց: Եւ ապստամբքն խորտակեալ զդրունս բանտից, արձակեցին զբոլոր չարագործս, վնասապարտս, մահապարտս, գերիս, և ծառայս և ինքեանց ընկերակից արարին: Եւ այսպէս աճէին և զօրանային 'ի ժողովս իւրեանց, քանզի նոքա որք մնայուանդ յերկիւղէ նոցին քան թէ կամաւ միաբանեալ էին ընդ նոսա աստանօր մասնակից լինէին ապստամբութեանց նոցին:

Արդ հուրն ապստամբութեան արդէն ծառայն գոռացէր յոյժ յոյժ նախ քան զՎէզիրին զստուգ համբաւ լսելն զնոյունց, որ եղամ եայ մինչև 'ի տասներրորդ ժամն երեկոյին, յորում ժամու եկին առ նա Գիւլխօրինացն (այսինքն Մուֆթին) Աթոռակալ Էպարգոսին (այսինքն Քայմաքամն) և վերատեսուչ բանիցն Էպարգոսին որ Քեախեայն ընդ այլ բազում նախարարսն Արքունի, և պատմեցին նմա թէ որքան բարձրացեալ և զօրացեալ էր աղաղակն ամբոխին, և զկնի այնորիկ վաղվաղակի 'ի խորհուրդ մտին, և տևեցին յայնմ մինչև ցգիշերն, և կարացին խորհել և ոչինչ, բայց աւարտէին այսպէս, զի 'ամենեքեան 'ի Պալատն Արքունի և անդ խորհուրդ արասցեն վասն իրացն, որք և անյապաղ ճեպովն եկեալ, և անդ 'ի կոստանդնուպօլիս և 'ի ժամանելն իւրեանց 'ի պալատն Արքունի, Էպարգոսն, այլ նախարարոքն հանդերձ ինքեանն 'ի խորհուրդ մտեալ զմտաւ ածէին թէ՝ զինչ հնարս գտցեն վասն այնպիսի անձուկ և դժուար պատահմանց, զի այնքան սոսկալի էին էր՝ որ յայսմ վայրի դիւրաւ կարէր յաղթահարել զբոլոր մեծութիւնս և իշխանութիւնս նոցա, վասնորոյ միաբան խորհեցան թէ՝ ոչինչ գոյր կարելի և հնարաւոր ինքեանց՝ եթէ ոչ առ սերք զօրաց վասն այսորիկ հրամայեցին զի դասս մի զօրականաց ինկոյն պատրաստեսցի իրաւի խորհրդոյ այսօր արարին՝ երբոյժ յարմար եղմբոն, և միայնակ ճար այնմիկ դիպուածոյ, բայց իբրև Թագաւորն տեղեկացաւ զայնմանէ խորհրդոյ՝ ոչ հաճեցաւ ընդ այն, և զի ոչ կամէր այնպիսի յուսահատական եղհամեցուցիչ շաւղաւք վարել, այլ 'ի լուսանալ առաւօտուն առաքեցաւ այր մի նշանաւոր 'ի պօստանճեաց դասուցն (պօստանճի պաշի աւագն պահապան սերային կամ Թիֆէնկճի) հրամանաւն մեծի Սուլթանին՝ հրամայել ապստամբացն մեկնել անտի, նաև ազդել նոցա յանուն Սուլթանին, զի եթէ՝ ոչ վաղվաղակի հնազանդեսցեն հրամանի Թագաւորին առ ի թ անիցին նա ձեռն 'ի սուր արկանել, որում պատասխանի ետուն ապստամբքն յոյժ համարձակաբար, և ազատաբան, թէ՝ մեք ժողովեալ եմք ոչ վասն այլ ինչ իրաց, բայց եթէ վասն փառաց, պատուոյ, և գոսի Թագաւորութեան, և ոչ 'ի վայր դիցուք զսուրս մեր, մինչև Սուլթանն ոչ լիապէս ափոփեսցէ զզայրացեալ սիրտս մեր:

Սրտմտեալ բարկանայր Թագաւորն ընդ այս պատասխանի բռնութեան, որում վրէժխնդիր լինէր անարգելով զՎէզիրն թէ՝ դու եղեր պատճառ անկարգութեանց և խռովութեանց այսոցիկ, իսկ Վէզիրն զՔայմաքամն պատճառէր, և խստապէս նախատէր զնա առաջի Սուլթանին, դարձուցեալ զերեսս իւրաւ. Սուլթանն և ասէ՝ տէր տակաւին բարձրութիւն քո թոյլ տայ թշուառ և խռովելի առնս այսմիկ 'ի լոյս փայլել, 'ի բանից յասցանէ զայրացաւ սիրտ Սուլթանին, և ինկոյն հրամայեաց զՔայմաքամն 'ի բանտ արգելուլ, և զկնի յաւել և հանդարտ դիմօք խօսել ընդ Վէզրին 'ի վերայ դիպուածոյն, Արդ սոյն իսկ Վէզիրս թէպէտ ոչ էր համեստ պաշտօնեայ, սակայն էր այր

կարող

կարող եգիտուն, խորհուրդն զորայնմ վայրի լսէր ՚ի ձեռնէ իւրմէ յոյժ աննկատար եւ աննկարելի թուէր ինքեան, վասնորոյ ոչ կամեցաւ յամփլյայնպիսի անոտի խորհուրդս, եասէր թէ՝ սուրնէ միայնակ ձարեհնար վս այդպիսի գիպուածոյ, եւ վս այսպէս վրդովման յասմիկ թագաւորութեն՝ զերկուս իրս յոյժ հարկաւոր տեսանեմ, կամբարձրութի քոյ առեալ զծառայս եզզօրս Պալատին աննկցի ՚ի վր ապստամբացն, եկամ ինձ հրամայեսցէ գնալ փոխանակ քոյ, քանզի ես բարւոք գիտեմ զի՝ զօրքն ալրէնզիս բաւականապէս, ե՚ կյերև իլն իմ զօրաց իսկոյն կարեմ գունդս բազումս յարուցանել:

Արդ անարի եւ երկնչոտ Սուլթանն ոչ ախորժեալ ընդ առաջադրութիւս այս, տակաւին ջանայր օգուտ մատուցանել ինքեան կարգաւ եւ ուղղութբ երեւեցուցանելով զանձն իբրեւ ինքնակալ ժողովրդեանն: Վասնորոյ հրամայեաց զգրօշակ Մահմետին իսկոյն բանալ ՚ի դուռն Պալատին, եւ աղաղակել ՚ի լուր ամենեցուն ՚ի պարապայց անտի թէ՝ ամ զօրականք որք եկեսցեն ՚ի ներքոյ այս նշանի յօգնութի առ ՚ի վանել զապստամբսն, զերեսուն դուկատս վարձս ընկալցին, նաեւ երկու ըստակս յաւելցին ՚ի ռոճիկս նոցին, այսու ամի տակաւին ոչ ինչ օգտեցաւ, քանզի իսկոյն գիտացէ թէ այնպիսի ստոյգ եւ առատ խոստմունքն եւ անօգուտ լինէր ինքեան: Վասնորոյ հրամաեաց, զի Պօստանճիքն ժողովեսցին, բայց այն եւս էր աննկար, վս զի այնք որք կարէին զսուր առնուլ՝ չոքան եւ թափեան, զի ոչ ունէին զկամս ՚ի մարտ մտանել վս այնպիսի պաշտօնի որ ՚ի բազմաց հետէ ատելի լեալ էր նոցա, արդ երկրորդ արշաւումն Սուլթանին էր՝ ՚ի թէրսխանայն, (այսինքն տեղի կամ տուն՝ ուրկահք, եւ անօթք նաւուցն պահին) առ ՚ի ժողովել զծովամարտիկսն, բայց նախ քան զհաւաքել զոմանս՝ յարեաւ փաթրօնայն միով գնդաւ ՚ի վր թէրսխանային, եւ ՚ի բաց մերժեաց անտի զքափիթան փաշայն, եսպառնալով ասէր, ծովային զօրացն, եթէ վստահացեալ իշխեսջիք պահպանել զԱրքունի Պալատն ոչ ապրեցուցից զձեզ, նաեւ զտունս ձեր այրեցից հանդերձ համայն նաւուքն Սուլթանին: Այսու հնարիւք զբազումս որք արդէն ընկալեալ էին զվարձս զինուորելոյ) ՚ի փախուստ դարձուցանէր, եւ զգինեցորդսն առեալ միաբանէր ընդ իւրում գնդին որոյ բնաւքն էին չարագործք, վնասակարք, գերիք, եւ ծառայքորք, ինաւս եւ ՚ի բաղանիս բնակէին ծառայելով ՚ի նոսա որով եւ զքան զեւս աճեցոյց զխումբս իւր:

՚ի զրաւ այսցամենից եղելոյ՝ պատգամս առաքէ Սուլթանն առ ապստամբսն, եհարցանէ նոցա թէ՝ զինչ իցէ դիտաւորութի ձեր պատասխանի ետուն նոքա թէ՝ կամիմք զիՄուֆտին, իբրահիմ փաշայ մեծ վէզիրն, Քայմաքան Մուստաֆայ փաշայն, եւ Մահմէտ Քեահիայն ՚ի ձեռս մեր մատնեսցին, իսկ վս Սուլթանին՝ ասացեն թէ՝ մեք բարւոք հաճեալ եմք ընդ թագաւորութիւն նորին եւ ցանկամք յաջողութե վս նորա, արդ ՚ի լսել Սուլթանին զպատասխանիս զայս, վաղվաղակի հրամայեաց զվերջին զերկոսին նախարարսն այսինքն զՄուստաֆայ փաշայն, եզՄահմէտ Քեահիայն, ՚ի բանտի արգելուլ, եզկնի այնորիկ առաքեաց զոմն պատգամաւոր ազդել ապստամբացն թէ՝ ահա ՚ի բանտ արկի զերկոսին զարսն եւ սպանանելոց եմ զնոսա, բայց դուք պարտիք այժմ մատծել զմեծագոյն ընդունելութի զոր արդ էն ձեզ արարի, վասնորոյ դուք եւ ս պարտիք ընդունիլ զի ո զիՄուֆտին եւ վէզիրն աքսորեսցեն միայն ընդ որ հաճեսցան ապստամբքն զՄուֆտին միայն շնորհել Սուլթանին, բայց այնքան խստապէս խնդրէին զվէզիրն մինչ զի ծանեաւ Սուլթանն զի եթէ՝ հրաժարեսցի տալ նոցա զվէզիրն՝ ՚ի մեծամեծ վտանգս անկցի:

Արդ ՚ի սմին ժամու փաթրօնայն բարւոք կարգաւորութբ եւ յամփ ուղղութբ վարէր զինքն, եւ շարժէր իբրեւ Սպարապետ զօրաց, երդմնեցուց զընկերակիցս իւր զի վնաս ինչ ոչ գործեսցեն, մխուեցէն եւ մի զկողոպտիցեն զոք ամենեւին, նաեւ վս բարեպէս հաստատելոյ զայնպիսի կարգաւորութիս, ոմանք

ոմանք որք զյափշտակութիւն եւ զայլ ինչ անկարգութիւնս արարեալ էին, մահու պատժեաց զնոսա սաստիւ, հաւանութեամբ գլխաւորացն ապստամբից, այսու Պնարիւք առաւել մայր քաղաքն կերակրւէր ըստ բնական կանոնի, որդ ենկիչերիցն այնոցիկ որք 'ի վաղընջուց հետէ ապստամբեալ էին սրտիւք, նոքա եւս միաբանեցան ընդ ապստամբիցն 'ի Էթմէյտանն՝ եւ անդ կազմեցին բանակ մի յոյժ յարմար, եւ կանոնաւոր ամ պարպայդայիւք, եւ այնու զբոլոր պետութիւն Արքունի 'ի յուսահատութիւն արկանէին, Արդ զինչ եւ իցէ, կրկին անգամ առաքեն ջանիւք աշխատեցաւ Սուլթանն զի կեցուսցէ զկեանս Իբրահիմ փաշային, որում պատասխանի ետուն ապստամբքն թէ՝ շնորհեսցէ մեզ զկեանս Մուֆտոյն երկոյծ բաւական, յայնմանէ պատասխանւոյ անձնարանեալ Սուլթանն, եւ ըստ կամայնոցա զմեծ վէզիրն, եւ զմիւս նախարարսն զորս արդէն յիշեցաք 'ի ձեռն դատապարտեաց. եւ յերեսուն երրորդն սեպտեմբերի ամսոյն բարձին զնոսա եւ դնէին 'ի ղափիւրաւսին, այսէր տեղի արդ էլման եւ սպանման նախարարաց եւ այլ գործակալացն Արքունի: Եւ արդ մերձակայ յիշատակ մահուանն այնքան զարհուրեցոյց զվէզահիրայն, մինչ զի առանց ձեռնարկելոյ դահճին 'ի նա փչէր զհոգին, իսկ Քայմաքամն զջերմեռանդական ազօթս եւ զայլ պաշտամունս զոր պարտէր ուղղել առանել յայնպիսի հարկաւոր ժամու, զամենայն կարգաւ եւ յոյժ մեղմաբար կատարէր եւ ընկալնոյր զթողութիւն, իսկ վէզիրն ոչ սակաւ քաջութիւնս եւ անհոգութիւնս ցուցանէր, եւ ամենեւին անփոյթ եւ աներկիւղ մնայր, ոչ աղօթեաց, եւ ոչ ընկալաւ զթողութիւն, եւ զի տեսանելով զվաղձան կենաց իւրոյ այնպէս մերձեցեալ ոչ կամեցաւ աշխատ առնել զինքն:

Արդ թէ որքան չարեաց վարեալ էր զինքն վէզիրս այս յանքան երկար պաշտօնի ամս երկոտասան՝, պարտիմք իմանալ յանհամար գանձուցն զոր եթող զկնի իւր, քանզի միայն 'ի յագնեւականաց իւրոց սենեկին որէր անախտառ ողջամբն եւ խորհրդականից գաղտնեայ նի, ասսաներ յայտնաս պէս խոստովանէր թէ՝ 'ի մէջ այրի կամ զիրզմինի միոյ 'ի ներքոյ աղանդեաց զոր շինեալ էր վէզիրս այս 'ի պալատին իւրոյ թաքուցեալ էր զգանձս իւր, սասոյ հանին չորս երկաթի արկեղս 'յորոց երեքն լիէին ոսկեղէն երկայն մաշկեայ քսակովք, յորոց իւրաքանչիւրն պարունակեր վաթսուն հազարձգինս եւ ֆնտղըլի ոսկիս, եւ չորրորդ արկղն լինէր անգին ակամբք պատուականօք, եւ սոյնպէս վէզիրս հարամ քեահիասին որ լիապէս էր տեղեակ ամենից իրակութեանց նորին, ասէր թէ՝ մեծագոյն մասն գանձուց այսորիկ, էր վարձ անիրաւութեանց, եւ ասէր թէ եւս եւ բազմիցս խորհրդակից եղէ այսոցիկ գաղտնեաց, կրելով զգանձս 'ի յարկեղս այսոսիկ:

Եւ 'ի միւսում աւուրն ընդ առաւօտն եդին զմարմինս երից նախարարացս այսոցիկ 'ի վերայ քանո արգասար, առանց պաշտօնի, մերկ եւ խայտառակ, եւ առաջին 'ի Էթմէյտանն, եւ ամբոխն մեծ զկնի նոցա զնայր, որք չարաչար անարգէին զնոսա, եւ վրէժխնդիր լինէին վա անուղղայ եւ թիւր շաւղայն նոցին, որք բռնութեամբ յափշտակեալ էին զբազում ստացուածս մեծաց յոյն իւրեանց եւ 'ի մայն բարձր տղայական եւ ասէին թէ՝ յայս ունիմ 'ի մէնէ զի բոլոր թշնամիքն որինաց մերոց զայսպիսի վաղճան ընկալցին: Եւ յորժամ մարմինք նոցա հասին 'ի Էթմէյտանն, տղայական ոգւոյն ապստամբքն թէ՝ ընդէր ոչ եւս Սուլթանն զմասնիկս զպյասմի կենդանութեան 'ի ձեռս մեր. ըստ խոստման իւրում, իսկ ոմանք 'ի նոցանէ վիճէին եւ հակառակէին թէ՝ ոչ է որէն թաղուցանել զի զպաշտօնեայս իւրեանց կենդանութեան տասին 'ի ձեռս թշնամեաց նոցին, վասն բաւարարիլ պարտիմք մեծագոյն ընդունելութեամբ այսմիկ զոր բարձրութիւն Արքայն մերոյ հաճեցաւ ցուցանել մեզ յայս ժիկ հանդիսի:

Եւ այսպէս բարձրագոյն լինէին ապստամբքն 'ի նկատել գործոյ իւրեանց, որքեզան զինեալ

յաջողութեն, նսկսան յայտնապէս ասել թէ՝ ընկեցուկ զերրորդ Ահմէտն ՚ի գահէ, եդիցուք զ
Մահմուտն՝ զանզի խորհէին ապստամբքն թէ՝ իրաւի՛ Սուլթան Ահմէտն էր բնութեամբ անորդի,
վասն զի սպան զայնոսիկ որք յամին 1703:՝ ՚ի ձեռն յեղբայրն իւր զերկրորդ Մուստաֆայն ՚ի գա-
հէ անկանուցին զինքն թագաւոր, եզիարդ՚է կարելի զի՝ ինքեանք պատճառ գոլով սպանման
մերձաւոր ընտանեաց իւրոյ Իբրահիմ փաշային՝ բարեկամին Նիզին ՚ի նմանէ, վասնորոյ ընտրե-
ցին զՄահմուտն որ ՚ի յարգելանս էր ամս քսան եւ օթն. եւ յնու իրաւամբ հաւատային, զի նա
ոչ էր մոռանալոց զչարաչարս իւրեանց. Արդ եթէ՝ մեք զճշմարիտն նկատեսցուք՝ նոքա ամենեին
ոչ ունէին զգլխաւոր պատճառ ինչ զանգատելոյ ըզՍուլթան Ահմէտէն՝ բայց ՚ի մեծամեծ խնամ-
ոյն զոր պարգեւեալ էր Իբրահիմ փաշային. վասնորոյ յայլմէ կողմանէ պատճառ ինչ ոչ կարէին գտա-
նել վ՚ի վերջին խստութեան զոր արարին ընդդէմ թագաւորութեան, այլ միայն բաղբաղէին թէ՝ մար
մին Իբրահիմ փաշային ոչ էր ՚ի մէջ նոցա. Արդ զինչ եւ իցէ, զկնի կախելոյ զպէտս քաղաքացւոյն,
եւ քէահիային՝ զիւրաքանչիւրն օրհասաց մերձեալ զնշանակ (այսինքն Թամաշայ) ժողովրդեան
կապեցին զգէշ երրորդին. որք իսկապէս Իբրահիմ փաշայն, ընդ աջի ձիոյ եւ քարշեցին ընդ
դրունս Արքունի Պալատին:

Սատանայական անդգամութեամբ աղաղակ բարձեալ պահանջէին զի՝ ճշմարիտ վէզիրն իւրայինովքն հան
դերձ կենդանույն տայցէ ՚ի ձեռս իւրեանց, սոյնպէս եւ րէիզ աֆանտին, նաեւ ասէին թէ՝ ոչ հաւաստ
ամբ խոստմանցն Սուլթան Ահմէտին, զի նա հակառակ ամենի ց որինայ յամառեալ պահէ զչարն եզ
թէ շուտով զայնորոյ ագահութի ընկղմեալ գտերութի մեր ՚ի վիշտս անհնարինս, վասնորոյ աղեաւ
ժանիեմս թագաւորել ՚ի վ՚ի մեր: Եւ ՚ի նմին ժամու հաւանէին զՄահմուտն մեծաւ աղաղակաւ
թէ՝ կեցցէ Արքայ: Արդ՝ թէպէտ Ահմէտն ոչ պակասէր յաշխատելոյ գործել զամենայն հար-
կաւորսն ՚ի խաղաղացուցանել զնոսա՝ թէ՝ զմեծամեծ խոստմունս առնելով, եւ թէ խոստանալով
մատնել ՚ի ձեռս նոցա զոր կամէին. սակայն նոքա խրոխտացեալ խստամտային ՚ի կամս իւրեանց
առ ՚ի լինել նոսա ՚ի գահէ. եւ յորժամ յետս դարձեալ գային ՚ի Էթմէյտանն, արկին զմարմինս
Իբրահիմն ՚ի հասարակ անկս քաղաքին մերձ աղբերակերոյ վ՚ի վէզիրս այս կանգնեալ էր զգե-
ղեցիկ շինուած կամարայարկ միեւնոյն ամուս յառաջ իբրեւ զզարդ քաղաքին եւ ՚ի վայելչութի ժող-
ովրդեան:

Արդ ՚ի խորին խորհուրդ առ դեռ ապստամբքն մտախառն լինէին զի՝ յայտ հարկաւորէր ինքեանց
գտանել զայր մի գիտուն եւ կրթեալ քաղաքավարութե զի գործս իւրեանց ՚ի կատար հասուսցէ,
յայսմ վայրի գտին զայր մի կոչեցեալ Խալիլփաշայ (կամ աղ փիրիզատէ) մտերիմ ՚ի նախնեացն Սուլ
թանին, առ թէպէտ միջոցս դիպարդեալ եզգերագոյն պատիւ ընկալեալ էր յարքունեաւ, սակայն
անտանելի ապիրատութիւն գործեալ՝ ետ եթող զանէր իւր, եւ միաբանեցաւ ընդ խորհուրդս նոցա, առ
թագուցեալ ունէր ըղ փառամոլութ իւր ընդ պատրուակաւ զթութե եւ զանակցութե առ եղե
այժմ զգլխաւոր խորհրդատու եւ խրատիճ ապստամբացն, եւ ՚ի սկիզբն հոգտեմբերի ամսոյն եմուտ
առ ՚ի Պալատն, ներսեւս զի բոլոր պաշտօնեաքն Սուլթան Ահմէտին առ շնչեալ կային յայտ եւ չ
գիտէին թէ՝ զինչ էր լինելոց կատարած ամբոխին այնորիկ. եւ ՚ի մտանել այսր Խաբեբայ Մոլայ-
ին ՚ի Պալատն՝ բոլոր պաշտօնեայքն փութային առ նա, եւ հարցանէին թէ՝ զինչ լուր իցէ ՚ի քաղա-
քի անդ, առ խոնարհեալ եւ զգուշեալ կեղծաւորանօք պատասխանի ետ նոցա թէ՝ ապստամբքն ոչ
ինչ կերպիւ հաճին զի Ահմէտն եւս թագաւորեսցէ ՚ի վ՚ի նոցա, այնքան ջանք զոր եւ արարի.
եւ աշխատանքն զոր կրեցի յայսմ վայրի վ՚ի սիրոյ Սուլթանին՝ բնաւ ունայն եւ անօգուտ եղեն, զի
առ ասանելով ետ զկատաղի ցասումն ամբոխի նոցա այնքան զօրացեալ, յորս մեք ամենեին ունայն

Եւեւ

Եւ ինձ թէ՞ մեզ կարողիցեմք զխորհուրդ նորին յրաւ էլ։

Եւ ՚ի բանիցս յայսցանէ զահիհարեալ Թմրեցաւ ժողովն, բոլոր, և ոչ կարացին խօսել զբան ինչ, զի յափշտակեցաւ միտք ամենեցունց, իսկ առաւել Իզֆիրիզատայն ետես զի ոչ ոք գոյր անդ զի՛ իշխիցէր զեկուցանել զայն Սուլթանին, վասն որոյ ինքն կնայր և իբրև ետես, թէ յարքայարանն իսկոյն եհարց զնա Սուլթանն թէ՛ արդեօք ապստամբքն կան և ձեռն տակաւին ՚ի Էթմէյտանի՞. ընդ էր ոչ մեկնիս անտի, զի ես զմեծամեծ խնամս ցուցի նոցա առաւել քան զպարտն իմ, և խոստացայ դատ առնել ՚ի մէջ իւրեանց և ՚ի մէջ նոցա՛ զորոց զանգատէին, նաև զպարգևս մեծամեծս խոստացայ շնորհել նոցա, արդ զինչ՞և կամին յինէն, որում (համարձակապէս, սակայն մեղմօրէն) պատասխանի ետ Իզֆիրիզատայն և ասէ, թէ՛ վաղճան թագաւորութե քո ժամանեալ է Արքայ, քանզի ապստամբեալ ժողովուրդ քո ոչ ևս կամին հնազանդիլ թագաւորութե քում, իբրև լուաւ զբանս զայս Սուլթանն ՚ի վերաստացեալ ասէ ցնա, զի՞ է զի՞ այդքան յամեցար և ոչ ազդէցեր ինձ, Եւ զայս ասացեալ իսկոյն փութացաւ ՚ի խաս օտայն, ուր եղբօր որդի իւր Մահմուտն կայր, և կալեալ զձեռանէ նորա տարեալ բազմեցոյց ՚ի գահն Արքայական, և նախկին ողջունողն ինքն եղև իբրև ինքնակալի, և զկնի, խօսիլ սկսաւ ընդ նմա, և ՚ի մէջ բազում գորովալիր խօսակցութեանց զայս ևս ասացն նմա, թէ՛ յիշեա զի հայրն քո կորոյս զտեղիս զայս, յորում դու նստիս այժմ, յաղագս կուրացեալ մարդահաճութե իւրոյ, զոր առնէր Քէլզըլայ Աֆէնտի Մուֆտւոյն, Եւ ես և կորուսի զայն յաղագս յոյժ հաւատալոյս վէզիրին իմոյ Իբրահիմին, Արդ ուսիր յօրինակէ մերմէ, և առանց քաջապէս քննութեց մի՛ ամենևին հաւատար պաշտօնէից քոց, զի եթէ՛ ես զհետ երթեալ էի նախկին կարգադրութեց իմոց՛ ոչ թողլ տայի իմոյն այնքան երկար ժամանակս, և ոչ դադարէի պահանջելոյ ՚ի նոցունց զուղիղ և ստոյգ համար Արքունական իրակութեցն, և այնուհետև հնարաւոր լինիցէր ինձ փառաւորապէս վայելել և ՚ի կատար հասուցանել զթագաւորութիւ իմ զոր օրինակ սկսեալ էի, Եւ զայս ասացեալ ասէ՛ խաղաղութի ընդ քեզ, եւ ցանկամ զի թագաւորու ի քոյ երջանիկ լիցի, և աղերսեմ զի յատկապէս այցելութի արասցես ինձ եղբաւակայն իմոյ՛ զորս ՚ի քեզ յանձն առնեմ, և յետ ասելոյ զայս վաղվաղակի մեկնեցաւ ՚ի նմանէ, և գնաց ՚ի նոյն տեղին յորմէ եհան զդէն եղբօրորդին իւր։

Արդ զկնի կատարելոյ զարքայական կարգն նորոյ Սուլթանին ըստ սովորական կանոնի մեծափառօք, այնուհետ Սուլթանն Սատանիօր ընկալեալ զպատիւ վայելուչս և յարմարս իւրում վեհագոյն աստիճանին, բորբոքիւր տենչմամբ և փափաքէր տեսանել զՓաթրօնայն որ եղև դործի վերացուցանելոյ զնա ՚ի գահն Արքայական։ Արդ իբրև ետես Փաթրօնայն առ Սուլթանն ունէր զգեստս հասարակ էնկիչէրւոյ և զքուն մերկս, համարձակ դիմեաց յառաջ մատեաւ ՚ի գահ Սուլթանին և համբուրեաց զաջ նորա, Ասէ ցնա Սուլթանն զինչ արարից քեզ Փաթրօնայ, զի յոյժ արդարութի է քեզ խնդրել յինէն զշնորհ ինչ, Սատանիօր խորամանկ և չար այր այսէ ցոյց դնչան միայնքան առաւել ազնիւ և զաստաբարութե, որքան ոչ ակն ոչ ունէր ՚ի ծննդենէ, մինչ ենէ, ևանցեալ վարուց և կենաց նորին, Պատասխանի ետ Սուլթանին այսպէս, որ քան վս ներկայ ժամանակիս՛ բարձրացեալ ժամանեցայ ես ՚ի գագաթ ցանկութե իմոյ, տեսանելով զվեհութիւն քոյ բազմեալ ՚ի գահն Օսմանի թագաւորութե, իսկ որքան վս ապագայիցն՝ հաւատեաւ զիտեմ զի այլում իրի ակն ինչ ոչ ունիմ ՚ի քէն՛ բայց եթէ անտարդ մահու միում. որում պատասխանի ետ Սուլթանն թէ՛ ահա երդնումես, Փաթրօնայ զի վնաս ինչ ոչ արարից քեզ. միայն թէ դու յայտնեայ ինձ թէ՛ որով կերպիւ վարձահատոյց եղէց քեզ, և ես իսկոյն շնորհեցից քեզ զոր ինչ և խնդրես յինէն, Ասէ ցնա Փաթրօնայն, Տէր ողորմեսցէ Արքայական բարութե քո, յանարգել

կամ

ամենախափանէ, հայցեմ զի ՚ի բաց թողուցուս զհամայն նոր հարկսն որով ծանրաբեռնեցան ժողովուրդք քո յանցեալ կառավարութեն:

Արդ թէպէտ խնդիրս այս երկոյց վտանգաւոր որով աճեցուցանել կամէր զխումբս իւր, սակայն ոչ երկմտեալ Սուլթանին առ ՚ի լնուլ զխնդիրս նորին՝ առժամայն հրամայեաց խափանել զժողովուածս հարկացն այնորիկ: Եւ յայսմ վայրի ապստամբքն փոխանակ մեկնելոյ, և խոյս տալոյ՝ բազումս վնասս գործէին, և մանաւանդ ապէս կողոպտէին և աւար առնէին զտունս աքսորեալ իշխանացն. որք կնքեալ էին Արքունական կնքով, որում Նոր Սուլթանն ոչ կարէր ճար ինչ առնել, բայց զամենայնն զետեղէր ՚ի սրտի իւրում սաստիկ ոխակալութեամբ. յաղագս բազմավրդով անամօթութեանն նոցին և բարձման օրինացն, և զի տեսանէր զի ինքն տակաւին ոչէր հաստատեալ յաթոռ թագաւորութեան, վասն որոյ և որով խնդրեաց ՚ի նոցանէ զի ՚ի բաց կացցեն յանպիտեաց գործոց, և ասէ յնոսա որովհետև դուք նստուցիք զիս յաթոռ թագաւորութեան, պարտիք ըզհամայն իշխանութիւս դատելոյ և պատժելոյ թողուլ ՚ի կամս իմ, զի ես ուղիղ և պատկանաւոր շաղոք արարից զամ որ բարւոք թուեսցի ինձ, Արդ թէպէտ մեղմագին գանգատս այնորոյ Սուլթանիս՝ էր իրաւացի, և օրինաւոր, և յոյժ կատարեալ, սակայն ամենևին անօգուտ լինէր բիրտ կամաց և անկիրթ մտացն ապստամբից և հակառակ այսմ նորոգեցին զպահանջումն (այսինքն զաւին) իւրեանց թէ՝ կամիմք զի բէիզ ափէնտին և մանէսցի ՚ի ձեռս մեր: Արդ թէպէտ Նախարարս այս ոչէր այնքան վնասակար իբրև զայլ Նախարարսն, սակայն սա բարւոք համարեցաւ մեկնել անտի և թագչիլ, և թէպէտ և ներկայ լինէր, տակաւին նոր Սուլթանն ամենևին ոչ ունէր զկամս ընդունելոյ զանկարգ խնդիրս նոցին, զորս հաճիլն օգուտ ինչ ոչ առնէր նմա, այլ առաւել աճեցուցանէր զկատաղութիւն ամբոխեալ սրտից նոցա:

Այլև ոկսան ապստամբքն կողոպտել զտունս այնոցիկ զորս նուաճեալ էին ընդ իշխանութեամբ իւրեանց, Աստանօր աւար մեծամեծացն և կողոպուտ գանձուցն Վէզիրին այնքան կարողացոյց զփաթրօնայն, զի առաւել բաշխէր զգանձս առ ՚ի հաճել զհետևողս իւր մինչ զի մանկունք ծերք, և աղայք և մանկունք եղէն նմա, Յայսմ վայրի ոմն ՚ի նախարարացն որէր զուլաղասին, և էր կարգեալ ՚ի պատստամբիցն. և հաստատեալ ՚ի Սուլթանէն, համարձակեցաւ ասել ապստամբացն թէ՝ յիշեցէք զի այսպիսի շռայլական առատաձեռնութիւն առ այնս որք ամենևին անարժանքեն այսպիսի առատաձեռնութեանց՝ տժպատեհ եղէն ուղիղ կառավարութեան որոյ աղագաւ դուք ձեռս ՚ի խառ արկիք, Արդ անէրջանիկ Նախարարս այս յաղագս այսպիսի անխոհեմ նախանձայուզութեան. առժամայն խողխողեցաւ առաջի նոցին:

Տեսանէր Սուլթանն զի որքան փաթրօնայն սուր ունի ՚ի ձեռին իւրում. անկարելի է ինքեան զխաղաղութիւն ինչ հաստատել, վասն որոյ խորամանայր տալ նմա զիշխանութիւն հարուստ երկրի միոյ, նաև զգանձս բազումս զի հանդարտեսցի, Բայց բարւոք գիտէր փաթրօնայն թէ՝ թարց սրոյ անհնարին էր նմա փրկել և ՚ի խաղաղութեան կալ, և սակայն այնուհետև սկսաւ պատժել զայնս որք առանց հրամանի նորա զանկարգութիւս գործէին, և համայն նոր իշխանքն Արքունի գերագոյն պատուիւ նուիրէին նմա վասն երկիւղի բռնաւոր իշխանութեան նորա:

Արդ զմտաւածէր փաթրօնայն թէ՝ համբաւօք միայն նախաինամից անուանէին՝ որով մինչև ցարդ կոչեցաւն առ ոչ ինչ օգնէ ինքեան մինչև ոչ արկցէ ընդ իշխանութեամբ իւրով զկեանս և զհարստութիւս բոլոր բնակչացն կոստանդնուպօլսոյ, ուստի սկսաւ զկաշառս առնուլ, և զշնորհս իւր վաճառել

ուել արծաթոյ։ Եւ ընկերայն ծանուցանել զայսմանէ, ոխայրն ձայտնեէին զնախանձս իւրեանց դառնութք ինչ, քանզի այնու քինէր զդաշինան ընդ ՚նա, որք ՚ի պահպանութենէ դաշանցն այն-ցիկ ձեռս ՚ի տուրարկնն, եւ այնուքին գործ քնորին այնքան յայտնի ճղենմինչև տկարացուցանել եւ կորուսանել զգունդս իւր, սակայն նա տակաւին պատճառէր թէ՝ համայն իղձ եւ ցանկութիւն իւր, ի՛ւր օգտաւէտ հասարակաց գիտէ:

Եւ մինչ կողմպտուէին, Ենուածուին ապստամբաց կայր ատեան, Փոխարհութք միաբանէր Սուլթանն ընդ Նոր Մուֆտիայն եւ ընդ այլ գլխաւոր նախարարացն Արքունի, յորում խորհրդեան հաստատե-ցայ Մուֆտին զօրինական կանոնս, Ռուսոի առաջեաց զգիրքս ՚ի բանակս ապստամբին ՚ի եթմէյտանն ՚ի ձեռն ըստամբօլ Աֆենտոյն, առ Երայր ինքնահաճ եւ ինքնակամ. եւսկզբանէ էր ՚ի կողմն ապստամբին, Ռուսոի զպատիւ մեծացուցեր ՚ի նոցանէ, Սա յայսմ վայրի այնքան քարուոզ շարժեցաւ մինչ զի որոց միանգամ համեմատագոյններ, ի մէջ ենկիչէրեացն հաճեցաւ մեկնիլ անտի եւ դառնալ ՚ի տեղի իւր, եւ Պատգանդիլ կամօքն Սուլթանին. Արդ ՚ի միւսն ժամու սպառնային ապս-տամբքն, զի եթէ ոչ մեկնեսցին անտի դրօշակ Մահմետին ոչ բացցի ուրեք, Եւ տեսանէին ապստամբքն թէ՝ հազարք հազարաց անձինք կային ՚ի կոստանդնուպօլիս, որք ՚ի պահպանութենէ նոյն դրօշակին պատրաստէին հեղուլ զարիւն իւրեանց, վասնորոյ Պատգանդէին, բայց այսու դաշնադրութք զի՛ մօրք ՚ի նոցունց ՚ի խաղ մանեացի, նաեւ դրօշակ իւրեանց բացեալ մն-ացէ, որով փութով կարասցեն կրկին միաբանիլ ՚ի պահպանութեն անձանց իւրեանց. Արդ առա-ջադրութիւս այս թէպէտ երբեմն արտաքոյ կարգի, սակայն բարւոք համարեցաւ Սուլթանն յայսմ վայրի Պատգանդիլ այնմ, առ ՚ի երկիւղի վտանգաւորագոյն պատահմանց:

Այսու երեւէր զի բոլոյն ապստամբականն ամբոխին սակաւ առ սակաւ չիջանէր, Ռուսոի տերու-թիւն անպատշած եւ վտանգաւոր համարէր ձեռնամուխ լինիլ ՚ի պատմութեան ուրուք ՚ի գլխաւորաց անտի, եւ մտածէին զի ենկիչէրիքն զկնի այնպիսի համարձակ կեանս վարելոյ զաւուրս չորեք տասան զի արդ էր կարէլի Պատգանդութեն եւ ուղիղ կառավարութեն ակնունիլ ՚ի նոցունց՝ որոց ՚ի բնա-նականս (այսինքն ՚ի դշխոյսն) գինարբութենէ արդէն եղեալ, եւ ոչ ումեք էր կարելի զարբեցութիւն ինչ գործել, եւ ՚ի ժամանակի յանձին՝ յորում ապստամբքն զապստամբութիւն իւրեանց ՚ի կիր առ-կանէին, բաղում զանձուց էր տիրացեալ փաթրոնայն, առ ՚ի նմամարկել զինքն բարեպէս, բայց չարութենէ պատուոյ նորին գոյացեալ էր ՚ի ինքն իւր գլխաւոր հեղինակ ապստամբութեանս յայտարկէ:

Արդ Փաթրոնայն կալեալ էր զատենն միմեան գլխոյին ենկիչէրեաց, յաղագս բնակութեան իւրոյ, եւ արտքնոտիք եւ բարւոք պահպանեալ էր իւր չորեք հարիւր, միշտ զինեալ կային, եւ վարէին զկեանս իւրեանց ՚ի գինեբբուս, եւ զպատութիւն բաղում ՚ի տուն ձեռին գործէին. Այնձեցաւ եւ բազմապատ համարձակութի մեծամեծատական համատաւութենց նորին, զկամակ ինչ ոչ կրէին մտանել առաջինոր Վեզիրն, զի կարգեալ քինքեանց (կամ չրապ իւրեանց) համարէին զնա, եւ այնու խնդրէին զաջորդութիւն բաղում մասնաւոր մեծամեծաց, զի տեղիս նոցա զինորագոյնս կար-գեսցեն: Եւ աստանօր յանուանէ կոչէին զնա՝ որոց զայնպիսի աստիճանս շնորհել կամէին, եւ յանուանակոչութեանս յայսմիկ կարի ատանձայտուցանէր զանդգամութիւն իւր փաթրոնայն, քանզի խնդրեաց զի մասգործ ումն, եւ անուամբ կոչեցեալ յազգէն յունաց, (յորմէ փաթրոնայն շնորհակալ ունէր յաղագս կերակրելոյ զնա ձրի,) լինի ուլահ բէկի, իսկոյն կարգ եւ առաջնորդութի տերութեան մասգործ իշխանեա, իսկապէս կատարեցան, սակայն ինքն ոչ լինելով այդ կարող առ ՚ի ծառայել

զաւորս

զաղօրական հարկսն՝ քարեհամիւր փաթրօնայն զամօթի հարկանիւր, եւ խեղամուտ լինէր անկարգ հացայթակղելի գործոյն իւրոյ, վասորոյ քարձի թողլ առնէր զնա, ուստի մակամտած ական իշխանութեան այնմ եկեալ կրկին ի կեանս փոխարկիւր:

Այսպիսի սատահակութեան, եւ այլնման զեղխութեան յամօթ առնէլն զենկիչէրիան օգնել այնուիսի անարգ եւ թշուառ առն, ուստի փզացումն եամէքարտաւանութի փաթրօնայիւն սակաւ ինչ խոնարհեցաւ, վասորոյ եղեալ գնաց առ Դիւանապետն (այսինքն Ղատիլասքարն) որէր այն յոյժ խեղամուտ եւ հաւմատ, եւ իբրեւ եմուտ առնա, յոյժ գաղջացեալ զիմաքըրնկալաւ զնա, սակայն փաթրօնայն յարգող կերպարանօք մատեաւ առնա եւ ասէ, մեծ Աֆենտի, գիտես զի հաճեցաւ ի ան՝ ի գործ ածել զոտկար զէնս զայս առ ի փրկել զժողովուրդ իւր ի ձեռն իմ անսխալ պաշտօնէ իւնարքունի, արդ դու որ իմաստունդես եւ նկատես՝ ի խիրտ մարդոյ, գիտես զի կամք եդիտաւորութի իմ է քարի, սակայն տեսանեմ զի արք ոմանք վատասիրտք, եւ չարակամք, չարախօս լինին զգործոյն իմոյ, ջանան վնասակար ցուցանել զայն առաջի մեր Սուլթանին, ի խերդոյ քազմիցս ի մեծամեծ վտանգս արկի զկեանս իմ, արդ եթէ աւելացին եւ հանապազօրդեսցին դըպարտութիւքս այսպիսիք, հայցեմ զի քարեխօս լիցիս վա իմ առաջի վեհափառութեան Սուլթանին: Պատասխանի ետ Դիւանապետն եւ ասէ, ես չարաչար անարգեալ եմ ըզկատութի, եւ ոչ երբեք ամաչեմ խօսել զճշմարտութե, վասորոյ, դու հաստատ լեր, զի եթէ զկարծիւն իմ հարցանէն, զոր ինչ միտք իմ վճռեն եդատե ասելոցեմ. Արդ զերկբայելի բանս այս՝ մեկնել կամէր փաթրօնայն իբրու խնամարար գոլ ինքեան, վասնորոյ համբուրեաց զաջ դատիլ ասքարին եւ ելարտաքս, եւ ետ այս առնէ ի յն նորա քանալիր զոսկի, զոր հրամայեաց դատիլ ասքարին ի ծածուկ յրուել առաջի աչացն փաթրօնային, իբրեւ զնշան նախատանաց եւ ցասման:

Յակաւ ինն իշխէր փաթրօնայն զնդի միում որ քաւական էր պաշտպանել զնա ի քարկութեան սէրութեան, որ խորհէր եւ րգդիպուծ ժամու որ անէր սպանանել զնա, եւ արդ ի վերայ երրորդ աւուրն նոյեմբերի ամսոյն փաթրօնայն իբրեւ եւտեղական կամ փոխանորդ ենկիչէրիոյն զմեծ ժողովառնէ եւ ի խորհուրդ նստի, յորում խորհրդեան էին եւ թիւաթարխանն. մեծ վէզիրն, Մուֆթին, եւ այլ բազում նախարարք եւ իշխանք Արքունի, եւ սկիզբն արար փաթրօնայն խօսիլ ի մէջ ժողովոյն, եւ մատուցեալ առաջի խանին ասէ այսպէս, արդ ներկայ կայութի թագաւորութեան այսորիկ պատճառեաց զժողովումն մեր յայս խորհուրդ, եւ գիտեմ զի զօրութի մեր որ ի Պարսս օրըստօրէ տկարանայ, եւ պակաս լինի, վա զի Ռուսաստ առաջէ մշտազգնութի Պարսից, վա որոյ կարծեմ քարւոք լինիլ մեզ յարուցանել զմարտ պատերազմի ընդդէմ նոցա առ ի խափանել զապագայ չարիսն՝ որով եւ վրէժխնդիր լինիլ վա մուսուլմանիցն որոց արեանց հեղման նոքա եղեն պատճառ, ուստի եկայք փութանակի ածցուք զմեծամեծ խումբս զօրաց ի վերայ նոցա եւ՝ ի նմին ժամու թիւաթարքն եւ՝ ի միւս կողմանց մտցեն յերկիրս անհաւատիցն այնոցիկ, եւ՝ ի գերութի ածցեն զբնակիչսն. Այլ եւ կարծեմ զի հարկաւոր է յոյժ նուաճել եւ ընդ իշխանութեամբ ածել զփաշայսն որք են ի վերջին սահմանսն վա չար գործոց նոցա, որք ամենեքին հեռի են ի հնազանդութե զօրացն, եւ զի ընդ ենկիչէրիան որք հաստատուն թիկունք են թագաւորութեան այսմիկ չարեօք փարին, արգելուն եւ չատան զթոշակս նոցա եւ պահեն վա յատուկ պիտոյից իւրեանց, եւ վա հաճելոյ եւ ցուցանելոյ զ պահպանութիւն իւրեանցն:

Այսպիսի եւ այլնման սոցին առաջադրութիւն քաղում առնէր, եզայն եւ այնքան վայրենի եւան կարգ դիմօք մինչզի քոլոր ժողովն զայրացեալ որոնէր ողբային զթշուառ կացութիւն տէրութե

իւր

իւրեանց, որ արարածոցն զմնացեալ մեծ ժողովն Օսմանի տէրութեան ունկնդրել անկարգ և թէ
տուաւ առնա որ յանդգնէր տող զրկեալ։ Ուստի վասնզի եղիցի ուղիղ պատկեր թախանձ յայսչափ
բանից Նորին, և ասէ՝ ցնա, դու որ այդքան զպատերազմայն բարբառիս՝ գիտես արդեօք թէ՝
զինչ իցէ պատերազմն, արդ զինչ իրաւամբ վեհութիւն Սուլթանին զմարտ յարուսցէ ընդդէմ ռուսա-
տայն, ոչ գիտես զի թագաւորութիւն մեր խաղաղութեան է հաստատեալ ընդ նոսա, և թէպէտ իրաւացի
արտօնեալ ոչէ ընդ մեզ զխաղաղութիւն զայն բեկանել, ուստի նախ քան զգալն մեր առ այն
փաղձան արարիմք, իմիտ առնուլ զճշմարտութիւն անսովոր բանից զոր յաղագս ձեր ժողով զ՚կնի
լինելեաց մտախոհ լինելոյ ՚ի վերայ իրացն կարեմք էնթադրել թէ արդեօք խաղաղութիւն, եթէ պա-
տերազմ էն յաւէտ հարկաւոր վն պատւոյ և օգտի տէրութեան՝ բայց բանից որոց մտածես ոչէ
գործ իմն թեթև վնորոյ առաջին ընդ որ ճանապարհ անցանիցես յերկիւղ ռուսաց պատաս-
խանի ետ փաթրոնայն թէ ընդ որ ճանապարհ ասելդ՝ է հարցումն ինչ յոյժ քաղցրալուր, ընդ-
էր ոչ անցանեմք ընդ այն ճանապարհ ընդ որս անցաք յառաջ, դու ՚ի միտ կողմանէ կմէջ ՚ի մէջ
Արդ աստանօր թամֆուրխանն այնքան խռովեցան ցասմամբ մինչ զի պարզապէս երևէր ամե-
նեցունց զի անարժան համարէր իւրում աստիճանի զայլ ինչ պատասխանել նմա, այլ՝ զոր միայն
ներկայ տպաւորութիւն տէրութեան հանկարծ համարէր տանիլ յայնմ վայրի, և խօսէր այսպէս, թէ
յուսամ անդ անցանել ընդ կողմն պրլնիուս որ լեհի երկիր, քանզի յայնմ ժամանակի պատերազմ
ունէաք ընդ պոլոնիացիսն, բայց արդ յխաղաղութեան եմք ընդ նս, որով թէ իցէ արդ եօք ա-
երածն արկանել ՚ի մէջ ժողովրդոց զորոց ոչ ունիմք զպատճառ ինչ գանգատանաց, մինչ ոչ գի-
տեսցի բանակ մի իբրև հարիւր հազար թաթարաց ոչ անցանէ զերկրաւ իւեւր առանց պակաս-
նութենց, յիրաւի թէպէտ պատերազմն է յառաւել գործ, և ճշմարիտ աղէտս հարստութեանց
ժողովրդեան խմբոց փախէաք կան ՚ի դաշտս Ղրիմու, զի մեք ոչ գնեմք և ոչ վաճառեմք, այլ՝
անկեալ կամք ՚ի չքաւորութե, սակայն յաւէտ ՚ի բաց մերժեմք զյաղթանակ … մեր, քանզի
անցանեմք զօրաւորութիւն զաղղութիւն և զօրինօք ազգաց, … եմք զի պատերազմն է պատիժ
երկնային, ուստի նախ քան զարկանելն զձեռս մեր ՚ի սուր, պարտիմք զկատարեալն խորհիլ,
զի ՚ի պատերազմին մեր ՚ի վերայ դնել զայն հրկիզն, միգղջանայ, քանզի գործս այս ոչ է գործ
սակսնակելի։ Պատասխանի ետ փաթրոնայն ասելով թէ՝ ամենեքին գիտեմք, ոչ թուի ինձ աւերել
զերկիրս անհաւատից, բայց որքան վն մերոց մտախոհութեց ՚ի վր իրացս՝ ես անն ինչ ոչ ունէի
զի խորհուրդս այսպիսի … հաստատեսցի քանզի թէ միայն Սուլթան … մեծ վէզ-
իրին, սակայն արամք … կարծեմ զի ՚ի վերջնումս այդպէս եղիցի, զի կարասցուք զգործ
մեր յառաջ տանել, և զի անհաւատքն եթէ տեղեկացին զխորհրդոց մերոց՝ զ
հնարս մեր խափանեսցեն, Պատասխանի ետ խանն ասէ, յորժամ դխորհուրդ ինչ պատշաճ լիցի
առնել վն պատերազմաց կամ խաղաղութեց անքակտելի կանոնն զայ, հաստատեալ ՚ի մէջ մերում
զի ժողովն մեծ եղիցի, որով ծանիցուք զզանազան կարծիս իւրաքանչիւր իւրոյն ՚ի վր այսպիսի
ծանրագունից իրակութեց, յիշեա զի իբրահիմ փաշայն ցանկացող միայնակ իշխողութեց, ոչ
միայն կորուսանէր զինքն …, այլ և մերձէր զի տէրութիւն մեր … ,
Ուստի … զի այսպիսի նորոգ օրինակ, ոչ խրատէ զքեզ զգուշանալ ՚ի միայնակ միայն-
ակ իշխողութեց, բայց ես յայտնապէս ասեմ, զի եթէ այդ այդպէս …՝ յաղաչէցից զվեհու-
թին Սուլթանին զի ՚ի հնեաւագոյն … յղեսցէ զիս, քանզի վկայ լիցի ամենայն պատուղ իւրոյ
հաւատարմութեան տէրութեան մերոյ։

Արդ այսպիսի վտանգ խաներին իւր խոհականութիւն յանդիմանէր զահյուրէն փաթրոնայն։ Ամէկն-
եալ ժողովն առարկելով և ոչինչ, և յնմին ժամու բաղդեմք … ցանկային տեսանել զ

կորուստ ապստամբացն որք զ՚նարս խորհէին ածել զարս իւրեանց ՚ի գործ Արքունական տաշ-տօնի ՚ի տեղի գլխաւոր Նախարարացն արքունի եբրև զմիայնակ ՚նար պահպանելոյ զանձինս իւրեանց։

Եւ զկնի երկուց աւուրց հրաւիրէ Սուլթանն զփաթրօնայն, զմուսուլուղն, եզէնկիչէրի աղասին ՚ի պալատն առ ՚ի տեղեկանալ առաջադրութեց նոցին եւ խորհուրդ առնել նոքօք թէ՝ զի՞նչ ՚նարս առնիցեն վ՟ գործոց իւրեանց որ ՚ի պարսս, նոյնպէս վ՟ ներքին տէրութեն իւրեանց, Եւ ՚ի մետասաներրորդ ժամու ընդ այգն քան եկեցարամբք գնացին նոքա ՚ի պալատն արքունի եւ եբրև ՚ի ներքս մտին՝ եդին զարս իւրեանց ՚ի նախկին պալատն, եւ ինքեանք մտին ՚ի խունէթ օտասին (այսինքն ՚ի սենեակ Թլպատութե արքայազնիցն տաճկաց) եւ տեսին զԹաթարխանն զՄուֆտին, եզմեծ վէզիրն, ընդ այլ մեծամեծացն արքունի, որք բազմեալ կային անդ իւր աքանչիւր ըստ կարգի իւրում, եւ էին անդ բազումք եւ ՚ի գլխաւորացն Պօստանճոյ, եւ այլք ոմանք որք կանգնեալ կային. յորում ապստամբքն եւ բազմեցան Թարց իմն կասկածանաց եւ երկիւղի վտանգից, եզի զպօստանճիան սպասաւորք պալատին զօղ կարծէին։

Աստանօր մեծ վէզիրն սկիզբն արար խօսից, եւ ուղղեալ զբանս իւր առ փաթրօնայն եւ ասէ, վեհութի Սուլթանին շնորհեաց քեզ զպէկլարպէկութի ռումելու եւ ետ քեզ հրաման իշխելոյ երեսուն հազարաց, որով գնասցես միաբանեսցիս ընդ ահմէտ փաշայն բաղտատու, եւ խորհուրդ արարեալ ընդ նմա ձեռնամուխ լիջիք յերամեր որք ՚ի պարսս։ Եւ դարձաւ առ Մուսուլուղ աղայն եւ ասէ վեհութի Սուլթանին կացոյց զքեզ պէկլարպէկի անատօլու, եապա դարձեալ առ ենկիչէրաղասին ասէ, քեզ եւս պարգեւեաց զերիս թուղս, եմինչ դեռ նա զայս ասէր, աղաղակեաց Մուստաֆայ աղայն թէ՝ համայն թշնամիքն տէրութեն յայտնիք ՚ի յարմատոյ խլեսցին, եւ իսկոյն արք երեսուն ՚ի գլխաւորաց պօստանճոյն անկան սուսերօք ՚ի վ՟ փաթրօնայ խալիլին, մուսուլուղին եւ ենկիչէրի աղասւոյն, Եւ աճապարեալ փաթրօնային քարշեր զդաշոյնն (այսինքն զխանջարն) ՚ի միջաց իւրոց առ ՚ի պաշտպանել զինքն, իսկ մուստաֆայ աղայն հարեալ զնա վաղվաղակի թրով իւրով եհատ զձեռն նորա, իսկ մուսուլուղն քարշեալ զձորձս իւր ՚ի վ՟ երեսաց իւրոց յանձն առնէր զինքն կամայն ՚ի յ, ո՟յ ՚ի հնութե կայսրութե արար։

Արդ զարմանք իմն թուի թէ՝ զի՞արդ մատնիչքն այնոքիկ թողին զպահապանս իւրեանց արտաքոյ պալատին, քանզի դժուարութի ՚ի դիւրութի փոխարկեալ վ՟ նոցա, զի ըստ մտածելոյ մեր զիրսն, խորհուրդն զոր առնելոյ էին երկոյծ մեծագոյն եւ հարկաւոր, եւ ըստ թելադրելոյ ըղձից իւրեանց այնպէս համարէին եբրութէ Սուլթանն բարւոք ընտրեալ էր զխորհուրդս նոցա ոչ միայն վ՟ օգտութեց տէրութե, այլ մանաւանդ յաղագս ծածկաբար առնելոյ զխորհուրդն (զոր օրինակ արարին) ըստ կամաց փաթրօնային ՚ի ժողովն վերջին պատուիրեալ էր նոցա

Եւ եբրև սպանին զառաջնորդս ապստամբացն, առին զգէշս նոցա եւ արկին ՚ի միջ պալատին յանդիման ապարանիցն յորս կործանեցան, եւ իսկոյն առաքեցաւ դեսպան մի առ պահապանսն ապստամբաց. ազդել նոցա թէ հաճեցաւ Սուլթանն խիլայել զպէտս ձեր զգեստուք փառաց, եւ կամի ձեզ եւս շնորհել ՚ի կապայ մի իւրաքանչիւրոցդ, Ուստի պարտաւոր լինէին նոքա մտանել երեք երեք. եւ չորս չորս կարգաւ ժամէ ՚ի ժամ, զի կարգն յարմարապէս կատարեսցի, Եւ եբրև հասանէին դաւաճանեալ թշուառականքն այնոքիկ ՚ի ներքին կողմ երկրորդ պալատին, իսկոյն ՚ի բաց հատանէին զնոսա ըստ տեարց իւրեանց, եւ մանք ՚ի նոցանէ որք տակաւին ՚ի յարտաքին պալատն կային՝, ՚ի կատկած անկանէին, վ՟ զի յընկերացն իւրեանց ոչ որք յետս դառնայր, ուստի

գիտացին

գիտացին զի յորոգայթանէն արկեալք, եւ յոյժ ջանային զի փրկեսցեն զանձինս իւրեանց, բայց զօրունք պալատին փակեալք էին եւ այնպէս սրախողխող արարին զնոսա ըստ ընկերացն իւրեանց։

Եւ զօրանայր համբաւն 'ի մէջ քաղաքին թէ՝ փաթրօնայն, մուսլուղն, եւ Ենիչէր աղային 'ի վաղուց հետէ մտին 'ի պալատն եւ յոյժ յամեցան, եւ զօրունք պալատին փակեալ կան։ Ուստի բազումք 'ի ժողովոյ նոցա եկին անդ եւ կամէին տրտունջել եւ գաղտնալիս ցուցանել, եւ յանկարծակի զօրունք պալատին բացին, եւ իբրեւ տեսին թէ մարմինք առաջնորդաց իւրեանց բարձեալ 'ի վր սայլից արիւնաթաթաւ հանեալ եղեն առաջի՝ խիստ զահի հարեալ տաշէին եւ 'ի փախուստ դառնային, Արդ պատառոտեալ գէշքն այնոքիկ 'ի փողոցս անդ մնային իբրեւ ժամս երկուս։ Եւ զկնի իշխանայն խորհուրդ առեալ, զի զարհուրելի տեսիլք նոցա գուցէ զնորագոյն զանկարգութի ինչ յարուսցէ 'ի մէջ ժողովրդեանն, հրամայեցին զգէշս նոցա 'ի ծով արկանել։

Եւ էր հրաման զի բազմութիւնք պահապանաց զգուշասցին պալատային, եւ 'ի բարւոք կարգադրութեն պահեսցեն ըզփողոցս, եւ արգելցեն զյուսահատան 'ի հրձիգ առնելոյ զքաղաքն, զի բազմացս խօսեցեալ էր փաթրօնայն թէ՝ 'ի կատարածի բանալոյ զկեանս իւր այդպէս երկնելոյ, եւ 'ի նմին ժամու կալան զբազումս յապստամբացն եւ սպանին, եւ մասագործ եանաքին որ միմիայն ապրեցաւ զկնի տն իւրոյ, եւ իսկոյն հրաման եղեւ յայտնապէս գոհութիւն մատուցանել ամենակարողին այ յաղագս յատուկ ողորմութե իւրոյ, զի փրկեաց զտէրութիւն նոցա 'ի մերձակայ վտանգից, այլեւ առհասարակ թողութիւն շնորհեցաւ ապստամբացն, բայց 'ի նոցունց որք առաջնորդք եղեն խռովութեան նոցա, եւ զնոսա եւս փոխանակ պատժելոյ աքսորեցին, եւ բայց յայնքան գթութեց՝ նաեւ պարգեւս բազումս շնորհեցին ենկիչէրացն եւ իսպահոյն, Այլեւ պէսպէս հրամանս առնէին զօրացն որք միաբանեալ էին ընդ ամբոխին այնմիկ։ Արդ այսպիսի առատաձիր կամք արքային իւրեանց զնախանձս նոցա 'ի ցանկութի վն աջողութե եւ երջանկութե նր դարձուցանէր, եւ այսպէս բոլոր քաղաքն 'ի վերջնումն նոյեմբերի ամսոյն 'ի նախկին յանդորրութի դառնայր։

1731։ Արդ բայց ապստամբութե տագնապն ոչ շիջանէր, զի արիւն փաթրօնայ խալիլին, Մուսլուլուղին, եւ ընկերաց նոցին զնորագոյն հակառակս ածուցանէր, որք 'ի լինել իբրեւ չորից ամսոց աճէին եւ 'ի խռովալի հասակս հասանէին, Եւ վն սաստիկ ապառժան գանձուց որ պատահեալ էր յապստամբութենէս յայսմանէ, նաեւ վն պակասութեց եւ տարաղան գործոց նորոց նախարարաց՝ ոչ միայն ռոճիկք ենկիչէրոցն պակասէր, այլեւ սղութի լինէր կերակրոյ 'ի կոստանդնուպօլիս, ուստի 'ի վերջնումն փետրվարի ամսոյն յայսմ ամի սկսան ժողովուրդք բարձրաձայն տրտունջել եւ զնորագոյն ապստամբութիւնս նախագուշակել։

Եւ բազութի սանձարձակ եւ ժանտաբարոյ արանց որք յանցեալ ապստամբութե էին 'ի միջվայր ժողովեցան եւ էր բազմութի մեծ. որք ըստ բնական բարուց եւ ըստ պարարտ կենցաղավարութե իւրեանց պատրաստէին ամենից յուսահատ խորհրդոց իսկոյն հաղորդիլ, Եւ որք 'ի կողմ անկեալ Սուլթան Ահմէտինէին. կամսիրելիք նր ականայ հանդուրժէին տարաբախտութե անկեալ տն իւրեանց, եւ այսպէս նիւթն ապստամբութե գաղանի զօրանայր, Եւ թուի թէ՝ տէրութե կարծիս ինչ ոչ ունէր զայնց գործոց։ Եւ 'ի քսան եւ հինգ երրորդն ամսեան մարտի յանկարծ լուր եհաս առ նս թէ ահա ամբոխ մեծ ժողովեալ է 'ի էթմէյտանն. որէր հասարակ տեղի ժողովոյ չարահաւանից, եւ ապստամբելոյ, որք զկնի կողոպտելոյ ըզբազում կրպակս եւ ժողովելոյ զէնս յոլովս, խորտակեցին զդրունս ենկիչէր աղայոյն. եւ աւար առին զտուն նորա եւ ինքն միայն հազիւ թէ

փրկեալ

փրկեալ ապրեսցուք 'ի ձեռաց նոցա:

Արդ ենկիչէր աղասին փութապէս ազդ առնէր Սուլթանին ավէհմէթին որ առժամայն հրաման եած զմեծ վէզիրն ըզՄուֆտին. եւ զայլ նախարարսն վաղվաղակի առ ինքն կոչել: Եւ զի բարեպէս փորձեալ էին յանցեալ ամսոյն սեպտեմբերի, զի զայնպիսի բռնաւորութիւ դժուարինէ այլ ինչ հնարիւք նուաճել, եթէ ոչ զինուորական դատաստանօք. ուստի և 'ի նմին գիշերի ժողովեցին զզօրականս իւրեանց զորս 'ի պատրաստի ունէին գուցէ թէ հարկաւորութի պարտաւորեսցէ զինքեանս զզօրս գումարել վն օգնութե: Եւ հանին զԴրօշակ Մահմետին, վն զի տաճիկք կարծեն թէ՝ որոք մեռանիցի վն պահպանութե նոյն Դրօշակին. զպսակ մարտիրոսական ընկալցի: Եւ ընդ այդ ենկիչէրի աղասին միով գնդաւ. ավէզիրն միւսով 'ի էթմէյտանն դիմէին եանկանէին 'ի վր ապստամբացն. եւ անդ լինէր պատերազմ սաստիկ. եւ երկվար դրօշակակրին յերկիր անկանէր, եւ ինքն հետևակ մնայր. եւ տագնապ վտանգին մեծ լինէր 'ի վր նր գուցէ թէ դրօշակն գերեսցի. եւ վաղճան իւրեանց բօթալից լիցի:

Եւ 'ի վաղճանի ապստամբքն 'ի փախուստ դառնային եւ դիմէին 'ի գշլայսն այսինքն 'ի սենեակս ենկիչէրացն: Եւ ենկիչէրիքն կարծէին թէ սակաւքէին որք առին զսուր, ուստի վէզիրն խոհեմաբար հրաժարէր հետամուտ լինիլ փախուցեալ ապստամբացն, գուցէ թէ ջնջումն ապստամբանին նոցա (որէր տեղի յոյժ մեծարելի 'ի մէջ ենկիչէրաց) պատճառ իմն լիցի նորագոյն խռովութեց, եւ մանկյի քաղաքն 'ի վր դովումն հանգոյն այնց վրդովմանց որք եղեն յառաջ քան զամիս չորս. ուստի բաւականացան սպանանելով միայն զայս իբրև զերկու հարիւր յապստամբացն եզվաթսունս կալան կենդանի, զորս (զկնի խոստովանելոյ զմիաբանութիս իւրեանց 'ի նոր ապստամբութեն) խեղդեցին. եւ զգէշս նոցա 'ի ծովն արկին

Եւ եւ հրաման զի վաղվաղակի դրունք ղահվախանայից եւ մէյխանայիցն փակեսցին, եւ զգինեայ կարասս յունաց պինէվածառացն փշրեալ մանրեսցին. զի մի վառեալ ինչ գտանիցի առ 'ի ջերուցանել զուղեղս յուսահատ ամբոխին: Եւ հաստատեցին զպահապանս զգուշութե պահել զփողոցսն որք իբրև սակաւ ինչ կարծիս յումեքէ ունէին՝ խնդրն դատապարտէին, այնքան մինչ զի եզանմեղս բազումս ընդ նոսա սպանանէին, եւ այսպէս կատարեցաւ այս դառն եւ խիստ հնար վն բժշկելոյ զվտանգաւոր հիւանդութիս անդամոյ քաղաքին. եւ արգել 'ի ձարակելոյ զհուրն ապստամբութե:

Եւ զբազումս 'ի յապստամբիցն 'ի փողոցս քաղաքին կոտորանէին, իսկ քանի ինչ հազարք 'ի նոցունց խորհեցան ժողովել 'ի էթմէտանն եւ միաբանիլ ընդ բանակին, եթէ վէզիրն լատ իրաց ինչ պատկառ գտանիւր 'ի գործս իւր. կարելիէր զի միւս եւս աղմուկ յառնիցէր՝ վատթար, արիւնահեղ եւ դառնագոյն քան զառաջինն: Եւ զայս կարծիս եւ ունէին թէ փաթմայ դուստրն անկեալ Սուլթան ահմետին եւ կին իբրահիմ փաշայ վէզիրն, զոր խեղդեալէին. կաշառեալէր զենկիչէրիսն 'ի վրէժ խնդրութե արեան առն իւրոյ իբրահիմին. Այլ թէ արդեօք տիկինս այս վնասապարտ էր թէ ոչ զհարցումն զայս անպատասխանի թողաք: Եւ արդ առ 'ի բաց վանել զնիւթն ապստամբական հրոյն. զբազումս 'ի պօստանջեաց, յառնաւուտից, և 'ի լազից աքսորեցին 'ի քաղաքէն, եւ վէզիրն ոչ ինչ իրօք պակասէր խոնհարեցուցանել զապստամբս, եւ զամենեսեան զորս խեղդէին 'ի ծովն արկանէին. եւ զգէշք նոցա շրջէին յերեսս ջրոյն իբրև զտեսիլս սարսափելիս, եւ կերակուր թռչնոց եւ ձկանց լինէին. ուստի աղնուականք եւ փափկասուն բնակիչք քաղաքին ժամանակ ինչ զձուկն ոչ ուտէին:

Եւ

Եւ 'ի Թիւ. արկին զի յայժմ զանազան ապստամբութեանց աւելի քան տասն հազար անձինք կորան-թեն սրով և թէ խեղդեցմամբ, և առաւել քան զերեսուն հազարս աքսորեցին 'ի քաղաքէն, նբա-ժանեցին զենկիչերիսն 'ի զանազան տեղիս' զի մի կարասցեն զխորհուրդ ինչ առնել ընդ միմեանս և որք խռովարարքէին այսոց կերպիւ պարտաւորեցան ելանել 'ի քաղաքէն: Եւ 'ի վերջնումն յայ-տնի անզօրութի մեծապէս լինէր, Եւ յայսոց ամենից պատճառաց ազգ տաճկաց (այսինքն Օս-մանցիքն) զվիշտս մեծամեծս կրեցին, ոչ միայն վն անարգ ծնալոյ տէրութեան իւրեանց որ հա-նապազորդական փոխադրութի նախարարացն պատճառէր, այլև յաղագս սպառման գանձուց իւրեանց որ տկարացոյց զինքեանս օգնել պատերազմին ընդդէմ պարսից:

Որպէս և զի արդ Ահմէտ փաշայն իշխանն բաղտատու զխաղա-ղութի հաստատեալ ընդ Պարսս յամի տն 1732: յամսեանն յուն-վարի, և զի արդ Թահմազ ղուլիխանն աճեցուցանէր զզօրս իւր 'ի խորասան և ոչ հաճէր ընդ հաշտութի այն, և 'ի խորհուրդ խորա-մանկութեան մտանէր, ընդ զօրապետս իւր, և զի արդ զորդին իւր կար-գէր իշխան 'ի վե խորասանոյ և ինքն դառնայր առ Շահն 'ի Սպա-հան յամին 1731: և յամսեանն օգոստոսի և ջանայր արդարացուցա-նել զգործս իւրյանչս Շահին:

Եւ մինչ ներքին խռովութիքն հանապազորդէին 'ի կոստանդնուպօլիս. Ահմէտ փաշայն իշխանն բաղտատու զբացարձակ իշխանութի ընկալեալ 'ի Սուլթանէն զխաղաղութեան դաշինս հաստատ-ել ընդ Պարսիկս, վասն զի տաճիկքն երկնչէին զի' եթէ պարտութի ինչ հանդիպեսցի զօրաց իւրեանց որք 'ի ազիա, 'ի հարկէ մեծ և ս ապստամբութի յառնիցէ 'ի մէջ իւրեանց: Եւ յաղագս մեծամեծ պարտութեանն որք դիպեալ էին Շահին 'ի տաճկաց անտի դիւրաւ պարտաւորիւր յանձն առնուլ զխաղաղութի, եբաց 'ի սոցունց բազում և այլ պատճառս ունէր յաղագս ներքին մաս-անց երկրին իւրոյ, ուստի այնքան հաւանէր հաշտութեան' որքան տաճիկքն հաճէին, և Ահմէտ փաշայն էր այր յոյժ կարող և հզօր նախարար, և զբոլոր ոյժութիս Պարսկաստանայ ամ կարևոր պա-րագայիւքն քաջ գիտէր, նաև զգործս և զկարողութիս ազգին Պարսից լիակատար իմանայր. և մանաւանդ գիտէր զի 'ի դառնալն Թահմազ ղուլիխանին, յաջողութի պատերազմին փոխարկե-ացի, և զանազանեսցի յանցելոյն, և Սուլթանն հաւատայր նմա առանց ինչ երկբայութեան թէ' յա-ղագս դաշանցն օգուտ ինքեանց լինիցի' Ուստի ազդ առնէր Ահմէտ փաշայն Պարսից թա-գաւորին այսպէս, թէպէտև յաղթութիք զօրացն Օսմանիէն գերազանց' սակայն Տէրնիմ ար-քայ և Սուլթան կամի զհաշտութի և զբազմաժամանակեայ բարեկամութի ընդ քեզ հաստատել

Յայսմիկ ժամանակի Շահն էր 'ի Ղազպին, որ իբրև ընկալաւ լուրն խաղաղութեան յոյժ բերկրե-ցաւ, քանզի զմտաւածէր զի' եթէ կամք իցեն տաճկաց 'ի Սպահան գնալոյ դիւրաւ նուաճեն զնա, և զի զօր ոչ գոյր 'ի ճանապարհի առ 'ի կարող լինիլ զդէմ ունիլ նոցա, և այնքան մեծ ի խռո-վութեան կայր Սպահան յահէ նոցա, մինչ զի յորժամ գունդք ոմանք Պարսից գային անդ առ 'ի պահպանութի և ուղղութի քաղաքին, բազումք 'ի բնակչացն փախչէին 'ի քաղաքէն:

Եւ Ահմէտ փաշայն կասկածէր 'ի մտի գուցէ թէ պատճառաւ յաղթութեան իւրոյ 'ի վե Պարսից, Սուլթանն յաճախեսցէ ըղխնդիրս իւր 'ի գործս դաշնադրութեան, ուստի փութով զհաշտութի հաստատել կամէր, և զի փորձառութբ և 'ի ձեռն բանական կորովամտութեան իւրոյ գիտէր զի պա-

տերազմն

տէրութեամբ ընդ Պարսից ոչ էրբէք 'ի վաղեմն բարի վճարեցին վս երկրի իւրոյ, նմանապէս զօգտութիւնն որ խափանեսցէ, քանզի Թագաւորք Պարսից 'ի բազում ժամանակաց հետէ անկեալ էին 'ի վր բաղտատու․ որձայրաքաղաքներ գաւառայն նոցա:

1723: Եւ 'ի լրանալ ամին անցելոյ եկին նախարարք Պարսից 'ի բանակն տաճկաց առ ընթեր Համատանոյ. Եւ 'ի վեցտասան երրորդն յունվարի ամսոյն 'ի հետեւեալ ամին խօսեցան 'ի վր իրայն, և զկարևոր դաշնադրութիւն կնքեալ հաստատեցին յերկուց կողմանց, և զգետն Էրասխ սահման կարգեցին Պարսից տէրութե, որով Շահն իշխէր 'ի վր գաւառայն Հայաստանեաց, Երևանոյ և Վրաստանոյ, և Օսմանցիքն տիրեին երկրին Պարսից իբրև վեցհարիւր մղոն ընդ երկայն, այսու դաշամբ զի 'ի հարկաւոր ժամու երկոցունց զօրքն միաբանեսցին առ 'ի բաց վանել զազգն Ռուսաց կամ Մոսկովից 'ի Կիլանոյ, 'ի Շիրվանոյ, և 'ի Դարպանտու, և յամ սահմանայն կասպից ծովուն յարևմտեան կողմանցն:

Արդ մինչ տաճկաց յայսպիսի դաշնադրութիւն ձեռնամուխ լինէին, Թահմազ ղուլիխանն (որ վաղեալներ սիրով արքունական իշխանութե և պաշտպանէր 'ի ժողովուրդն գանձուց) արդէն իսկ ըստ իրաց ինչ զինքնակալութիւններ հաստատեալ քանզի այսպիսի անօրէն և աննկարգ իշխանութե զօրաբազում հաւաքէր յապտալեանց, յաղվանից, յօզբէկից, և 'ի Թուրքմանաց անտի: Արդ եթէ միտ դիցուք պարագայիցն գործոց, և հանգամանաց գնայից նորին առ հասարակ, 'ի սկզբան գիտէր զի գումարումն բազմախումբ զօրացն միայն դեղ և հնարք յերկիւղի պահելոյ զազգն Պարսից, և սոսկալի երևելոյ յաչս նոցա, և եթէ իցէ նա այնուքիկ ըստ մեծի մասին օզբէկք, վս զի սոքա զփոյթ ինչ ոչ ունելով յաղագս սեփհական ժառանգութե Թագաւորաց' 'ի հարկէ յօժարակամ լինէին 'ի ծառայութե իւրում, որքան զթօշակ նոցին ընդ ժամանակս ժամանակս չափապէս բաշխեսցէ 'ի ձեռն այնպիսի իշխանութե իւրոյ' որ կարողացուցանէր զինքն առայն, Ուստի ամրացուցանէր զմաշատ, և զայլ հնարս հնարէր առ 'ի խափանել զարշաւանս օզբէկից 'ի նա:

Եւ իբրև լուաւ Թէ Շահն երկիցս յաղթեցաւ 'ի տաճկացն և կամի զխաղաղութի հաստատել ընդ նոսա, վաղվաղակի յանդիմանէ զարարս նորին թղթով, և խնդրէ 'ի նմանէ հաստատուն կալ 'ի խնդիրս իւր, և պահանջել 'ի տաճկացն զերկիրսն իւր համայն: և այդ առնէր նմա թէ՝ փութով գամ առ քեզ կազմ և յաղթող զօրօք' որոյ առաջի Օսմանցիքն տոկալ ոչ կարեն, այլ իբրև զաղվեսս վաղվաղակի 'ի փախուստ մատնին, բայց միայն դու պաշտպանեայ զքեզ աւուրս ինչ:

Իսկ Շահն առաւել ատոյեալ զխաղաղասէր բարս հօր իւրոյ ընդ հանգստութի առաւել խնդայր քան ընդ յաջողութի և կարելի՞ թէ յազդմանէ հնարագիտութե քաղաքավարութե շարժիւր առայն, քանզի ոչ ունելով զթշնամի որ պատերազմիցէ ընդ նմա, բազմաթիւ զօրքն իւր անպիտան լինէին նմա, և այնու կարողանայ վրէժխնդիր լինել բացարձակ իշխանութե Սպարապետին իւրոյ Թահմազ ղուլիխանին, կամ արձակել զբոլոր զօրսն 'ի նմանէ, կամ տակաւաթիւ առնել զնոսա, այլև Պարսկաստան բազում ամօք ձնշեալ 'ի գերութե աղվանիցն. Ժողովուրդ երկրին յոյժ չքաւորեալ էին, ուստի հանգստութի յոյժ հարկաւոր էր նոցա զի զօրասցին և կարողասցին նորոգել զյարկս իւրեանց աւերեալս:

Եւ զկնի կատարելոյ զդաշինսն խաղաղութե չուէր Շահն 'ի Ղազվինոյ և գնայր 'ի Սպահան և անդ հաստատէր ըզ հաշտութի, և զոմանս 'ի գնդից իւրոց 'ի բաց արձակէր և զայլսն յերկիրս իւրա-

քանչ

քանչիւր նահանգ իւրեանց, եւ զկնի գրեաց Սպարապետին իւրում Թահմազ Ղուլիխանին թէ՝ հաճոյ թուեցաւ անձին իմում բառնալ զպատերազմն 'ի միջոյ, որով ծանրաբեռնեալ ճնշէին ժողովուրդ իմ, Արդ որովհետեւ ոչ օտար եւ ոչ ընտանի թշնամի գոյին որ վրդովիցէ զերկիրս իմ, հրամայեմ քեզ 'ի բաց արձակել զզօրդ 'ի քէն, եւ գալ 'ի Սպահան զի հոգասցուք վասն բարեկարգութեան երկրի մերոյ եւ վասն բարութեան ժողովրդեանս:

Արդ շաւիղս այս խաղաղական ամենեւին ոչ հաճոյ լինէր փառամոլ մտացն Պարսից Սպարապետին, որոյ անարգ մնացեալ, իբրեւ զօրավարութիւն իւր արարեալ էր նմա զհետ երթալ առաջնորդութեան տիրոց իւրոց գոլով անգութ եւ անարգել յամենից օրինաց թէ յանձնալոց եւ թէ՝ իմաստական, դժուարին էր ակնունիլ 'ի նմանէ հնազանդութեան նշանի՝ որովհետեւ իշխէր նա 'ի վերայ այնքան քաջամարտիկ զօրաց, որք յամենայն ժամ յօժարութեամբ սրտի ջերմեռանդապէս ծառայէին նմա: Եւ ծանուցանէր նա զօրապետաց իւրոց զձախորդութիւն Շահին որ պատահեալ էր նմա 'ի Տաճկաց անտի, եւ զհաշտութիւն զոր հաստատեալ էր ընդ նոսա 'ի պատճառս այնպիսի ձախորդութեան եւ զայս գործ արքային իւրեանց այնքան անարգ եւ անփառաւոր ցուցանէր մինչեւ ածել 'ի վերայ իւրեանց զտարաբախտութիւն՝ յորժամ նորոգէին զերծեալ, եւ ընկճել զտէրութիւնս իւրեանց 'ի նոյն տառապանս՝ որ 'ի ժամանակս աղմկից, այլեւ յուշ առնէր նոցա թէ՝ որքան եւ զօրագունեալ իցեմք զինուորական հոգւով քան զտաճիկն, տակաւին խաղաղական շաւիղս այս այնքան տկարացուցանէ զմտս մեր, մինչեւ անպիտան եւ ամենեւին անյարմար առնէ զմեզ 'ի գործս պատերազմականս, եւ վերստին ածէ զմեզ 'ի գերութիւն, քանզի արդէն իսկ թոյլ ետուն տաճկաց տիրել այնքան լայնածաւալ եպարքոսական մասին երկրին մերոյ որով փութով զօրանան կարողութեամբ, եւ այսուհետեւ Պարսկաստան 'ի վտանգս անհնարինս անկանիցի, եւ այսպիսի հնարքս (այսինքն հաշտութիւնս) պարտի լինել դիտաւորութեամբ ինչ խորհեալ ընդդէմ ինձ եւ այնոցիկ որոց զինուորական առաքինութիւնք 'ի նախանձ եւ 'ի չարակնութիւն շարժէին զամենեսեան յապարանս արքունի, իսկ կորուստ թագաւորութեան Հուսէյնին հաստատուն փորձիւ վտանգաւոր ցուցանէ ազգին պարսից խորհել զանձինս 'ի պաշտօն ծառայութեան երկրին իւրեանց:

Արդ այսպիսի խօսակցութիւնք յառաջ ածէին ընդ ինքեանս զերեւոյթ պատուոյ եւ կատարելութեան, եւ բազումք որք կամէին զբարութիւն թագաւորական ցեղին՝ շարժեցան հաւատարմութեամբ իւրեանց վասն կեղծեալ պատճառանաց բարւոյն հասարակի, բայց ոչ 'ի խոչ դնել զայն առելութիւն 'ի վերայ թագաւորին առէր յնոսա նշանաւորն թէ՝ նախարարքն զորս թագաւորն կարգեալ էր 'ի վերայ հաշտութեան տեսլեան հաւատարմութեամբ իւրեանց, ապա թէ ոչ զիարդ էր կարելի զի ունելով Պարսկաստանեայ զայսպիսի անյաղթելի զօրս՝ անկանիցէր 'ի ներքոյ այնքան ծանր նախատանաց: Արդ յասմիկ իւրի նախանձ զինուորացն (որք լսէին զարձակումն իւրեանց առանց վարձատրութեան ինչ յաղագս այնքան նշանաւոր քաջութեան իւրեանց) կարի յոյժ գայթագղեցուցանէր զնոսա, եւ եթէ չիցէր կատարելութիւն խորհրդականութեան նշանորին, գրեթէ՝ միտք զօրացն իսկոյն ապականիւր վտարանջական խորհրդով, սակայն պարտէր նմա առաջնորդել զխոտորութեան իւրում մեծապէս շրջագրութեամբ, քանզի բազումք էին 'ի բանակի իւրում, որք զփոխարութիւն նորին առնել կամէին քան զթագաւորին իւրեանց, եւ զի գործ իւրչէր տակաւին 'ի կատար ժամանեալ, նա եւ ոչ կարէր հաստատապէս խորհիլ 'ի վերայ իւրոյն այնքան 'ի հնարաւոր: Եւ թագաւորն նախարարօքն համդերձ կասկածէր զՍպարապետէն եւ Սպարապետն զնոցանէ, եւ այսպէս մինչեւ զմիւսոյն դիտաւորութիւն ոչ գիտէր:

Եւ

Եւ յայժ դաւրինէր Նատըրին պատճառս հնարել յաղագս յամեցման իւրոյ, և ոչ փութով յետս դառնալ առ Թագաւորն իւր, և հարկաւորէր նմա ժամանակ ինչ մտախոհ լինել զդիտաւորութենէ իւրմէ յաղագս աճեցուցանելոյ զկարողութի իւր, և մարթէր ասել թէ ուժգին ջանք անձնասիրութե իւրոյ՝ էր հաւասար փառասիրութե։ Արդ դիւրահաւան բնութի Շահ Թահմազին ներելոյէր անյեալ անզգամութե նորին՝ յաղագս պահանջելոյ նորա զայնպիսի գերագոյն իշխանութին գանձուց ժողովման, և վս այնքան ձեռներէց լինելոյն յայնմիկ իշխանութե, բայց բազումք Իշխանաւորացն որք առ Թագաւորաւն կային, ոմանք կշռելով զանխափան փառասիրութիւն նորին, և այլք զանյայտ չարակնութի ունելով ընդ նմա, այնքան ցանկային տեսանել զխոնարհութիւն նորին, մինչ զի ոչ կարացին ծածուկ պահել զխորհուրդն, այլ՝ յայտնեցին զկամս իւրեանց այնց՝ որք 'ի ծածուկ մտերիմք էին Սպարապետին, և նոքա վաղվաղակի զայս ամ նենգալից դիտաւորութիւ նմա ծանուցանէին, սոյնպէս և զխորհուրդս մեծամեծացն մանց՝ որք անարգաբար խօսէին զԹագաւորէն, և այսու Նատըրն կատարելապէս կրթէր զինքն թէ՝ զիարդ պարտէր նմա առնել 'ի դառնալ իւրում առ Թագաւորն։

Եւ 'ի յեղյեղել ամին անցելոյ, նաև 'ի սկսանիլ տարւոյս զամ փոյթ յանձին կալեալ զօրս գումարերել, և թիւ նոցա մինչև ցեօթանասուն հազարն հասանէր, և մարզէր զնոսա զինուորական հնարս նորատեսի մասինէին օգեկք կամ Թաւթարք, Եւ յաղագս յատուկ խնամոյն զոր տանէր գաւառայն Խորասանոյ՝ յամ կողմանէ պարտաւորիւր ջանալ վս բարութե և փրկութե երկրին այնմիկ, զոր էր և գընական աղբիւր կարողութե իւրոյ, և առ 'ի յաւել աճեցուցանել զկարողութիւ իւր 'ի նմա ետ զիշխանութի երկրին այնորիկ որդւոյ իւրում Ըըզա ղուլի միրզային, և թէպէտ կարծէին եթէ հաւանութբ Թագաւորին էր այն, սակայն որովհետև իշխանութի գաւառայն Խորասանոյ սեփհականէր պարգևեալ միում 'ի յարքայազնից և յարեանառու ընտանեացն Թագաւորին, զայս առնելով բացարձակ իշխանութի իւր ապացուցանէր։

Եւ զկնի կատարելոյ ամենից կարգադրութեանցս յամսեանն յունիսի չուէր Նատըրն զօրօքն իւրովք և գնայր դէպ 'ի Սպահան հանդարտ ընթացիւք, և յամսեանն օգոստոսի հասանէր 'ի Սպահան, և համայն ժողովուրդ քաղաքին և Թագաւորն ամ նախարարօքն հանդերձ սարսեցան 'ի պալատեանն նորին, և ամ անձինք խոհականք ստստանօր տեսին զի՝ ոչ ինչ էր արգել նմա յափշտակել զԹագաւորութի, և առաւել քան զայս ոչ կարէր բարձրանալ եթէ ոչ յափշտակիցէր զպսակ պարծից Թագաւորութե։ Եւ Թագաւորն դժուալ իշխէր կարգել զոք 'ի պաշտօն գործակալութենս կամ վերլութե, առանց Սպարապետին հաւանութեն։ Եւ Սպարապետն միշտ 'ի դիպուկ ժամու գանկատէր Թագաւորին յաղագս պակասութե իւրու 'ի օգնել այնպիսի մեծի բանակի, և ասէր թէ բոլոր եկամուտն երկրին պարտէ 'ի պէտս բանակին ծախել, նախ քան զբաժանումն մեծամեծ Թոշակացն զոր անպատշաճապէս վատնեն 'ի պաշտօնէարքունի, Ցիրուի սա միայնէր որ քաջալերէր և զօրացուցանէր զհամայն զօրսն, և քանզի այնքան տուեալէր զինքն բոլորովին 'ի հոգս զօրաց և բանակին, մինչ զի նուաստագոյնն 'ի զօրաց իւրոց հազիւ կարէր զգայթագղութի ինչ գործել 'ի բանակի անդ, և եթէ լինէր ուրուք զգայթագղութի ինչ գործել, կամ մեռանիլ կամ փախչիլ, վաղվաղակի ազդ լինիցէր նմա, և կարօղագոյն զօրութի մտացն նորին ետ նմա զկարողութի բարւոք կառավարել, յամ պարագայս զինուորական մատակարարութեց։

Եւ արդ քաջադէպ ժամանակէր նմա ցուցանել զծայրագոյնն 'ի հնարագիտութեց իւրոյ 'ի ձեռն այնոցիկ նախադասութեց իւրոյ՝ որք գործիք եղեն նմա հասանիլ յայնքան բարձրագոյն իշխանութի

նութի, և հաւանեցուցանել զՇահն 'ի կորուստ նորա, քանզի զկնի հաւանելոյ իւր մերձ Սպահանի, և զետեղելոյ զբանակ իւր եմուտ առ Թագաւորն զեկուցանել նմա թէ՝ զիարդ որքան զբաղեալ էր 'ի հոգս բանակին, որքան զօգուտ Թագաւորին 'ի սրտի իւրում կրէր, և 'ի նմին ժամու ասէր ցնա թէ՝ չարէր խրատն զոր ետուն ընդ իմում հաշտութի առնել ընդ Թուրքաց կամ Օսմանցւոց, քանզի բարւոք գիտեմ զի զօրքն որք ընդ իս կան, եթէ հրաման ունիցին՝ փութով փարեսցեն զԹուրքսն 'ի հին սահմանս իւրեանց, և դողացուսցեն ըզ խունդքարն 'ի մայրաքաղաքի իւրում, և նախարարք քո յորս ետուն քեզ զայդ խրատ՝ արդարև չեն բարեկամք երկրին իւրեանց, ոչ կրեն զփառս Թագաւորին իւրեանց 'ի սիրտս իւրեանց, և յաւել և ասէ թէ՝ ունիմ պատճառ կարծելոյ թէ այդպիսի մարդիկ են թշնամիք քեզ, զի լուայ եթէ ոմանք 'ի դոցանէ այնքան մոլորեցան մինչև իշխեցին խրատել զտէրդ իմ արքայ թափել զձեռս իւր յարեան առն՝ զոր այնքան բարձր չքով փառաւորել կամեցար, և զորոյ զբազմադիմի հաւատարմութիւն յաճախ խոստովանեցար, և որ յողջակիզել զկեանս իւր 'ի ծառայութե քո՝ միայն երջանկութիւն համարէ 'ի կենքեան:

Եւ 'ի բանից յայսցանէ Շահն (որ մինչև ցայդ թագուցեալ էր զնախանձ իւր) այժմ հանեցաւ 'ի սրտի իւրում հաւատալ թէ՝ 'ի դուր չարախօսեալ էին զսպարապետն իւրմէ. Պատասխանի ետ Սպարապետին թէ՝ ոչոք խրատեաց զիս կորուսանել զկեանս քո, և Սպարապետն որ ապաւէր յիւրաքանչիւր նուագի շարժման սրտի Շահին. այժմ գիտէր ժամ գտանել բոլորովիմբ զսիրտ նորին յինքն յանկուցանել, և յայժ մեղմաբար և վշտակցական կերպիւ ասէր ցնա թէ՝ զիարդ որ սացեալ էին զքեզ իշխանք քո 'ի ձեռն չար խորհրդոյ իւրեանց: Քանզի զօրօրինակ դաւաճանեալ Նախարարք հօր քո կամէին խորամանկութք իւրեանց սպանանել զԼութֆալի խանն յայնպիսի ժամանակի՝ յորում կարող էր նա քաջամարտիկ զօրօքն իւրովք փրկել զտէրութի մեր, սոյն օրինակ կամին և ընդ իս առնել, և այնու զքեզ կորուսանել Եւ յայնժամ եհան զԹուղթն զոր 'ի վերագոյնդ յիշեցաք, և զորս ընկեցեալ էր 'ի բազմաց որք առ Թագաւորաւն կային մինչդեռ 'ի խօրասանէր, և եդ զնոսա առաջի Թագաւորին և խնդրեաց 'ի նմանէ ընթեռնուլ զնոսա և յայնմ ցանէ ենթադատել զհաւատարմութիս Նախարարաց իւրոց, և զկնի այնորիկ հաստատէր զհաւատս Շահին առ ինքն, և ասէր թէ յամի պատրաստեմ նուիրել զկեանս իմ 'ի ծառայութի քո և զայս ասացեալ ել արտաքս:

Եւ կարծելի թէ ոմանք 'ի թղթոյն էին ճշմարիտ, առդ զինչ և իցէ իբրև ընթերցաւ Թագաւորն զԹուղթսն յոյժ զարմացաւ 'ի վր ատելութեց Նախարարաց բազմաց՝ որոց անհոգաբար հաւատայր զկեանս իւր բայց տակաւին պատրողական համախոհու ի խմնթուէր ինքեան գործն այն զորմե կարծէր թէ առ 'ի դնել նախատինս ինչ 'ի վր իւր արարեալ էն, և ոչ թէ ընդդէմ կենաց և թագաւորութե իւրոյ, քանզի ազնուութի մտաց իւրոց 'ի բնէ հաստատեալ էր յանյիշաչարութե, և յոչ պահելն զոխ ինչ 'ի սրտի իւրում:

Զիարդ Թահմազ ղուլիխանն յափշտակէ զՇահ Թահմազն և զմանուկն Աբաս Թագաւոր ընտրէ, որպէս էր Նենգութի Թահմազ ղուլիխանին, և որպէս առաքէ զՇահ Թահմազն 'ի Սավզուար և որպէս զերկուսին որդին իւր յիշխանութի կացուցանէ 'ի վր գլխաւոր գաւառայն, և զիարդ բեկանէ զխաղաղութի ընդ Օսմանցւոյն, Եւ որպէս թօփալ օսման փաշայն Սպարապետ կարգեցաւ Օսմանցւոյ զօ

րացն

Արդ վրդովմունք անցեալ ամին թուէր թէ՝ ՚ի բաց մերժէին զամ խորհուրդս առաջնութեան և քաջութեց ՚ի սրտից Պարսից, զի յիրաւի դժբախտ Շահ Թահմազն ոչ ունէր զոք բարեկամ և ոչ զայր ազ խորհրդական և առաջինի, Քանզի արք նշանաւորք և արիք որք առնովաւ կային զկնի վերադարձի իւրոյ յաթոռ իւր հայրենի՝ էին միայն անձինք երկուք, որոց մինն էր միրզայ Դաւէթ ՚ի վրաց ազգէն որ ունէր զմինն ՚ի հօրքերցն Շահին ՚ի կնութէ, և միւսն էր Սէֆի գուլիխանն Առաջինն ՚ի տոյանէ անկաւ ՚ի վերջին պատերազմին երեւանոյ, և երկրորդն կալեալ եղև ՚ի թաճկացն նզկնի ապանաւ, ով ՚ի վերանդր պատմեցաք: Եւ կարէլէր թէ՝ Նատրըն խորհէր զ կորուստ այնոցիկ զորոց կասկածէր արգելիչս գոլ իւրում փառամոլութեան, բայց թէ արդեօք առ ՚ի արտաքսել զնոսա յայս ըղթուղթան Շահին, կամ թէ առ ՚ի հաւատարիմ երևիլ յաչս մն իւրոյ, և այնու դիւրաւ որոգայթել զնա չէ փոյթ վարանիլ յայսմ, զի մեք զայս միայն կարեմք հաստատել զի համդուրժող բնութի Շահին քաջալերեաց զ Թահմազ գուլիխանն աւելի քան զ խորհեալն իւր առնել

Արդ իբրև ետես Թահմազ գուլիխանն թէ փոյթ ինչ ոչ լինէր Շահին ՚ի թղթոյն անտի, և ոչ գրգռիւր ՚ի կորուսանել զարսն, բնաւորապէս հաստատէր ՚ի մտի իւրում թէ փոխանակ նորա իւր իսկ անձն կոչիցի, քանզի քաջ գիտէր թէ ելք գնացից իւրոյ որքան պատճառք երևեցուցանէր զինքն յաչս նոցա, վասն զ կասկած սրտի իւրոյ յայտնէր զօրապետաց իւրոց, և զ միտս նոցին յինքն քարշէր կարծեօք ինչ թէ՝ օգուտ ձեռկուն նոցա անբաժանապէս կապեալ կայր ընդ իւրումն, և զմտածմունս զոր յառաջնմէ առնէին զ թագաւորէն և զնախարարացն նորին, նաև զհաշտութեն զոր ընդ տաճկացն հաստատեցին, այժմ բոլորովին հաստատէր զ կարծ իս նոցա, թէ թագաւորն ՚ի բաց արձակել կամէր զզօրսն, և զ խստագոյն համարս պահանջել ՚ի Սպարապետէն և ՚ի համախոհիցն նորա, Եւ Թահմազ գուլիխանն ներնգութէ մածանէր ՚ի միտս նոցա թէ զոյ նսա ինչ որով միայն կարեմք փրկել զանձինս մեր և զերկիր մեր յամ աղագայ փորձութեանց որ գալոց է ՚ի վր մեր ՚ի խնամակալ հաշտութենէ անտի:

Եւ յայնժամ սկսաւ յայտնել նոցա զխորհուրդ իւր առ ՚ի գահընկէց առնել զՇահ Թահմազն, և զորդի նորին Աբաս (մանուկ վեցամսեայ) թագաւորեցուցանել փոխանակ նր, և զի տեսանէր թէ՝ այլ հնար ոչ գոյր նմա կատարել զ խորհուրդն, կամեցաւ հաւանութբ նոցին շուտով ձեռնամուխ լինիլ յայս ծանրագոյն գործ, և նոքա զառաջնորդութի գործոյն նմա թողուին, և այսպէս զաշինս և պահպանս եդին ընդ միմեանց, և անջնջելի երդմամբ հաստատեցին ծածուկ պահել զխորհուրդն, Եւ այնուհետև խորհէր թէ՝ զիարդ հաւանեցուցէ զՇահն ելանել ՚ի քաղաքէն, և զիարդ զ քաջապէս ժամանակ պատրաստեսցէ առ ՚ի կալնուլ զնա:

Եւ արդ եթէ Շահն ունէր և զ գիտաւորութի ինչ ՚ի կողմանէ վերոյիշեցեալ թղթոյն, սակայն տատանօր թագուցանէր զայն, և ոչ կամէր ցուցանել ումեք թէ ինքն կասկած ինչ զումեքէ ունէր և թէպէտ պատառեալ էր զթուղթն սակայն վարքն նախարարացն այնոցիկ տպաւորեալ էր ՚ի միտ նր, և խորհէր ՚ի միտս իւր զի եթէ հաւատարմութբ Սպարապետին իւրոյ չիցէր աւելի, ոչ և էր նուազ քան այլ նախարարացն, ուստի ոչ երկբայէր ընդունիլ զ կոչումն նորին ՚ի տեսութի զօրացն մարզելոյ: Եւ իբրև գնայր ՚ի բանակն, հանդէս կրթութի, և երևոյթ զինուորաց իւրոց յոյժ զուարճացուցանէր զինքն, այժմ դիպուկ ժամ էր նմա ՚ի բաց վանել զ սպարապետն իւր, քանզի տեսութի թագաւորին իւրեանց բնաւորապէս հակէր զկամս հայրմայն զօրացն և զինուորացն առ-

հասա

հաստատակ զունկն մատուցանել հրամանի տն իւրեանց։ Եւ մինչ շրջէր նա 'ի կարգս զինուորացն, բազումք 'ի նոցանէ մաղաղակէին ասելով, եթէ ունիցի զ հրաման ինչ տէրդ մեր արքայ առ ծառայս իւր, առժամայն կատարել պատրաստեմք, Արդ համարձակ մանիշն Թահմազ ղուլիխանն, իբրև տեսանէր զեռանդ սրտի զինուորաց և զօրացն առ կատարումն հրամանի Թագաւորին իւրեանց' սարսէր, գուցէ դաւաճանութի իւր յայտնեսցի, Ոչ ասէր թէև 'ի լսել զբանս զօրացն զարհուրեցաւ, այլ վաղվաղակի յինքն դառնայր, և խնդրէր 'ի Թագաւորէն պատասխանի տալ զօրացն այսպէս թէ' որովհետև զիշխանութի զօրացն տուեալ է 'ի ձեռս Սպարապետին իմոյ Թահմազ ղուլիխանին, նշան հնազանդութե ձերոյ այս եղիցի, զի ունկն դիր լիջիք հրամանի Սպարապետին ձերոյ։

Եւ իբրև աւարտէին զնշմարումն զօրացս' հրաւիրէր խանն ըզՇահն 'ի խեղան, Արդ այս խորամանկ աճշալինոյն թէ ուսեալ իցէր 'ի դաւաճանապետ միրվէիսէն թէ' զիարդ կամ որով կերպիւ պարտէր նմա յամբոկ դաւաճանութե գործոյն հասանիլ։ Եւ թէպէտ դիտաւորութի իւր ոչէր 'ի հեղուլ զարիւն, սակայն զորոգայթ պատրաստեաց յորսալ զ ւէրն և զթագաւորն իւր։ Արդ ոչ գիտեմք արդեօք վասն ակիլն թէ խառնեալ գէնին յաղթէր կարողութի Շահին, քանզի սակաւ ինչ գինեաւ փութով արբենայր, և այսպէս թշուառ Թագաւորս այս ծաղր նախատանաց լինէր յաչս ձեռնասուն զօրազլխացն սպարապետին, և մինչ այսու կերպիւ արբեցեալ դնիւր Թագաւորն հրամայեաց տանիլ զնա յայգեստանս հազարձրիպու, և անդ պահել զնա զգուշութբ մեծաւ 'ի ձեռնպահապանացն դասուց, և որք ընդ Թագաւորին եկեալ էին անդ, հակառակէին և ոչ թողուին յանձնել զԹագաւորն 'ի ձեռս զինուորաց, բայց զինուորքն վաղվաղակի յափշտակեալ զայնպիսին 'ի կալանս պահէին։

Եւ Թահմազղուլիխանն ապականեալէր զխորհուրդս գլխաւոր հազարապետացն արքունի, որոյնպէս և զմիւս իւրոյ զօրապետացն, և յերկրորդում աւուրն ժողով առնէ և խօսի ընդ նմ այսպէս, Աշխարհ ամ գիտէ, զիարդ յամ յօժարութե սրտի իմոյ ջանամ վն օգտի երկրին իմոյ և որքան վաստնող եղէ կենաց իմոյ յաղագս բարութենդ, և ըստորում տեսաք յանցեալ Թագաւորութե յայտնապէս Երևի մեզ բօթալից վախճան, որ ածէ 'ի վր մեր ըզ տկարութի, և զերկչոտութի, և այնու լինիցիմք պարապորդք և նշմարօղք կորստեան մերոյ, Եւ Շահ Թահմազն արդէն իսկ եցոյց մեզ նշան աններդունակութե իւրոյ կառավարել զերկիրն մեր, քանզի զիարդ է կարելի Թագաւորի միում յորդորել 'ի հասարակաց խորհրդոց, ոչ զգալով զօգուտ ժողովրդեան իւրոյ զայնպիսի գայթագղելի հաշտութի առնել ընդ Օսմանցիսն, որք իբրև զ սեփական սկիզբն քաղաքանութեց և հաւատոց իւրեանց համարին յափշտակել և աւերել զերկիրս զայս, Ոչ ոք կարէ կոչիլ Թագաւոր, եթէ ոչ այն՝ որ արժանի է Թագաւորութե, և զպսակն արքունական պատուովք կրէ 'ի գլուխ իւր, Ուստի փութասցուք գահընկեց առնել Թագաւոր մի, որոյ տկարութի և երկչոտութի չև և ս ընկղմեալ է զմեզ, 'ի գերութի յորմէ նորոգ ազատեցաք, արդ ահաւասիկ ունիմք զորդի նորին զ ճշմարիտ ժառանգն Թագաւորութե, և նա առաջնորդութբ և իմաստուն վերակացուաց ուսցի զ հանճար առ 'ի կարօղ լինելոյ կառավարել զերկիրն իւր, և յայնժամ Թագաւորութի մեր 'ի կարգի դիցի այնպիսի վերակացուաւ որ զ փառս և զօգտակարութի երկրիս այսորիկ 'ի սրտի իւրում կրէ ։

Արդ այսօքիկ բանք Նադրըրին այնքան ախորժ թուեցան այնոցիկ որք ձեռնասունք նր էին որքան արեանարբու փափակնորին յորդորել կարէր, Յայնժամ հարց ժողովն թէ զիշխանապարտ առնելըն Թագաւորն, և հարցմունս այսպիսի ինչ խռովեցուցանէր զ ժողովն, երկնչէին գու-

ցէ թէ սպանանել, խորհէր զնա. որում դժուարին էր նոյա տալ զհաւանութիւն, Պատասխանի ետուն թէ, զայլ ինչ չէ հարկաւոր առնել ընդ նա, Եւ խորհուրդ արարին թէ՝ առ 'ի խափանել զանկարգութիւնս որք կարէին յառնել 'ի պատճառս մեծակայ զինուորին Սպահանու, բարւոք էր առաքել զնա յերկիր հեռի օհյարևելեան գաւառին նոյն տէրութեան, որում և եթ հաւանեցան, և առաքեցին զնա 'առ վզուար ընդ ձեռամբ խստագոյն պահապանաց, որք էին օգնէինք կաղվանք 'ի խումի յեղէ:

Եւ այսպէս անկաւ քաջն Թօփալ օսման մինն ՚ի մեծագունից գործակալացն և ՚ի քաջամարտ սպարապետացն, եւ յուղիղ և յանաչառ արանցն ՚ի մէջ ընդ հանուր տէրութեան օսմանցւոց, եւ մահ նորին վախճան լինէր բախտին զօրացն տաճկաց, եւ որք առ նովաւ կային սրտաբեկ լեալ ոչ երկար ժամանակ նովին քաջութբ մարտնչիլ կարէին, ուստի բազումք ՚ի նոցունց ՚ի սայր սուսերի անկանէին, եւ այլք ՚ի փախուստ դառնային. և ՚ի պարտութիւն մատնէին առ հասարակ, և պարսիկքն զհետ պնդեալ յաղթեցելոցն կոտորածս մեծամեծս տային նոցա, և Թահմազ գուլիխանն փութապէս առաջի զգունդս ամենայնաղուանից կալնուլ զճանապարհս, և խափանել զփախուստ արքունեաց որք պատերազմէին ՚ի ներքոյ Թօփալ օսմանին ՚ի միտ ածելով զմաւելի արարս նոցին ՚ի պատերազմին որ ՚ի քերքուտ, եւ զբաղումս ՚ի նոցանէ որոյ ճակատ տայր:

Եւ յայսմ հանդիսի տաճիկքն կորուսանէին զամմասս Թնդանօթս, հրացանս, եւ զզանձս բանակին իւրեանց իբրև զքառասուն հազար արամբք, ՚ի մէջ որոց գոյին փաշայք, և այլ բազում մեծամեծք, եւ Թիւ կալանաւորացն էր յոյժ յոյժ, ՚ի մէջ որոց էր սրտու դատըրսին. սա աղդ էր Թահմազ գուլիխանին զանկուծն Թօփալ օսման փաշային ՚ի պատերազմի: փափաքն հանդերձ պատուականութբն համբաւոյն մեծ իմանս Թօփալ օսմանին հարկէր զԹահմազ գուլի խանն հրամայել զի զմարմին նորին գտեալ ածցեն առաջի իւր, և իբրև բերին առ նա. վայրմի սաստիկ լռութբ ձայր նկատէր ՚ի մարմինն զարհուրմամբ և պատկառանօք. իրաւի Թօփալ Օսմանն (թէ և յաղթեցաւ,) էր յաղթող և փառաւորեալ եօթանասնամեայ հասակաւ զընթացս իւր կատարեաց ՚ի մ թշնամւոյ իւրում երանկար էլի յայնպիսի փառահասանիլ էրբէք, որով հետև նախադասուիքն սրովքառաջնորդէր ինքեան. էին ըստ ամի հակառակ նախադասութեցն քարի Թօփալ օսմանին: եւ զկնի նու իրելոյ նորա զայսպիսի պատիւ մարմնոյ նորին դիազարդեալ յուղարկէր զնա ՚ի բաղտատ մեծաշուք փառօք, զի մարմին այսպիսի քաջ նախարարիս ընկալցի զկարգ Թաղման՝ վայելուչ իւրում գերանկայոթ են, եւ ընդ ունիլ զվերջին փառս յազգէ իւրմէ) որոյ յաջողութեան վն ՚ միշտ ջանայր ճշմարիտ նախանձաւական նախանձայոյ զութբ:

Եւ յուր Թօփալ օսմանին հանդերձ պարտութբն զօրաց զարհուրացուցանէր զատանն Թագաւորին՝ հանդերձ քաղաքաւն կոստանդնուպօլսոյ. եւ յաջողուին որում դիպեալ էին յանցեալ յուլիսամսեանն առ ոչինչ օգտէր նոցա. այլ միայն յաճախէր՝ զնն զերկիւղն տարաբախտութե, եւ ստածելով ըզմեծ

մեծ

վտանգս կորստեան պարսից յայնմիկ պատերազմին, զԹահմազ ղուլիխանն դև մի համարէին, կամ կախարդ գող կարծէին, որ այնչափ սաստիկ փութայմամբ վերականգնեաց զբախտն իւր. Եւ մեծ վէզիրն 'ի կասկածս լինէր, գուցէ Թեամբոխ ինչ յառնիցի 'ի Կոստանդնուպօլիս, ուստի հրամայէր 'ի տեղիս տեղիս պահապանս կարգել առ 'ի խափանել զամբոխումն, և ինքեանք վաղվաղակի 'ի խորհուրդ նստէին, Սուլթանն և մուֆթին ասէին թէ բարի է խաղաղութիւն առնել ընդ պարսից զի արդ և կարելի է, քանզի պատերազմն թուի ապականել զերկիրս մեր, իսկ վէզիրն մասամբ ինչ ըզ պարսիկս յաղթեցեալ ցուցանէ, և առ այս ըզ մարան որ 'ի քերքուտ օրինակ ածէր, այլև ասէր թէ կորուսցուք զնուաճեալ երկիրն պատերազմաւ ոչ լիցի այնքան անարգութիւն փառաց մերոց, որքան եթէ կամաւ յանձնեսցուք:

Եւ քաջ լինէր խորհուրդ վէզիրին ընդ որում և Պիւանն հաճէր, վասն որոյ 'ի հոգս պատրաստութեան մտանէին. առ 'ի յառաջել զթնդանօթ, և զայլ մեքենայս վասն պատերազմին, և զգանձս յաղագս ռոճկի զօրացն 'ի յաղէքսանդրեայ: Եւ 'ի հնգետասաներորդն դեկտեմբերի հրաման լինէր, զի գունդ մի ութն հազար ենկիչերւոց իջցէն 'ի յաղէքսանդրիայ, և քօփրուլուօղլի Աբտլայ փաշայն եգիպտոսի սպարապետ, կարգեցաւ 'ի տեղի Թօփալօսմանին, և այլ փաշայիցն հրաման լինէր չուել իւրաքանչիւր զօրօքն իւրեանց որքան և գումարել կարասցեն:

Հրահանգութիւն, և քաջութիւն մեծամեծ գործոյն, և բարութիւն վարուցն Թօփալօսմանին, և մանաւոր պատմութիւն երախտագիտութեան նառատաձեռնութեան առ բարերարն իւր, որ փրկեաց զնա 'ի գերութենէ, 'ի տիս երիտասարդութեան իւրոյ:

Յիշումն զոր արդէն արարաք զ քաջ Թօփալօսմանէն. լիապէս չքնաղացուսցէ զհետևեալ պատմութիւն, որ ճառնորագիւտ և յոյժ արժանաւոր պատմաբանի միոյ եռջօտար 'ի բնաբանէ մեր մէ և խորհուրդ սորին եկրթել զմեզ 'ի ձեռն օրինակաց:

Լաւ արդ Թօփալօսմաններձարքունիս հրահանգեալ, ուր որդիք հարկատու Քրիստոնէից մարզեալ լինէին, և յամի տն 1698, մինչ էր նա իբրև երեսուն և հինգ ամաց, առաքէ զնա Սուլթանն առ փաշայն Եգիպտոսի յաղագս հարկաւորութեան ինչ, և գնայր նա ընդ ցամաք 'ի սախտ, և երկուցեալ 'ի շրջագայ արաբացւոց որք զճանապարհորդս և զկարաւանս կողոպտեն, եմուտ 'ի նաւ մի տաճկաց որ գնայր 'ի Տմեաթ, և յայնմիկ կարճագոյն նաւարկութեան դիպեցան պատերազմական նաւու միում սպանիացւոց և թէպէտ նաւասոյին ոչ էր հաւասար այնմ, սակայն նաւորդքն ամենք և զինքեանս 'ի գերութենէ պահպանել աշխատէին, և պատերազմն կարի սաստիկ և արիւնահեղ լինէր, և մեծ քաջամարտն Օսման զնախկին նշանակ իւրոյ արիութեան աստանօր ցուցանէր, և յայնմհետէ սկսաւ զարգանալ քաջութեան համբաւով: Եւ ժողովուրդ նաւին քաջալերեալ յարիական գործոյն որին, սաստիկ քաջութեամբ մարտնչէին, բայց 'ի վախճանի բազմութիւն նուազութեան յաղթող լինէր

լինէր. եւ Օսմանն անկանէր ՚ի գերութի, ունելով զվէրս վտանգաւորս ՚ի բազուկս եւ յազդերս իւրում:
Եւ իբրեւ յանձնեցին զնաւն, ՚ի նշան մեծամեծ քաջութեանն Օսմանին յայնմիկ հանդիսի սպարտաւ-
որէր զնաւապետն սպանիացւոց զյատուկ շնորհս ցուցանել նմա, եւ մանաւանդ յորժամ ազդ լինէր
ինքեան թէ ՚ի Սուլթանն էր առաքեցեալ յեգիպտոս, առաւել պատուէր զնա մեծամեծ պարգեւաց
ակնկալութք, եւ թէպէտ այսքան շնորհս ընդունէր նա ՚ի նաւապետէն սակայն վտանգ նորին մեծ
էր յորժամ եհաս ՚ի մալթայ ուր սպանիայլն գնաց առ ՚ի նորոգել զնաւ իւր, եւ վէրն զոր ունէր յազդեր
իւրում էր յոյժ վտանգաւոր, եւ յայս վիրէ կաղանայր զկնի, եւ մինչեւ ցվախճան իւր կաղ մնայր, եւ
անտի ընկալնոյր զանուն Թօփալութի, այսինքն կաղութե:

Ի նոյնյամիկ ժամանակի փրանսից ոմն վինսէնթ արնօ անուն եւ տեղեաւ մարսիլիացի էր իշխող ՚ի վի-
քանատարին մալթայու եղեալ լինէր նմա կնաւ ՚ի նաւն Սպանիացւոց ՚ի յինլենու լըղ խմարվոսն, եւ իբրեւ
ետես Օսմանն Ջարնոն, ասէ ցնա եթէ կարես զգօն ինչ առնել եւ փախուցանել զարտեա զիս
՚ի գերութե յաստմանէ, ճշմարիտ հաւատա խօսից իմոց եւ ընտա ինչ ոչ լինիցի քեզ, Արդ այսպիսի
բանք գերւոյ միոյ որկայր ՚ի կապանս, ոչ էր նմանհաւատարակաց խօսից, եւ այնքան յաւելեցանէ
զսիրտ արնոյին՝ մինչ զի խնդոյն հարցանէր, ցնաւապետն Սպանիայի թէ զինչ կամիս տալ քեզ
վն փրկանաց առնս այսորիկ, պատասխանի ետ նաւապետն թէ հազար ոսկի կամիմ.
Եւ իբրեւ լուեալ զայն՝ դարձոյց զերեսս իւր առ Օսմանն եւ ասէ, եւ ոչ զի խեդ զքեզ, զարդ կամիս
զի սոսկ բանիւ բերանոյ քայ տաց զհազար ոսկին, պատասխանի ետ Օսմանն թէ իւրաքանչիւրոք
ըստ կարողութե իւրում գործէ յայսպիսիս, զի ես այր կալանաւոր եմ եւ չզթայիւք կապեալ, ուստի
ամ կերպիւ ջանամ փրկել զիս, փրկեա զիս զի եւ իցէ կերպիւ եւ կամիս, արդարեւ ճշմարիտ պատ-
ճառ ունիս չհաւատալ խօսից իմոց, բայց ես ինչ ոչ ունիմ այժմ, բայց միայն զխօսս բերանոյ
իմոյ տամ քեզ, եւ ոչ կարեմ ասել թէ ընդէր ոչ հաւատաս այնմ, զինչ եւ իցէ, դարձեալ ասեմ, քեզ
եթէ հաւատաս խօսից իմոց ոչ երբէք զղջասցիս, եւ իբրեւ լուաւ Արնոն զբանս նորա վաղվաղակի
կնաց առ Դոն փէրէլցօղն՝ որ իշխանն էր երկրին, եւ ազդեաց նմա զամ, Արդ ազնուութի կեր-
պարանայն, եւ կերպի խօսակցութեն, եւ հանճարեղութի Օսմանին հանդերձ յատկութք որպիսու-
թեն նորին՝ այնքան ներգործեաց զսիրտ Արնոյին՝ մինչ զի փութով յետս դարձաւ ՚ի նաւն, սպան
իացւոց, եւ հաճեցոյց զնաւապետն վեց հարիւր ոսկւով, զոր առժամայն համարեալ տայր ՚ի ձեռս
նորա իբրեւ զգին փրկանաց Օսմանին. եւ հանեալ զնա դնէր ՚ի միում յիւրոց նաւուց, եւ զբժիշկ,
կացուցանէր բուժել զվէրս նորին, եւ զամ պէտս նորա անպակասօրէն լցուցանէր՝ եւ վէրք նորա ՚ի
սուղ ժամանակի ողջանային եւ զերծանէր ՚ի վտանգէ:

Եւ Օսմանն յիշեալ էր իւրոյ բարերարին թէ՝ գրեցից ՚ի կոստանդնուպօլիս յաղագս գրամին զոր ե-
տուր վան փրկանաց իմոց, բայց արդ տեսանելով զինքն ՚ի ձեռս առն միում՝ որ սոսկ բանից
բերանոյ իւրոյ միայն հաւատացեալ ետ զայն քան ոսկի, համարձակեցաւ խնդրել ՚ի նմանէ զայլ
շնորհս այսինքն թողուլ զվճարումն պարտուց յամի ՚ի կամս իւր: Եւ արնոն խորհէր ՚ի միտս իւրում
թէ յայսմիկ իրի ոչ եպարտ թերակատար առնել զգործն, ուստի ոչ միայն հաճէր ընդ խնդիրսն
յամ յօժարութե սրտի՝ այլեւ զբոլոր նաւն՝ յոր կայր ինքն յանձնէր նմա, եւ զայլ բազում նշանս առա-
տութե եւ սիրոյ ցուցեալ մխիթարէր զնա, եւ յորժամ առողջանայր Օսմանն ՚ի վիրացն, յուղի անկա-
նէր նաւաւն դէպ ՚ի Տիմեաթ:

Եւ դրօշակ փրանսզին պաշտպանէր զնա ՚ի թշնամեաց նաւուց եւ ՚ի սուղ ժամանակի ՚ի Տիմեաթ
հասանէր եւ անտի ընդ նեղոս գետն ՚ի մսըր նաւարկէր, եւ ՚ի հասանելն անդ՝ վաղվաղակի տայր

զ հազար ոսկի նուաստեալն ՚ի հատուցումն պարտուց իւրոց առ բարերարն իւր սոսկ. հանդերձ պատուական, եւ զնիւ սամոյր քիւրքերով եւ այլ ընծայիւք, եւ զհինգ հարիւր ղուռուշ եւս նշանապետին պարգեւէր, եւ իբրեւ կատարեաց զհրաման թագաւորին առ Մսրու փաշայն, յետս դարձեալ գնաց ՚ի Կոստանդնուպօլիս, եւ ինքն եղեւ նախկին տանօղլրոյ գերութե̄ իւրոյ:

Զգացումն ընկալեալ շնորհացն, եւ զնիւ յատկութիւն նորին՝ ոչ ամփոփեալ ՚ի մայրենիղն երախտագիտակաի, այլ յամ ժամանակս կենաց իւրոց ոչ երբեք դադարեցաւ ՚ի ձեռն թղթոց եւ այլ պէսպէս շնորհակալութեանց վկայել զտպաւորութի̄ այնց շնորհաց ՚ի խորութե̄ սրտի իւրոյ:

Յամի տն̄ 1715 պատերազմ յարուցանէր ՚ի մէջ Վենետկեցւոց եւ Տաճկաց, եւ մեծ վեզիրն արշաւել խորհէր ՚ի վ̄ր մօրէայ, եւ ժողովէր զզօրս տաճկացն մերձ ՚ի կիրճն Քորինթոսի եւ այս կիրճս միայն էր ճանապարհ՝ յորմէ կարէր զօրն ինչ մերձենալ ՚ի կղզին, այնր ընդ ցամաք եւ առնուլ զնա, եւ հրաման լինէր Թոփալ Օսմանին ՚ի կիրճն յայն յարձակիլ, զոր ոչ միայն մեծաւ քաջութե̄ կատարէր, այլեւ զքաղաքն Քորինթոս առնոյր յարձակմամբ եւ պատերազմաւ, եւ ՚ի հատուցումն արգեանց քաջութեան նորին յայնմիկ պատերազմի, զերկուս թուղս շնորհէին նմա, եւ լինէր փաշայ երկուց թղից, եւ ՚ի միւսամին Սպարապետ լինէր ՚ի ներքոյ մեծ վեզիրին ՚ի պաշարման Քորֆ քաղաքին, զոր ոչ կարացին առնուլ, եւ պարտաւորեցան ՚ի բաց մեկնիլ անտի, եւ յայնմ ժամանակի Օսմանն քաջապէս ընդդիմացեալ կայր յանդիման քաղաքին զաւուրս երիս, առ ՚ի պաշտպանել զզօրս տաճկացն, զի թարց վնասու մեկնեսցին անտի, զոր եւ մեծամեծ յաջողութե̄ կատարեաց.

Եւ յամին 1722, Սարասքար լինէր ՚ի վ̄ր զօրացն որք էին ՚ի մօրէայ, Յայնմիկ ժամանակի գլխաւոր կամ պալիօզն իւրաքանչիւր ազգին Փռանկաց գայր առ նա, եւ յարգութի̄ մեծ մատուցանէին նմա, եւ շնորհաւորէին զիշխանութիւն իւր, յորում հանդիսի յատուկ շնորհս բազում զթութե̄ Փռանսզի պալիօզին առնէր, եւ պատուիրելով պատուիրէր նմա գրել վենետկոյ արքային ՚ի մալթայ, եւ ծանուցանել նմա զնորոգ իշխանութիւն իւր, եւ խնդրել ՚ի նմանէ փութով զորդին իւր առաքել՝ եւ ասէր պատկան եղ իւրուկ ժամանակն ինձ այժմ, մեծամեծ խնամս շնորհել նմա, որով փութով հաստատեսցի, Եւ որդի այնոյին խակապէս եկն ՚ի մօրայ, եւ Օսմանն ոչ միայն զպարգեւս մեծամեծ շնորհէր նմա, այլ եւ բազում շահաւէտութիւնս տայր նմա ՚ի գործս վաճառականութե̄ եւ այնու շուտով հարստանայր որդի այնոյին.

Ժրաջանութի̄ եւ կարողութի̄ն Օսմանին ետ նմա միանգամայն յոյս աստիճանէ ՚ի մեծագոյնն բարձրանալ, քանզի զերիս թուղս շնորհեալ նմա ուռումելու բէկլարբէկի արարին զնա, որ է մի ՚ի մեծամեծ իշխանութեանցն ՚ի մէջ Օսմանցւոց տէրութե̄ն,

Եւ որքան ժամանակ յայսմ իշխանութե̄ էր՝ ընդտրեաց զտեղի վս̄ բնակութե̄ ՚ի քաղաքն Նիսայ կամ Նիշ, եւ յամին 1727 եկն վենետկեան արքան որդւովն իւրով առ նա ՚ի քաղաքն Նիշ, եւ զբազում պատիւս եւ խնամս սիրոյ ընկալեալ ՚ի նմանէ, եւ նորա ՚ի միկողմն թողեալ զմեծաշուք փառս փաշայութե̄ն՝ անկանէր զպարանոցաւ նոցա, Շարպաթս եւ զխունկս անուշահոտս հրամայէր մատուցանել առաջի նոցա, եւ նստուցանէր զնս̄ հաւասար ինքեան որ է փառք յոյժ մեծ, զոր կարի դժուարին էր այնպիսի մեծ փաշայի շնորհել ումեք, մանաւանդ ապէս Քրիստոնէի միում, եւ զկնի ցուցանելոյն այնքան շքեղագոյն պատիւս եւ զնշանս մեծամեծս սիրոյ եւ ըղձանաց, առաքէ զնոսա յերկիս իւրեանց, Եւ յորժամ հայրն ընդ որդւոյն հրաժարիլ կամէին ՚ի նմանէ ասէր ցնա արքան,

տղ

Տէր սամ զի կենդանի մնացից, և մի սանգամ զ յորդորութի մատուցից քեզ ՚ի Կոստանդնուպօլիս յիշխանութե վէզիրի, արդ թէպէտ Արնօն միայն ՚ի պատիւ փաշային խօսեցաւ զ բանն, սակայն իբրև զ մարգարէութի իմն կատարեցաւ զկնի:

Արդ էն իսկ պատմեցաք թէ՝ զխարդ ամբոխ մեծ եղև ՚ի Կոստանդնուպօլիս յամին 1730 ՚յորում մեծ վէզիրն իբրահիմ ՚ի կորուստ մատնեցաւ, և յայնմ հետէ իշխանութի վէզիրութե այնքան փոփոխական եղև, մինչ զի ՚ի միում տարւոջ երեք վէզիրք փոխեցան, ՚ի սոյն յամի 1731: և յամսեանն սեպտեմբերի հրաման լինէր թօփալ օսմանին ՚ի բաց թողուլ զիշխանութին իւր և գալ ՚ի Կոստանդնուպօլիս, և յանձնառնուլ զպաշտօն վէզրութեն, թէև էր աստիճան վեհագոյն Ցօսմանեան տէրութեն, սակայն միշտ էր վտանգաւոր, և մանաւանդ յայնմիկ ժամանակի, Եւ ՚ի հասանիլն իւր ՚ի Կոստանդնուպօլիս խաղոյն կոչէ զե չին փր ննզին, և խնդրէ ՚ի նմանէ գրել վաղէ մի բարեբարին իւրում Արնօյին ՚ի Մալթայ և ծանուցանել նմա զ ժամանումն իւր յայն վեհագոյն աստիճան, և խնդրել ՚ի նմանէ փութով հասանիլ առ նա ՚ի Կոստանդնուպօլիս, մինչ ինքն կայր յայնմիկ իշխանութե, և յաւելևս ազդել նմաթէ վէրզիրն հազիւ տևէ յիշխանութե իւրում երկար ժամանակս,

Ցամին 1732. յամսեանն յունվարի, եկնա նոն որդւոյն իւրով ՚ի Կոստանդնուպօլիս ազնիւ և պատուականընծայիւք՝ և երկոտասան տաճկօք զորս ՚ի գերութէ էր ազատեալ, և կայացին զնա յանդիման վէզիրին, և յայնժամ արնօն եօթանասուն երկու ամեայ գոլով, որդւովն իւրով՝ յանդիման լինէր մեծի վէզիրին, և նորա ընկալեալ զնա առաջի բոլոր մեծամեծ նախարարացն արքունի բազում սիրով և յարգութբ, և ապա դարձուցեալ զեմեսն իւր առ նախարարսն ցուցանէր նոցա զերկոտասան տաճիկսն զորս արնօն ազատեալ էր, և ասէր առ հա այսոքիկ եղբարք ձեր որք զկնի ձնշեալ լինելոյ ՚ի գերութե՝ այժմ վայելեն զ քաղցրութի ազատութե, եւ փրկեալք ՚ի ձեռն այսոքիկ փրանկի, և ասէ փրկիչ սոցին, և ես ինքն նին գերի անկեալ էի և կապեալ շղթայիւք, արիանաթաւալ, և վիրաւորեալ վտանգաւոր վիրօք, սա է այրն որ ազատեաց զիս, սա է տէրն իմ և բարերարն իմ, որում զանձն իմ շնորհապարտ համարիմ, վասն ազատութե անձինս, յաջողութե բախտիս, և համայն բարեացն զոր այժմ վայելեմ, քանզի սա առանց գիտելոյ զիս՝ առատաձեռն եղեալ՝ ետ զ բազում գանձս վասն փրկանաց իմոց, և հաւատացեալ սոսկ բանից բերանոյ իմոյ առաքեաց զիս, և ետ ինձ զ նաւ զի տարցէ զիս ուր և կամեցայց, ուրէ արդեօք մուսուլման մի որ կարասցէ գործել զայնպիսի առատ գործ:

Եւ մինչ վէզիրն խօսէր զայսոսիկ բանս՝ ամենեքեան որք առ նովաւ կային՝ պշուցեալ աչօք ՚ի ծեր Արնօն հայէին՝ որ կալեալ ունէր զձեռս մեծի վէզիրին ՚ի ձեռս իւր, Եւ յետ այնորիկ սկսաւ վէզիրն զբազում ինչ հարցանել հօրն և որդւոյն յաղագս կացութեց և յաջողութեց նոցա, և յոյժ քաղցրութբ և ուղղութբ լսէր զ պատասխանիս նոցա, և յեզերիլ խօսակցութեցն ասէր ցնոսա արաբացւոց լեզուաւ, ալլահ քերիմ, այսինքն, մեծ է նախախնամութին այ Եւ զբերեալ ընծայսն առաջի աչաց նոցա բաժանէր, և զ մեծ և զ պատուականն մասն առաքէր Սուլթանին և Սուլթանային (որէր մայր թագաւորին) և զ մասն զ գլար աղասոյն որ ներքինապետն է, և զկնի խոնարհեալ զգլուխս իւրեանց ողջունեցին զնա և ելին յերեսաց նորա:

Եւ զկնի այնքան պատուոյ և մեծարանաց՝ որդի մեծի վէզիրին ընկալնոյր զնա յապարանս իւր, և մեծաւ շքով և խնամօք մեծարէր և պատուէր զնա, Եւ աւուրբ ինչ յառաջ քան ըզդառնալ նոցին յերկիր իւրեանց, առանձնակի խօսակցութիս առնէին ընդ մեծի վէզիրին, որոյ ՚ի միկողմ թողեալ

զամ

զամ̄ կարգս պատուոյ անխտրաբար առէր նոցա թէ՝ առ համն պաշտօնի իմոյ ոչ թոյլ տայ ինձ առնել զամ̄ զոր կամիմ և որում յանկամ, որով հետև բազմաց թուի թէ՝ վէզիրն ոչ ինչ առնէ իւրոյ շահաւէտութե, յաւէլ և ասէր թէ՝ փաշայ մի տէր է և իշխան 'ի վր̄ իւրոյ գաւառայն՝ իսկ վէզիրն որ 'ի կոստանդնուպօլիս՝ ունի զտէր մի մեծագոյն քան զինքն:

Եւ յետ բանից այսոցիկ հրամայեաց վայելչապէս վճարել զգինս փրկանաց երկոտասան տաճկացւոյ և զհին պարտս մի որ 'ի վաղուց ժամանակաց հետէ անվճար կայր, զոր իբրև զկորուստ համարէին, եւ առատաբար բաշխէր նոցա զգանձս, հրամանաւ միով, որոյ կարողութբն զնաւն իւրեանց պաշարօք այսինքն զախիրայիւք լնուին 'ի սէլանիքայ, ուստի բազում ժամանակաւ յառաջ արգելումն լեալ էր կերակրեղինաց կամ զախիրայից արտաքս ելանել:

Եւ որպ̄ երախտագիտութի իւր էր անխափան՝ ջանայր ցուցանել բարերարին իւրում, զի առատաձեռնութին իւր էր սոյնպէս անխափան, եւ յիրաւի յայսմ մասին յոյժ ազնիւ երևէր վարք իւր որով հետև զամ̄ գործս զոր գործեալ 'ի կեանս իւր ապացուցանէ զմիտք իւր գերազանց քան զհարկաւորն ազնւոյն, և յամ̄ շաւիղս իւր ունէր զնշան մեծամեծ առատութե, և զի պարտէ մեզ մոռանել թէ՝ զորքան նախատինս և հակառակութիւնս յանդգնութի կրթութե տաճկաց յաճախէ 'ի սիրտս իւրեանց ընդդէմ քրիստոնէից, և մանաւանդ պարտիմք մոռանալ զի՝ խոստովանութի թոփալ օսմանին և շնորհակալութի նորին զբարերարէ իւրմէ՝ լինէր 'ի մէջ բազմութե նախարարացն արքունի, յորմէ պայծառութի վարուց նորա լիապէս երևեցի մեզ:

Մեծագոյն և աստիկ զգաստութին իւր և հաստատութի 'ի պաշտօնի իւրում՝ ետ նմա կարողութի վերահաստատել զտէրութին 'ի կանոնաւոր կրթութի, և առատութի մեծ լինէր 'ի կոստանդնուպօլիս ուր անխափին շփոթմունքն թագաւորեալ տիրէին բնակչացն և այնու այնքան վշտացեալ էին յառաջ, մինչ զի ապրուստ հացի գտանէին և զոր գտանէին էր յոյժ ծանրագին:

Եւ արդար և բամբասեցին ընդ այսպիսն բազում խստութե իւրոյ, բայց նա ոչ երբէք 'ի մահ դատապարտեաց զմեծամեծ վնասապարտս և ոչ զստորնագոյնսն 'ի ժողովրդենէն, առանց վճռոյ մուֆտոյն, թէև վասն օգտի տէրութեն կարող էր յաճախել զսաստկութի, և կամ թէ սաստկութի իւր թէև յայսմ մասին խստութի երևէր, իբրթէ՝ ճնշել զնս, նաև կարող էր զամ̄ բացարձակապէս առնել զամ̄, սակայն պարտէր նմա յաղագս հաստատութե կարգաւորութեն արքունի առհասարակ՝ ոչ խոտորիլ յօրինաց, նաև անկարելի էր այնպիսի մարդոյ՝ որոյ համբաւ բարութեն և պարզութի բարեգործութեն գոլով այնքան տարածեալ, լինիցի անողորմ, և զի վկայութիւնք բազումք երևին առ 'ի մօքրել զհամբաւ նորին յայնպիսի կարծեաց, քանզի յորժամ փոխեցին զնա 'ի վէզրութե իշխանութեն՝ ժողովուրդ երկրին յամենից կարգաց ընդ հանրապէս դառնանային:

Եւ ընկալաւ զհրաման փոփոխութե իւրոյ յոյժ հանդարտութեբ և քաղցրութեբ, և իմաստութեբ խորհեալ էր թէ՝ առաքինութի միայն կարէ օգնել ումեք 'ի պաշտօնի այնպիսի աղմկեալ տէրութե՝ ուր փոփոխութի նախարարացն իբրև զհարկաւորութի իմն էր հաստատեալ, եւ յորժամ ելանէր յարքունի պալատէն՝ զկնի յանձնելոյ զկնիքն թագաւորական, ետես զի համայն բարեկամք, ծանօթք, և սպասաւորք իւր ցաւագին սրտիւ անմխիթար, կային, ասէր ցնոսա զի՝ է զի վշտանայք, և զինչ է պատճառ դառնութե ձերոյ, ոչ հանապազ ասէի ձեզ թէ իշխանութի վէզրութեն կարճագոյն է քան զամ̄ իշխանութինան, և միշտ խոկայի պատուով զերծանիլ անտի, ուստի գոհանամ զայ, զի

զի զգործ ինչ ոչ գործեցի՝ որով նախատեսցիս զանձն իմ, և տէրն իմ Սուլթան յամի հաճեցաւ ընդ ծառայութիւն իմ, և ես ի բաց թողի զիշխանութիւնս այս ամ յօժարութեամբ, և յոյժ բաւարարութեամբ. Եւ յայնժամ հրամայեաց, ամենեցուն գոհութիւնս վերառաքել ձեռկինս յաղագս այնպիսի, բարի վախճանի, որ և մի ի բարի դիպուածոյն պատահելոյ նմա ի կեանս իւրում

Եւ զկնի փաղփաղակի չուեալ գնայր ի Տրապիզոն, և անդ էր իշխանութիւն նորա, և փոխարկութիւն նորին՝ ոչ երբէք անարգութիւն կարէ համարիլ, քանզի Սուլթանն ոչ երբէք դադարեցաւ ի մեծարելոյ զնա մեծամեծ և շքեղ նշանիւք որ կարելին էր, և հրամայեալ էր նմա թողուլ զորդին իւր ի կոստանդնուպօլիս, ասելով թէ՝ ես ինքնին հոգացից վասն նորա, այսր մեծ որդւոյ զնա, Եւ յետ չորից աւուրց գնալոյ Թօփալ օսմանին ի կոստանդնուպօլսոյ, որդին նորին շնորհս ընկալաւ մատուցանել թագաւորին զընծայն զոր հայր իւր պատրաստեալ էր վասն բայրամին, և այսպիսի ընծայ ի տէրութեան Օսմանցւոց կամ յայլ արևելեան տէրութիւնս ոչ իբրև առատաձեռնութիւն կամ նշան սիրոյ և պատւոյ համարի, այլ իբրև պարտաւորութիւն իմն ի փոքունց առ մեծամեծս և մանաւանդ ի նախարարաց առ թագաւորն իւրեանց, բայց նա կարող էր զանց առնել, քանզի հայր իւր ելեալ էր ի մեծարութենէ սակայն պատւէր ետ նմա ի հօրէ իւրմէ ոչ պակասիլ յընծայելոյ զայն, և այնու ցուցանել կամէր թէ՝ որքան հաճութեամբ էր ի բաց թողեալ զբարձրագոյն իշխանութիւն վեզիրութեան իւրոյ։

Եւ Սուլթանն յոյժ սիրով ընկալաւ զընծայն՝ որով յայտնեաց աշխարհի թէ՝ Թօփալ օսմանն յամենայն չէր հեռացեալ ի շնորհաց իւրոց, և յետ սակաւ աւուրց գնալոյ նորա ի կոստանդնուպօլսոյ, հրաման առաքէ նմա գնալ ի սահմանս Պարսից, և ընդունիլ զիշխանութիւն Սպարապետութեան ի վերայ Օսմանեան զօրացն, և նոր կատարեալ ըզ հրամանն զայն իբրև զքաջ և իմաստուն գործակալ և փորձառեալ նախարար, թէպէտև անկաւ առաջի բախտին թահմազ ղուլիխանին այլ տակաւին համբաւ բարութեան նորա զոր այնքան՝ արդարապէս ստացեալ ունէր, բազում արժանաւորութեամբ գովաբանի, քանզի ոչ երբէք երևեցաւ այլայլիլ բնութեան նորա ի պէսպէս իշխանութիւնս իւր, և ոչ երբէք հեռանալ ի բարեհամբաւ գործոց և առաքինութեանց։

Եւ Սուլթանն այնքան պատիւ ընծայէր ի յիշատակ նորա, մինչ զի որդւոյն նորա մահմետին (թէպէտ էր պատանի) զիշխանութիւն փաշայութեան շնորհէր, և ուռումելեան բէկլարբէկի կարգէր զնա, զոր հայրն նորա վայելեալ էր ի ժամանակի յորում ի վեզիրութիւն հրաւիրեցաւ, Արդ խստագոյն իմն թուի տրամախոհութեանց մերոց ինքնագլուխ տէրութեանն, ի մտածելն զմարդելոյզ քաղաքավարութիւն օսմանցւոց իշխանութեանն, քանզի նոյն Սուլթանն որ բարձրացոյց զորդին Թօփալ օսմանին ի միջնն ի նախագոյն աստիճանացն յօսմանեան տէրութեան ի պատիւ յիշատակի հօրն նորա, յաղագս մեծամեծ գործոյն նորա, նոյն իսկ Սուլթանն հրաման առաքէ տիրապետել զստացուածս հօրն, Եւ կարէ ոք կարծել թէ տէրութիւն աղքատացեալ էր, որում առնելն այնպէս էր բաւական պատճառ, Եւ այսպէս որդի նորին ոչ ժառանգեաց զմեծ մասն յանհուն զանձուց հօրն զկնի մահուան նորա.

Արդ Թօփալ օսմանն էր միոյն ի սակաւուց անտի, որոց հարուստ ամենայն վարեալ զկեանս ի հանդէս մատուցին զմիտս գերագոյնս անդրուստակմանս հասարակաց դրուատիւք, և զօրութիւն իմաստութեան և քաջութեան նորին էր մեծահոգութիւն իւր, և բաղձանք իւր էր իբրև զբաղձանս մարդոյ՝ որ հաւատայ թէ է՝ Ած որ զբարեգործսն վարձատրէ և զչարագործսն պատժէ, Եթէ առաւաքիւռ տաճիկս այս յաղագս վկենաքթ Արնօյին ասաց թէ՝ իցէ արդեօք Մուսուլման մի, որ

կարող

կարող իցէ գործել զայսքան գործ առատաձեռնութեան, մեք առաւամբ կարեմք վինոյ առել, թէ՛ ուր կարասցուք գտանել զ քրիստոնեայ մի, որ իցէ երախտահատոյց բարերարին իւրում իբրև զԹօ- փալ օսմանն, այդպէս հազիւ կարեմք, թէ 'ի մէջ քրիստոնէից ևեթ՝ 'ի մահմետականաց, իսկ եթէ գտանիցի, անարժանէ յիշատակել զայնպիսին։

Զիարդ Թահմազ ղուլիխանն ծանուցանէ զյաղթութիւն իւր Ռուս- աց Թագուհւոյն, և որպէս Ահմէտ փաշայն պատրաստ կրկին 'ի պաշտպանել զ բաղտատ 'ի պաշարման, և մահմետ խանն պալուչն ապստամբի, և Թամազ ղուլիխանն երթեալ հարկանէ զզօրսն նո- ա և զինքն կախէ, և որպէս տաճիկքն պատրաստին ճակատ կազմել ընդ Թահմազ ղուլիխանին գնայ 'ի Վրաստան, և առնու զԹիֆլիզ։ Զիարդն Թիֆլիզու երկրին, և ոչ Սէլիմ փաշայն խոյս տայ 'ի Վրա- ստանէ, և Թահմազ ղուլիխանն առնու զ Գանձայ և զՇամախի։

Եւ Թահմազ ղուլիխանն ընկալեալ զայսպիսի հռչակաւոր յաղթութիւն 'ի վերայ տաճկաց, վաղվաղա- կի առաքէ զ սուրհանդակ մի ազդել Թագուհւոյն Ռուսաց զնշանաւոր յաղթութիւն իւր, և այս չէր անպիտան իմն 'ի Ռուսաց տէրութեան, այլ և իբրև զ լաւ երախտակիր, քանզի տաճիկքն զօ- րահաւաքս առնէին՝ դիտաւորութեամբ պատերազմի ընդ Ռուսաց և եթէ Թահմազ ղուլիխանն ոչ զ- բաղեալ պահիցէր զնոսա՝ փութով կարող լինէին ձեռնամուխ լինել 'ի պատերազմ, և այնպէս Ռուսանն ևս պատրաստութեամբ առնէր զդէմ ունել ճակատուն։

Եւ տաճիկքն փորէին 'ի կարծիս թէ՝ Թահմազ ղուլիխանն խնդրեալէ 'ի Թագուհւոյն Ռուսաց ոչ թողուլ զի իւրոյ Թաթարին անցանել առ երկրաւ իւրով, զի այս միաբանիլ ջանացեն ընդ լեզկի- ան՝ որք քաջագէկ ժամու ազատէին առ 'ի առ պատուակ տալ 'ի շիրվան և յայլ տեղիսն մերձ առ հմանն- ացն կասպից ծովուն, և տարպանտ (կամ դարբանդ) էր տակաւին ընդ իշխանութեամբ Ռուսաց։ Եւ տիրապետութիւն նոցա 'ի վերայ այնոցիկ սահմանացն՝ յոչ այլ ինչ խորհուրդ դրդուէր զ Թահմազ ղուլի- խանն՝ եթէ ոչ 'ի խոնարհեցուցանել զ տաճիկսն՝ զոր յոյժ հարկաւոր և պիտանի գործ համարէր ինքեան յայնմիկ ժամանակի, քանզի Թափել զերկիրսն զայնոսիկ 'ի ձեռաց Ռուսաց։

Եւ արդ զայսպիսի մեծանշան յաղթութիւնս առնելով 'ի վերայ տաճկաց Նինուէն մերձեալ հետև[illegible] տոյ, որ քան պարտէր խուովեցուցանել զ Ահմէտ փաշայն, բայց ոչ 'ի վերնագոյնդ յիշեցաք այսո- հանճարեղ իշխանն բարեպէս ամրացուցեալէր զ քաղաքն, և կերպիւ իմն, եր իշխան մի ինքնա- գլուխ, և զկնի քարքարոտոյ պատերազմին, բազում գունդք 'ի թօփալ օսմանի զօրացն կամէին 'ի քաղաքն մտանել, իսկ փաշայն ամենևին հրաժարեցաւ ընդունել զնոսա 'ի ներքս, ասէ յնոսա Թէ դուք առաքեցայք պաշտպանել զ քաղաքն, և ոչ թէ մտանել 'ի նա, և եթէ ես բաւական կորովիմ 'ի քաղաքի իմում, և արդ բարեգոյն կերպիւ կարգադրեալ զ քաղաքն քան յամենայնն հ- նարելի, և զ բազում պաշարս ժողովեալ 'ի քաղաքն, և բաց 'ի Թնդանօթիցն զոր ունէր նա անդ, զպարսից Թնդանօթսն ևս բարձեալ ածէր 'ի քաղաքն զ կնի փախստեան նոցա, և այսպիսի պատ- րաստութեամբ (թէ վախճան վտանգաւոր ցուցանէր, առ 'ի ոչ ակնունելոյ օգնութեան յինչ 'ի տաճկաց անտի) 'ի մտի դնէր քաջապէս պահպանել զ քաղաքն իւր։

Եւ ձմեռն մերձենայր, և այսպէս էին զ ի գետոյն Տիգրիս դիզացեալ հասիցէր 'ի վերայ գաւառացն առ մերձ- եր

էր լինել ամի ամի, յայնմիկ եղանակի եգծվարին լինիցէր Թշնամւոյն մերձենալ 'ի քաղաքն, արդ զինչև իցէ յառաջ խաղաց Թամազ ղուլիխանն զօրօք իւրովք դէպ 'ի բաղտատ, առ 'ի փորձել թէ՛ կարելի իցէր արդեօք զաՀմէտ փաշայն 'ի հնազանդութիւն Հրապուրել, որում յատուկ անէր և բարեկամութիւն ցուցանէ, և խոստովանէր թէ՛ այր իմաստունէ ահմէտ փաշայն եգիտութիւն է պատուականն և ինքն քաջամարտ, Եւ զոր միշտ վկայէր նա զաՀմէտ փաշայէն, էր այս, թէ՛ մեծ է ահմէտ փաշայն քան զիս և քան զխոնդքարն քանզի ամրացուցեալէ զինքն 'ի քաղաքի իւրում, ոչ ինձ տայ զքաղաքն և ոչ իւրում թագաւորին:

Արդ մինչ Սպարապետն Պարսից թամազ ղուլիխան խորհէր թէ զի արդ կամ որով կերպիւ վարիցէր զգործն, լուր հասանէ 'ի Շիրազոյ թէ՛ մահամատխան բալուչն միոյն 'ի պարապետաց իւրոց, զոր առաքեալ էր յաղագս հաւաքման զօրաց 'ի սահմանս անտի, միաբանեալ ընդ Սէֆի Մահամատ խան իշխանին գաւառայն այնորիկ, իբրև երեսուն հազար զօրս ժողովեալ էին, և ըզշահ Թահմազն իբրև զօրինաւոր թագաւոր ասպարեզ կոչել, Եւ իբրև լուեալ զայն թահմազ ղուլիխանն՝ խնկոյն յետս դառնայր 'ի պարսկաստան առեալ ընդ իւր քսան հազար հեծեալս ընտիր ընտիրս 'ի զօրաց իւրոց, և գնայր դէպ 'ի Շիրազ ստէպ ընթացմամբ, ճանապարհաւն խապահանոյ, և որոց երիվարք ոչ կարէին հաւասար ընթանալ 'ի ճանապարհի, և կամ ոչ զիմանային տառապանացն արագընթացութեանն, զնո թողոյր 'ի ճանապարհի, և այնքան փութով ժամանէր 'ի Շիրազ մինչև թշնամւոյ իւրոյ ոչ ունել ըզ լուր ինչ 'ի գալստեանն նորին 'ի տաճկաստանէ:

Եւ 'ի լսել Մահամատխան բալուչի զմերձեցումն կնդ իւն թահմազ ղուլիխանին կարծէր թէ փոքր ինչ գունդ ինչ ընդ ձեռամբ միոյ ուրումն զօրապետի թահմազ ղուլիխանին եկեալ իցէր, վասնորոյ ել վաղվաղակի առ 'ի յարձակել 'ի վերայ նոցա, և 'ի պատերազմն պարտահեցաւ նախընթաց զօրացն թահմազ ղուլիխանին, և ինքն էր 'ի մէջ նոցա, և սաստիկ Մահամատխան բալուչն յոյժ ուրախանայր, և խնդայր թէ՛ բախտն մատնեաց զբռնաւորն 'ի ձեռս իւր կարծելով թէ զօրք բազումք չէին եկեալ՛ սակայն շուտով վրիպեցաւ 'ի խորհրդոց իւրոց 'ի տեսանելն զթահմազ ղուլիխանն կոչէլ զզօրսն և մատուցանել 'ի պատերազմ, և յարձակել 'ի վերայ իւր, եղրդումն սաստիկ առնել 'ի վերայ երկրին ահագին զօրութեամբ ձայնի իւրոյ, յորմէ յանկարծահաս երկիւղէն ապշութե լինէր 'ի վերայ զօրացն Մահամատխան բալուչին, և ոչ կարէին ընդդիմանալ նախկին հարուածոյն:

Եւ Մահմետ խան բալուչն՝ որ բազում նշանս քաջութե ցուցեալ էր, և էր այր մեծահամբաւ յաղագս բազում պատերազմաց, սատանօր 'ի սաստիկ արտմտութե բրդեալ զայրանայր 'ի վերայ երկչոտութե զօրաց իւրոց, և յուսահատեալ, սակաւ արամբք դիմէր 'ի վերայ գնդին թահմազ ղուլիխանին, և նշմարէր զնա և աշտանակեալ զերիվար իւր դէպ 'ի նա դիմէր, առ 'ի փորձել զբախտն նիզակի իւրոյ թէ իցէր արդեօք սևեռել զայն 'ի սիրտ առն բռնաւորի, խաբեբայի, Թշնամւոյ օրինաւոր թագաւորի, և փառամոլութե ծառայի:

Եթէ մոռածեացուք զբարեհամբաւութիւն այսր նախարարի՝ ջանք սորա յայսմիկ հանդիսի էր մանաւանդ նախանձասութե պատուոյ և բարւոյ ազգին, քանթէ նախանձու, բայց ոչ յաջողեալ գործն 'ի ձեռն նորա, պարտեալ լինէր առաջի բռնաւորին, և յետս խոյս տայր, և գնայր 'ի քաղաք Դէյլիմ, և անտի մտեալ 'ի նաւ մի արաբացւոց զերծանիլ ջանայր 'ի ձեռանէ բռնակալին, բայց նենգաւոր արաբացւոցն զիտացեալ զոր լինիլն նորա բերին զնա 'ի Շիրազ մեծամեծ վարձուց ակնկալութե 'ի մատնելն զնա 'ի ձեռն թշնամւոյ իւրոյ թահմազ ղուլիխանին, և եդ զնա 'ի բանտի, խորհելով բռնութե

'ի խոստ

'ի խոստովանութ[եա]ն ածել զնա, նշանակաց զկամակիցս եղգանձս իւր՝ զորկարծէին զոլոյոծ բազում Արդ անձնասպանութեան ոչ ինչ կերպիւ կարէ ուղիղ գործ համարիլ, այլ՝ աներկիւղութիւն միայն կարէ ասիլ, Աստանօր գերի եւ տարաբախտ նախարարս այս առ 'ի ծածկել զ խորհրդով թշնամւոյ իւրոյ, յորժամ առանձին լինէր՝ խեղդ արկեալ՝ սպանանէր զինքն:

Եւ պատժեաց Թահմազ ղուլիխանն զբնակիչս Շիրազոյ, եւ սպան զայնոսիկ որք գունդ գործեալ էին թագաւորեցուցանել զ շահ Թահմազն, եյափշտակեալ զստացուածս բազմաց դարձաւ 'ի Սպահան, եւանդ մնայր մինչեւ 'ի միւս գարունն, եզօրաժողով լինէր առ 'ի յամբոխ հասուցանել մեծամեծ գործանս որք յաջողեցան 'ի ձեռս իւր յանկեալ ամին, եպարտաւորել զտաճիկսն յետս դարձուցանել զամ գաւառսն զորս 'ի պարսից տէրութենէն անջատեալ տիրէին:

Սոյն պէս եւ տաճկացն զամ պատրաստութիւնս արարեալ զինքեանս պաշտպանել ջանային 'ի թշնամւոյն յորմէ զբաւականն պատճառս ունէին երկնչելոյ, եւ ջանադեալ էին զխանն ղրիմոյ, այսինքն զթաթարխանն յայս պատերազմ հրաւիրել, եւ եթէ կարելի իցէր նոցա միաբանիլ ընդ լէզկեանս՝ արդարեւ անհնարին իմն ասպատակ տալ 'ի Շիրվան բայց յոյժ դժուարին էր անցանել 'ի պարսկաստանն առ լերամբքն կովկասու, կամ հիւսիսային կողմամբն Դաղստանու

Եւ լէզկիքն զ պարսիկս պատճառ դնելով չարակամացեալ արգելին զ մուտս ղրիմու թաթարին 'ի հիւսիսային կուսէ լերանց իւրեանց, եւ վիրքն եւ ոչ ամենեւիմբ կամէին զմուտս նոցա յերկիրս իւրեանց, եւ սոյնպէս եւ ռուսան բնաւիմբ ոչ հաճէր, եւ ղապարտինեան թաթարքն որք էին ընդ ռուսաց իշխանութեամբ, զհրաման ընկալան 'ի թագուհւոյն 'ի գէն պատրաստիլ զուցէ թաթարքն ղրիմու ջանասցեն բռնութեամբ մտանել, քանզի սպասէին պատերազմի, ընդ տաճկաց, վասնորոյ արգելուլ ջանային զ ղրիմու թաթարսն արտաքոյ, եւ այսպէս օսմանցիքն ոչ կարէին ակն ունել օգնութեան ինչ 'ի թաթարաց անտի 'ի պատերազմին ընդ պարսից, բայց զինչ եւ իցէ տակաւին լէզգիքն զէն վերացուցեալ ասպատակ իմն տալ կամէին վասն օգտի օսմանցւոց:

Եւ Թահմազ ղուլիխանն հասուցանէր զթիւ զօրաց իւրոց մինչեւ 'ի հարիւր հազար արանց պատերազմողաց, եչուեալ բանակօքն գայր 'ի Դաւրէժ, եանտի առաքէր զորդին իւր Նէսրալի գնդաւ միով յեզր կուր գետոյն առ 'ի յետ վարել զ լէզգիսն 'ի լերինս իւրեանց եւ լէզգիքն արշաւեցին 'ի Շիրվան բայց տեսեալ զբազմութիւն զօրացն պարսիցանդ (որում ամենեւիմբ ակն ոչ ունէին) յետս փախչէին սաստիկ արագամամբ Եւ չուեալ Նէսրալուոյն յափանէ կուրա գետոյն գնայր 'ի Գանձայ ըստ հրամանի հօր իւրոյ եւ յայսմիկ ժամանակի Թահմազ ղուլիխանն եւս մտանէ 'ի վրաստան եւ հասանէ մինչեւ 'ի Թիֆլիս:

Եւ Թիֆլիզ կարծեն զոլ հին Մայրաքաղաք որ 'ի հնումն Ակրոպօլիս կոչիւր, եւ էր քաղաք մեծ եբազմամարդ, եշինեալ աղիւսաշէն յարկօք, եւ ունի զբլուր մի 'ի միջի իւրում, եմիջնաբերդ մի 'ի վերայ բլրին՝ յոյժ դժուարամատչելի, եառ ստորոտով բլրին ընթանայ գետն քուրա՝ որ բնակչաց պէտս ամարդութեան զբերդն:

Եւ վիրքն են 'ի յազգէ հին եբրայեցւոց որք բնակէին յերկիրն որք 'ի յերկոսին կողմանս քուրա գետոյն Եւ յոյնք ջորճի կոչեն զնա, եազգք արեւելեան զերկիրս նոցա կուրճիստան կոչեն:

Եւ քաջութիւն ժողովրդեանս այսորիկ է յոյժ ազանչելի, զիրաւի բնակութիւն նոցա զարհուրելի պահանջէ

անջէ 'ի նոսա Եւ 'ի ժամանակս յետինս, բազում վկայութիւնս ունիմք զքաջութեանց սոցին այսորիկ նշանակաւէս 'ի նոցանց՝ որք էին 'ի ներքոյ հրամանի գորգին խան, իմխանին Ղամետահարոյ, որ յայլում պատմութեան յիշատակեալ եմք՝ այլ և վախտանկ խան վալին նոյա յայտնապէս երևէր՝ զի կարողէր փրկել զթագաւորութիւն պարսից 'ի ձեռաց աղուանից՝ եթէ չիցէր ծանրապէս երդուեալ և ուխտ եդեալ, որ 'ի կարգի իւրում պատմեցաք, Եւ էն հնարագէտք և կորովիք յաղեղն և 'ի հրացանս, Եւ պարսից սովորութիւն պատուել նուիրել ազգիս այսմիկ՝ և զգունդս քաջ համարել 'ի մէջ համայն զօրաց իւրեանց, Եւ յայսմիկ ժամանակի հարկատու էին օսմանցւոց ուստի սակաւք գտանէին 'ի մէջ զօրացն թահմազ ղուլիխանին, Եւ սոքա միշտ պատերազմօղք էին որ 'ի հին պատմութիւնս տեսանեմք, սոքա ոչ ումեք հնազանդեալ էին՝ ոչ պարսից, և ոչ մեծին աղէքսանդրու, բայց ոչ կարացին հակառակել զինուցն հռոմայեցւոց, քանզի եառ փոմփի զթագաւորանիստն նոցա, որ Աքրապօլիս կոչիւր, և զթագաւորութիւն իբերիու նուաճեաց ընդ ձեռամբ հռովմայեցւոց:

խանն թիֆլիսոյ վալի կոչի, և է իշխան ամենայն աշխարհին վրաստանու, Եւ գլխաւորք միւս գաւառաց իշխանք կամ թագաւորք կոչին, և ենանկախ զմիմեանց իշխանութեան, բայց 'ի վտանգաւոր ժամանակի միաբանին, Եւ սոքա ներփակեալ կան 'ի մէջ երկուց ազգաց, ուստի ժամանակ ինչ հարկատուն երբեմն օսմանցւոց և երբեմն պարսից, Եւ տէրութիւն նոցա է ըստ ժառանգութեան, և հազիւ պատահմունք ինչ լեալ էն 'ի մէջ նոցա առ 'ի զրկել զնուանիւ Արքունի յիւրաքանչիւր իշխանութեան որք էն համարով իբրև երկոտասանք, և էն բաժանեալք, և ոմանք յերկոտասանիցն 'ի բազում մասունս են բաժանեալք, Եւ 'ի խաղաղութեան ժամանակի ունին զօրս յերկու հարիւրէն մինչև 'ի հազար իւրաքանչիւր իշխան ըստ իւրում կարողութեան, երկոքին, կամ երեքեանն 'ի նոցանէ կարողէն մինչև ց վեց հազար զօրս հանել 'ի դաշտ, Եւ գեղականք զտասաներորդ ատամն նոցա յարդեանց երկրին առ 'ի կերակրելոյ զայնսիկ զօրսն, Եւ 'ի ժամանակի պատերազմի մարդիկ ևս տան վասն պահպանութեան ազգին:

Օդն երկրիս է մեղմ, և ոչ շատ զանազան յօդոյն 'ի տալիոյ, և տարածի 'ի 41. աստիճան մինչև 'ի 44: աստիճան, Եւ մայրաքաղաքն թիֆլիս է իբրու 'ի միջին սեդւոյ սորին վրաստանու, վերին կամ բարձր վրաստան տարածի մինչև 'ի սեաւ ծովն, և է ըստ մեծի մասին լերամբք պատեալ, և յոյժ ծառախիտ, և ունին զդաշտս յոյժ արգաւանդս, և հերկեն զերկիրն իւրեանց գոմշիւք և եզամբք և որքան խորագոյն հերկեն՝ այնքան առաւել առատ բուսուցանէ զսերմն, Եւ ինքեանք են քրիստոնեայք յունաց դաւանութեան, և յաճախին 'ի գինիս, Եւ գինին սոցա է յոյժ պատուական և առատ և մարդիկն բարձր հասակաւ զարմանալի, բարեկազմ և պինտ, և ենպարծունակք, և պճնազարդութեան սիրող, Եւ կանայք նոցա հռչակեալ էն գեղեցկութեան իւրեանց 'ի վերայ բոլոր ասիոյ:

Եւ վիրքն 'ի հասարակի յոյժ հաճեցան Նազանդիլ պարսից, և թագաւորք պարսից առ 'ի հաստատել զհաւատարմութիւն նոցա՝ զմեծամեծ իմաստ առնէին նոցա՝ և եթէ ոմանք 'ի վերայ իշխանացն դառնային՝ ի հաւատս իւրեանց՝ միշտ բարձր շքով պատուեալ լինէին 'ի յապարանս արքունի, և զմեծ աստիճան ընդունէին, և այսու միջոցիւ պարսկաստան ունէր զհաստատ հանդարտութիւն 'ի կողմանէ զօրայն վրաց ազգին, որոց քաջութեանն և հաւատարմութեանն ըստ ամի հաւատ մեծ նուիրէին:

Եւ տեսանելով վրացն զթագաւորն իւրեանց խոնդքար ձնշեալ յամենից կողմանց՝ սրտաբեկ լինէին և մնային անդ վասն պարտութեան, թոփալ օսմանին, ոչ ունելով իմն կերպիւ զկարողութիւն առ 'ի ընդդէմ կալ յաղթող զօրացն թահմազղուլիխանին, վասն որոյ թիֆլիս հնազանդէր նմա, և ինքն օգտա-

կար

կար համարեցաւ քաղցրութեամբ վարել ընդ ժողովրդեան ազգիս այսորիկ, Եւ յայսոսիկ արտաճաւանեալ տաճիկքն 'ի բաց թողին զերկիրն վասն զի ոչ կարացին հակառակիլ Թահմազ ղուլիխանին:

Եւ Թահմազ ղուլիխանն 'ի բարձրութենէ որոտմանց առեալ թէ՝ ածից զյաղթող զօրս իմ մինչև 'ի Հնդկ-եափօնդ, սաստագոյն ահարկութեամբ քան զարտաշէս, Արդարև բոլոր տէրութիւնք խոնդքարին սարսեցան յահուանէ նորա, և տաճիկքն ինքեանք խոստովանէին թէ՝ զկնի հաստատութեան տէրութեան իւրեանց՝ ոչ երբէք հանդիպեալ էին այնպիսի վրդովմանց նեղութեանց, զանձն ապառեցաւ, հին և քաջամարտիկ ավարժեալ զօրքն նոցա չէր հաւասար միում յերիր մասանէ պարսից զօրացն: Թէև քէնթ բօնէվալն, (այսինքն Դուքսն Բօնէվալն) եցոյց նոցա զուսումն փռանկաց, բայց տաճիկքն պատուող զոլով աւելորդապաշտութեան, և հին զինուորական կրօնից իւրեանց՝ զգուշանային ընդ ընկալուլ յայնպիսի ուսմանէ, և պարտ էր բազում ժամանակաւ կրթեալ լինել 'ի կիրառկութիս այնպիսի ուսման, Եւ յարուցին տաճիկքն իբրև զհնգետասան հազար արս 'ի պաշտպանութիւն, որոց հրամայեալ էր միաբանիլ օսմանեան զօրացն մերձ 'ի դաշտին բաղտառոյ, 'ի ներքոյ հրամանի ապտուլքեօփրուլու փաշային, որ էր միոյն 'ի յընտիր և 'ի քաջ ազգաւ պարապետայն օսմանեան գնդին, և արդ չորք հազարք ևս առաքեցան նմա 'ի խոնդքարէն առ տրապիզոն քաղաքաւն, Տակաւին այսպիսի զօրքս ամենևինմբ անընդունակ էին խափանելոյ զյառաջադիմութիւն պարսից:

Եւ յայսմիկ ժամանակի Սէլիմ փաշային ոչ ունելով զկարողութիւն ընդ դիմանալոյ պարսից զօրացն 'ի բաց մեկնեալ էր 'ի խորասանայ դէպ 'ի հալէպ թողլով զերկիրն այն, այնպէս և զհայաստանն իբրև որս անյաղթելի Թահմազ ղուլիխանին, ուստի ամ իշխանք վրաց որք յառաջ հարկատուք էին օսմանեանց թագաւորին՝ հնազանդ էին Թահմազ ղուլիխանին, և 'ի վերջին աւուրս հոկտեմբերի էկն նա յանդիման գանձակայ, ուր տաճիկքն հինգ հազար զօրս թողեալ էին 'ի բերդին, և այնքան բարեպէս ամրացուցեալ էին զինքեանս 'ի մէջ բերդին՝ մինչ զի նաղրալին համայն զօրովքն իւրովք ոչ էր կարացեալ 'ի հնազանդութիւն ածել նո: Եւ արդ Թահմազ ղուլիխանն զերիս ականնէշանակներ անդ, և 'ի վերայ իւրաքանչիւր պատնիշի զտասն թնդանօթս դնէր, և չև ևս վերջացեալ էր ամիսն, կամաւ հնազանդեցին նմա:

Եւ անտի ուղղէր զընթացս իւր դէպ 'ի Շամախի, և տաճիկքն առաջեալ էին զգունդ միութեան հազար արանց՝ որք ըստ մեծի մասին, Լեզկիք էին, առ 'ի պահպանել զնաւահանգ կամուրջին այսինքն զձիախին, քուրա գետոյն 'ի ձաւաթ, բայց փութով փախչէին անտի, և զքաջալերութիւն զոր լեզկիքն ընկալեալ էին 'ի շիրվանու՝ այնքան պայթադեալ զսիրտ Թահմազ ղուլիխանին՝ մինչ զի գետնի հաւասարել խորհէր զքաղաքս զայս, և զբնակիչսն 'ի բնակչացն 'ի սուր մաշել, բայց որք զայթագղիչք էին, թէ լեզկիքն և թէ այլք՝ որք մասնակիցք էին գործոյն նոցա 'ի լեռինս խոյս տային: Եւ հրամայեաց բնակչացն որք ապրեալք էին 'ի կարմածութեան քարկութեան նորին՝ գնալ 'ի յաղգան, 'ի յարևմուտս կոյս լերանցն, և շինել անդ զնոր քաղաք, և այսպէս աւերեալ քակեաց զքաղաքն շամախի: Եւ շամախի հարուստ ամենակաւ համարիւր զօլմիւոյն 'ի ծաղկեալ 'ի խատտիկ չէն քաղաքացն յայսմիկ մասին աշխարհի, բազմամբոխով, լի և առատ ամբարութ, և դիւրաշինութեան քաղաքիս երգեղեցիկ, և վաճառաշահութեան տարածեալ, և բազմութիւն պարսից, հռոմաստանս և հայաստանի, վրաստանս, և ռուսաց ժողովեալ էին 'ի նմա, և էր իբրև զմթերանոց ինն տաճկաստանոյ, կամ ապրանաց, այնոցիկ աշխարհացն, Եւ եւրոպիոյ ինչք և ոչ էր պակաս անտի՝ և էր տեղի ապաստանի կամ պահպանութեան:

Արդ այսքան գովասանութիւնք այսորիկ քաղաքի ոչ բաւէին արգելուլ զփառամոլին Թահմազ ղուլիխան

յաւէր

յաւերելոյ զնա, մարթէաւէլ յիրաւի թէ աւերեաց զնա մանաւանդ վն ամբարշտութե և հակառակման վրիժուց իւրոց քանթէ վն այլինչ պատճառի, Եւ քանզի տիրամետութի լեզկեայն ՚ի վր այսր քաղաքիս խորագոյն ազդեր ՚ի սիրտ նր, վն զի հաւաստեաւ կարծեր զի քաղաքս այս էր տեղի ապաստանի՝ այնոցիկ որք յայտնեցան յամս յետինս, և ըն աթոռ ապստամբաց, ճանաւնէին ար- շաւեալ ՚ի վր շիրվանու:

Զի արդ տաճիկքն կարօտացան հաշտութե, և զի արդ Թահմազ- ղուլիխանն զդեսպան առաքէ առ թագուհին Ռուսաց, և ոչ Ապա- ուլայ քէօփրուլին պատերազմի ընդ Թահմազ ղուլիխանին, ՚ի ճորի արփաչայի, և Սպանանի հանդերձ քսան հազար տաճկօք, և մնա- ցեալ Ապտուլայ փաշայն փախչի ՚ի Ղարս, և ղարս Ահմատան Սարաս- կար կարգի ՚ի վր Օսմանեան զօրացն, և զի այդ առնուն զերևան, և որպէս տաճիկքն զպատերազմ յարուցանեն ընդդէմ Ռուսաց, Եւ որպէսէր բարեկամութի Թահմազ ղուլիխանին ընդ Ռուսաց:

Սաստկագոյն յառաջադիմութեք պարսից զօրացն յայժ հակէին ըզ միտս խոնդքարին ՚ի ջանալ հաշտութի առնել ընդ պարսից, իսկ Թահմազղուլիխանն մոլեալ ՚ի յաղթութիս իւր՝ ամբարշտօրէն արհամարէր զամ շաւիղս իրաւախոհութե, յոդոնելութե մասին, և զոր նա պահանջէր էր ընդ ունիմէ յոյժ մեծասակար պատուոյ և համբաւոյն խոնդքարին. Եւ իբրև կամք եղեն խոնդքարին, պատերազմ սկսանիլ ընդ Քրիստոնեայսն՝ մեծամեծ չուեմարանս շինէին ՚ի բօսնայ, ապանելով դիպուկ ժամանակի առ ՚ի մտանել ընդ երկիր ուլահոյ ՚ի յուքրային, Եւ տաճիկքն յոյժ նախանձ էին բարեկամութեին պարսից ընդ Ռուսաց, և կասկածէին լինիլ դաշանց ՚ի մէջ նոցա, որոյ վն և Ռուսուն շինել կամէր զկողմամբքն Ազօվայ, վասն օգնի պարսից, այս պատճառ ունէին յոյժ կասկածելոյ, գուցէ թէ այնպիսի օգնութեք Թահմազղուլիխանն աճեցէ զզօրս իւր յամսատացի և շարժեսցէ զաթոռ տէրութեն Օսմանեցւոց:

1735: Եւ զոր հաստատէր զկարծիս տաճկացն ՚ի վերա էրասցէր դալուստ հուսէնղուլիխանին առ Թագուհին Ռուսաց, որ և ՚ի սկիզբն տարւոյս հասանէր անդ դեսպանութե առաքեալ, առաքեալ ՚ի մանուկ Ապատ, Թագաւորէն պարսից ՚ի Սանթ Պետրպօրգ: Եւ թուղթն յանձնարարական զորբերեալ էր նա՝ երկնքեալ կնքոյն Թահմազ ղուլիխան սպարապետին պարսից, Եւ դեսպանն այս յայտ առնէր կայսերական վեհանձնութե, Թագուհւոյն թէ վն գոլոյ շահ Թահմազին տկար ոգի թագաւոր՝ որոյ գործն կոչուստ մեծ գուշակէր վն պարսկաստանի, Թահմազ ղուլիխանն հանդերձ համայն մեծամեծ նախարարօքն արքունի խորհեցաւ գահընկեց առնել զնա, և զորդի նորին ապա նստուցանել յաթոռ նր փոխանակ նր՝ առանց դիտաւորութե չար ինչ առնելոյ ընկեցեալ թագաւորին, այլ մանաւանդ մխիթարելոյ զնա ամ զուարճութեք որում նա ցանկայր: Եւ ոչ հոտեցան ընդ հաշտութին զոր արար նա ընդ մշտնջենական թշնամւոյ մերում, և Թահմազ ղուլիխանն, (որ քաջութե և յաջողութե հաւասարէ աղեքսանդրու մակեդոնացւոյն, խոհեմութե և առատաձեռնութե յոյժ գերազանց) ՚ի մտի եդեալ է մղել պատերազմ սաստկութե, Եւ արդ յայտ լիցի կայսերական պետութե քում, զի ոչ դիցէ նա զսուր իւր ՚ի պատենի ցորչափ խոնդքարն ոչ դադարի ՚ի պատրաստութե պատերազմի ընդ քեզ, Զի արդ պարսից միահաղոյն զկատարեալ և զմշտնջենաւոր բարեկամութի ընդ կայսերական բարձրութե քում հաստատել ցանկան, և զօգնութիւն տէրութեց ձերոց իբրև զիւրեանցն համարին առ հասարակ:

Եւ

Եւ պատուիրեալ էր դեսպանին խնդրել զ Դերպենտ, (կամ դարբանդ) Բագու, Րէշտ, եւ այլ ամ տեղիսն որք ՚ի գաւառս շիրվանոյ եւ գիլանոյ, հանդերձ գեղօրայիւքն որք ՚ի սահմանս կասպից ծովուն, ուստի մեծն Պետրոս տիրեալ էր, այլեւ զնն Թաթարացն որք էին ՚ի լերինս դաղստանի, եւ որք հնազանդեալ էին Ռուստայ՝ ՚ի պարսից տէրութիւն դառնալ:

Նա եւ ասէն թէ՝ Թահմազ ղուլիխանն յունայնութի, կամ, յամբարտաւանութին արտի իւրոյ յիշեալ երթէ, եթէ ոչ անսայցեն բանից իմոց ՚ի բաց մեկնիլ ՚ի վերոյիշեալ տեղեացն՝ առից զաւելուն ՚ի ձեռին իմում, եւ ուելածեալ արտաքսեցից զնն ՚ի տեղեաց անտի: Արդ Ռուստայն կասկածեալ վն պատերազմի տաճկացն՝ ոչ համարեցան զերկիրսն զայնոսիկ արժանաւոր պատճառ հակառակութե, քանզի ոչ երբէք զօգուտ ինչ ընկալեալ էին յայնցանէ, այլ՝ զսորին հակառակ զերեզմանք էին լեալ զօրաց իւրեանց, եւ վն մահից այնոցիկ գաւառացն զոր դեսպանն խնդրէր ՚ի նոցանէ զկնի 1722. թուոյն մինչեւ յայն վայր՝ նախարարք Ռուստայ ասէն ցնա թէ՝ քաւ լիցի մեզ ժողովել զշահաւէտութի ինչ ՚ի գաւառաց անտի, այլ տէրութի մեր բազում ծախիւք պաշտպանեալ է զնոսա:

Եւ վն դաշնադրութենն զոր աստանօր հաստատեցին ընդ Թահմազ ղուլիխանին՝ կայսերական սեռութին թագուհւոյն կարգէ, զմի ոմն ՚ի գլխաւոր նախարարաց իւրոց գնալ ընդ պարսից դեսպանին առ ՚ի դառնարկել զվերոյիշեալ զերկիրսն, եւ սահման կարգել ՚ի մէջ երկուց թագաւորութեանց, զորս կատարեցին վաղվաղակի: Եւ դեսպանն պարսից ընկալեալ զպատիւ լիապէս վայելուչ իւրում աստիճանի հրաման ընկալաւ ՚ի կայսերուհւոյն յերեքտասաներորդ մարտի ամսոյն՝ դառնալ առ թագաւորն իւր՝ եւ ծախս ճանապարհին մինչեւ ելանել նր ՚ի սահմանացն՝ յարքունեաւ տ լինէր, ըստ հասարակ կանոնի, եւ թագուհին եւս ՚ի միտ եդեալ արձակել դեսպան մի ՚ի սպահան առ ՚ի շնորհաւորել զթագաւորութին մանուկ շահին, եւ անտի գնալ ՚ի բանակ պարսից եւ հաստատել զդաշինսն ընդ Թահմազ ղուլիխանին զոր դեսպանն պարսից ակնեալ էր:

Եւ տաճիկքն ծանկաւին ոչ էին բժշկեալ ՚ի հարուածոյն զոր ընկալան ՚ի պարտութենէ Թօփալ Օսմանին, եւ առաւել զօրացուցան պարսից զօրաց յանցեալամին այնքան արտաքէկ առնէր զտէրութի նոցա, մինչ զի եթէ չիցեր հարկաւորութի պահպանելոյ զերկիրսն գրաւեալ՝ դժուարաւ կարէին զդիմունիլ թշնամւոյն. եւ բարեկամութին Ռուստայ ընդ պարսից զնախանձ առատիկ արկանէր ՚ի սիրտ խոնդքարին եւ ամ նախարարացն, բայց մխիթարէին զինքեանս յուսալով յաշտութե ընդ պարսիկս, եւ տիրապետութե երկրեացն վրաստանեաց խնդրէին նորոգել զվնաս իւրեանց՝ վն կորուսանելոյն զվրաստան, եւ կացութի Եւրոպիացւոց յայնմիկ ժամանակի այնպէս ցուցանէր, եթէ. դիւրիներ տաճկացն գտանել յաջողութի խորհրդոց իւրեանց: Եւ արդ զօրք պարսից աճեցեալ էին մինչեւ ՚ի հարիւր եւ քսան հազար, եւ Թահմազ ղուլիխանն զլխովին հրաժարեցաւ ընդունել դաշին ինչ մինչչեւ դարձուցեալ իցէ նմա զամ երկիրս գրաւեալ ընդ իշխանութբ իւրեանց, եւ տուեալ իցեն զհամայն ծախս պատերազմին:

Եւ տաճիկքն հանապազ զգունտս զօրաց, զպատրաստութի պատերազմի, եւ զգանձս տաւաքէին ՚ի հալէպ եւ ՚ի Տրապիզոն, եւ անտի լցուցանէին զամ պէտս զօրացն որք էին ընդ ձեռամբ Քեօփրլուօղլի Աբդուլլա փաշային Մարու եւ ՚ի Մարու եւ օգնութի բազում հասանէր այսմ սատակարի, բայց ինքն տակաւին ամրացեալ նստէր ՚ի պատնիշի իւրում ՚ի Հայաստան եւ տաճիկքն զայս պատերազմ սուրբ համարէին, եւ քաջալերէին զմիմեանս առ ՚ի փորձել զբաղտ իւրեանց մեւ:

միւանգամ ճակատելով: Եւ Սարասքարն առդէն զ հրաման ընկալեալէր 'ի թագաւորէն, զի՛ յուժամ ըստ բաւականին ամրասցի զօրօք և այլ պատրաստութեամբ պատերազմի, իսկոյն 'ի ճակատ մտանել ընդ թշնամւոյն ղուլիխանին:

Եւ սպարապետին պարսից անցուցեալ զսկիզբն տարւոյս, վասն զի հնազանդութիւն ածելոյ զվրաստան այժմ փնայր յերևան, խորհելով 'ի պատերազմ գրգռել ղտաճիկսն, և ընդառաջ առաքեր նոցա ըզ գունդ մի հնդէտասան հազարաց: Եւ սարասքարն իսկոյն կարծեաց թէ այսոքիկ զօրքն յոչ, այլ ինչ պէտս էին առաքեալք եթէ ոչ ըզ կացուիս իւրեանց քննել, վասն առաքէ ընդ դէմ նոցա զգունդ մի 'ի յընտիր հեծելազօրաց իւրոց, նյեստ դոյն ինչ ժամանակ ըզ մի մեանս հարկանելոյ՝ գունդն պարսից ընդ կրունկն դառնայր չփոթմամբ, և սարասքարն ոչ կամելով զրկիլ յանպիսի օգտակար ժամու՝ զայլ գունդս զ կնի նոցա առաքէ, և ինքն ևս առեալ զզօրս իւր հետամուտ լինի նոցա սաստիկ արշաւմամբ, յուսալով խափանել զ համախմբութիւն նոցին ընդ պարսից բանակին:

'Ի տասներորդն յունիսի ամսոյն ընդառաջ լինէր նոցա թշնամին ղուլիխանն քառասուն հազարօք 'ի ձորն Արփաչայի, և բոլոր զօրքն ոչ էին աւելի քան զ յիսուն և հինգ հազար, և 'ի հուպ լինելն տաճկաց յուղեր զ զօրս իւր ըստ կերպի չփոթեալ և այլ կեալ զօրաց, և ընդ կրունկն դառնայր և դէպ 'ի յերևան դիմէր սաստիկ ընթացմամբ և հասանէր 'ի կիրճն զոր յառաջնմէ ընտրեալէր յաղագս մարտին և թագուցանէր զ գունդ մի 'ի զօրաց իւրոց ընդ ծառոտ տեղեաւ և այլ գունդք 'ի ձորոյ անտի ելանէին, և այսու կերպիւ պատրաստեալ յորդորել զ տաճիկսն 'ի պատերազմ:

Եւ տեսեալ յառաջ ընթացք զօրացն տաճկաց զինքեանս պաշարեալ 'ի պարսից կողմանց և յետ ուստ որոց ելեալ 'ի կիրճիցն դիմէին 'ի վերայ իւրեանց, պատերազմն յերկուց կողմանց լինէր յոյժ արիւնահեղութեամբ: Եւ սարասքարն զկնի սաստիկ քաջութեան պատերազմելոյ իբրև զժամս հինգ, և երկուց երիվարաց մեռանելոյ 'ի ներքոյ իւր, 'ի վախճանի յերկիր անկանէր նոյն իսկ դիպուածով, որով անկանէր նաև մեծն թոփալ օսման, և աստ 'ի նմանէ անկանէին նաև թէմիր փաշայն, և մուստաֆայ փաշայն՝ որք էին առաջ անուանիք և ընտիր սպարապետք 'ի մէջ օսմանեան կնդին, և մուստաֆայ փաշայն ընտանի էր թագաւորին, այլև անկան այլ չորս փաշայք հանդերձ քսան հազար զօրօք, որոց մեծ մասն սպանեալք էին, և մնացեալքն 'ի գերութիւն վարեալ լինէին: Եւ պարսիկքն առին զերեսուն և երկու թնդանօթս, այսինքն թոփս 'ի տաճկացն հանդերձ զանձիւք և ամ աղխիւքն բանակին:

Եւ այս պատերազմ յոյժ յաջողակ լինէր պարսից, քանզի յետին մասն զօրացն տաճկաց ոչ կարաց յառաջ խաղալ, վասն ոչ կարացին կցորդ լինել պատերազմին, զի 'ի տեսանելն իւրեանց ըզպարտութիւն յառաջ ընթաց զօրացն՝ իսկոյն 'ի փախուստ դառնային, և պարսիկքն պնդէին զհետ նոցա մինչև ցինն մղոն, վասն բազումք 'ի նոցանէ անճարացեալ 'ի շրջակայ քաղաքսն փախչէին և այլք 'ի լերինս դիմէին, և աբդուլլահ փաշայն խոյս տուեալ ութն հազար տաճկօք 'ի ղարս ժամանէ:

Եւ լուր այսպիսի դիպուածոց տարակուսանաց և արկ զբոլոր քաղաքն կոստանդնուպօլիս յանհնարին աղշուկ, և տեսեալ տաճկացն զայսպիսի անճարին դիպուածս եդին 'ի միտս ոչ միայն զտիրապետեալ

երկիրն դարձուցանել նմա, այլ և խորհեցան՝ եթէ երկարեսցի պատերազմն, տէրութիւն իւրեանց ՚ի մեծամեծ վտանգս անկցի՝ և դեմք Մուֆթւոյն եւ համայն Նախարարացն յոյժ տխրեալք էին, եւ զՆոր հրամանս առաքէին Ահմէտ փաշային Բաղտատոյ հանդերձ լիագոյն իշխանութեամբ զխաղաղութիւն հաստատել ընդ Թահմազ ղուլիխանին, և բարեկամութիւն զոր Թահմազ ղուլիխանն ցուցանէր Ահմէտ փաշային՝ էր այնպէս մինչ որ աստանօր քաջալերութիւն լինէր Թուլացեալ սրտից Նախարարացն Արքունի, եւ Ահմէտ փաշայն այնքան համբաւ մեծ ստացեալ էր, զի ոչ միայն թշնամիք, այլ և իւրայինքն բազմիցս Ահմէտ փաթիշահ կոչէին զնա (այսինքն թագաւոր) եղբայր Ահմէտին որ երբեմն քեահիայ էր Բաղտատու փաշային, այր քաջ եւ կրթեալ ՚ի յաղթական արշաւանս, առաքեցաւ ընդ տեղի Քեօփրիլուօղլուոյն։

Ընդ յետ յաղթութեանս, վաղվաղակի առաքէ Թահմազ ղուլիխանն զՆախարար մի առ Կայսերուհին Ռուսաց, առ ՚ի տալ առնել նմա վասն յաղթութեան իւր, և յաղագս ներկայ խորհրդոյն զորոյ նէր ՚ի սրտի իւրում, հարկաւոր էր նմա զհաշտութիւն առնել ընդ տաճկաց, բայց տակաւին խոստանալով խոստանայր թէ՝ առանց կամաց եւ հաւանութեան կայսերուհւոյն ոչ ինչ արասցէ: Արդ եթէ զվախճանն քննեսցուք, կամք իւր էր ՚ի պատերազմ մտանել ՚ի Ռուսեանս ընդ տաճկաց եւ զայս զօրաւոր հնարս ինն համարէր յամբոխ հաստատելոյ զխորհուրդն իւր, որպէս երկրորդ յաղթութիւնն իւրով եւ ոչ կարաց ժամանել։

Ընդ կնի այսր պատերազմի վաղվաղակի պաշարէ զԵրևան ըզՄայրաքաղաքն Հայաստանի, և զօրաց քաղաքին ամենեւին ոչ ունելով օգնութեան, անձարացեալ զդաշինս խաղաղութեան խնդրէին, և տայր նոցա անցս գնալ ՚ի Կարս. բայց ժամանինչ ՚ի քննակչացն տարեալ էրև ՚ի Ճիսօրատան, և առաքէ զհզօր գունդ մի ՚ի վերայ Արզրումայ, եւ մինչև ՚ի Ընանիլ տարոյս ընդ ձեռամբ նուաճէր զբոլոր երկիրն զորս տաճիկքն առեալ էին ՚ի պարսից տէրութենէ՝

Արդ եթէ մտածեսցուք ՚ի ժամանակէ անտի սաստիկ թշուառութեանն՝ յորում ազգ պարսից մինչէին վեց ամօք յառաջ, մինչև ցժամանակ երևելոյ Թահմազ ղուլիխանին, այսքան սաստիկ յառաջ ած ինմուն պարսից զօրայն ներքնագոյն յաջողուն նոցին, էր՝ ՚ի զինուորական հանճարոյ և ՚ի քաջ տիլն Թահմազ ղուլիխանին, և արդ որքան մեծասքանչ իմն եղև փոփոխումն կացութեան երկրիս որ մատնեալ էր ՚ի ձեռս այնքան թշնամեաց եւ յափշտակողաց, զի ժողովուրդք սորին ամենեւին արհամարհեալք եւ անկեալք էին յանհնարին ողորմելութիւն, եւ որքան զարմանալի իմն էր կարգս եւ զօրէնս հաստատել այսպիսի հզօր թագաւորութեան ՚ի սուղ ժամանակի, զի յաղագս զերագոյն յաղթանակի փառացն զոր նա ունէր, եթէ ինքն ոչ լինէր միայն վասն զինուորական փառաց, արդարև բոլոր աշխարհ ոչ կարէր խափանել զյաղթութիւնս նորին։ Բայց նայեմ ընթացս գործոց իւրոց ցուցանէր զի առաւել ցանկայր փառաց՝ քան յաղթութեան, եւ ինքն նոր ոչ վասն թագաւորութեան, հաւատարիմ ըղձիցն յաղթողութեան, եւ զժառանգին երևեալ ժամանել բաղձանաց, իւրոց այսպիսի՝ մինչ դեռ պատերազմն համապատրաստէր ընդ տաճկացն։

Նախ քան զպատմել մեր զնոր անցից՝ պատրիկ դառնամ ՚ի պատմութիւն տրպէզութեան Օսմանցւոց Արդ պարտութիւն Քէօփրիլուօղլուոյն, կրկին փոխարկութիւն պատճառ էր ՚ի Կոստանդնուպոլիս, քանզի խամայիլ փաշայ վեզիրն որ զինաւոր խորհրդատու էր վարելոյ զպատերազմն ընդ պարսից դահընկէց լինէր յերկոտասաներորդ յուլիսի ամսոյն, եւ թէպէտ էր ընտանի թագաւորին, աքսորեցաւ ՚ի Կանդիայ կղզին (այսինքն ի Կրետէ՝ կամ Կրիտ), եւ Ահմէտ փաշայն յաջորդ էր նմա

որ

որ և կարգեցաւ սարասքար ՚ի վերայ զօրացն զօրս կամէին առաքել ՚ի վերայ Թուրաց։ Եւ եղա-
՚ի կոստանդնուպօլսոյ փառօք մեծաւ, նդրօշակ Մարգարէին իւրեանց դնայր առաջի նորա։
Եւ Ռուսեանքն որք յառաջնմէ պատէին այսմ դիպուածոյ, պատրաստեալ կային ընդ դէմ նոցա
և մինչչև տաճկացն պատրաստեալ էին ըստ բաւականին առ՚ի պաշտպանել զքաղաքն Ազօֆ,
պաշարեցին զնա, և առեալ այսէր քերան, Դանուբ, կամ Թունայ գետոյն, նզ հաղորդութի
ունէր ընդ սեաւ ծովուն, և՚ի պաշարելն զքաղաքս զայս՝ դղրդիւն մեծ լինէր ՚ի կոստանդնուպօլիս

Եւ բազում դեսպանք հզօր թագաւորաց քրիստոնէից միջնորդ լինէին զի դնել արգելուլ կար-
ասյէն զսաստիկ արիւնահեղութի որ լինելոյէր ՚ի պատերազմի անտի. բայց տաճկքն ոչ ինչ
կերպիւ անսային խնդրոյ նոցա, այլ խստանային ըստ կամս իւրեանց յառաջ վարել զպատեր-
ազմն, Եւ Թահմազ ղուլիխանն կեղծիւ ասէր՝ բերել ՚ի մէջ և զՌուսան՝ ՚ի դաշնադրութիւնս
հաշտութե իւրոյ; Եւ այսէր մարդելութի ինչ՚ ունող երկուց դիտաւորութեց, քանզի գի-
տէրզի անհնարինէր տաճկացն ընդունիլ զայն, և հրաժարումն նոցին յայսպիսի խնդրոյ, ետ նմա
միջոց, ըստ խորհրդոց իւրոց առնել զայս։ Եւ ՚ի նմին ժամու ցանկայր ՚ի սրտի իւրում ՚ի յորդայթ
գթուցանել զնոր բարեկամն իւր, սոյնպէս և զհին՝ միով պատերազմաւ որով կարող էր կոտրեալ և
զբաղեալ պահել զնոսա երկար ժամանակաւ, մինչ և ինքն զհետևեալ յաջողակ խորհր-
դոյն զոր ՚ի սրտի իւրում շտեմարանեալէր ունէր, և վասն այսր դիտաւորութե հարկաւոր էր նմա ՚ի
բաց բառնալ զամ զժտարութիս երկարելով զբացորոշութիս դաշանցն ՚ի Ցարգրում. Եւ Ապդ-
ուլբաղիխանն դեսպան պարսից էկն առ այն մէտ փաշայն Բաղտատու, բայց էզրակացուցին և ոչ
ինչ յայսմ ամի, և տաճիկքն ոչ խոստանային դարձուցանել նմա զամ երկիրն զորս անջատեալէին
՚ի պարսից տէրութենէն, բայց այսու ամի Թահմազ ղուլիխանն ոչ բաւարարեցիւր, այլև զԲաղտատ
պահանջէր, հանդերձ համայն ծախիւքն պատերազմին, Եւ վախճանի իւրն ցուցանէր զի դի-
տաւորութի իւրոյ էր այնքան խստանալ ՚ի վերայ դաշնադրութեցն, այլ՝ պատճառանօք երկարել
զժամանակն, և ըստ հաճոյից իւրոց կանոնաւորել զբոլոր տիրապետեալ երկիրսն, նաև ջանայր
հաւանեցուցանել զՌուսսն, թէ՝ կամք իւր, էր վարել զպատերազմն ընդ տաճկաց, թէև արդ-
դէն սկսեալ էր ձեռնամուխ լինիլ ՚ի դաշինս։

Սկսեսցուք պատմել 'ի ժամանակէ անտի յորում զ Թահմազ ղուլի-խանն Թագաւոր պարսից ընտրեցին յամի Տ̅ն 1736: մինչև 'ի ժամանակ դառնալոյ Նր̅ յարշաւանի յիշատակաց յաղթութենէ իւրմէ 'ի հնդկաց յամին 1740:

Զի՞արդ մանուկն Շահթամաս մեռանի, և Բուստան դաստարկէ զ Դարպանտ, և յնածնէ պարսից, Եւ զի՞արդ Թահմազ ղուլիխանն Թագաւորէ 'ի վերա պարսից, Եւ ո՞րդի դաշամբ ընդունէր զ Թագաւորութի, և որպէս մոլապաշին 'ի մահմանսանի, և ո՞րպ զ դրամս հատանէ 'ի յանուին, և զի՞արդ յափշտակէ զ բոլոր կալուածս որքնութեալք էին մզկիթաց, և մատրաստայից, և ո՞րպ զ յայտնի վճիռ ետ յաղագս առնի և շիայ ազգին:

1736: Արդ 'ի սկզբան տարւոյս խորհուրդն 'ի գլուխ ելանէր, և ատրաէր պարսկաստան 'ի գործոց յաղթութեան Նր̅, և տեսանէր զինքն 'ի ձեռն յափշտակողի միոյ՝ որոյ զինուորական հնարագիտութիւք եբրև զ կուռս պաշտելի իւն առնէին զինքն զօրաց իւրոց, և մանուկ Արքայն Աբաս (որ բնութեամբ էր յոյժ փափուկ) մեռանի՝ բայց թէ արդեօք մահն Նր̅ էր բնական թէ պատահական ոչ է յայտնի, սակայն որքան ազգուշալի և լինէր կեանք այսր մանուկ Թագաւորի, տակաւին կարելի է թէ հնարս ինչ գործեցին, զի մի այսպիսի չնչին ո՞ն խափանիչ՝ խափանեսցէ զ խորհուրդս Թահմազ ղուլիխանին:

'Ի տասներորդն մարտի ամսոյն, որ տարեգլուխ է պարսից ազգին, յորում առաւօտ առվորութիւնէ Թագաւորաց պարսից ժողովել զ ամ̅ իշխանս գաւառաց, և համար առնուլ 'ի մէջ նոցա յաղագս իւրաքանչիւրոյ պաշտօնի նոցին, լինէր նմա դիպուկ ժամանակ ժողովել զ ամ̅ իշխանս, և զ մեծամեծս գաւառացն, զ ծերակոյտս, և զ գլխաւոր նախարարս, հանդերձ զօրագլխօքն բանակին իւրոյ, առ 'ի ծանուցանել նոցա զ յաջողութի զինուց իւրոց, և նոքօք 'ի խորհուրդ մտանել թէ՝ զինչ և այնուհետև պարտէր առնել յաղագս բարւոյն հասարակի: Եւ կարգէր զ չօլն մուղամ (այսինքն զմնապատն մուղամ) տեղի ժողովոյն առ երասխ գետոյն, ուր մեծագոյն մասն զօրաց իւրոց զետեղեալ և բնակեալ էր որք էին իբրև հարիւր հազար, և իբրև ժողովեցին անդ՝ յայտնէր իշխանացն գաւառաց, և ամ̅ նախարարացն թէ՝ յինչ պէտս, կամ որ իրի աղագաւ կոչեալ էր զ նոսա անդր, և ասէր թէ՝ պատճառ ժողովելոյ զձեզ այսր է՝ այս, զի գիտասջիք թէ՝ զի՞արդ հաճեցաւ ամ̅ օրհնել զ զէնս իմ 'ի յաջողութի, և դարձուցանել զ բոլոր տէրութի մեր որ հարուստ ամանակաւ հերձեալ բաժանեալ էր 'ի ժառանգութէ զաւակացն սէֆոյն, և յաւել և ասել, թէ՝ ազատեցի զ պարսկաստան 'ի լծոյ աղուանից, և կամիմ այժմ հաշտութի առնել ընդ տաճկաց և յուսամ զի ընդ ամ̅ հաճելի լիցի հաշտութիս այս, որովհետև խնդրեմ, պարտաւորեալէ ընդունիլ զ դաշինս զոր պահանջեմ, այլև զխաղաղութի ունիմ ընդ Ռուսաց, որք դարձուցին յիմեզ զ ամ̅ զ երկիրսն զորս անջատեալ էին 'ի պարսից տէրութենէ, և որոց չորեքտասան ամօք յառաջ տիրեալ էին: Եւ զ ամ̅ ինչ 'ի կատար հասուցի՝ բաց 'ի տիրապետելոյ զ անտառահարայ, բայց որով հետև պարտաւորէ ձեզ յոյժ (վասն պահպանութե և հաստատութե փառաց Թագաւորութեն) ունիլ ձեզ զայս մի կառավարիչ զօրաց ձերոց որ կարող իցէ խափանել զայնպիսի չար դիպուածս յորս ձնշէիք յանցելում իշխանութե, և որով հետև կամք են իմ անցուցանել զ մնացորդ ժամանակս կենաց իմոց 'ի հանգստութե, խնդրեմ 'ի բաց մեկնել ինձ յիշխանութենս, վա̅յ և պարտէ ձեզ ընտրել

զնոր

զՆոր սպարապետ, և մանաւանդ՝ քանզի, հաճեցաւ ՏՐ զրկել զձեզ 'ի մանուկ Թագաւորէ. Ապա է, պարտ է ձեզ նաև Թագաւոր մի ընտրել, և եթէ կարծէք զի շահ Թահմազն կարող է կառավարել զձեզ քաջութեամբ և իմաստութեամբ, կոչեցէք զնա, իսկ եթէ ոչ է կարող'ութեան պարտիք զայլ ոք ընտրել: Եւ այսպիսի բան առանձինն և հարկաւոր՝ պարտի կատարեալ միաբանութեամբ լինել Արդ ես 'ի կամս և 'ի խորհուրդս ձեր թողում զայդ, և խնդրեմ զի յետ երից աւուրց պատասխանատւք խնդրոյ իմոյ, Եւ հազիւ գտանիցի ոք 'ի ժողով անդր, առ'ի իմանալ զծածուկ դիտաւորութիւն նորա, և բազում 'ի նոցանէ առաւել բաց ոչ զօրէին յայտնել զիւրեանց դիտաւորութիւն իւրեանց:

Եւ դարձաւ Թահմազ ղուլիխանն 'ի վրանն իւր, և եթող զմիջնորդսն խորհիլ 'ի վերայ իրացն և հրամայեաց արքունի ծախիւք լիապէս ընդունելութիւն առնել նոցա, 'ի դէպ է մեզ կարծել, թէ արդէն ըղկամս իւր ծանուցեալ էր գործակալաց իւրոց, և հասարակ զօրքն ամենքն պարզապէս 'ի միաբանութիւն զի փառքն զինուորական և ինքնակալ իշխանութիւն էր ցանկութիւն անձին իւրոյ:

Եւ 'ի լնանիլ աւուրցն երից, դարձան միջնորդքն առ սպարապետն Թահմազ ղուլիխան արդարև միով, որ գրեալ էր այսպէս, Որով հետև հաճեցաւ ՏՐ ԱԾ 'ի ձեռն զինուց քոց դարձուցանել և վերահաստատել զամ փառս պարսից Թագաւորութեան, ոչ որ է արժանի պսակացն արքունի բայց 'ի քէն, Եւ քանզի կեանք և ստացուածք մեր քեւ փրկեցան, 'ի քեզ պարտիմք ջերմեռանդն լինել, Որում պատասխանի տայ Թահմազ ղուլիխանն և ասէ, իրաւի, զի յորմէ հետէ մարտնչիլ սկսայ, 'ի նախախնամութենէն երկնային միշտ հաճեցաւ յաջողել զխորհուրդս իմ, և դուք ձեզէն վկայք էք անքննելի յաջողութեանց պարսից զօրացն, Եւ ես ոչ թէ 'ի մի վայր ժողովեցի զձեզ դիտաւորութեամբ ընդունելոյ 'ի ձէնջ զայսպիսի երախտագիտութիւն, բայց որովհետև ԱԾ յերկնուստ վճռեալ է զի տկար զենս այս գործի լիցի հզօր զօրութեամբ իւրոյ, որ իշխէ 'ի վերայ ամենեցուն, անտի ցանկամ և ձերոց դաշնադրութեանց ամենեքեան սպասաւորեսցէք Թագաւորութեանս իմոյ ոչ զհաճոյսն իւր, և ոչ 'ի կամս իւրաքանչիւր ոք զհաճոյսն իւր, և զդեմական լիցի ինձ առ 'ի բարձրացուցանել զազգն 'ի փառս գերագոյնս, բստ նախնի հզօր Թագաւորաց Արդ եթէ կամիք զիս Թագաւոր ձեր առնել, պարտիք 'ի միտ առնուլ զորս ասեմ ձեզ, և ընդունիլ զդաշինսն զոր ես կամին, այսէ: Զի նախ պարտիք ըզ Թագաւորութիւն ժառանգաւոր առնել ցեղին իմոյ, երկրորդ մի լիցի ձեզ պահել զոք 'ի յեղէ հին Թագաւորաց ձերոց, և ուրանալ զնոսա 'ի յիշատակել ինչ՝ որ զապստամբութիւն պատճառեսցէ, երրորդ ոչ անիծանել զօմարն, զօսմանն և զապուպէքրն, և ոչ առնել զխառնիճաղանջ ամբոխն 'ի տօնի Նահուան հուսէնին, Եւ որով հետև բազում արիւնահեղութիւն պատճառեալ է 'ի հերձուածոյ տարաձայնութենէ աստի: 'ի մէջ շիայ և սուննի ազգին (որք ըստ կարծեաց իմոց, ըստ ինքեան ոչ են էութենական) ժողով մի մօլլայից պարտի լինիլ առ 'ի բառնալ զայսպիսի տարաձայնութիւնս,

'ի դէպ է մեզ կարծել թէ Նադիրն փքացեալ վասն մեծամեծ յաջողութեանց իւրոց ընդդէմ տաճկացն, վստահանայր 'ի միտ թէ կարող էր յաւուր միում զպարսից տէրութիւն միաւորել ընդ Օսմանցւոյն, և միահեծան Թագաւոր լինել 'ի վերայ երկոցունց ազգաց, և թէպէտ այսպիսի ծանր մտախոհութիւն եդեալ էր 'ի միտս իւր բայց դժուարին էր նմա փութով խելամուտ առնել զժողովուրդն վասն այնր խորհրդոյ, մինչդեռ տարաձայնութիւն սրբնաց կայր 'ի մէջ երկոցունց ազգացս, առաջիկայն 'ի սուննի սրէնս էր զարգացեալ, ուստի և սիրէր զնոյն ճանապարհ, իսկ եթէ զիրաւն կամիս իմանալ, վարդապետութիւնք երկոցունց ազգացս՝ միևնոյն համարեալ էին նմա:

խանչն. կամ նախարարքն, և փոխանորդք ամենայն իշխոյն ընդունէին զնախկին գերկուս խնդիրս, որովյառաջ զհաստատութիւնս իւրեանց 'ի նոր թագաւորին հաստատէին, Եւ որքան վն տանի մահուան հունէնին որդւոց ալոցն, արդէն ասացաք թէ առնեն այսէր հոգևոր : Բայց որովհետև այս տանի աղաւաղ բազմամբոխ ժողովք լինէին, որք վնասակարք էին ինքեան խաղաղութեան զինեցաւ ընդդէմ առնիս այսորիկ, Արդ վասն վերջին խնդրոյս մոլապաշտն երախսիւն, Եւ բերին զնա առաջի նոր արքային, և խօսեցաւ այսպէս : Ոչէ ըմբռն երկրաւորթագաւորաց տալ հրաման թէ որով օրինակաւ պարտիցէ պաշտել զամենակալ երկնի և երկրի, մեք զօրէնս ունիմք, առեալս մեզ 'ի յերկնուստ 'ի ձեռն մարգարէին, և նոցօք առաջնորդիմք : Արդ որովհետև փոփոխմունք հոգևոր կրօնից լինին պատճառ վտանգաւոր անցից, յուսամ զի միօք ջանասցէ եղծանել զպայմանս յաղթութեանց մերոց 'ի ձեռն այնպիսի կարգադրութեանց որք աղարտիչ են յաջողութեանց ճշմարիտ հաւատոյ ողջունողաց ։

Եւ արդ այսպիսի բանք մոլապաշտին պարտէին դիւրաւ վառել բորբոքել զսիրտ ժողովրդեանս այսորիկ որք 'ի նէ 'ի յորդորական բանից քաջալերեալ խրախուսէին, բայց կարելիէ թէ' խաղեմ մոլայս այսէր միայն այր' որ աստանօր իշխէր յայտնել զմիտս իւր, և կամէր 'ի ձեռն գերագոյն աստիճանի իւրոյ քաջապէս սանձել զյանդգնական հոգին որ 'ի նատիլն բնակէր : Սակայն կամեցաւ նա փրկել զնա յանողորմ դերութենէ իշխանութեան նորին, քանզի խեղդ արկանել 'ի պարանոյն հրամայէր թագաւորն, կայնու դադարէր նա 'ի խօսելոյ :

Բայց արդ մոլայիս այսմիկ պարտէր սանձել զնախանձ իւր, որովհետև ժողով իւն մոլայից 'ի բազումազգաց, լինելոցեր' առ'ի ուղղել զբանն, եզիէր յայժ հարկաւոր ապխտանի, եւ յայնժամ 'ի հարկէ այնպէս էր ձեռելոյ, ոպ և էրն յառաջ, և լռելեան հաւանութիւ ժողովրդեանն նախադասութեցս այսոցիկ զյատուկ ներգործութիւ ինչ ոչ ներգործէր 'ի կարգադրութիւս օրինաց :

Եւ յաւուրն երկրորդի որ մետասաներորդ օրէր մարտի ամսոյն, ազդարարեան թաահմազ զուլիֆառն թագաւորեալ 'ի վր պարսից, կոչեցաւ Նատր շահ, և ամ ժողովուրք զարքայական պատիւ մատուցին նմա, զոր ընկալաւ Արքայավայել դիմօք, բայց խառն ընդ ամբարտաւանութե : Եւ ծայրապատ ծայրոց' որէր 'ի բանակի անդ զմասն ինչ կարգին կատարէր, կապելով զաւուրն ընդ մէջ նորա, իսկ զփետուրն ազպասկն, որէ բուն նշան թագաւորութե, ինքն փոխեաց յահեակ կողմանէ գլխոյն 'ի յաջն, որով նշանակեաց թէ' զ'ինու ց իւրոյ միայն էր շնորհապարտ յաղթաքարձրանալոյ իւրոյ :

Եւ այսպէս զակատակալն զհետ փառաց, անօթին ամենայն բարկութե Նատիրն' յամբոխ գործոյն ժամանեաց, և եհաս սայայնպիսի վախճան, յոր կեասառ այսինքն յուլիոս կեսար կամ կայսրն ոչ կարաց հասանիլ, Թէպէտև քաջութե, առատաձեռնութե, և հանճարով, այս մեծահռչակ հռովմայեցի ոչ էր պակաս քան զայս յափշտակիչն, որով հետև գերազանցեալ էր նա, զխոնութե, քաղաքավարութե, և մարդասիրութե, յորոց, Նատիրն էր զլխովին անմասն : Դաւաճանեցաւ նաև քռովկէլ ընդդէմ թագաւորութեն անգլիոյ, բայց ոչ կարողութի, աշխարագիտութին, ոչ քաջութն, և ոչ գիտաւորութին նորին կարացին զանուն թագաւորի շահիլ վասն նորա : Եւ թէպէտ, բոլորովին ապականեցաւ հռոմ, և եհաս մինչև ցփոփոխումն տէրութեան իւրոյ, որով ժողովուրդ իւր հասեալ էր յայնքան փառս, Ոչ ունէր տակաւին զխոհական և զազգական անձինս, որք զպատանութն բռնաւորին ոչ չարագոյն համարեցին քան զծառայութին :

Եւ

Եւ բազումք էին 'ի յանգլիայ որոց միտք չէին թիւրեալք առ էսին զսխալանս որև գործեցան անդ 'ի ջանալն փոփոխել զ միապետութի թագաւորութէն 'ի հասարակապետութի, իսկ 'ի պարսկաստան ոգխուութի եպիսկոպոսութի յառաջատեսութէ հանդերձ այլ ամ ապականութբ, պատրաստեցին զպարանոյս ժողովրդեան 'ի լուծ, որում հնազանդեցան այժմ. Եւ յետ ոչ անցանելոյ բազում ժամանակի, անձամբ անձին տեսին զաշտարակս շինեալս 'ի մարդկային գլխոց 'ի նմին տեղւոջ, ուր ընտրեցին զնա ի նքեանց թագաւոր:

Եւ ժամանեալ Նատրին 'ի գլուխ փառամոլութե իւրոյ, սկսաւ 'ի գործածել զ բարձրագոյն իշխանութիւն, որովայնքան զօրացեալ էր, բայց տակաւին չափաւորէր զ բնական գազանաբարոյութի իւր, յուցանելով զ նշան ինչ առատաձեռնութէ, զաւուրս երիս ընդունելութի մեծ առնէր միջնորդիւ ժողովրդեանն, և յոյժ քաղաքավարութբ վարէր ընդ նոսա, եբաց 'ի բազում տեսարանաց եզբօսանից, նշանաձգութիւն ևս լինէր 'ի նպատակ ինչ' որէք աման մի ոսկեայ, եդեալ 'ի վերայ երկաթաձիգ սեան, և որ կարէր զ նետն 'ի նպատակն յայն հարկանել, առնոյր զ սոյն նպատակ, ու զ վարձ հնարից իւրոց, հանդերձ խիլայիւ:

Մակագրութի կնքոյ իւրոյն այսպէս ոպ ակն անկեալէր 'ի մատանւոյ փառաց և համբաւոյ, սոյնպէս աւծ նորոգեաց զայն զանուն Նատրին:

Մակագրութի դրամոյն, երայսպէս, Նատիր թագաւոր թագաւորաց այսփառք, դարոյն:

Եւ միւսն էր այսպէս,
Տիպք դրամոյն, քարոզէն ընդ ամ երկիր զ թագաւորութի Նատիրին, և թագաւորին որտիրապետէ աշխարհի:

Եւ արձակեաց զժողովն, որք առ երեսս յոյժ ուրախ երևէին, և մոլաքն միայն, դառնանային 'ի կորուստ մոլսոպաշտութեն' գլխաւորին իւրեանց, և վասն արհամարհմանն հոգևոր կրօնից ազգին 'ի նոր արքայէն: Եւ Նատիրն ինչ ոչ թողոյր թերի, այլ 'ի բաց առնուլ զ քօղն, 'ի մտի դնէր քանզի, իբրև հասանէ 'ի ղազպին, ժողովէ անդ զ բոլոր մզկիթականս, կամ եկեղեցականս իւրեանց, եզ մոլայսն քաղաքին և շրջակայ գաւառայն, և հարցանէր ցնոսա թէ', յինչ պէտս 'ի կիր արկանէք զհամայն եկամուտս մզկիթաց, նոքա պատասխանի տան թէ' 'ի պահպանութի մոլայից, 'ի շինութի թաքիայից, և մզկիթաց' յորս անդադար փառաբանութիւք յերկինս նուիրին վասն յաջողութեց զինուց թագաւորին մերոյ, Որոց պատասխանի տայր Նատիրն, թէ' իբաւի դուք յոյժ յապաղեցիք առնել զպարտաւորութիս ձեր, ամենակարողն ած ոչ հաճի յաղօթս այնոցիկ' որք իբրև զձէգդ էն, Արդ գրե թէ' յիսուն ամէ, յորմէհետէ թագաւորութիւնս սկսեալ է նուազիլ, և 'ի վախճանի 'ի սաստիկ աղքատութի անկաւ, մինչև յաղթող գործիք ամենասքանչելոյն ամյ, (այսինքն զօրք իւր) նուիրել զանձինս իւրեանց 'ի պահպանութի նորայ և փառաց ազգին, վերահաստատեցին զնա: Սոքայ էն, մոլայք, որոց ծառայութեանն պարտաւորեալ եմք, վասնորոյ եկամուտք և կալուածք մզկիթաց յատկացցին 'ի յօգնութի սոցա (այսինքն զօրացն:

Դիւրին է կարծել թէ' որքան խորխոցեան մոլայքն' կողոպտեալ լինելով 'ի բոլոր հասից իւրեանց

բայց որովհետև մեծ մասն զօրաց, և յատկապէս օզբէկքն կամ թաթարքն, էին 'ի սուննի ազգէ, ծաղր առնէին զգանկատս նոցա, և ժողովուրդքն առհասարակ՝ կարծելով թէ հարկ իւրեանց թեթևասցի, որովհետև եկամուտք մզկիթաց դարձան 'ի պէտս բանակին, ոչ այնքան զակամայութիւն ցուցանէին 'ի յընդունիլ զայն: Եւ իրաւի հոգևոր կրօնն այնքան խոնարհեալ էր՝ որքան բարոականն էր նուաղեալ, զի եթէ չէր այսպէս, ոչ ընտրէին զնատիրն ինքեանց թագաւոր: Արդ զինչևիցէ, եթող նա զժողովուրդն 'ի կամս իւրեանց, և վասն ապրուստից մոլայիցն՝ հրամայեաց, զի իւրաքանչիւր մոլայ 'ի ծախուց իւրոյ հոգասցէ զապրուստ իւր, և ապա սկսաւ զմիաբանութիւն խնդրել վասն սուննի ազգին ըստ որում յիշեալ էր յանապատն մուղամ, ուստի զվճիռ գրէ այսպէս

Վճիռ, վասն միաբանելոյ զերկուս ցեղս, զՇիայս, և զՍուննիս:

Բարձրագոյն աստիճանաւ ճոխացեալք, իշխանք, դատաւորք, և պաշտօնեայք օրինաց, և բոլոր իմաստասէրքդ որք բնակեալքդ էք 'ի յարքայանիստն 'ի սպահան, և փառաւորեալքդ 'ի շնորհս թագաւորին, ծանիրուք, զի մինչ նշան մեր (յորմէ կախին յաղթութիւնքն) էր 'ի յանապատն մուղամ, դաշնադրեցաւ, զի ըստ հնոյ կանոնի որ աւանդեալն էր մեզ 'ի հոգևոր նախնեաց մերոց որպէս ցուցանեն Անիֆայն, և Ջաֆարն, այսուհետև ընդունեսցուք զհրամայող խալիֆայն ընդ որս ամենաբարձրն համարեալ էր, զի լինին նոքայ փոխանորդք մեծի Մարգարէին, Ուստի 'ի հարկաւոր ժամու պաշտէ ժողովրդեանն յիշել զանուանս չորից մեծաւ պատկառանօք

Բայց 'ի տեղիս սոցա, յայսմիկ թագաւորութեան, 'ի կոչէլն, զժողովուրդն 'ի յաղօթս, և 'ի յաղօթելն՝ ալին բարէկամ Աստուծոյ ասէն, ըստ սովորութեան շիայ ազգին, բայց հակառակ այսմ՝ ուղիղ հաւատոյ պաշտողացն՝ ծանուցանեմ, զի այսպիսի բան հակառակ է ճշմարիտ օրինաց եդաշանցն զորս հաստատեցաք, և բաց յայսցանէ, յայտնի է աշխարհի, զի իշխանն հաւատացելոց, առիւծն Աստուծոյ, յաղթողն մուրթզայալի, է ընտրեալ զովեալ, և ընդունելի տէրն փառաց: փառք և արդիւնք նորա ոչ առաւելցի հասարակ բանիւ, և ոչ 'ի լռութենէ կարողութեան նորին մասն ինչ պակասեսցի՝ 'ի բաց բառնալով զայս քանի ինչ բառս: Զի բանիւս այսուիկ երկոքին ազգս որք միապէս խոստովանին զմեծ Մագարէն երկոցունց աշխարհացս, 'ի նախանձ գրգռին, որ է մեծ զայթագղութիւն 'ի մարգարէն և 'ի յիշխանն հաւատացելոց մուրթզայալին իբրև վճիռս այս ընթերցցի ամենայն մուսուլմանք, մեծամեծք, և փոքունք, ժամակոչք, կամ մազինք որք 'ի քաղաքս և յամենայն գաւառս ծանիցեն զի յայսմհետէ այսոքիկ բանք որք չեն համաձայնութեամբ իղ կրօնից մուսուլմանից, մի և այլ յիշատակեսցին: Այլև սովորութիւնն է դատաւորաց 'ի ժողովելն իւրեանց զկնի սկզբնաւորական աղօթից, ասել թէ՝ թագաւորն (յորմէ ամենայն բարութիւնք մերեղխեն) յաւիտեան կեցցէ, աղօթս այս (որով կամին զմահկանացու մարդն մշանջենական առնել) է առ մեննիմբ ընդունայն և անօգուտ: Արդ մեք հրամայեմք ամենայն խանից որք թմբկաց և նշանաց տեարքեն, ասել այսպէս, գոհանամք ըզ ճշմարիտ թագաւորէն վասն ամենայն բարութեաց, և այսուհետև ամենեքեան պարտին հնազանդիլ այսմ կարգի և հրամանի որ գրեցաւ, եթէ ուրեք լիցի հեստիլումեք յայսմիկ հրամանէ զմեծամեծ նախատինս 'ի թագաւորաց թագաւորէն ընկալցի, գրեցաւ յամսեան սաֆար 1149, կամ յուլիս 1736:

Արդ թէև այսքան մարդելու զութեան ջանաց նա այլայլէլ զկարգս և զկերպս աղօթիցն, տակաւին ատելի լինէր նա յաչս պարսիցն, զի 'ի խոստովանիլն զինքն ճշմարիտ թագաւոր թէպէտ օգուտէր ինքեան, բայց քննութիւն վասն յաւիտենական առնելոյ զմահկանացու մարդն, էր առաւել

ընդու

ընդունայն քանզայն զոր ինքն հրամայէր, որովհետեւ յաւիտենական կեալն միայն նշանակէ զանմահութիւն ինչ զկնի մեռանելոյ, կամ ըստ արեւելեան ազգին զերկարութիւն կենաց:

> Զիարդ գնայր Նատրն 'ի Ղազպին, եւ անաի Դեսպանս առաքէր 'ի Հռոմաստան, եւ որպէս խոնդքարն զհրաման առաքէ առ Ահմետ փաշայն յաշտաւէ, եւ որպէս բոլոր տիրապետեալ երկիրն յետս դարձուցանէն 'ի պարսից տէրութիւն, եւ զիարդ գնայ Նատիրն 'ի սպահան եպատրաստի գնալ ի վերայ Ղանտահարայ:

Թէպէտ, անկարելի իմն էր հաճոյ լինիլ վճռոյս ամենեցուն առ հասարակ ընդ ամ տեղիս, սակայն ոչ աւելորդ լսելի եղեւ գանգատ ինչ զայսմիկ վճռոյ: Եւ վճիռս այսէր հընարիմն եգործ ինչ մարդելուզական, որով ոչ միայն լինէր զերծանիլ 'ի մեծամեծ նշաւնաւոր պատերազմաց ընդ տաճկաց, այլեւ թագաւորութեան մեալ 'ի ցեղի իւրում, զի ըստ առաջնոյ կարգի թագաւորութեան, այնքան դժուարին էր ինքեան զթագաւորութիւն հաստատել 'ի ցեղի իւրում, որքան կաթոլիկ հռոմեան թագաւորի միոյ՝ յերկիրս փրօթէստանթից կամ լօթրանից:

Եւ մինչ Նատիրն էր 'ի Ղազպին, Երդուաւ հովուէլ զժողովուրդն ըստ օրինացն Ալլահ (?) ըստ արդարն մարգարէն իւր հրամայեալ էր, պահպանել եւ պաշտպանել զազգն պարսից յամենից թշնամեաց եասուր առաքէ զնախարար մի 'ի կոստանդնուպօլիս առ 'ի ազդել խոնդքարին զնստիլն իւր յաթոռ պարսից թագաւորութեան, եւ զայլ դեսպան առաքէր 'ի սանթ Պետրպուրգ յաղագս նորին բանի եւ կայսերուհին Ռուսաց հրաման առաքէր նախարարին իւրում որ նստէր 'ի Պարսկաստան շնորհաւորել զթագաւորութիւն նորա, նաեւ ասել թէ՝ լուայ զի զհաշտութիւն հաստատեցեր ընդ տաճկաց, եւ խնդրել 'ի նմանէ թէ՝ սակի դաշնադրութիւն իցէր հաշտութիւն այն, զի գիտասցէ արդեօք իցէ այնպիսի ինչ 'ի գիրս դաշանցն որ ներհակիցէ դաշնադրութեանն զոր ինքն եդեալ էր ընդ պարսից: Իսկ Նատիրն հաստատելով հաստատէր թէ՝ քաւ լիցի ինձ ընդունիլ զայնպիսի դաշինս ինչ ընդ տաճկաց, որիցէ վնասակար կայսերուհւոյն տէրութեան, այլ եթէ նախարարք իմ արարեալ իցեն զայնպիսի ինչ, առանց հրամանի եւ հաւանութեան իմոյ է թէպէտ զդեսպանն զոր կարգեալ էր գնալ 'ի Հռոմաստան, էր միոյն՝ 'ի մեծերիմ եւ 'ի խիրեմ նախարարաց իւրոց:

Եւ նախարարք տաճկաց, ջանային հաւանեցուցանել զժողովուրդն, թէ 'ի դարձուցանել յետս զբոլոր տիրապետեալ երկիրսն 'ի պարսից տէրութիւն, միաբանեցին պարսիկքն ընդ իւրեանց, եւ աւերեսցեն զերկիրս Ռուսաց: Այսմիկ ժամանակի Ռուսն առեալ էր զքաղաքն Ազօֆ: Եւ խոնդքարն երկնչէր 'ի նատրէն յորժամ էր խան մի, եւ պատրաստէր զօրաց տակաւին, այլ առաւել դեռ որքան ցանկայր բարեկամութիւն ունիլ ընդ նմա այժմ, որ բարձրացեալ էր յաթոռ թագաւորութեան:

Եւ արդէն ասպասէին թէ՝ Նատիրն դարձուցանէլոցէր զզէնս իւր դէպ 'ի Հնդիկս, բայց յայսմիկ ժամանակի յաղագս ներքոյ կացութեան իրաց իւրոց՝ ոչէր նմա պատշաճ առիթ տալ

Բուս

Ռուսաց կամ տաճկաց զկարծիս առնուլ զայնպիսի ծանր խորհրդոց: Եւ Ռուսաքն զճշմարիտ պատճառ ունէր գանկատելոյ զգնացից նզգործոյն Նատիրին յաղագս հաշտութեան եղաշայինցն զօրեդ ընդ տաճկացն, որով հետեւ տաճիկքն միայն հարկաւորութե աղագաւ պարտաւորեցան ընդունիլ զդաշինսն, զորս ինքեանք եւս կարծէին թոյլ յոյժ վնասակար արդեանց նփառացիւրեանց, եւ Նատիրն ասատնօր յոյժ ջանայր 'ի գործ ածել զամ Պարագործութիս իւր, առ 'ի չեաց քաւմալ զայնպիսի Նախանձս որք խափանիչ բերեն յաջողակ խորհրդոց իւրոց:

Եւ 'ի լսել խնդրարին զթագաւորութիւն Նատիրին 'ի վերայ պարսից, կրկին հրամանս առաքէ Ահմէտ փաշային Բաղտատոյ առ 'ի տալ կատարումն դաշանցն զոր արդէն սկսեալ էր 'ի յարզրում եւառաքէր զկէնճ ալի փաշայն 'ի կողմանէ իւրմէ 'ի յարզրում, յորում ժամանակի Նատիրն եւս կարգէր զԱպտուլ պաղիխանն 'ի դեսպանութիւն գնալ 'ի կոստանդնուպոլիս: Եւ հրաման Սուլթանին առ Ահմէտ փաշայն էր այսպէս:

Ամենափառաւոր նշոյթ պատուելի պաշտօնէայդ արքունի, եւամենահռչակ իմաստուն եւ հաւատարիմ խորհրդական եւյոյժ երջանիկդ Ահմէտ փաշայ, սարասքար մեր նեղ էգեր 'ի յասխայ, որոյ համբաւ քաջութեան եւերջանկութեան է մշտնջենաւոր) ծանիր զի երկպառակութի ինչ հանդիպեալ 'ի մէջ դերագոյն եւամենաբարձր թագաւորութեանս մերոյ, եւտէրութեան պարսից, պատճառ եղեւ անչափ եւանթիւ վնասուց եւվտանգից բնակչացն 'ի կողմանս յայնոսիկ, յորմէ քաղում դաւառք բնաւ իմք ապականեալ ամայի եղեն: Եւ մեք 'ի գութ շարժեալ 'ի վերայ տառապանաց նոցին, կամիմք զհաշտութի եւզխաղաղութի հաստատել ընդ քաղում ժամանակս, եւկամիմք զայսպիսի համահաւասար եւերկուց կողմանց դիպեալ վնասն առնել պատճառ սերտ բարեկամութեան, եւհնազանդիլ հրամանի մն, աղաւճելով զժողովուրդն յողորմելութէ:

Նախքան այսմ հետէ Թոյլտամք պարսից ազգին յուխտ ելանել 'ի գերեզման Մարգարէին 'ի մաքայ, եւյայլ հռչակաւոր տեղիսն, առանց արգելման ինչ, եւ շնորհեմք նոցա եւազատութի յայմենից հարկաց, եւ առ 'ի կատարել զամ մասունս դաշանցն' Դեսպան մի 'ի կողմանէ մերմէ Նատրի 'ի պայծառ քաղաքն արքայանիստ 'ի սպահան, եւ միւս դեսպան 'ի կողմանէ Շահին կացցէ 'ի յարքայանիստն մեր 'ի կոստանդնուպոլիս:

Երկրորդ եւ ջանս ընտանեկեցէ եւմաքուր առաքինութեան հոգւոյ իւրոյ, քարձցէ զամ տարաձայնութիս հաւատոյ, ջնջելով զօրէնս շիայիցն, եւառ յապայն պատուիրեսցէ ունիլ յաւիտեան զօրէնս սուննիցն, (որք խոստովանողք են չորից փոխանորդացն Մարգարէին, այսինքն Ապուպէքրին Օմարին, Օսմանին, Ալլիոյն) զի մի եւսներհակութի ինչ մնասցէ 'ի յօրէնս մեր.

Երրորդ եւ յետ հաստատելոյ Շահին զամ բարեկարգութիս 'ի թագաւորութեան իւրում, եւջնջելոյ զշիայան (յորոց բղխին ամ անկարգութիք, եւմշտնջենաւոր հակառակութիք պաշտամանցն օրինաց) եւզմեզ ընդունելոյ իբրեւ զփոխանորդ եւզժառանգորդ Մարգարէին, մեք եւս ընդունեսցուք զնա որպէս զՇահ:

Թէպէտ արդէն տուեալ էաք ձեզ զայս իշխանութի, բայց արդ կրկին անդամ տամք, առ 'ի քաջ բարեկարգել եւաւարտել զամ մասունս դաշանց ընդ Ապտուլքաղիխան դեսպանին Պարսից 'ի տեղւոջ ինչ որ բարի համարիցիս' տալ միմեանց զգիրս դաշանց: Եւ յետ այնորիկ պարտիս:

առաջել զայն գիր դաշանց 'ի պայծառ ապարանս թագաւորութե մերոյ, ձեռամբն զօրմանվէլի վէզիրին, որում հրամայեալ եմք գալ ընդ ապտուլպաղի դեսպանին: Վ՛ասն այսորիկ և առաջեցաք զղափիտուղի փաշայն ընդ առաջ նորայ առ'ի ածել զնա այսր, և հոգալ վասն պիտոյից ճանապարհին:

Եւ 'ի հասանիլ նամակիս առ քեզ, և 'ի խնդամիտ լինիլ քոյ ամ գրելոյն 'ոմա, փոյթ լիցի քեզ զի բարեպէս սէր և բարեկամութի հաստատեսցես 'ի մէջ երկոցունց թագաւորութեցս, աղօթք հաւատացելոց օգնական լիցի քեզ 'ի ջնջել զցեղս շիայից, և 'ի բաց հանցես զանհաւատ Ռուսսն 'ի գրոյ դաշանցն, զայս ամ առնելով ակն կալջիր ընդունիլ զշնորհս 'ի բարձրագոյն թագաւորութենէս, և զշնորհակալութիս յամ հաւատացելոց գրեցաւ յամի 1148: 'ի յուլթներորդն զիլզատէ ամսոյն յամին 1736: յամեանն ապրելի Եւղազի աւագ ար մահմետականաց ճշմարտին այսպէս եմ զի գիրս այս համեմատէ գաղափարին որ գրեցաւ 'ի Սուլթանէն:

Եւ յապաղեցին աւարտել զդաշինսն 'ի յարզրում, թէպէտև տաճիկքն ընկլան զամ դաշինս զորս նադիրն խնդրէր, և հրաման լինէր Ապտուլբաղի խանին գնալ 'ի կոստանդնուպօլիս, և 'ի հասանիլն անդր սկսաւ 'ի գործ ածել զամ հնարս նենգութե ըստ խրատու տն իւրոյ, ուստի գայթագղութի մեծ լինէր տաճկայն, բայց որովհետև կարևորէր նոցա յոյժ հաշտութի 'ի մերձենալ էլից տարոյս 'ի գլուխ հանին զդաշինսն, և ընկալան զնադիրն որպէս զթագաւոր պարսից զամ երկիրսն որոց տիրեալ էին՝ յետս դարձուցին 'ի պարսից տէրութի, և լիով համարձակութի շնորհեցին պարսից յուխտ էլանել 'ի գերեզման Մահմէտին, յորմէ հարկաւորութի ինչ ոչ ունէին պարսիկքն, քանզի ուղիղ օրէնք թագաւորութե նոցա արգելու զնոսա յայնպիսի ուխտից:

Եւ յայնժամ նատիրն չուեաց զօրօք իւրովք 'ի Ղազպինու ևգնաց 'ի Սպահան՝ խորհելով 'ի կարգի դնել զմէջերկրայսն պարսից: Եւ ոչ այնքան վասն սիրոյ խնամել կամէր զՍպահան, այլ՝ զի դիրք և տեղական տարածութի քաղաքիս երյոյժ յարմար, և սէր բազմութե ժողովրդեան և յառաջագոյն հին Մայրաքաղաք լինելոյ, սորա, հաւէր զկամս իւր գնալ անդր, և կարգադրել զամ երկիրսն: Եւ 'ի հասանիլ նորա անդր շարժեցաւ սիրտ նորա 'ի բնական ագահութե վերական գնել զվաճառականութին որում ինքն յամի էր անտեղակ, և բնաւիմբ անժոյժ առ'ի կատար հասուցանելոյ զգործն, և յայսմանէ ազգն հայոց սկսաւ սակաւ ինչ վերազօրանալ: Եւ խորութի քրիստոնէից և մահմետականաց յոյժ նուազեցաւ, որով ոչ միայն բառնայր զաղմուկս որ ստացեալ էր 'ի վաղուց ժամանակաց հետէ 'ի պարսկաստան, այլև միաւորէր զերկուս ցեղսն, առանի ից և շիայիսն:

Եւ վասն անյագ ագահութե ներքինեայն և պաշտօնէին արքունի առ չնչին թագաւորութեն շահ հօսէինին՝ բազում ազնուաշէն ապարանք և պալատք արքունի 'ի Սպահան աւերեալք էին, և այլք շինուածք տանց և յարկացն և անշքացեալք և խախտեալք զորս աղուանքն իսկ ոչէին նորոգեալ, և ոչ նատիրին կամք եղեն նորոգել, քանզի նոյն իսկ ախտ ագահութե տիրեալ էր սրտի նորայ, որպէս ;սրտից ներքինեայն 'ի ժամանակս շահ հուսէինին՝ թէև գործք կամ հետևմունք նոցա չէին համեմատ հետևմանց նորա, Արդ զի արդ և իսկ հրամայեաց առնորոգել միայն զպարիսպս քաղաքին և ամրացուցանել զնա, այլ և բաժանիլ զարմտիս վասն անդաստանաց ընդ բազում տեղիս ըստ իւրաքանչիւրոյն արգասաւորութեց, և ինքեան զմեծամեծ բաժինս հանէր 'ի յարդեանցն անտի, նաև զդրամս հրամայէր տալ առ'ի գնել զգործիս

մշակ

մշակայն, Եւ այսպէս խորհեցաւ առնել զինչ զոր օգուտէր եւպատշաճաւոր յաղագս պահպա-
նութեն տէրութենն, բայց գլխաւոր հոգաբարձութի իւր էր՝ պահպանութի զօրաց իւրոյ։

Թէպէտ մեծ էր յաջողութիւն որում պարսիկքն գիւտեցան 'ի յանցեալ պատերազմունս, այլ՛ տա-
կաւին վն հասարակաց դիպուածոց պատերազմի տակաւերթիւ զօրայն Նադրին, վն որոյ հրա-
մանատաքէր ընդ ամ կողմանս երկրին ժողովել զօրս, եւ այսր աղագաւ ժողովուրդ երկրին գե-
կապատիկ վիշտս կրէին, քանզի այնոքիկ որք կարողէին առնուլ զսուր յոյժ ընդունակէին մշա-
կութեն, որովեպակասութի լինէր մշակաց, եւ որքան զօրքն աճէին՝ այնքան առաւել կարօ-
տանայր գանձուց, եպակասութի բազում ունէր երկիր իւր յաղագս գանձուց, երկրագործութե
ձեռագործութե եւ հասարակաց վաճառականութեց որք նուազիլ սկսեալէին ամօք ինչ յառաջ
քանզ սոսկալի տիրապետութին Աղուանից երկրին Պարսից, իսկ 'ի ժամանակս Աղուանից, տէր-
ութին Պարսից անկեալ էր 'ի յետին տառապանս, եւ կնի վարելոյ զաղուանսն, այլ ինչ ձայն ոչ
լինէր լսելի 'ի Պարսկաստան բայց 'ի յաղաղակէ պատերազմի։

Արդարեւ մեծ խնդրութին է խոկումն յաղթութե, զի զինուորք կամ՛նաւազաղեալք կարողէն 'ի փա-
ռս հասանիլ 'ի զինուորական իշխնութե՝ ըստ յաղթութե Թագաւորին իւրեանց Թէպէտեւ յաղթ-
ութին իսկ պատճառ լիցի Թշուառութեց նոցա, եւ Նադիրն այս հզօր գտաւ 'ի յաղթութենն իւր-
ում, սակայն այսու ամի՛ն նուազանգեալք նորին ոչ ինչ օգտեցան, այլ միայն պարրեալք էին
մակամտածական երջանկութք, քանզի երջանկութին այն յայն քան ժամանակ ծնայր 'ի նոսա
ցորքան լսէին զլուրն աղմկալի, այսինքն յորժամ լսէին Թէ Թագաւորն իւրեանց յաղթեաց
յայս ինչ եւ յայն ինչ պատերազմի, ուրախանային եւ երջանիկ կարծէին զինքեանս, բայց այնու
օգուտ ինչ ոչ ունէին, իսկ վնաս, բազում,

Եւ զանձն զոր Նադիրն խնդրէր վասն պիտոյին պատերազմին եւ վասն կատարելոյ զխորհուրդս
իւր, էր յոյժ մեծ, զոր ոչ կարէր ժողովել առանց խստութեց, Ուստի զզօրականս առաքէր
ընդ քաղաքս քաղաքս, եւ ընդ ամ գաւառս տէրութե իւրոյ առ 'ի ժողովել զգանձս, զպարէնս
զձիս, զզէնս, եւ զայլ ամ աղխս պատերազմի սաստիկ փութով, քանզի 'ի վախճանի ամին կամք
էր նորայ ձեռնամուխ լինիլ խորհրդոյն, այսինքն զնալ 'ի վերայ Ղանտահարայ եւ Հնդկաս-
տանայ։

Ի դէպէ մեզ կարծել Թէ 'ի մտի եդեալ էր նա տէր լինիլ Թագաւորութենն Հնդկաց, եւԹէ զինչ
էր որ քաջալերէր զնա 'ի յայս յաջողութե այսպիսի խորհրդոյ՝ պատմելոց եմք 'ի տեղւոջ իւրում
բայց նա տակաւին զկամս իւր ոչ ումեք յայտնէր, այլ միայն ցուցանէր Թէ՝ կամք իւր էր
'ի նուազանդութի աճել զաղուանսն որով պակասութի ինչ ոչ լինէր համբաւոյ իւրոյ, քանզի
գործս այս էր յոյժ վայելուչ համբաւոյ երեւելի ումեմն քաջամարտիկի որպէս էր Նադիրն.
Եւ Թէպէտ պարսկաստան ազատեցեալ էր 'ի լծոյ նոցա, սակայն ոչ ինչ վրէժ առեալ էին 'ի
նոցանէ, եւ զարշաւումն Աղուանիցն 'ի յերկիրն պարսից իբրեւ զապստամբութի ինչ համարէին
Ուստի պարտէր նոցայ զպատիժս կրել որպէս զապստամբս, Եւ զի ազգս այսչէ ազգ անպի-
տան եւ խստան Թշնամի, Թէ ըստ բազմութե, Թէ ըստ կայութե, եւԹէ ըստ քաջութե.
Այլ զի եւ հուսէն խանն եղբայր Մահմուտին որ տէր էր Ղանտահարայ, ոչ անսայր հրամանի
Նադիրին, եւ ոչ կամէր գալ 'ի պարսկաստան, Եւ ամրացեալ ըստ բաւականին՝ պատրաստ լինէր
'ի պաշտպանել զերկիր իւր, եւ այնու յայտնապէս ցուցանէր Թէ՝ զազատութի ազգին իւրոյ հաստա-
տուն

ռուն պահել կամք:

Եւ զկնի աւարտելոյ զհաշտութի ընդ ռուսնկաց՝ առաքէր Նատիրն զայլ դեսպան առ խոնդ-քարն բազում պատուական ընծայիւք 'ի մէջ որոց կայր փիղ մի ահագին մեծ, եւ որպէս զ կասկած ինչ ոչ ունելով 'ի շրջակայից իւրոյ 'ի վաղեմանի տօրուոյս պատրաստեցաւ գնալ 'ի պատերազմ ընդ արեւելս այսինքն 'ի Հնդստան:

Համառօտ պատմութիւն յաղագս արշաւման Մարաթայից եւ Թշնամութեան 'ի մէջ Նիզամըլմուլք իշխանին Դաքանայ, եւ Դեհլիան խանին, նաեւ վէզիրին Հնդստանայ թագաւորին Մահմուտ Շահ կոչեցելոյ, եւ յաղագս ոխութեանց նախարարացն նորին թագաւորին առ հասարակ, յամէ 1720, մինչեւ 'ի 1736, նաեւ յաղագս գալստեան Նատիր Շահին 'ի վերայ Հնդստանայ:

Նախքան զձեռնարկելն մեր 'ի պատմութիւն հռչակաւոր ճանապարհորդութե Նատիր շահին 'ի Հնդստան, հարկաւոր է մեզ զ համառօտ պատմութի ինչ առնել վն անցիցն անցելոց 'ի թագաւորութե Հնդստանայ յայնմիկ ժամանակի:

Յամին 1720, սպանամբէր Սուլթան Իբրահիմն 'ի Մահմուտ Շահ թագաւորէն Հնդստանայ, եւ Ապտուլլա Խան սպարապետ զօրացն Սուլթան Իբրահիմին զ դիպուկ ժամանակ գտեալ յափշտակէր զգանձին աթոռն Հնդստանայ թագաւորին, (Ասեն թէ՝ աթոռս այս արժէր 88 միլիոն ռուփի), եւ եղծեալ զայն, 'ի բաց հանէր զհամայն անգամանս ակունսն 'ի նմանէ, եւ ճոխանայր հարստութբ, եւ այնու զ զօրս բազումս գումարէր, բայց զկնի փոքու թով պարտեալ 'ի պատերազմի կալանաւոր լինէր, եւ Սուլթան Իբրահիմն եւս 'ի բանտ արկանէր, եւ տէրութիւն Հնդստանայ վր հաստատիւր անդրէն, եւ յետ ժամանակաց ինչ անցանելոյ, Նիզամըլմուլք իշխանն Դաքանու զօրանայր կարողութեամբ եւ ժողովրդով, եւ ոչ կամէր հնազանդիլ թագաւորին, եւ ոչ հարկս ինչ տալ նմա այլ զ մուտս գաւառացն Դաքանու 'ի պէտս զօրաց իւրոց ծախէր, որով զ հնազանդութիւն նուաճէր զ շրջակայ դերկիրսն:

Եւ զՄարաթայսն պատճառ դնէր գործոյն, ասելով թէ՝ արգելում ըզՄարաթայսն 'ի մտանելոյ 'ի տէրութիւն Հնդստանայ, Եւ Մարաթայքն, զհարկս մեծամեծս առնուին 'ի շրջակայիցն իւրեանց, եւ տիրէին բազում պիտանի երկրաց, եւ ձգտեալ սփռեցան առաջ մինչեւ 'ի գաւառս, մալվայի, եւ սպանին զիշխանն մալվայի, եւ յափշտակեցին զամ գանձս, եւ ստացուածս նորայ, Եւ անտի զեմ եղեալ գնացին դէպ ուղիղ 'ի գուզրաթ, (կամ կուճրաթ) եւ վարեցան ընդ բնակիչսն գուզրաթոյ իբրեւ ընդ գերեալս, եւ յետ այնորիկ դարձան 'ի յարձակել մինչեւ ջիկուալիար, եւ 'ի հար-

կի

կի կացուցին զԷրկլին տալ ինքեանց զգանձս և զպարէնս, իսկ Էրեկլիչք դատաւորացն կամ կիւղբէիցն զօգնութի խնդրէին 'ի Թագաւորէն, և տուն Թագաւորին կայր 'ի մէջ աղմկաց և խռովութեց:

Վասն որոյ և Թագաւորն Հնդկաց հրամայեաց զզօրս գումարել, և Դեվրան 'խանն որ բաշխչի էր կամ սպարապետ Թագաւորին, և Վէզիրին հանդերձ բազում ժամարայիւք (այսինքն՝ նախարարօք) զօրագլխօք կարգեցան 'ի վերայ զօրացն, բայց փոխանակ պատերազմ տալոյ ընդ Մարաթային որք թուովք յոյժ սակաւ էին քան զզօրս Թագաւորին) դաշինս եդին ընդ նոսա, տալ նոցա զչորրորդ մասն մտից Դիլլիոյ, զոր չօթ ասեն, եթէ դարձցին նոքա յետս, և մինչ սուր առաջնոյն ընդ դէմ Թագաւորին, Եւ ինքեանք դարձան 'ի տունս իւրեանց պարապել 'ի զուարճութիս և 'ի խրախճանս կազմաչաց զօրս առնէին համազամ, Եւ ամ նախարարք Թագաւորին և ամ տուն նորայ մոլեալ էին 'ի խրախճանութիս և 'ի ցանկս, և ըստ իւրաց ինչ համեմատ էր Թագաւորութեն Շահ Սուլթան հուսէինին Թագաւորին պարսից:

Արդ գործք վատութե և վեհերոտութե, և չարաչար վարք նախարարացս այսոցիկ պատճառ լինէին, զի Բաջիրաւն և շարժէր իւրովք Մարաթայիւքն, և կրկին զձեռն 'ի սուր արկանէր 'ի մինէին, սումարուօջ զի թէպէտև հաճեալ էին տալ նմա զհարկն, բայց սակաւին առաւատոկ տուեալ ընդ բազում զաւառս խորհէր մինչև 'ի յաքպարապատ գնալ, վասն որոյ ընդ առաջ ելանէին նմա Դեվրան խանն և Վէզիրին կրկին անգամ, և հասանէին նմա զկնի սակաւ ինչ անցանելոյ զգետն Ջմնայ և խորհեցան Մարաթայքն մտանել 'ի գաւառս Սատաթխանին, բայց նորա գիտացեալ զխորհուրդս նոցին՝ ել ընդ առաջ նոցա բազում զօրօք, և եհար զնոսա և Դեվրան խանն Վէզիրին հանդերձ միաբանեալ ընդ Սատաթ խանին՝ պնդէին զհետ Մարաթայիցն, որոց զարհուրեալ 'ի բազմախումբ զօրացն Հնդստանայ 'ի փախուստ դառնային: Եւ Սատաթխանին զչարեալ ընդ դաշինսն զորս կռեալ էին ընդ ապստամբ ազգին Մարաթայից տալ 'ի տուրս նոցա զչորրորդ մասն մտիցն Դիլլիոյ, և վասն բազում այլ կարծեաց զորս 'ի ձեռն բնակեն հանճարոյ իւրոյ ունէր զնախարարացն, ոչ կամեցաւ գնալ ընդ նոսա, այլ տհաճեալ ընդ նոսա դարձաւ 'ի գաւառս իւր:

Եւ արդ Մահմետ շահն ոչ էր տգէտ գործոյն նիզամ ըլ մուլքին, որէր ճշմարիտ պատճառ այսոցիկ աղմկաց և անկարգութեց, բայց անկարելի էր նմա արգելուլ զնա յայնպիսեաց գործոց մինչև ոչ ածցէ զնա 'ի Դիլլի, վասն որոյ հրաւիրէր զնա Թագաւորն 'ի կոչումս, բազում և հաստատուն խոստմամբք, ոչ միայն չվնաս ինչ ոչ հասուցանել անձին նորայ, այլև առնել զամ ինչ ըստ հաճոյից նորայ, և ամենևիմբ ոչ պակասիլ 'ի հաճելոյ զկամս նորայ: Եւ նիզամըլ մուլքն էր այր յոյժ ընտիր և խորագէտ, և ոչ որ գոյր 'ի մէջ նախարարացն Հնդստանայ որ իցէր նման սմին հնարագէտ որոյ խրատիւքն տէրութին Հնդստանայ անկեալ կայր 'ի մէջ այնքանից դժուարութեց Սա միշտ պատուիրէր պահել զօրէնս, և առնել իրաւունս և դատաստանս ուղիղս ըստ նախնի Թագաւորացն Հնդստանայ, և մանաւանդ ըստ իւրոյ Օվրանկզեպ Թագաւորին: Բայց չնչին կացութին Մահամատ շահին ոչ կարէր զնախարարան վարել խրատիւք նորին, և ոչ 'ի գործ ածել զխրատս նորին, ընդ որ դժուարացեալ նիզամըլ մուլքին յետս դառնայր 'ի յերկիր իւր եբրև անարգեալ և արհամարհեալ: Եւ ոխացեալ էր սա յոյժ ընդ դէմ Դեվրան խանին և այլ ամրայիցն կամ նախարարացն, որք իշխէին 'ի վերայ Թագաւորին, և որք հակառակք եղեն նմա չյամ բանս զոր խօսեցաւ նա յականջս Թագաւորին, յառաջ յորում տեսանէր զի Դիւան Թագաւորին

անկեալ

անկեալ էր 'ի ձեռս կատակերգուաց, կաւատից, և բոզից:

Եւ Թագաւորն հրաւիրէր զՆիզամըլմուլքն կրկին դառնալ 'ի Դիլլի, եւ 'ի վախճանի խորհեցաւ նա ընդունիլ զխնդիրս Թագաւորին, և թող զորդին իւր զԳազիդին խանն 'ի տեղի իւր իշխել երկրին: Այդ Նիզամըլմուլքն ոչ երբէք խոստովանեցաւ թէ՛ ինքն էր պատճառ արշաւման Մարաթայից այլ հակառակ այսմ ասէր թէ ես զամենայն իմ պաշտպանեցի յառաջ յորում մեծ Հուսէն խանն և եղբ. Ապտուլլայ խանն կամէին զերկիրն իմ յափշտակել յինէն, և խօսէր այսպէս:

Ամենակալն ա̅ծ հաճեցաւ ինև ցրուել զխորհուրդս նոցա, և վասն այնորիկ ամբաստան եղեն զինէն առաջի Թագաւորիդ, և տէրդ իմ Արքայ պատրեալ 'ի խորամանկութենէ նոցին՝ եկանել կամեցար 'ի վ̅ր իմ մեծամեծ զօրօք, այլ ա̅ծ դադարեցոյց զխորհուրդ քո, և դատ արարեր ինձ հաւատալով յիս, զի ծառայ հաւատարիմ եմ ես: Այդ դիւրահաւան Մահմետ Շահ՝ փութով հաւատայր բանից նորա, թէ էր այր հաւատարիմ և ճշմարիտ, և կամէր վէզիր կարգել զնա. բայց նա հրաժարէր ասելով՝ թէ ես այր դերվիշ եմ, ոչ է պատկան ընդունիլ ինձ զայդ բարձրագոյն աստիճան, և ևս թէ բազումք են 'ի տան Թագաւորին, որք կարողագոյնք քան զիս են, և են ընդունակ կատարելոյ զպաշտօն վէզրութեան. ուստի խնդրեմ կալ զիս հրաժարեալ:

Ճշմարիտ խոկումն մարդկութեան, և ուղիղ գիտութիւն մարդկային ազանց միայն կարեն սանձել զմեզ 'ի յայսպիսի դիպուածս, եթէ մի 'ի յերկոցունցս պակասեսցի 'ի մէնջ, խեթ սրտից մերոց կարող է գրգռել զմեզ 'ի կորուստ և յապականութիւն այնց՝ որք պատճառ լինին խոնարհութեանց մերոց, և յորժամ 'ի կարծիս մտանեմք հպարտութիւն 'ի միտս մեր ածէ զպէսպէս հնարս, և ուր եթէ իցէ նաև կարողութիւն, յայնժամ զոր ինչ չարութիւն կարող է մարդն գործել, բայց յորժամ աղէտն լարեսցի առ մինն, ոչ մտածեն զի բիւրք զգասցեն զվէրն:

Այդ Նիզամըլմուլքն զերկայապատիկ հարսանիս առնէր 'ի Դիլլի, զորդին իւր փեսայացուցանէր վէզիրին, և զորդին վէզիրին փեսայացուցանէր ինքեան, ակն ունելով զբարեկամութիւն առանալ ընդ նմա, և զօգնութիւն ընդունիլ 'ի ձեռանէ նորին ընդդէմ հակառակորդաց իւրոց, և ընդդէմ այնց՝ զորս ոչ կարաց 'ի յաղթութիւն ածել խորհրդով իւրով, իսկ վէզիրն բուռն հարեալ էր զհակառակ կողմանէն, և հրաժարէր յամ խիստ կարգաց և օրինաց, բայց 'ի յազգահութէ Ուստի սրտմտութիւն Նիզամըլմուլքին եղև առաւել յաղագս այսր, քանզի վասն ոչ կարելոյն վրէժխնդիր լինիլ հակառակորդաց իւրոց: վասն որոյ խորհեցաւ 'ի ձեռն արտաքին և օտար թշնամեաց զվրէժ առնուլ քինու իւրոյ: Եւ գիտէր զի Սաադաթ խան 'ի իշխանն Աւդիոյ էր և սոժկամակեալ և տհաճեալ ընդ զնայս նախարարացն այնոցիկ, վասն որոյ 'ի ծածուկ բարեկամութիւն առնէր ընդ նմա, և ասեն թէ՝ երկոքին սոքա միաբանեալ ազդ արարին Նատիրին վասն որպիսութեանց Հնդկաց Թագաւորութեան:

Եւ թէպէտ ընդունիմք զի Նիզամըլմուլքն շարժեալ 'ի նախանձու վրէժխնդրութեան՝ առնէր զայն, սակայն այս ևս յոյժ կարելի երևի մեզ, զի Նատիրն ոչ ունէր զհարկաւորութիւն այնպիսի խրատատուաց 'ի կատարումն խորհրդոյն փառամոլութեան իւրոյ, քանզի դժուարին է կարծել թէ՝ Նատիրն տգէտ իցէր կացութեան Հնդկաց Թագաւորին, և մանաւանդ՝ գիտէր զքաջութիւն իւրոյ զօրացն, և զկանացի բնութիւն Հնդկաց ազգին, ապայօրէն դիւրին է մեզ կարծել զի խորհուրդս այս խորհեցաւ յայնպիսի փառամոլ առնէ միջէ, որոյ հարկաւորութիւն՝ ունելոյ զօրաց իւրոց՝ վարեաց զնա յայնպիսի խորհուրդ յուսահատութեան: Բայց ոչ ինչ հոյլ 'ի վերայ կայ

պատմա

պատմաբանի միոյ առ աւէլ 'ի քննին մտանել և 'ի խոր քննել զսկզբունս գաղտնի խորհրդոց նվարուց Նորին, զորս կարէ ոք 'ի ձեռն դիպուածոյ նկատագայիցն միայն եզրակացուցանել Որոյ աղագաւ եւս ընթերցողաց պարտ է 'ի քննութի մտանել, քան զի ոչ որպէսութիւնք իրացն ոչ իմանին պարզապէս միայն մարդկան կարեն զօրութք քննել, նշմարապէս զատել 'ի միտ:

Եւ Նատիրին իմաստութք ծածուկ պահէր զխորհուրդն զոր, առնէր 'ի վերայ Հնդստանայ զոր և խորհեալ քաջութք սրտի իւրոյ' որ ոչ զօրացեալն էր յաղթելով տաճկաց, այլ եւ պատերազմին զոր տաճիկքն արդէն սկսեալ էին ընդ Ռուսաց' երերկրորդ պատճառ 'ի գլուխ հանելոյ զներկայ խորհուրդս իւր:

Եւ իբրև հաստատէր զխորհուրդն 'ի սուրբ զանդրանիկ որդին իւր Ռուզաղուլի միրզայն կառավար կացուցանէր 'ի վերայ Պարսկաստանի փոխանակ իւր: Եւ Երիտասարդս այս արդէն իսկ զբազում նշանս հանճարոյ ցուցեալ ճոխանայր համբաւօք Նման Հօրն, և այնքան համանմանեալ էր Նմա բնութք, մինչ զի յաւելոյր 'ի վերայ հայրական գթոյն ազգութն բարեկամութն, Ուստի Նատիրին վստահանայր 'ի կայսերս իւր, թէ տէրութի Պարսից հաստատուն մնասցէ 'ի ձեռն որդւոյն իւրոյ:

Մտածմունք յաղագս պէսպէս համբաւոյ Աղէքսանդրի Մակեդոնացւոյն, և Նատիր շահին, Նաև բարոյական մտածմունք 'ի վերայ նոյն փառաց, և եւս թէ որպէս եզինչ պատճառաւ Աղէքսանդրին և Նատիրին, գնացին 'ի վերայ Հնդստանայ, և որպէս Նատիրին եղանէ 'ի սպահանայ 'ի թուին 1736: յամսեանն Դեկտեմբերի, և որպէս վարեցաւ հուսէյին խանն իշխանն ղանտահարա 'ի մարտին ընդ Նատիրին, Եւ որպէս Ռուզաղուլի միրզայն Նուաճէ զօզբէկսն պալխու, և պօխարայի, եզինչ անպատեհ գործ գործեացն առ 'ի պարսկաստան զի նիգնալոյ հօրն 'ի Հնդստան, եզի արդ իշխանք կամ Նախարարք Հնդստանայ զ բարեկամութի առնէին ընդ Նատիրին:

'ի նկատել զճանապարհորդութի Նատիրին 'ի Հնդստան, պատմութի նորին է յոյժ գեղեցիկ և արժանի յիշատակելոյ, եղուար ճապուկանէ զմիտս ընթերցողաց, վասնորոյ յօժարեցան միտք իմ զբաղդատութի ինչ առնել 'ի մէջ գիտութեանց Նատիրին, և մեծահռչակ Մակեդոնեան կայսերն, Եւ յայտնապէս երևի զի այս երկոքին աւերիչք արևելեան աշխարհին, Աղէքսանդրն և Նատիրն բորբոքեալ էին միևնոյն իշխանկալութե ախտիւք, և անձնարձակ մոլութք յաղթութե, Արդարև Աղէքսանդրն էր ատտիկ յան կացող համբաւոյ և փառաց, իսկ Նատիրն բաց 'ի ատտիկ տենչմանց զինուորական կատարելութեն, ունէր նաև զանչափ և զանյագ ցանկութի գանձուց, մինն թագաւորեալ էր օրինօք և ծննդեամբ, իսկ միւսն յափշտակողական զօրութ որոյ իշխանութին էր այնպիսի ինչ, որում անհնարին էր մնալ առանց բազում զօրաց, և զօրացն առանց, մեծամեծ գանձուց:

Ըստ հասարակ գործոց քաջասրտութենց իւրեանց, և բազում յաղթութենցն՝ երկոքեանն ևս եղեն պաշտելի զօրաց իւրեանց, մինչև լսաւ Նատիրն անողորմութք և ագահութք: Աղէքսանդր էր յոյժ սիրելի, իսկ Նատիրն զարհուրելի, մինն ներգործեաց զսէր 'ի յազգս մարդկան, իսկ միւսն այնքան չար եղև, մինչզի հաղիւ ուրեմն ասել կարիցէ ոք թէ՝ գործ իւր էր մարդկային նախատասութք, և երկոքին սոքա եղեն առարկայ զարհուրման և սքանչացման, բայց յորժամ զսիրալիր գովաբանութի նուիրեմք 'ի յիշատակ Աղէքսանդրի, գործք Նատիրին 'ի յատելութին շարժէ զմեզ, մինն էր 'ի բնէ առատաձեռն և կրթեալ ազատական գիտութք, իսկ միւսն, (թէ և բնական մասամբ գերազոյն) էր նենգաւոր, խաբեբայ, և անուսումն:

Եթէ Աղէքսանդր ծնեալ իցէր 'ի չնչին տոհմէ, կարելիէր նմա ցուցանել զմեծագոյն նշանս ճշմարիտ ինքնակալի և ընդնմին ամենաբարձր և հզօր յաղթողի, սիրտն հաստատեալ էր 'ի սէր առաքինութե, բայցոչ հաւասար կարողութե և մեծութե իւրոյ, թէպէտ ոչ էր նա անողորմ, բայց սպան զսիրելի բարեկամն իւր զԳլիթոս, թէպէտ եղև ողջախոհ առ կինն դարեհի, բայց այրեաց զքաղաքն Փերսէպոլիս 'ի շնորհս բոզի միոյ, իցէ արդեօք առաքինութի ինչ որ վշտացուցէ զմարդն: Արդ գործ մի այսպիսի փառաւոր ոչ էր գործ Աղէքսանդրի, կարէ տալ նմա զանուն յաղթողի, բայց ոչ զանուն դիւցազանց: Նատիրն ունէր զբնութի ինչ, որով երբեմն առաքինի երևէր, բայց մեք հաւաստեաւ գիտեմք, զի՝ ոչ ոք թագաւոր առանց 'ի բաց թողլոյ զգութն և մարդկային սիրել կարէ այնպիսի համբաւ, և ոչ ապագայ դարուց մարթէ յառաջածել զոք վերաբերիչ վարուց նոցին, առանց ցուցանելոյ միանգամայն և զահագնատեսիլ և զզարհուրելի իւր կերպարանս դիմաց:

Մարդկային բնութին յամ դարս, և յամ երկրի է միանոյն, բայց զաղտնի պատճառքն՝ որով մինն զմիւսն 'ի միւսոյն ոչ են այնքան յայտնի որպէս զգործ պէսպէս ռամանց (կամսնեդ-եանց) շինակու երկրի ոչ գտան արք իբրև Աղէքսանդր կամ Նատիր, արք՝ որք էին վառեալք ամենաբարձր ոգւով ինչ զինուորական ըղձի, և որք էին ատականիչք համայն բաղոյկան և հաւաքոր կանոնաց, և որք 'ի գործ ածէին բացարձակ իշխանութիւ առ 'ի գործել զամ չարիս, և որք առնէին զգործս ոչ միայն 'ի ներք քան զըմբռնումն միտաց հասարակաց, այլև՝ ներհակ ամ կանոնաց ճշմարիտ փիլիսոփայութենց, Եւ վերջապէս միով հաստատ հետևմամբ առնել ջանային զի ապականութի մարդկային բնութե ածցէ զազգս մարդկան 'ի գործել չարիս օգնութք այլոց չարագունեղից (թէև ոչ իցեն քաջք իբրև զինքեանս) քանթէ համայն նախադասութիւք առաքինութենց ածել կարիցէ զմեզ 'ի բարեգործութ, վս պակասութեց առաքինական գործեաց:

Եթէ

Եթէ զանցեալ դարուն քննեսցուք, անտանիմք դաշխարհս ամփոփեալ այսպիսի արամբք յաւետ վասն ստանալոյ նորա զհամբաւ յաղթողութե: Արդ որքան յանդուգն է սէր համբաւոյ ՚ի խիստ թագաւորաց, որոց ճարտարութիւնքն են յատկապէս զինուորական, եւ որոց միայն համբուլն է ՚ի պատերազմի: Եւ թուի թէ անափառութիւն յաղթողութեանց ՚ի բաց հանէ զնոսայ յամ մտածմանց, մահկանացութե, եւ պատրէ զնոսա զինքեանս անմահ կարծել: ՚Ի մէջ աղաղակաց պատերազմի ճշմարիտ քաղաքականութիւն մարդկային, ամբոխի եւ երկիւղին հաճելի երեւի միայն որոտմամբն իւրով:

Բնական մեծութիւն մտաց արանց որք ծնեալ են ՚ի թագաւորել, ոչ գտանեն զիր ինչ հաւասար այնմբայ ՚ի յաղթութե, եւ ՚ի կարողութե: Այպաքէն որք իմաստունք յայանեն զպատրանս, համոյն եփորձառութիւն բանան զաչս նոցա, եւ ածէն զնոսա ՚ի համառօտութի այլոց մահկանացուաց, եւ խելամուտ առնէն զնոսա թէ (յորում կարգի եւ դեալ իցէ զմեզ ամ) գործառութիւն իւրաւանց է միայն հաստատուն փառք, եւ յայնժամ այսախտ յաղթութիւն երեւեսցի մեզ գոլ իրաւ ի երեւոյթ վշտաց եզարհուրանաց: Օրէնքն ամծային ՚ի մէջ զան յայտնել զայսպիսի պահանջողսն եցուցանելով մեզ թէ, զինչ կանոնն ամծային, բանան մեզ զթեատրոն ինչ ճշմարիտ եւ քանչելի ուրախութենց, որ առաջնորդէ մտաց մերոց ՚ի ճշմարիտ աղբիւրն մեծութենս

Եւ ՚ի լրանալ հոգտեմբերի ամսոյն յամին 1736 էլ Նատիր Շահն իբրեւ ութսուն հազար զօրօք, որք լատ մեծի մասին հեծելազօրք էին, եւ յետ սակաւ ժամանակի երեսուն հազար եւս հետեւէին նմա ընդ իշխանութեամբ Թահմազ խանին, որ պարապետներ Նատիր շահին, զորեւ Թահմազ վէքիլի կոչէին, եւ կարճագոյն ճանապարհ գնալոյ ՚ի վերայ Ղանտահարայ եր ընդ կողմն Քրմանու. բայց սակայն յոյժ դժուարին էր վասն այնքան բազմախումբ զօրաց կերակուր գտանել յայնպիսի անպտուղ եւ ցամաք երկրի, վասն որոյ դէպ ՚ի Սղապլին ճանապարհ առնէր, եւ անտի ուղղեր զընթացս քարդեալ ՚ի Խորասան, իսկ զինի այնորիկ զժամանակ լուրինչ ոչ լուաց զնմանէ մինչեւ ՚ի հասանիլ նորին մերձ ՚ի Ղանտահար:

Արդէն հանդուստ պատմութիւն ինչ արարաց զգաւառացս այսոցիկ, եթէ վասն անմտիւ չարեաց եղանութեանցն զորս աղուանքն գործեալ էին ՚ի պարսկաստան, համբաւ մեծ եւ անուն քաջամարտկութե ստացեալ էին անձանց, իսկ ատամնոր եւ ելեւեցան այնպէս քաջք, զի հուսկն խաննոր եղբայրն էր մահմուտին, եւ իշխան Ղանտահարայ եւ եր այր անխոյեան, քաջահամբաւ եւ հանճարեղ, Ոչ միայն շարժեալ եր ինքն իշխանական ընձիւ, այլեւ ակն ունէր զվրէժառնուլ ՚ի պարսից անտի վասն հեղման արեանց ազգին իւրոյ, Ուստի միաբանութիւն հաստատէր ընդ օգբէկան բոխարայոյ եւ սամարղանտու, եւ ընդ այլ լեռնաբնակ իշխանս: Եւ սոքա ամենեքեան յուսային պաշտպանել զինքեանս ՚ի բռնաւորականութենէ պարսից ազգին, եւ ժողովեաց առեն զզօրս իբրեւ երեսուն հազար, եւ յղեալ եր զքաղաքն պաշարոյք ըստ քաղաքականին, որով կարող լինէր ընդ զիմանալ երկարագոյն պաշարման:

1737 Եւ արդ հուսէին խաննոյ կամէր ամրափակել զինքն ՚ի մէջ պարսպաց իւրոց, այլ զամ փոքու յանձին

յանձին կալեալ խափանել, ջանայր Թագաւորն զգուշութեամբ զօրացն պարսից որք գային ՚ի վերայ իւր ընդ ձեռամբ այնպիսի հնարս եւ յաջողամբ տպաւորեալ: Եւ քաջասիրտ աղուանքն՝ որք բազմիցս յաղթօղք եւ փառաւոր գոլով ՚ի վերայ պարսից, բնաւին ոչ ընկճէին ՚ի սոսկալի համբաւոյ նադիրին, Եւ էլ հուսէն խանն բազում զօրօք, եւ եհար զբանակ իւրեանց գետոյ միոյ որ էր Ձիզղմի հինամենտ կոչեցեալ գետոյն, եւ ամրացուցանէր զինքն անդ ժամանակ ինչ, եւ ճանապարհ ոչ տայր անցանել զօրացն պարսից, բայց ՚ի վաղեմանի զօրք իւր խուսափեին յետ զկնի կորուսանելոյ արս իբրեւ զերկուս հազարս եւ յայնժամ յառաջ խաղայր նա ամ իւր զօրօք իւրովք ՚ի վր Ղանտահարայ՝ բայց ոչ ունելով մեծամեծ թնդանօթս անկարելի լինէր ինքեան ՚ի հնազանդութի ածել զայնպիսի ամուր տեղին (որ լիէր ամբարէկարգութբ եւ պատրաստութբ պատերազմի) այլ ինքն հնարիւք, եթէ ոչ խստութբ սովու, վասնզի ՚ի մտի դնէր աստիկութբ պաշարել զնա, եւ խափանել զամ հաղորդութիս ընդ քաղաքին:

Եւ արդ բարւոք իմանայր հուսէն խանն զվտանգն՝ յորում ինքն կայր, վասնզի խոստանայր ընդունիլ զնադիրին իբրեւ զԹագաւոր, եւ հնազանդիլ նմա յօժարութեամբ հարկատու իշխան, եթէ նա մի լինիցէ մա դարձի ՚ի հերատ առանց աւելի վնաս ինչ տալոյ երկրին, իսկ դաշնիքս այս անարգ ինչ թուեցաւ փառամոլմտայն նադիրին, եւ ոչ հաճեցաւ ընդունել զայն, Եւ պաշարեալքն ՚ի մտի եդին զփորձառնուլ յաջողութե բախտին իւրեանց զինուք, եւ բազում անգամ ելեալ ՚ի բերդէն անկանէին ՚ի վերա պարսից, եւ յանկարծահասութի մեծ լինէր արեւլքունց կողմանց, եւ մանաւանդ միանգամ ՚ի բնիկսն զօրաւոր ասպն դարձեալ էին ՚ի բերդէն բազում զօրօք, եւ նկատ ՚ի վր պարսից, եւ այնքան ատուտիկ կատորածս ածէին ՚ի վր նոցա, մինչզի պարսիկքն հազիւ դիմանային հարուածոյն:

Եւ հոմայեաց նադիրին շինել զբազում յարկս շուրջ զքաղաքաւն, որպէս երբեմն ՚ի բաղտասա եւ խորոխստականն պատրաստեալ խոստանայր հուսէին խանին, թէ ոչ չուելոց բանակաւ ՚ի մօտ աստի մինչեւ առից զքաղաքն, Եւ ճանապարհք պարսկաստանի բաց էին մինչեւ ՚ի ղանտահար, քանզի զօրք բազումք առաքեցան ՚ի պարսից անտի ապաստան տալ երկրին եւ յարդարել զճանապարհն Եւ Թահմազ խանն որ պատրաստեալ էր նադիր շահին, (զոր Թահմազ վէքիլ կոչէին) եհաս երեսուն հազար նոր զօրօք, եւ պարսիկքն յայնժամ պատրաստեալ կային ՚ի բաց վանել զասպատակաւորսն որք խռովէին զբանակ իւրեանց:

Եւ այսպէս կարի զարմանալի, զի աղուանքն բազմիցս յարձակեալ ՚ի վերայ պարսից բանակին զդադարութի ձիոց յափշտակէին ՚ի նոցանէ, եւ տարեալ դայեակս ՚ի քաղաքն օգնութի բազում լինէր նոցա ՚ի կողմանէ կերակրոյ, եւ այնու զօրացեալ պահէին զքաղաքն ընդ երկար ժամանակս Եւ նադիրն յայժ զարմանայր թէ՝ զիարդ կարէին նոքա այնքան ժամանակ դիմանալ, Եւ ՚ի վախճանի տարւոյն խոստանայր դաշն հաստատել ընդ հուսէին խանին, եւ անդրէն հաստատել զնա յիւրում իշխանութե, եթէ յանձնեսցէ նա զքաղաքն, եւ տացէ նմա զզօրսն որք այնքան քաջութբ պատերազմեցան ընդ նմա, առ ՚ի միաւորել զնոսա ընդ զօրս իւր:

Եւ մինչ յայնպիսի պաշարման կայր ղանտահար, իմացեալ նադիրին, զդժուարութիւն զոր կրէլոյէր անդ, հրաման առաքէր առ որդւոյ իւրում միրզայն ՚ի մաշատ չուել զօրօքն իւրովք արշաւել ՚ի վերայ օզբէկիցն պալխու, միգուցէ օգնութի ինչ հասանիցի աղուանից ՚ի կողմանց անտի: Եւ յաջողէր գործն, ՚ի ձեռն արքայ որդւոյն, եւ անտի գնայր ՚ի վերայ օզբէկիցն

բոլո

բօխարայու, (որք Նորոգ կամ դեռևս ապաստան առեալ էին 'ի Խօրասան) և 'ի Պատգամաւորութենէ
առնէր զնոսա, և դառնայր յաղթութք 'ի Մաշատ:

Որդ այս երիտասարդ անքայորդին, ոչ ինչ պակաս գտանէ քան զհայր իւր, բայց միայն հմտութք և խոհեմութե, քանզի յայտնապէս երևեցուցանէր զի ինքն կատարեալ էր ուսանել զզինուորութիւն 'ի Թհա-
գաւոր Պարսից: Եւ Նատիրն կացուցանէր զեղբայր իւր Իբրահիմ իշխան 'ի վր է տրբէձանոյ, և երամենեսին անկասկած կամանմամբ յորդւոյն իշխանութեան, պատուիրէր որդւոյն 'ի մեծամեծ և 'ի հարկաւոր գործս ինչ մի ձեռնամուխ լինել առանց խորհրդոյ հօրեղբօրն. ըստ ժամանակին
և ըստ հեռաւորութե տեղւոյն 'ի միմեանց, և ըստ պահանջելոյ պարագայից իրաց:
Այլ գոլն Ներկայ Նատիրն զդիպող ժամ տայր լեզգեայն արշաւել 'ի Շիրվան, և Իբրահիմ խանն որեր 'ի Դաղստան եղ միով կնդաւ 'ի վր նոցա, առ 'ի չ թողուլ նոցա մտանել 'ի Շիրվան, և մարտ
անչէր ընդ նոսա, և անկանէր անդ 'ի պատերազմի:

Եւ արդ ընդդալուլի միրզան ամենևին ինքնագլուխ մնայր, և բացարձակ իշխանութք վարէր և փոխէր զհաթեմ խան բէկն' զիշխանն սպահանոյ, որ էր այր անուանի, համձարեղ, և արդարանկորով: Այլ այսու ոչ շատանայր Նա, այլ յաւելոյր 'ի վր անխոհեմութեան զչարութի, և կարգեր 'ի տեղի հաթեմ խանին զայր մի կարի անարգ, և փառուքն անօրէն, քանզի անգ պարուից թէպէտև ագէտք էին բժշկութեան, Այս Նոր իշխան' զոր կացոյց ընդդալուլի միրզայն 'ի Սպահանու փոխանակ Հաթեմխանին, անգամ մի հիւանդանայր պատահմամբ, և զկնի ամսոյ ինչ Նենգութք զբժշկապետ և զայլ բժիշկսն, տուժէր և տուգանէր զնոսա, և խստապէս զանէր, Եւ ոչ միայն զայս գործէր ընդդալուլին, այլ բազում և այլ անիրաւութիւս առնէր' և ճնշէր զժողովուրդն բռնաւորական լծով զայնու ժամանակաւ հանապազ ցուցանէր հայր իւր յաղթութիւս առնէր ընդ այլ երկիրս, և այսպիսի գործք պատճառ լինէին յապստամբութի գրգռել զժողովուրդն, առ որ
պարսիկքն կարի յօժարեալ էին առանց յորդորման և գրգռման:

Որդ մէջ անդրէն 'ի կարգ պատմութե Նատիրին մտանիցուք, զոր թողաք 'ի յաղթութեան Գանձասահարայ, Այսն թէ' անհաւանք, ոմանք ընդ 'ի Նախարարացն Հնդկաց արքային զմասնաղականն բանս խօսեցան ընդ Նատիրին թղթով, ընդ որս էին և Նիզամ էլմուլքն իշխանն Դաքանու որ էր 'ի Դիլլի, և Սաադաթխանն' իշխանն Աղիհու, Եւ քանզի Նատիրն էր ճարտար 'ի գործել հնարագործութի, և հմուտ էր բանից զաշանց և լինալով տեղեկացեալ էր զտկարութեն Հնդկաց արքային և զանկարութեց զօրաց նորին, սկսանէր հրապուրանօք բանիւք աճեցուցանել և բորբոքել զախտս այնոցիկ որոց կամք էին ապստամբիլ 'ի թագաւորէն Հնդկաց, և 'ի ծածուկ օգնէր նոցա խորհրդով, և գրգռեալ պահէր զնոսա խոստմամբ մեծամեծ շնորհաց և այլ բազում յառուկ շահաւէտութեց, այսինքն, այս ամ, կամ այն յաւելցի ձեզ, առնէր եթէ հաւանիցիք խորհրդոյս:

Եւ Նախ քան զմտանել Նատիրին 'ի Հնդստան, բազում դժուարութիւք կային առաջի Նորայ բայց Նա կարի քաջ էր 'ի ծածուկ պահել զդիտաւորութիւս իւր, թէև էին յայտնի, Եւ տակաւին չէր անցուցեալ զկէսն ամսոյս և չևև չուեալ երբանակ իւր գնալ 'ի վերայ քաղաքին և առ 'ի չ թողուլ զթշնամի ինչ զկնի ինքեան, կայր մնայր ժամանակ ինչ, և դաշինս կռէր ընդ չորեքկայ իշխանսն զանտախաղց, զորս ընծայս կոչէին, և որք հարկատուք էին Հնդկաց արքային, Եւ յառաջագոյն դաշինս դնէր ընդ իշխանսն յանկօրայ, բուխարու, և կլարուբայ, և առ ամենայն այսոցիկ իշխանաց ընծայս մեծամեծս առաքէր, և զայլսն 'ի բանակ իւր, հրաւիրէ, Եւ կարի
քաջ էր

քաշէր նա մտօք և խորհրդով առ ՚ի տարածել զյաղթութիւն իւր ըստ ամենակութեան ընչից իւրոց
Եւ զամ գործեաց հաճել զմիտս նախարարացն Հնդստանայ առ ՚ի հաւատալ թէ՛ ըստ կարծեաց
իւրոց՝ ոչ կարէ զխորհուրդն ՚ի գլուխ հանել:

Եւ յետ բուռն Նիզամըլմուլքն թէ՛ Նատիրն ուղղեաց զընթացս իւր դէպ ՚ի Քապուլ, խոկոյն
գրէր Նասիր խանին որ իշխանէր գաւառացն այնոցիկ և քաղաքին Քապուլոյ, և Շէրգի խանին՝
որ իշխանէր բերդին և գաւառացն զգոյշ լինել, թէ՛ զիարդ դժուարին ընդդիմանալ՝ և հանգա-
ռակել յաջողութեան եղօրութեան Նատիր շահին, և ասէ թէ՛ որով հետև յայս ոչ գոյ ձեզ սպասել
օգնութեան ինչ հասանիլ ձեզ ՚ի թագաւորէն, բարւոք է ձեզ մտախոհ լինիլ թէ՛ որով կերպիւ
տնօրէնք հոգալ յաղագս փրկութեան ձեր: Սոյնպէս և առ Զաքարիայ խանն գրէր թուղթ, որ
իշխանէր Լահօռու, սա և Նասիրխանն էին ՚ի կողմն Դէհլիւանխանին, և Դէհլիւան խանն էր
գլխաւոր պատճառ ատելութեանն որ գոյացեալ էր ՚ի սիրտ տհաճեալ նախարարացն այնոցիկ, այսինքն
Նիզամըլմուլքին, և Սաադաթ խանին, և առդ լեալէր Նատիրին զի՛ եթէ, կարասցէ ճանա-
պարհ առնել ընդ Քապուլ, և ընդ Լահօռ, ուր քնատիրքն ՚ի զօրացն Հնդստանայ կային, յայն-
ժամ դիւրագոյն լիցի նմա անցանել ընդ Դէլլի:

Եւ նախկին տեղին ՚ի ճանապարհի Նատիրին է Խօրբունդ, և աստ եղեալ զմասն ինչ ՚ի զօրաց
իւրոց, գնայր անտի ՚ի Ղօզնաւի, և փաթանքն որք ՚ի լերինս բնակէին, միշտ հարկէին զպար-
սիկսն ՚ի գլխն պատրաստիլ, և զգուշանալ ՚ի յինքեանց, և զաւզմիս պատերազմ տային ընդ նմ

1738. Երդ Երկիւղ տիրէր ՚ի նորայ Ղանտահարայ անձեռնտու տարածէր ընդ ամ տեղիս, և այնու
գիւրին լինէր նմա տիրել այլ տեղեացն որք ոչ էին ամուրք իբրև զՂանտահար, և Քապուլ
քաղաքն յայսմ կողմանէ էր իբրև դուռն Հնդստանայ, և քաղաքս այս շինեալ ՚ի մէջ երկուց
կամ գօտէնդ դետոյն, և էր ամուր յոյժ և անմատոյց, և կամխ է դրանումն ևս պատուական ՚ի Հնդ-
կաց, և Հնդացն թագաւորին, այսու դժուարէ, զի թագաւորք Հնդստանայ անդ թագադրե-
ային, Արդ՝ Նասիր խանն որ իշխանէր գաւառացն՝ յոյժ ետ զօրօքն իւրովք և գնայ ՚ի Փիշհէօ
իսկ Շէրգին խանն, մնայր անդ և պաշտպանէր զքաղաքն քաջութեամբ մեծաւ, իբրև զամիս մի
թագմիս յետս վ... ր թնդանօթիւք և հրացանօք զգօրս պարսիցն որք յարձակէին ՚ի վր քաղա-
քին, և զքաղաքս ... ՚ի նոցանէ սպանանէր, եթէ օգնութիւն ինչ հասանիցէր այսմ սպարապետի
կարէր լինէր նմա հալածել յետս դարձուցանել զզօրս Նատիրին, և հարկ զնա ՚ի բաց կալ
՚ի քաղաքէն, և ՚ի բաց կալ ՚ի խորհրդոց իւրոց: Եւ նախ քան զառնուլ Ղանտահարայ, Շէրգին խանն
Սուր հանդանկս առաքեր առ Նասիր խանն որ ունէր զիշխանութիւն ՚ի վր բոլոր գաւառացն, սոյն
պէս և առ զաքրիայխանն որ իշխանէր Լահօռու և Նաադ տանէր նոցա վն վտանգին, յորում էինքն
կայր, և զօրութիւն խնդրէ ՚ի նոցանէ, այլ թագաւորին ամր առնէր վասն յաւաջադիմութեան
թշնամւոյն, բայց սոքա ոչ առ ոչ ինչ ոգտէին, ահ պաշարեալ էր զմիտս այսոցիկ նախա-
րարացս, և առ ՚ի մտի եդին ունկն դիր լինիլ խրատուցն Նիզամըլմուլքին, և հանձն առնուլ յա-
ջողութեանցն յաղթող զինուցն պարսից թագաւորին:

Եւ Նատիրն պաշարէր զՔապուլ սաստիկ պաշարմամբ, և մեծաւ ջանիւք և քաջութեամբ, և առ
՚ի հակել զմիտս հնդկացն, և առ ՚ի հաւանեցուցանել զնոսա թէ ուղղութեամբ և ճշմարտութեամբ հոգւ
ունէր զնոսա, այլ առ ՚ի յայտնել նոցա զհաստատութիւն կարողութեան իւրոյ, հրամայէր պատո-
տել զորովայնս ամ թագուն ամանց ՚ի զօրաց իւրոց, ոչ վասն այլ ինչ պատճառաց, բայց միայն վն
յաւելոյ

լուելոյ նոցա 'ի տեսանելն զոհն 'ի յԸնկերաց իւրեանց բռնադատել զկին միմեանց ։

Եւ չիւեր Նատիրն զպատնէշս 'ի վերայ բարձրաւանդակ տեղեաց արտաքոյ քաղաքին, և հարկանէր զքաղաքն թնդանօթիւք որոտմամբ յոյժ, և ջեկանէր զման ինչ 'ի պարսպէ քաղաքին. Եւ յամենայնն յուլիսի յարձակեցաւ 'ի բերդ քաղաքին և եկաց զնա, և զօրք քաղաքին ընդ մեծի մասին 'ի սուր սուսերի անկանէին, և անկանէր Շերգի խանն որդւովքն իւրովք ընդ նոսա, թէպէտ և քաջամարտիկ արքայազնիք, ոչէին արժանիք այսպիսի ձախորդութեանց, և 'ի տիրելն քաղաքին, Արքայն Պարսից մեծամեծ գանձուց տիրանայր բայց 'ի բազում զարդուց և ականց պատուականաց 'ի զինուց 'ի զգեստուց, և 'ի պաշտէնից, և գանձք քաղաքիս թաղեալ կային 'ի ներքոյ կամարաձև շինուածոց 'ի ժամանակէ Բահրշահ թագաւորին Հնդկաց մինչև ցայսօր, որ և այժմ մեծապէս օգտէր Նատիրն յայսպիսի հարկաւոր ժամանակի, և զինուորաւ սատացաւ ըզ կարեւորութիւն լիապէս վճարելոյ զռոճիկս զօրաց իւրոց, և բաց յասմանէ, յաջողութիւնս այսնշան կամէր լինել նոցա վս այսպես աւարացն զոր գտանելոցէին, եթէ յաջողիցեր խորհուրդ թագաւորին իւրեանց՝ առ որ գիտէր նա»

> Զիարդ և հաս լուրն տիրելոյ Քանդահարոյ՝, և ոչ պատրաստեցան Հնդիկքն առ 'ի խափանել, յառաջադիմութիւն պարսից զօրաց՝ Նա խանձն 'ի մէջ Նիզամուլմուլքին և Դեհլիյան խանին, Եւ որպէս Նատիրշահն զթուղթ նըզդեսպան առաքէ առ Մահմետ շահն, Եւ ոչ գծուարութիւն կրէր Նատիրն 'ի ճանապարհի 'ի գնալն իւր 'ի Քապուլ մինչև ցեզր Ինդոսս կամ Սնտ գետոյն, Եւ ոչ գերեցաւ Քիլ հօն, և զիարդ զաքարիախանն 'ի շխանն լահօրա ազդէր թագաւոր ինվանն ուղեւորութէ կացութէ իւրոյ, Եւ որպէս զօրք Հնդկաց գն ացին 'ի Քառնալ։

Եւ մինչև հասանէր լուր առման Քապուլոյ 'ի տունն թագաւորին Հնդկաց, զարհուրեալ խռովէր թագաւորն և ամ նախարարքն ընդ նմա, և խորհուրդ առնէին փութով զօրաժողով լինել առ 'ի արգելուլ զՊարսիկս, Եւ որ յաւելուր զերկիւղս նոցին՝ էր, խիստն Բրահմայ Ճեհենկին (որ իշխէր 'ի վերայ քաջամարտիկ զօրաց շուրջ զՔիչմիրաւ) Այս իշխան երամենևիմէ 'ի կողմն և 'ի յօգնութ Դեհլիան խանին, Սա ազդէր Դեհլիան խանին թէ՝ նշմարելով իմզդ խոտորութիւն Նատիր Շահին, ինձ այսպէս, թուի թէ՝ հաղորդութի և բարեկամութի ունին նա ընդ ոմանս 'ի նախարարացն արքունի, Ուստի պարտիս զգուշանալ, քանզի արդեն իսկ Շերգին խանն անկաւ 'ի պատերազմի, և իբրև քաջ ախոյեան շահատակեցաւ հաւատարմութիւ, և Նասիր խանն թողեալ զգաւառն խոյս ետ 'ի Փիշհօռ, Եւ յաւել ասել Դեհլիան խանին թէ՝ ահա ես և զօրքն իմ պատրաստեմ 'ի ծառայել թագաւորին, և միաբանիլ ընդ զօրս նորայ, այլև յուշառնէր Դեհլիան խանին առնել զիշխանութիւն զօրացն արքունի, մինչ զաքարիա խանն ջան եդեալ աշխատի խափանել զյառաջադիմութիւ թշնամւոյն 'ի լահօռ ։

Եւ Դեհլիան խանն քաջ գիտէր զհաւատարմութիւն Բրահմայ Ճեհենկին, և տեսանէր զի ոչ այլ իմն կարէր

կարէր փրկել զԴիլլի ՚ի դերութենէ, նաև ոչ ինչ կարէր արգելուլ զդառնագոյն վախճանն պատերազմին, եթէ ոչ գումարութիւն մեծամեծ զօրաց, վասնորոյ յայտ առնէր Թագաւորին թէ՝ յոյժ հարկաւոր է ընդ մերոյ արքայի անձամբ անձին գլուխ լինիլ զօրաց քոց և գնալ մինչև ՚ի Լահօռ, և անդ միաբանիլ ընդ պաջարիայ խանին, Եւ խորհուրդս այս ընդունելի լինէր Նիզամըլմուլքին և ատէակէր զԹագաւորն փութով ՚ի գործածել զխորհուրդն, և առ ՚ի յուսյանել սէր մեծ ազգութեան իւրում, ասէր, թէ ոչէ պարտ ընդ իմոյ արքայի դնել զանձն քո ՚ի վտանգս պատերազմի այլ ընտրել տէրութեան քոյ ՚ի Լահօռ, և ես և այլ խանքն գնասցուք դէպ ՚ի ճակատել ընդ յառաջ թշնամւոյն տալ պատերազմ ընդ նա:

Եւ խոյոյն հրաման լինէր հանել զվրանս Արքունի հանդերձ ամ պատրաստութեամբ, հանդիսիւ և մեծաւ փառօք ՚ի յայգես տանս շալիմարու, որ սակաւ ինչ հեռի է ՚ի Դիլլիու, Եւ մինչ Թագաւորն պատրաստիւր ՚ի չուել ընդ զօրս իւր, յանկարծակի բոլոր իշխանքն Թագաւորութեան հանդերձ ՚ի զարմացումն անկանէին, քանզի Դէվրան խանն արգելոյր զզօրսն ՚ի չուելոյ, Արդ այս գործ Դէվրանխանին, յատկապէս ցուցանէր, զի նա, կամ նախանձուն զոր ունէր ընդ Նիզամըլմուլքին (թէ՝ ձեռնտու ընդ թշնամուներ) արար զայս, և կամ վասն խոտան համարելոյ զխորհուրդ առն՝ որ միշտ ատէլիէր յաչս իւր, և այսպէս էր տարաձայնութիւն և ատելութիւն ՚ի խռովութիւն Թագաւորին, յորմէ կախեալ կային կեանք ապերջանիկ Հնդկաց ՚ի ժամանակս յայսոսիկ:

Եւ լուեալ Նիզամըլմուլքին զայսպիսի անակնունելի փոփոխութիւն խորհրդոյն, յետ դառնայր առ Թագաւորն, և աղաչէր զնա յոյժ, զի հրաման տացէ զօրացն գնալ դէպ ՚ի Լահօռ, բայց նախանձ և տարաձայնութիւն՝ որք Թագաւորեալք էին ՚ի միրտս նախարարացն, զհամայն հնարս և խորհուրդս նոցին չիոթեալ խառնակէին, Եւ ոչ ՚ի զօրագլխացն գիտէին զի Դէվրան խանն ջերմեռանդ սրտիւ զբարութիւն արքային իւրեանց կամէր, տակաւին ակամայ կամօք հնազանդութիւն նուիրէին հրամանի նր, յորժամ ջանայր նա արգելուլ զնս գնալ ընդ դէմ թշնամւոյն Եւ այսպէս դժուարին իմն լինէր զհաստատ կարծիս ունիլ թէ՝ գործ Դէվրան խանին յայսմ մասին ոչէր գործ առն մատնչի, և առաւել քան զգործ Նիզամըլմուլքին, որ զաղտնի մատնիչ էր,

Արդ տիրեալ Նատիրն զՔապուլայ ծանկէր զապաղայ դիտաւորութիւն իւր պատրաստական բարեկամութեան, առաքէր զդեսպան միառ Մահմետ շահ արքայն Հնդստանայ, և գրէր նմա այսպէս:

Յայտ լիցի լուսափայլ մտաց բարձր և ինքնակալ Թագաւորիդ, զի՝ շարժեալ ՚ի նախանձ հաւատոյ և ՚ի նախանձ բարեկամութեան եկեալ տիրեցի Քապուլայ, քանզի ոչ երբեք կարծէին թէ՝ Թագաւոր, միմուսուլմանից հարկատու լիցի թշուառ հեթանոսացն Դաքանու, (այսինքն մարհաթայից) Եւ արդ կամ և պատեմ յայսկոյս Ինտուս կամ մնտ գետոյն այսու խորհրդով զի յորժամ անհաւատքն այնուքիկ արշաւեսցեն կրկին ՚ի Հնդուստան, առաքեցից զունդ մի հզօր ՚ի յաղթօղ զօրացն իմոց ընդ առաջ նոցայ, զի վարեսցեն զնոսայ յանդունդս դժոխոց:

Ունիմք պատմութիւն ՚ի վկայս վն բարեկամութեան որ հաստատեալ կայ ՚ի մէջ Թագաւորաց մերոց և քոյ նախնի Թագաւորացն, Եւ ես երդնում ՚ի մուրթզայ ալի նդ յաոջ յառաջնմէ և ոչ զկնի ունէրի զայլ ինչ ՚ի միտի, եթէ ոչ պահել զբարեկամութիւն, և յուսյանել զփոյթ իմ վն հաւատոյ, զի էի միշտ յառաջն և եղեց յայսմ հետէ բարեկամ պայծառ տանս քում, արդ զոր ինչ և կամք իցեն

քեզ

քեզ կարծել զինէն ընդ հակառակս, կարծես։

Արդ կարի դժուարինէ հաւատս ընծայել թղթոյս լսամ մասանց ճշմարիտ նախադասութեանց բայց զայս հաւատամք դոյլ ճշմարիտ, զի նա ըստ ամի անփոյթ էր զիրացն զորոց խօսէր 'ի թղթի ձեռամբ, յաղագս հաւատոյ։

Եւ Թէպէտ վճարել էր դաւան Հնտոստանայ 'ի յարեւմտից և 'ի հիւսիսային կողմանցն, սակայն տակաւին բազում գաւառաց գոն 'ի ճանապարհի մինչև ցգետն Սինտուս կամ Ինտ, և իւրաքանչիւր գաւառ էն հասարակ սահմանք պաշտպանելոյ զՀնտոստան, Եւ դիւրագոյն հնարն զոր կարէր Նատիրն խորհել 'ի գլուխ հանելոյ զդիտաւորութիւն իւր՝ էր, բարեկամութիւն առնել ընդ բնակչացն որք էին 'ի սահմանսն յայնոսիկ, յորս կան ազգ ոմանք որք Փաթանս կոչին, և էն ազգք քաջամարտք անուանիք Աւղանաց, Ուստի 'ի հարկէ Նատիրն վիշտս մեծամեծս կրեցուցեր 'ի նոյանէ, վասն որոյ բարեգոյն համարէր միաբանութիւն առնել ընդ նոսա, և առաքէր նոցա զմասն ինչ 'ի յաւարացն Քապուլայ իբրև զնշան սիրոյ և բարեկամութեան։

Եւ յետ այնորիկ հնարս որոնէր շրջել զմիտս Նասիր խանին և 'ի կողմն իւր դարձուցանել զնա և Նասիր խանն էր 'ի Փիշհոր, Թէպէտև առ ոչ իշխէր մնալ 'ի մէջ 'ի քաղաքաց իւրոց շուրջ զՔապուլաւ, այլ տակաւին ոչ խոյս զարհուրեալ սրտաբեկ լինէր 'ի Նատիրէն, Եւ Թագաւորին ոչ առաքէր նմա զօրս 'ի յօգնութիւն, այլ առաքէր նմա զքառասուն լաք ռուփիս առ 'ի պատրաստել զզօրս, և միաբանիլ ընդ վերոյիշեալ փաթանսն և արգելուլ զԹշնամին, Եւ զօրաժողով լինէր Նասիր խանն յուսալով Արքունի զօրացն յօգնութիւն հասանել ինքեան 'ի գլուխ կատարելոյ մտացն Թշնամւոյն։

Եւ Թողեալ Նատիրն զգունդ մի հզօր 'ի Քապուլ, պատգամաւորս առաքէր առ Նասիր խանն առ 'ի հնազանդութիւն հրաւիրէր զնա, և ապա ելանէր ինքն զօրօքն իւրովք և գնայր դէպ 'ի Փիշհոր, և անցանէր ընդ գետն բէհաթ և ընդ գետն քավ, և հասանէր 'ի կիրճս անցիցն՝ որք իբրև դրունքէին գաւառացն այնոցիկ։ Աստանօր բազումք ոմանք 'ի յիշխանացն Հնդկաց զօրաժողով լինէին, զծառս հատանէին, և զանցս ճանապարհացն խափանէին, և այլ բազում հնարս գիմէին առ 'ի արգելուլ զՆատիրն, Եւ լեռնականքն տեղ տեղ յարձակէին 'ի վրա Պարսից զօրացն և այնու ոչ միայն արգելուին զճանապարհ Նատիրին իբրև զաւուրս մի, այլև զբազումս 'ի զօրացն Նորին սպանանէին։

Եւ որք հմուտք էին պատմութեանդ մի, գիտեն Թէ՝ զիարդ դժուարինէ զօրաց անցանել զճանապարհ ինչ անձուկ ուր չիցէ Թշնամի ինչ արգելող, ապա ուրեմն, որքան վտանգաւորէ անցանել ընդ կիրճսն ընդ այնոսիկ որք շրջապատեալք էին երկայնածաւալ լերամբ որոյ բնակիչքն էին 'ի բնէ քաջամարտիկք, և կարէին 'ի վտանգս ածել զգունդս հզօրս, Ուստի Նատիրն բարւոք համարէր 'ի դաշնադրութիւն մտանել ընդ իշխանս և ընդ մեծամեծս նոցա, և ասէր ցնոսա Թէ ես բնաւ իսկ վնաս ինչ ոչ արարից ձեզ, Ապաքէն դուք ձեզէն Թշնամի լինիք բարւոյն ձերում 'ի ղեն պատրաստից և հակառակից ընդ իս, և զի ես յօժարեմ ընդունիլ և պաշտպանել զձեզ և առ բաշխել ձեզ, և զինուորացուցանել զձեզ ինձ, և ռոճիկս տալ ձեզ, և դուք հաղորդս և մասնակիցս եղիջիք յաջողութեանց իմոց։

Եւ կարի յաջողակ լինէր Նատրին, քանզի արքունի ռոճիկս զայս չէանակեալ ժողովրդեանն զանց առնէին տալ, եւ նախարարք արքունի այնքան վատթարացեալ էին մինչ զի ամենայն արգելեալ էին զռոճիկս նոցայ, եզրկեալ էին զնոսա յամ հասարակաց օգտից և 'ի շահաւէտութենէ իւրեանց, եւ 'ի շրջակայ գաւառացն խոյառային իւրաքանչիւր 'ի տեղւոջէ իւրմէ, զպատրաստութի ոչ առնէին ըստ բաւականին եւ ըստ պատշաճին, վասն որոյ ժողովուրդքն այնուհետեւ փութով անսային խրատուց Նատրին, եւ յետ ուրեմն ոչ միայն հորդէին նմա զճանապարհ այլեւ բազմութիւնք 'ի նոցանէ եղեալ առնագային, եւ զլնոտորանային նմա, եւ յետ փութով կրկին զօրաժողով լինէր եզօրանայր, ոմն էրն 'ի թողուլն իւր զԴամտհար, եւ առ քիչն յառկայկէս ծառայութի նուիրէին նմա, զիզկնի միաբանելոյ ընդ նմա, տանէին զնա ընդ ճանապարհ խաղաղ անվտանգ, եկարծ, մինչև 'ի Քիշհօռ:

Արդ 'ի դէպ մեզ կարծել զի՝ Արքայն Պարսից խորհէր թէ՝ այնպիսի զօրք առէլութեանց զարհուրեցուցանէ զԹագաւորն Հնդկաց եւ զհամայն նախարարս իւր, եւ պատճառ լինի նոցա ոչ միայն 'ի մեծամեծ պատրաստութիւն ձեռնամուխ լինիլ, այլև պարտաւորէ զնոսա 'ի բաց հանել զմեծ մասն զանձուց իւրեանց եւ թագուցանել այլուրեք, զի յարդնեյեր, առաջեր միաբանեդեա դէսպան առ Թագաւորն Հնդկաց, եւ Մահամատխան Թուրքմանն 'ի դեսպանութիւն ընտրեցաւ եւ էլ առ յամենայնն օգոստոսի 'ի բարեկամութի հրաւիրել զԹագաւորն Հնդկաց, եւ պահանջել 'ի նմանէ զչորս քրոր ըռուփի եզչորս գաւառս, իբրութէ այսու զաշամբ կամէր Նատիրն վախճան տալ խռովութեանց, եւ հաշտել ընդ նմա, առպայթէոյ՝ ըզհրաժարումն նոցին լինի պատճառ առնել առաւել թշնամութեանն:

Քիշհօռ քաղաքն ոչէր 'ի վերա ճանապարհին ընդ որ գնայր Նատիրն, ուստի թողոյր զմեծամասն 'ի զօրաց իւրոց, եառնոյր ընդ իւր գունդ մի հզօր 'ի հեծելազօրաց իւրոց եգնայր 'ի վերայ Քիշհօռու, եՆասիրխանն գումարեալէր զգունդս ինչ զօրաց, բայց սակաւք 'ի նոյունց հմուտք էին պատերազմի, եբազումք 'ի նոցանէ ոչ կարծէին թէ՝ Նատիրն կարէր անցանել ընդ դժուարանցան ճանապարհայն այնոցիկ, եյորժամ լուր հասանէր նոցա թէ՝ եանց թշնամին ընդ կիրճան ընդ այնոսիկ, զահի հարեալ փախուստ դառնային, եՆասիրխանն մնայր 'ի կողմանս Քիշհօռու եօթն հազար զօրօք միայն, եարկանէր զպատնէշս ըզզօրօք իւրովք, բայց Պարսիկքն յաղթող գտանէին, եանցեալ ընդ պատնէշս նոցայ անկանէին 'ի վերայ նոցա սրամտութեամբ, զբազումս 'ի նոցանէ մաշէին, եզայլսն կենդանաբար կալնուին:

Եւ փախնոյր Նասիրխանն յերեսաց Նատիրին, բայց փութանքն որք դաշնաւորք էին ընդ Նատիրին եբարեկամք Պարսից, կալեալ ըզնա մատնէին 'ի ձեռս Նատիր շահին, Սրիւթի եհաւատարմութիւն զոր նախարարս այս եցոյց յայտնի հանդիսի, առ կաւիք զօրօք միայն յարգելի առնէր զնա յաչս Պարսից արքունի, եւ Նատիրն, յետ սակաւ աւուրց պահելոյ զնա 'ի կալն, խնամս մեծամեծս խոստանայր նմա, զորս ոչ երբեք ընկալեալէր 'ի ձեռանէ թագաւորին իւրոյ, եմեծաւ պատուով, քաղցր եհամեստ բանիւք շահէր զնա եզիլոտ նորայ գաւորին իւրոյ, եմեծաւ պատուով, քաղցր եհամեստ բանիւք շահէր զնա եզիլոտ նորայ ցինքն յանկուցանէր, եւ յետ յաղթութեան տիրէր Քիշհօռու, փառօք եհանդիսիւ մեծաւ մտանէր 'ի նա, Արդ թէպէտ ոչ ինչ լուաք յաղագս գանձուցն քաղաքին, սակայն դիւրին է մեզ կարծել զոչ գոլ գատարկ 'ի գանձուց որովհետեւ էր մայրաքաղաք եւ ունէր զբազում գաւառս:

Արդ 'ի ժամանել լրոյ առման Քիկհօռու, եՆատիրին պատրաստութեան առ 'ի անցանել ընդ

գետն

գեան ինչուս կամ ոչ ինոխնամել առնէր առն Թագաւորին, Եւ ի Փիշհօռու մինչև ի Դոիլի էր 450. մղոն՝ Եւ յայս միջոցի ընդ ճանապարհս գետոց ևընդ բազում դժուարին տեղիս երնմա անցանել, ...ուտի, կարծէին թէ յամեալ նա ի Ճանապարհի, Եւ Թագաւորին Նախարարքն հանդերձ վստահանայիք այսու յաղթութե զաքրիայխանն իշխանն Լահօռու զօրս քաջամարտիկս գումարեալ, նախանձեալ զՃանապարհ Թշնամւոյն, Արդ այսպիսի կարծիք տակաւին ոչ բառեալն բառնալ ընդ կասկածս որոշ նոցա, այլ քսոր միլուոփի իսկոյն հանէին յարքունի գանձարանէ առ ի զօրս գումարել, Եւ 500. ... պատրաստէին հանդերձ 3000. զամպարակօք առ ի խառնել ընդ ինքեանս, զայ ի բազում փղաց ևայլ բազում զինուց նաև քենայից արևելեան քաջամարտից:

Դիէվրան խանն ևզինդամրլմուքն երկոքեան ի միասին իշխէին ի վերայ զօրացն, Եւ այսմիայն բառնային ... հանել զոևիւյն խորհուրդ քաջն, ևչէ ինչ փոյթ ի խոր նկատել յայսմ խնձան մինչ տեսանեմք զի խորհուրդ պատերազմին թողեալ էր ի կամս այնպիսի արանց որք բոլորովիլ էին մախանօք ընդ միմեանս անհաշտելի թշնամութե, Արդ յերրորդում աւուրն զէկոտեմբերի հարին զվրանս իւրեանց արտաքոյ քաղաքին: Եւ կոչէին զԱսադխանն իշխանն Աղիուռ միաբանիլ ընդ այլ նախարարսն և կամ գլուխ լինել պահապանացն արքունի, Եւ իշխանն այսորդէն իսկ ի խոտի եղեալէր խոստովիլ և խոյս տալ զինկտի և ի բէկնարիս, բայց վն սաստիկ աղաչանաց այլ նախարարացն միայր ընդ նոսա, ևզի տաէին զնա թէ յոչ լինիլ քո ներկայ յայսպիսի հարկաւոր հանդիսի զնա մեծ լինի տերութե մերում:

Եւ ի նմին ժամու Զաքարիա խանն ադդ էր Թագաւորին վն վտանգաւոր կացութե իւրոյ, և նա թէ բազումք յերրայ և իշխանք ... անտի միաբանեալէն ընդ Պարսից, վն որոյ եթէ ոչ վաղվաղակի հասանիցի ինձ օգնութի ոչ կարեմ գլուխ յարուցանել ընդ դէմ թշնամիոյն: Եւ արդ համայն վաճառականք և հարուստք Լահօռու խոյս տային ի Լահօռու ընչիւք իւրեանց,

Եւ կատարեցաւ հանդէս արքունի զօրացն Հնդստանեաց Եւ թէպէտ զօրք այսպիսիք ոչ էին այնքան տեսլալի, բայց սակայն բազմութի այնքան շատէին մինչև բազումամօք յառաջ ոչ երբէք երևիլ այսպիսի բազմախուռն և միաւոր բանակի ի յարևելս, Եւ էին իբրև երկու հարիւր հազար որք պատերազմողք, և ըստ մեծի մասին ձիաւորք: Եւ Թագաւորն Մահմէտ շահ անձամբ անձին գլուխ լինէր զօրացս յիրաւի ոչ ինչ էր պակաս ջարդր և հզօր տէրութե այսր Թագաւորի, եթէ ոչ իմաստութի, քաջութի, և միաբանութին:

Եւ ապա անտի հանդարտ ընթացմամբ յառաջ խաղալ, և ի Ճանապարհի զօրք բազումք յաննից ծառայ առ նոսա գային, և հասանէին ի դաշտն քառնալու, կամ կառնալու, և անդ հարկանէին զվրանս իւրեանց, իբրև 55. փարսախու, կամ 165. մղոնաւ հեռի ի Դիլլիու, Եւ արքայորդին, Ահմէտ իշխէր ի վերայ յառաջ զօրացն և ունէր բանակ մի միաւոր և մեծահանդէս, և ըստ ամպարտաւնութե, ևէր առաջապահ յառաջընթաց զօրացն:

Եւ գումարութն Դադկաց բանակին երայժ ընդ արձակ, և ամրացեալ հզօր պատնիշօք, և բազում Թնդանօթիւք, Եւ ի միջին տեղւոջ կայր բանակ Արքային շրջապատեալ պատնիշօք, և գունդն նիզամրլմուլքին էր յանդիման նոցայ, և իշխէրնա ի վերայ Թնդանօթից և Ճէպէխանայից, և հա-

մայն

մայն կահք և պատրաստութիւնք պատերազմին էին ընդ իշխանութեամբ նորա: Եւ Դիլէրան խանն կայր ՚ի յաջակողմն հանդերձ այլ հինգ նախարարօք, և Ղամարըդին խանն երեք այլ նախարարօք իշխէր ձախակողմեան գնդին, և որ կնի տեղն էին և այլ բազում զօրագլուխք և պաշտօնեայք տէրութեան, որոց զանուանսն անպատեհ համարեցաք յիշատակել, զի միմիայն ընթերցողացն ձանձրացուցիչ, և ՚ի մէջ տոյժ էին, և ջահթեցն, և աշխերցն:

Եւ Նիզամիլմուլքն փոխանակ ջանալոյ քաջալերել զիւրոցն, ըզ քաջութիւ, և զյաջողութիւն Թամասին թագաւորին անկընդհատ և անհնարաւորելի ցուցանէր նոցա: Որդ ՚ի գետ մեզ կալոյ ելութեան Հնդկին անհնարին լինելով Նատրիցն պատերազմի, ՚ի հարկէ ոչ կարէին հաւասարիլ զօրաց ակրթեալ զօրացն Նատիր շահին, բայց եթէ մտածեսցուք զթշուառ կացութիւն այսր թագաւորութեան զօրաց, թուի թէ՝ յոչ այլ ինչ ժողովեալ էին նոքա, եթէ ոչ ՚ի ծառայս և ՚ի խաչխառնիս լինել առաջի Պարսից ազգին:

> Որպիսի փառօք մտանէր Նատիրն ՚ի Սահմանս Հնդկաց, և որ անցանէր նա ընդ գետ բազմամ, և հանդարտ պատմութիւն ինդ- տեղեկոյն որ անցանէր Նատիրն ընդ գետն որ Ատոկ է պատգամաւորս, և որ ՚ի Լահօր, և որպէս հասանէր նա ՚ի դաշտն Քառնալոյ:

Զօրացեալ Նատիրն հրովն յաղթութեան, ամբարտաւանութեան, հանդերձ անհնարին թագաւորելոյ ՚ի վերայ այսպիսի լայնածաւալ ընդարձակ տէրութեան, և զջանալս շարժէր զինչն ՚ի կատարել հասուցանել զկամս իւր:

Եւ Ղամարխանն որ թէ հիմա թագաւորն էր Նատրին հանդերձ արգիլել կոչն արքունի կարգաւ լինել ՚ի կատարել զհրամանն արքունի և ՚ի ձեռն այս արգասն մատուցանէին Նատիր շահին և արգասիքն էին բազում յոյժ ըստ այլ ժամանակս և Նատիրն մտադրութեամբ ունելով նոյն, և փութով վճռէր և աւարտէր զայն: Եւ սաստիկ քննութիւն առնէր առ ՚ի խնամել զայն անձն որ անցանէին անդ, և առնէր իրաւունս ամենեցուն բազմաց, և անաչառութեամբ, և մինչև ցմիջօրէայն նստէր ՚ի վերայ իւրում, և ունէր մատուցանէր զանգատիս, և յետ տակաւ ինչ հանգստեան կրկին ՚ի վերայ իւր դառնայր, և մնայր մինչև ցերեկոյն: Եւ բազմութիւնք պահապանաց յաւուր կնոջ նոյն ՚ի ծառայարքն և հրաշալին զլուրս յաղթութեանց նորա:

Արդ ամենևին փոյթ ինչ ոչ լինէր Նատրին ՚ի լսելն զմեծամեծ պատրաստութիւնս պատերազմին որք լինէին ՚ի տէրութիւնս Հնդկաց առ ՚ի խափանել զյառաջադիմութիւն իւր, այլ փոխանակ զանգիտելոյ՝ ջանայր ՚ի նուաճողութիւն առնել զիշխանն Հնդստանայ, և նախ զՔաբուլոյ խանն իշխանն Լահօրու, և յետ կարգելոյ զզօրս բաւականս ՚ի Փիշհօր, խաղայր դիմայր առ եզր [illegible] գետոյն: 1739 Եւ ՚ի սկիզբն յունվարի անդ ժամանէր, և որդէն հասուցանէր նորա անցանել ընդ գետն այն, և զի Մահմետ բէկն յառաջնմէ հրաման ընկալեալ էր չինել զնաւս առ ՚ի կամուրջ կամ լաստ կազմել ՚ի վերա գետոյն, և զի Նատիր միշտ տանէր ՚ի բանակի իւրում երկուս երկաթի և կարի մեծ շղթայս, և բազմութիւնք փշեալ տակացն կայլեալ կայլի ՚ի շղթայիցն՝ որք նոյին յերեսս ջրոյն, և բազում փոքրիկ կամուրջս կազմեալ ՚ի գետանայ դնէին ՚ի վերայ այնց,

տեղց

տիկոյ, և կապէին զշղթայն քերկաց կողմանց գետոյն, և այնու հաւասար մնայր նաւ քն

'ի լաղնջուց ժամանակաց հետէ, և մանաւանդ յայսմիկ ժամանակի զինդուգեան, որ կոչէր Նէ մի 'ի մեծամեծ գետոյն 'ի յաստառ քը գամգէս կեան 'ի Հնդստան միայն մեծէ քան զինդուս կամ սինտ, եւ գետն ինդուս բաժանէ կամրջէ առողջութեան Լահօրու 'ի միմեանց և Հաւատրակօրէն աթաք կոչի, յաղագս բերդի միոյ մեծի որ շինեալ կայ 'ի յարևելիցս այսր գետոյս. եւ իբրև զգետն նեղոս, ուռուցեալ լինի և հեղեղաւէ զերկիրն ուստի առաւութի մեծ լինի պտղոյ յեզերս նորայ, եւ ի խոնարհ բազմաց զոն 'ի գետս, և ընթացք գետոյս 'ի հիւսիսոյ մինչև ցհարաւ է իբրև ինն հարիւր մղոն, կամ քառասուն և երկու աւուր ճանապարհ, և բազում գետք 'ի սմանէ բաժանին, և ունին զանազան անուանս, զկնաւորքն այսոցիկ բաժանեալ գետոյ կոչին՝ Շատ Ալիւմէքի, Շանթրոս՝ ինքն և միահաղ և այնպէս հինգ գետս յորինեն, և վասն այսորիկ գաւառ Լահաւու փանճապ կոչին, այսինքն հինգջուր, և են յոյժ բարելի և առատ պտղաբեր գաւառք 'ի Հնդստան։

Եւ արդ Զաքարիայ խանն ոչ ջանայ հակառակիլ Պարսից զօրացն 'ի բանեցանել նոցա ընդ գետն աթօք, կամ նաւք, և ճշմարտի, կամք իւր էր, հնազանդիլ Նադիրին, ըստ խրատուց զոր ընկալեալ էր 'ի Նիզամիլմուլքէն. եւ արդ առ 'ի ոչ յայտնել զիւր կամս իւր, սկսաւ պատրաստութիւն առնել 'ի պաշտպանել զերկիրն, եւ Նադիրն վաղվաղակի չուեր անտի և գնայր ցեմենապատ որ է քաղաք մի ընդ իշխանութեամբ Զաքարիայ խանին, եւ առ Դալամնտար խանն իշխէր 'ի վերայ տասն հազար զօրաց, և խորհէր ընդդիմանալ Պարսից զնդին, եւ Նասիր խանն որ այժմ կարգեալ էր 'ի Նադիր շահէն 'ի վերայ պաշտօնի միոյ 'ի բանակի Պարսից, հաւատարիմ էր և էր Նադիրին 'ի գործս իւր, եւ Մորոց ամս հրամայէր Նադիրն յարձակիլ 'ի վերայ քաղաքին, զորս առ ապարսինքն, և մեկնանին զզօրավարան հնդկաց, եւ Նադիրն առաջեաց էր պատրաստ առ Զաքարիայ խանն 'ի հնազանդութիւն հրամայել զնա, եւ նա կոչեալ էր զպատրաստութեան 'ի բնաւ անդր, և նախատանս ինչ եդեալ 'ի վերայ նորայ, եւ զայս ասացեալ առնէր առ 'ի պատրաստել զդիտաւորութիւն իւր, և եկեալ մերձ 'ի քաղաքն հազար զօրք 'ի Լահաւու, և գնաց մերձ քաղաքի խաղալ, եւ յորժամ լսէր թէ առաւ եկեալ ավան, անդրէն յետս դառնայր վաղվաղակի և մտանէր 'ի քաղաք գաւառայն, և այնպէս ինչ պատրաստութեան պատերազմի ցուցանէր, բայց յետ երից աւուրց դաշինս կռէր ընդ Պարսից յանձնել նոցա զքաղաքն, եթէ փոքր ինչ ոչ տարայեն զքաղաքին, և այսպէս տիրէր Նադիրն Լահաւու։

Եւ մնայր Նադիրն 'ի Լահաւու առաւել ամիս մի, և անցուցանէր զզօրսն իւր 'ի յանգէստանն չարչարանաց, եւ անցանէր նա ընդ գետն Շոլ, և անցեալ ընդ միջարհինդ և թանիսերայ հասանէր քառասուն հազար զօրօք մօտ 'ի գետ որ կոչիւր Թիլլաւրի, որ ոչ էր հեռի 'ի Ջահանաբադէ, եւ առ զնա առնայր առ 'ի փորձառնուլ զպատերազմ հնդկաց բանակին և խորհել թէ զինչ էր արդեօք նմա առնել այժմ հետև, Այգ զինի քասն և հինգ ամաց ճանապարհորդութեանց, և ընթանայ 1850 մղոն հաղիւ հասանէր 'ի մայրաքաղաք իւրոց և ոչ ինչ կորուստ կրեաց պատերազմին 'ի նեղութեանն հանդերձ, առ 'ի կանխաւ տեսանելոյ, այս պիտոյ բազմութիւնք ոչ կարէին դիւրութեամբ կառավարել և պաշտպանել ընդ երկար ժամանակ, այլ կամ սպառին 'ի մխանձանաց զանազանաց, կամ 'ի դաշն մտանել քննէին։

Թիւ

Թիւ կամ համար Պարսից զօրաց, և հասանիլ Սադաթ խանին ՚ի բանակ Հնդկաց. եռջ Սադաթ խանն և Դէվրան խանն ակամբ զպատերազմն, և զիարդ Նատիրն Հնարիւք յառաջ ածէ զզօր Հնդկայն ՚ի ձակատ մարտին, եռջ Սադաթ խանն կալանաւոր լինէր, և զիարդ Դէվրան խանն զվէրս վտանգաւորս ընդունէր ՚ի պատերազմի, և զիարդ վշտանայր Թագաւորն համայն զօրօքն զկնի պատերազմին, եռջ Նատիրն, Նիզամըլմուլքն հանդիպէին միմեանց, և զիարդ Արքայն Պարսից և Արքայն Հնդկաց հանդիպին միմեանց, Եւ Թէ որքան Հնդիկք կորեան ՚ի պատերազմի, եռջ Մահմետ շահն յանձնէր զինքն ՚ի ձեռս Նատիր շահին, Եւ զիարդ կնքեցան գանձք և հարստութիւնք Դիլի քաղաքին:

Եւ Նատիրն իբրև տասն մղոնաւ հեռի ՚ի բանակէ Հնդկայն, ՚ի յերկոտասաներորդն փետրվարի առաքեր զյառաջընթաց զօրս իւր (որք էին վեց հազար ընտիր հեծեալք ՚ի մարաց ազգէն) ընդ Հաջի խանին Եւ բոլոր զօրք իւր էին իբրև հարիւր և վաթսուն հազար, որոց երրորդ մասն էին ապաաւորք, կամ ծառայք Որոց ժողովեալ զբազմութիւն ուղտուց, ձիոց, և ջորւոց ՚ի ձանապարհի հեծանէին ՚ի վր նոցա, Եւ ոմանք ՚ի նոցանէ, սպառազինեալք էին, Այլ նոքա անդ ակամայք իբրև վեց հազար, և ունէին զկամբր վերարկուս ՚ի վերայ պարեգօտին, և երևէին իբրև այր, մինչ զի ոչ ոք կարէր ձանաչել զնս ՚ի հեռաստանէ, և բոլորն ՚ի միասին երևէին իբրև զօրս մեծամեծս և ահագնաահեղս:

՚Ի բրև տեսանէր Նատիրն Թէ Ջուր Թիլլաւրիու չէր բաւական ՚ի ողովացուցանել զզօրս իւր յառաջ գնայր և բանակէր իբրև երկումղոնաւ հեռի ՚ի բանակէ Հնդկայն, և ՚ի չորեքտասան երորդն փետրվարի չուէր անտի և բանակէր մերձ ՚ի բանակն Դէվրան խանի, և ՚ի նմին ժամու Սաադաթ խանն և հասանէր ՚ի բանակ Թագաւորին Հնդկաց, քսան հազար ընտիր զօրօք Արդ ծածուկ պատձառն անգիտելի է ՚ի մէջ, այլ գայս միայն գիտեմք, զի իբրև ետես Սաադաթ խանն զվիտս զօրաց իւրոց առ ՚ի չգոյէ կերակրոյ, այլև Թէ մերձ էին անկանիլ ՚ի ձեռս զարհուրելի Թշնամւոյ, զայրացեալ արտաքսեր ՚ի վրան Թագաւորին, և հանգոյն քաջնահատ զինուորի համարձակապէր ասէր զնա, Թէ ահա ոչև ուրեմն ժամանակ սպասելոյ հրաման տուր զի մարտիցուք ընդ Թշնամւոյն, եթէ այլք ամենք ՚ի զօրագլխացն ոչկամին գալ ընդ իս ես միայն զօրօքն իմովք ՚ի մարտ մտանեմ ընդ Թշնամւոյն, յաւել և ասել Թէ բարեգոյն է ինձ մեռանիլ սուսերին ՚ի ձեռսն իմում, քանզի անարգաբար անկանիլ ՚ի ձեռս Թշնամւոյն վասն քաղցու:

Եւ Թուէր Թէ ամենևին չէին կամք Նիզամըլմուլքին վձարել զիրան մարտիւ, Որոյ հակառակէր խորհրդոյն Սաադաթ խանին, և պատձառէր Թէ օրն այն ոչէ բարի վն մարտին, ըստ աւելորդ աշտաշտութեանց մահմետականաց, ասէր Թէ որովհետև ոչ գոյ հարկ ՚ի վր մեր, ընդէր ոչ սպասենք բարի ժամուն, զի՞ է զի այսքան շտապիմք, Արդ Թէպէտ և Սաադաթ խանն զգայր Թէ դաշնադիրէ այս խորամանկ Նախարար, այլայն մարմնքէր ՚ի սրտի իւրում նման զինուորի անձնելոյ և նուաձելոյ, ՚ի ձեռն խորամանկական խորհրդոց նորայ:

Եւ յայնժամ հասանէին վեց հազար քուրդքն ըղձիւաւասրաց, և անկանէին ՚ի վր գնդի միոյ Հնդկաց զօրայն

զօրայն եկողոպտէին զաղխս բանակի Դեւրան խանին, տեսանէր Սադաթխանն թէ՚ոչ գոյր այլ ժամանակ յամելոյ, վաղվաղակի հեծանէր ՚ի փիղն իւր եյառաջ մատչէր սաստիկ յարձակմամբ, եյետս վարէր զքուրդսն, եյայնժամ Դեւրան խանն շարժեալ ՚ի նախանձու փառաց առն միոյ (այսինքն Նիզամըլմուլքին) զոր քաջ գիտէր գոլ փափաքող անյաջողութեան եւ տարաբախտութեան իւրումն, յառաջ մատուցանէր զզօրս իւր ՚ի ճակատ մարտին առ՚ի թիկունս հասանիլ Սադաթխանին, եսաստկանայր պատերազմն յերկուց կողմանց յոյժ:

Եւ արդ լինէր Նատիրին թէպէտ անյագ անյաղթելին առ ընդ յառաջընթաց գնդին իւր, վաղվաղակի զայլ գունդ ՚ի յօգնութիւն նոցա առաքէր, եւ շարժեալ նա ՚ի նախանձ զինուց իւրոց յառաջնում նուագի պատերազմին, հանէր զերիս հազարս ՚ի յընտիր զօրաց իւրոց, եզերիս գունդս բաժանեալ առաքէր զնոսա, եհրաման տայր նոցայ դարանամուտ լինիլ, եզկնի առաքէր գունդ մի հինգ հարիւր արամբ ընդդէմ Դեւրան խանին, եմիւս գունդ նոյն թուով ընդդէմ Սադաթ խանին, առ՚ի յառաջ ածել զնոսա ՚ի դաշտ, եւ իբրեւ այսու հնարիւք բերէր զնոսա ՚ի դիւրագոյն տեղին հանդէպ իւրոց բանակին, եյանէր ինքն հազար ափշարով մղել զպատերազմն:

Եւ յաջողէր գործն ՚ի ձեռն նորայ, երեք հազար արքն որք սպասէին ՚ի դարանի, ըստ պատուիրելոյ Նատիրին, ելին յայնժամ ՚ի դարանէն եանկան ՚ի վերայ զօրաց Սադաթ խանին եՙի փախուստ դարձուցին զնոսա, եկալան զՍադաթ խանն կենդանւոյն, եւ Դեւրան խանն առաւել քան զքսան նախարարօք, եմեծամեծ զօրագլխօք, իւրաքանչիւր գլուխ եղեալ իւրում գնդին, զդէմ կալեալ բազում քաջութեամբ եջանիւք մեծաւ մարտնչէին մինչեւ սաստկանալ պատերազմին յոյժ, եընդունիլ Դեւրան խանին զվէրս վտանգաւորս ետարածանիլ ՚ի վերայ փղին, զոր ՚ի բաց հանէին ՚ի պատերազմէն, եւ համբաւ սուտ տարածիւր ընդ համօրէն բանակի հնդստանեայ, թէ մեռաւ Դեւրան խանն ՚ի պատերազմի եահ մեծ անկանէր ՚ի վերայ: ամենեցուն

Արդ գործ ինչ զարմանալի գործեցեալ է յայսմիկ պատերազմի զոր պատմաբանք մոռացեալ էին յիշատակել, քանզի յիշէին նոքա զփիղսն հնդկաց բանակին, բայց ոչ յիշէին թէ զինչ անցք անցուցին ընդ փիղսն ընդ այնոսիկ ՚ի պատերազմին, Արդ այսահագնատեսիլ անասունք զնային առաջի զօրաց հնդկաց վառեալ զինուք պատերազմի, եւ այսոքիկ անասունք գրեթէ միշտ սոսկալիք էին ՚ի պատերազմի, ՚ի յաւելեալ զի էին հասակօք յոյժ մեծ, եունէին բերդս ՚ի վերայ ուսոց իւրեանց ամ՛ մեքենայիւք պատերազմի, որպէս պատմաբանք եմանաւանդ պատկերահանք եբանաստեղծք ցուցանեն, եյիրաւի նաեւ լողայն զարհուրելի թուին, եւ Նատիրին քաջուք տեղեակ էր կերպի պատերազմին հնդկաց, վասն որոյ հրամայէր պատրաստել զբազմութիւն քէջեվայից եկապէր զնոսա ՚ի վերայ ուղտուց, եհրամայէր լնուլ զքէջեվայսն նաւթիւ եվզով, եվառեալ զնոսա վարէր ընդդէմ փղայն, եւ արդ դիւրին է իմանալ թէ որպիսի զարհուրանօք պարտէին հալիլ ՚ի բոցն այն փիղքն, Ըստ որում փոխանակ յետս վարելոյ ըզզօրս Պարսից, ՚ի միջամտել ուղտուցն առ նոսա, յետս խուսեալ, եշփոթմունս մեծամեծս պատճառէին զօրացն հնդկաց:

Եւ յայսմ պատերազմի եօթն հազար հնդիկ անկանէին, ընդ որս եբազումք մեծամեծք մեռանէին, եփախուցեալքն ՚ի պատերազմէն զերկիւղ մեծ ածէին ՚ի վերայ բանակաց իւրեանց, եւ բազումք զվրանս տեարց իւրեանց կողոպտէին, եորք ընդ աղխս բանակին էին դեռ ՚ի Դիլլի փախնուին, եՊրիկքն ցիրուցան սպանանէին զնոսա եյաւար առնուին զամ:

Արդ

Արդ կէս ՚ի զօրացն Հնդկաց հազիւ ՚ի ճակատ մտին յայսմիկ պատերազմի, և ՚ի գնդէն Նատրին միայն իբրև յիսուն հազարք, և իբրև երկու հազար և հինգ հարիւր այր ՚ի զօրաց Պարսից անկանէին, և ՚ի նոյն գիշերի թաղէին զնոսա՝ և վիրաւորքն էին իբրև հինգ հազարք:

Եւ անկանէր մեծ որդին Դեվրան խանին ՚ի պատերազմի, և վէրն զոր ընկալաւ Դեվրան խանն էր մահացուցիչ, և ՚ի հոսմանէ բազում արեան ՚ի նմանէ՝ ուշագնաց լինէր, և իբրև յինքն դառնայր բազմապատիկ լինէր վիշտ նորին՝ յորժամ տեսանէր զի վրանք և համայն ազխք բանակին իւրոյ կողոպտեալք էին. ուստի պարտաւորէին ծառայք նորա տանել զնա ՚ի վրանս թագաւորին իւրոյ Մահմէտ շահին, որում գոյժ տուեալ էին թէ մեռաւ Դեվրան խանն, և իբրև ետես թագաւ- զսիրելի նախարար իւր յայնպիսի դառնագոյն պատահմունս խոցեալ սիրտն ՚ի դառնութենէ վիրօք: Եւ յետ սակաւ ժամու մեռանէր Դեվրան խանն ՚ի վիրաց անտի, և թուէր թէ բարեգոյն համարէր զմեռանիլ քանթէ կենդանի մնալ և տեսանել զթշնամին իւր Նիզամըլմուլք հասեալ ՚ի կատարած ցանկութե իւրոյ, և փառաւորեալ ՚ի թագաւորէն, և խորհիլ զհնարս վրէժ խնդրութե առնելու-թեց իւրոյ:

Եւ մինչ այսպէս աղմկեալ կային բանակք Հնդկաց, յառաջխաղայր Նատիրն և ուղղէր զինքն դէպ ՚ի կողմն Նիզամըլմուլքին, Եւ Նիզամըլմուլքին առեալ զբազմութի նախարարացն Հնդկաց հանդերձ համայն զօրօքն յառաջ մատչէր նոքօք ՚ի հանդէպ մարտին, առ ՚ի ցուցանել, իբրու-թէ կամէր մարտնչիլ ընդ թշնամւոյն, և ոչ թողուլ զնա յառաջ մատչիլ, և գիշերն ՚ի վերայ ժամանէր և արգելոյր զպարսիկսն ՚ի մղելոյ զպատերազմն, Եւ բանակ Հնդկաց այնքան լինէր ցրուեալ զի ՚ի թագաւորէն մինչև ՚ի բանակ Նիզամըլմուլքին իբրև երկու մղոն միջոց գոյր և հազիւ ոք երևէր յայսմ միջոցի, Եւ ՚ի գիշերին յայնմիկ խորհուրդ մեծ լինէր, յորում խորհրդի, իբրև զցաւակից ոք խօսիլ սկսանէր Նիզամըլմուլքն, և ասէր, զի արդ ՚ի թշուառութի եած զինքեանս անյաջողութի աւուրս այսորիկ, և ընդ ժամս ձիգս խօսէր ՚ի վե դիպուածոյն պատերազմին, և ցուցանէր զվտանգն մեծ յորում կայր թագաւորն, Եւ զի ժամէ ՚ի ժամ գոյն մահուան սիրելաց և հաւատարիմ նախարարացն հասանէր յականջս թագաւորին, Եւ ասէր Նիզամըլմուլքն թէ ըստ կարծեաց իմոց բարւոքէ մեզ դաշնադրութի ինչ առնել ընդ Նատիր շահին որով հետև ոչ կարեմք առաւել և յուսալ ՚ի յաջողութի զինուց մերոց:

Արդ թէպէտ թագաւորն Հնդկաց ոչ էր այր պատերազմող, սակայն առաւել յօժար էր կրկին անգամ ճակատ յարդարել և փորձել զբախտ իւր երկրորդ պատերազմաւ, քանթէ դոյն ինչ հաւանութի տալ դաշանց, որք ՚ի հարկէ պարտէին լինիլ անհամար զանձ իւրք, և ՚ի միւս կողմանէ ՚ի ծանր նախատինս ածել զթագաւորութիւն իւր, Բայց սակայն հաւատարիմ ծառայք իւր, ոմանք մեռան ՚ի պատերազմի, և այլքն վիրաւորեալ անկան վտանգաւոր վիրօք և ոչ գոյր ոք արժանի ընդունակ առ ՚ի լինիլ Սպարապետ զօրաց իւրոց Եւ բազում երկբայութիս ունէր զնախարարացն որք առ նովաւ կային և խորհուրդ տային նմա, Արդ թէպէտև կասկած մեծ ունէր ՚ի Նիզամըլմուլքէն, սակայն ՚ի պատասխանի հարկեալ ՚ի բռնութենէ անսայր խրատու նր̃:

Եւ մահ Դեվրան խանին միանգամայն եբաց զայն որ խոչընդոտն լինէր փառամոլութե և բաղձանաց Նիզամըլմուլքին, և զհամայն ատելութիւն որք ընդդէմ նորա լինէին, Ուստի բացարձակ իշխանութի ընկալեալ ՚ի թագաւորէն ձեռնամուխ լինիլ ՚ի դաշինս ըստ Պարսից արքային Եւ յաւուրն երրորդի էլ Նիզամըլմուլքն, Ազիմալի խանիւն հանդերձ ՚ի բանակէ Հնդկաց, և հասին

գլր

վրանս իւրեանց 'ի մէջ երկուց բանակացն, և առաքեաց Նատիր Շահն զօրագլուխ միջնորդ յա-
ռաջնորդս առ'ի ածել զնոսա առաջի իւր:

Եւ Արքայն Պարսից բազում սիրով և խնամօք ընդունէր զնոսա, և նստուցանէր զնոսա առաջի իւր և խօսէր ընդ նոսա այսպէս; ահա ամիսք չորս անցին 'ի վերայ օրէ առաքելոյ իմ զդեսպան մի առ ձեր Մահմետ շահ առ'ի խնդրել 'ի նմանէ զվճարումն գանձուցն զոր հնդուստան պարտի հատուցանել Պարսկաստանայ, եզիտոյ արգել նա զնա իմ և ոչ առաք ինձ պատասխանի; մինչև պարտաւորեալ գիտ գալ ընդ այսքան երկար և աշխատալից ճանապարհ: Պատասխանի ետ նմա Նիզամիլմուլքն և ասէ. քաւեալ եղեւ 'ի բանից այդոցիկ, քանզի եսէի բերկրի իմում 'ի դաշտին, իսկ յորէ լինելոյ իմ 'ի խաղաղութեան ժամանակին, ոչ երբէք պակաս գտայ 'ի ջանից առ'ի վախճան բարի եզերելոյ գիրան և ասպատելոյ խաղաղութեան, բայց զգանձն զոր արքայդ պահանջես 'ի մնէ մերմէ եղոյժ ծանր, և արքայն հնդկաց ոչ ունի այնքանեաց կարողութիւն:

Եւ ժպտէր, Նատիրն ընդ բանս Նիզամիլմուլքին, և կոչուցանէր նմա զհամար գանձուցն հնդստանայ թագաւորին, և ասէր այսպէս, հաւ, (յայսինքն պապ) Ահմէտ Շահին և հօր եղբայր Ջիհանկիրին անգամ միտսան հազար զօրս յօգնութիւն խնդրեալ էր 'ի պարսկաց տանէս, և պարսկաստան առաքեալ էր նմա տասնհազար զօրս ըստ խնդրոյ նորին, և ծախսեալ էր զհամայն ծախսն ճանապարհին մինչ և հատուցանել զնոսա 'ի հնդստան; այսու դաշամբ զի, պարտքն վճարեսցին; բայց ոչ երբէք վճարեցին նոքա զպարտսն, և ըստ ուխտ դաշինք միաբանութեան հաստատեալք 'ի մէջ երկուց թագաւորութեանցս յաւիտենին, պարտին երկոքին թագաւորութիւնք այսօրինակ համահաւասար ունել միմեանց:

Եւ պարսկաստան կայր բազում ժամանակս 'ի մէջ պատերազմաց և խռովութեանց, և նովին չափով զօրութիւն 'ի հնդստանայ խնդրեալ էր; բայց պատասխանի ոչ էր ընկալեալ; և ես ինքնին պարտապան եղէ մեծամեծ գանձուց, որք փոխ տուան ինձ զորս պարտիմ վաշխիւք վճարել, և զայս արարի առ'ի ազատել զերկրն Պարսից 'ի ձեռաց տաճկացն (այսինքն օսմանցւոցն) զորս նոքա յափշտակեալ էին 'ի Պարսից տէրութենէն, և զանց առնելով ձեզ զդաշամբքն, պատճառ եղէք մեծամեծ աւերութեանց և վնասուց որք հասին 'ի վերայ Պարսկաստանի:

Արդ ունէ հարկ այժմ զՉիսան զայն վճարել, և 'ի միտ եղեալ էր իմ զթագաւորն ձեր հանդերձ համայն զօրօքն իւրովք 'ի բայր սուսերի արկանել, այլ խնայեցի 'ի ձեզ, և զթամ 'ի վերայ ձեր գնայէք դուք փաղփաղկի և բերէք ինձ զարքայն ձեր, և մեք բարձցուք զխռովութիւն 'ի միջոյ բարեկարգութեամբ:

Յաւուր իրեղէն յուլթն և տասներորդ աւուրն փետրվարի հանդիպիլ միմեանց երկոցունց թագաւորացս, և արդ Մահմետ Շահ արքայն հնդկաց 'նստէր 'ի վերայ արքայական գահոյից և ելանէր 'ի բանակէ իւրմէ, Ազիմալի խանն, Ղազիոդին խանն, և բազումք 'ի ներքինեացն հանդերձ երկու հարիւր հեծելօք գնացին ընդ նմա; և Թահմազ խան սպարապետն Պարսից արքային ընդ առաջ ելանէր հնդկաց Արքային 'ի կէս ճանապարհին, և յերկիր խոնարհեալ ողջունէր նմա ըստ արժանւոյ աստիճանի նորա, և ապա հրամայէր ներքինեացն և հեծելոցն որք ընդ նմա եկեալ էին, զի կայ առնուլ, և ինքն թագաւորն գնայր ընդ զօրս Պարսից, և 'ի մտանել նորայ 'ի բանակ Նատիր Շահին, ընդ առաջ ելանէր նմա Նէսրալի միրզայն հրամանաւ հօր իւրոյ առ'ի մուծանել զթագաւորն հնդկաց 'ի վրանն Արքունի, և և Նատիր Շահն արտաքս 'ի վրանէն

առ

առ'ի ընդունիլ զնա 'ի ներքս, եւ տարեալ Նատուշանէր զնա ընդ առաջնորդին իւր, եւ կնի համարակ եւ տոմարական պատուոյն եւ հարցփորձին, սկսաւ ասել զնա այսպէս, զիարդ կարելի էր քեզ 'ի բաց թողուլ զամ հոգս տէրութե քոյ, եւ պարտաւորել զիս առ քեզ գալ, ի եսզանս երկուս առաջէսցի առ քեզ, զմինն 'ի նոցանէ (հակառակ ընդ հանուր աշխարհի կանոնացն եւ հակառակ բարեկամութեան որ հաստատեալ կայր 'ի միջի մերում) զպանին 'ի փիշհով, եւ պաշտօնեայ քոյ ոչ կամեցան առաքել ինձ պատասխանի, յորժամ մինչեւ յաշխար քոյ ոչ զօրք առաքեցեր 'ի հարցանելցիս ովէմես, եզինչ էին կամք իմ, մինչեւ հասի 'ի Հալահու' եւ առաքեցի քեզ զպատգամ ողջունի եւ խաղաղութեան, եւ ոչ ընկալայ զպատասխանի, եւ յորժամ զօրագլուխ զօրաց քոց զարթեան 'ի թմրութենէ անտի իւրեանց, փոխանակ ջանալոյ վասն խաղաղութեան, եւ վերանորոգելոյ զհաշտութիւն բարեկամութեան, 'ի մի ժողովեցան խաղնիխուռն եւ անկարգ ամբոխիւք, եւ զումարմամբ զօրաց, առ'ի խափանել զգալուստն իմ, եւ յետ այնորիկ փակեցիք զձեզ 'ի պատնէշս ձեր առանց մտածելոյ զի եթէ թշնամին ձեր հզօրագոյն էր քան զձեզ, զիարդ էր կարելի ձեզ դիմանալ պաշտպանման եւ ոչ սատակիլ 'ի քաղցու, եւ 'ի ծարաւոյ, իսկ եթէ տկարագոյն էր քան զձեզ ուրեմն ամօթ մեծ էր, եւ բնաւ իմն անպաշտաձ ձեռնամուխ լինիլ այնքան մեծամեծ պատրաստութեանց, եւ վս անզգոյշ լինելոյ ձեր զբովանդակն ընդ սրով հարուածով արկիք, թէ պէտ տեսանեմ զձեզ եղեալս իբրեւ որսս զօրաց իմոց, բայց տակաւին յօժարիմ 'ի դաշինս մտանել ընդ ձեզ, Այլ դու այնքան խրատ չար ընկալեալ էիր եւ փքացեալ անմար կարծեօք, մինչեւ ղանց առնել զդաշամբ բարեկամութե իմոյ, եւ 'ի բաց մերժել զիսկապէս օգուտն քոյ, Տես թէ զիարդ 'ի թշուառութիւն մատնեցար այժմ 'ի ձեռն յաղթող զօրացն Պարսից, Ընդէր արդեօք այսքան տգէտ գտար կառավարութեանց, եւ կարծեմ թէ յաղագս յօժար լինելոյ քո տալ զհարկս անհաւատիցն այնոցիկ, (այսինքն Մարաթայից,) որոց պարտ էր տալ քեզ զնոյնս, եւ վասն թոյլ տալոյ քոյ արշաւել նոցա յերկիր քոյ, այս ամ չարիք եկեալ հասին 'ի վերայ քոյ:

Արդ որովհետեւ Տահմ թամուրին ոչ երբէք գլխաւոր ինչ հասուցանելէն Պարսից թագաւորութեան, ոչ բարձից զթագաւորութիւն 'ի քէն, այլ ես միայն աղաւել կամիմ զիս 'ի ծախուցն պատերազմիս, եւ զկնի աներկեան առնելոյ եւ զօրացուցանելոյ զզօրս իմ 'ի Դիլլի եւ առնլոյ զընծայսն որք պարտին ընծայիլ, տաց զտէրութիւն, համայն 'ի ձեռս քոյ:

Արդ Մահմէտ Շահն բազում խոնարհութեամբ եւ դառնութեամբ սրտի ունկն մատուցանէր բանից նորա եւ 'ի լսելն զհաստատութիւն կենաց իւրոց, եւ զշնորհումն թագաւորութեան թէպէտ մխիթարեցաւ այլ սակայն այսպիսի անկիրթ եւ անգութ լեզու առոյինչ օգտէր եթէ ոչ վիրաւորել զսիրտ թագաւորի միոյ, որ թէպէտ եւ տկար, այլ կարի զգայօղ

Եւ կարելի է թէ՝ տարիմն թուեսցի լսողացն, թէ զիարդ թոյլ ետ Նատիրն գերեալ թագաւորին կրկին դառնալ 'ի բանակ իւր, Սակայն չէ ինչ զարմանք, եթէ մտածեսցուք զխորագիտութիւն Նատիրին, քանզի զերկիւղ ինչ ոչ կրէր նա 'ի վերայ նորա եւ որովհետեւ միտք իւր էր միայն կեղեքել զնա եւ յափշտակել զգանձս նորա, բարեգոյն էր նմա յամի սիրով եւ գթութեամբ վարիլ ընդ հնդիկս, մինչեւ ցհասանիլ 'ի Դիլլի, զի գուցէ առերկիւղի, եւ կամ 'ի նախանձու թագուցանիցեն եւ կամ կորուսեալ անհետ առնիցեն զգանձս իւրեանց,

Եւ Մահմէտ Շահն յետ դառնալոյ 'ի բանակ իւր, իբրեւ հանգուցեալ ոք 'ի յաշխատանաց եղի ոչ գիտէր թէ՝ զիարդ ծանրագոյն էր ապագայ դժուարութիւն յոր անկանելոց էր առյապայն 'ի յան-

յաղ

յաղ ագահութէն յաղթողին, Եւ 'ի հասանիլ նոր 'ի բանակ իւր, հրամայեր թաղել զմարմինս կոտորելոցն 'ի պատերազմի որ ափռեալ էին յերեսս դաշտին իբրև երկոտասան մղոնաչափ ընդ երկայն եւ վիրաւորքն ոչ կարէին շարժիլ 'ի տեղեաց իւրեանց, ևանդէն մեռանէին 'ի վշտացն անօթի զի ոչ ոք կայր անդ զի օգնութիւն ինչ առնիցէր նոցա, Եւ յայնժամ առնէին զբոլոր գանձս բանակին առ Նատիրն

Ոմանք 'ի նախարարացն Հնդաստանայ որք ջանային շնորհուկս ինչ առնել յաղթողին, ասէին ցնա, Ահա զօրք Հնդկաց բանակին ունէին զբազում հազարս ձիոյ, և զբազում հազարս ուղտուց, և որովհետև գթացեալ քո 'ի վերայ նոցա, շնորհեցեր զկեանս նոցին, ոչ ինչ դժուար թուեսցի նոցա տալ զձիսն եզուղտսն զայնոսիկ զօրագլխացն եզինուորացն Աւ զայիդ, որոց պատասխանի տայր Նատիրն թէ՝ Հայց զինուորաց մանաւանդ կախեալ կանչերի վերայ իւրեանց էթէ յայսպիսի ժամանակի առցէ ոք 'ի նոցանէ զերիվարս նոցին, ոչ միայն ինքեանք, նաև համայն ընտանիք նոցա 'ի մուրողութիւն անկանէին, և որովհետև շնորհեցի եւ զկեանս նոցա, կնայեն նոքա յանհնարին խաղաղութիւն:

Եւ վշտանայր բանակ Հնդկաց 'ի վշտաց մեծամեծս, յորս զօրաւորով լինելոյ նոցին 'ի դաշտս փառնալու, Արդ ազդ առնէին Թագաւորին Հնդկաց թէ նպարավաճառքն անխրատաբար յաւելին զգինս հացին, Ուստի հրամայեր Մահմետ Շահն քակել զշտեմարանս նոցա, բայց այնու ևս օգուտ ինչ ոչ գտանէին այլ' և ս քանզի և սղութիւն լինէր, քանզի սակաւ ինչ պաշարն, որ կայր 'ի քաղաքին, զայն ևս կորուսանէին, մինչ զի 150 դրամ ցորեանն վաճառէին Եւ պատճառ սղութեան էր այս, զի քաջամարտիկ ասպատակաւորքն Պարսից իբրև զօդապարիկս յարձակեալ հասանէին մինչև ցքառասուն մղոն շուրջ զբանակաւն և կոտորէին իբրև զչորեքտասան հազարս 'ի Հնդիկ աւարառուացն, եւ զուն գ մի 'ի նոցանէ մինչև 'ի թռանասէր հասանէր, և կոտորէին զբազմութիւն 'ի Հնդկաց անտի, և աւար հարկանէին զքաղաքն, և յետոյ դառնային 'ի բանակ իւրեանց աւարաւ մեծաւ:

Եւ յաւուրն երկրորդի զկնի թաղելոյ զդիակունս Հնդկաց առաքէ Նատիրն զզօրագլուխ մի գնդաւ միով տիրել աղխիցն բանակին, և հրամայեր քարոզ կարդալ, զի իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր դարձցի առանց երկիւղի վնասուց, և մի ոք արդելցէ զնա, Այլև առաքէր զթօփչի պաշին, և զնաատաղ չի պաշին, զիւրաքանչիւր 500 հեծելովք, տիրել համայն մեքենայիցն պատերազմի, որք արքունեացն պատկանէին, և 'ի կալանս պահել զհամայն մեծամեծսն Արքունական պալատին, այլև հրամայեր զի Մահմետ Շահն որդւովն իւրով Սուլթան Ահմետ խանիւ, և տիկնաւն իւրով մալէքըլ զամանիւն, դարձցի 'ի բանակ Պարսից, եւ իսկոյն վրան մի Արքունի կանգնէին անդ վասն նոցա, հանդէպ վրանին Նատիր Շահին, և հազար արք 'ի Պարսից անտի պահապան կարգէին 'ի վերայ նոցա:

Եւ յայնժամ առաքէ Նատիրն զպալատապետն իւր Թահմազ խան 'ի Դիլլի չորս հազար հեծելազօրօք տիրել բերդին, եւ զՍադաթ խանն վերակացու կարգէր 'ի վերայ քաղաքին, և 'ի վերայ տանց և ընչից բնակչացն, և պատուէր տայր նմա վնաս ինչ ոչ առնել ժողովրդեանն, եւ 'ի հասանիլ Սադաթ խանին 'ի քաղաքն, հաշակէր անդ զհրամանս Շահին, նաև ասէր թէ՝ մի ոք 'ի քաղաքականացն իշխեսցէ վնաս ինչ առնել Պարսից եւ զգլխաւորն բերդին որ արդէն լուեալ էր զանցսն որ 'ի դաշտն փառնալու, ոչ երկմտէր հնազանդութիւն մատուցանել հրամանի Թահմազ խանին

խանին, և ընդունէր զնա կզզօրս նր ՚ի բերդն և զպալատն արքունի պատրաստէին ՚ի սեղի բնակութե Պարսից թագաւորին, և կնքէին զհարայն ստացուածս որք էին ՚ի բերդին և գրէին ՚ի վր թղթի, և բազում նախարարք կնքէին զթուղթն:

Եւ տիրէր Նատիր Շահն ոսկւոյ և արծաթոյ ականց պատուականաց և համայն ընչիցն բանակին Հնդկաց ՚ի վաճառել: և բաշխէր, ռոճիկս զինուորաց իւրոց վս երից ամսոց, և յետ այնորիկ երկու հարիւր թնդանօթս ընտրէր սայլիւք ՚ի բոլոր թնդանօթիցն Հնդկաց, և առաքէր զայնս համդերձ այլ բազում աղխիւք և ստացուածովք ՚ի ձեռն հզօր գնդի միոյ ՚ի Քապուլ

Որպ չուէին բանակք Պարսից և Հնդկաց ՚ի Քառնալու, և գնային ՚ի Դիլլի, և որպ Նատիր Շահն մտանէր ՚ի Դիլլի, և զիարդ Սաղաթ խանն սպանանէ զինքն, և զիարդ լինէր սրածութին, ՚ի Դիլլի, և վարք Նատիրին զկնի սրածութեն:

Եւ յետ կատարելոյ զայս ամ, չուէր Նատիր Շահն անտի և գնայր դէպ ՚ի Դիլլի, և չորս հազար ղուրուղչիք առաջի նորա գնային, շուրջ զհարամովն, և քսան հազար ընտիր հեծելազօրք պահպանէին զհարամն, սակաւ ինչ հեռի ՚ի թագաւորէն, և զկնի նոցա գնայր Մահմետ Շահն երկու մղոնաչափ հեռի, և յիսուն արք միայն ՚ի նախարարացն և ՚ի պաշտօնէիցն նր ընդ նմա գնային, շրջապատեալ երկոտասան հազար Պարսից զօրօք, և դրագլուխք Հնդկաց իւրաքանչիւր ոք գլուխ եղեալ իւրում գնդի գնային իբրև միով մղոնաւ հեռի ՚ի միմեանց և բազմութի Պարսից զօրաց ընդ նոսա խառնեալ գնային կարգաւ, և հուսկ յետոյ Նատիր Շահն գնայր բազմախուռն նբուռն զօրօք, և համայն զօրքն երկոցունց թագաւորացս էին իբրև երեք հարիւր յիսուն հազարք որք կալեալ էին իբրև երկոտասան մղոնաչափ երկիր ընդ երկայն, և զերիս մղոնս ընդ լայն:

Եւ այսպէս մեծամ և հանդարտ ընթացիւք աւուրս հինգ ճանապարհորդէին, և հասանէին ՚ի Պանիփութ, և տեղիս այս, նաև տեղին այն որ փանիփութ կոչիւր, համդերձ և այլ բազում գիւղօրէիւք, կողոպտեալ լինէին ՚ի Պարսից ՚ի գնալն իւրեանց ընդ նոսա, և չուեալ ՚ի Սոնփութ գնային ՚ի Նիրէլայ, և ՚ի միւսում աւուր երեկոյին հասանէին յայգեստանս Շալիմարու, և Նատիր Շահն ոչ կամեցաւ գիշերայն մտանել ՚ի Դիլլի, ոչ միայն վս զգուշութե անձին իւրոյ, այլև վս յաղթանկութե փառաց իւրոց, և հրամայէր Մահմետ Շահին բազմիլ ՚ի վր փոքրիկ գահոյի, և զդրօշակսն բանալ առաջի նորա, և երկու հարիւր ծառայիւք պալատին իւրոյ յառաջագոյն գնալ ՚ի քաղաքն, և չորս հազար հեծեալք ՚ի Պարսից անտի ընդ նոսա գնային, և առնէին զթագաւորն Հնդկաց մինչև յապարանս իւր:

Եւ բանակէր Նատիրն զօրօքն իւրովք արտաքոյ դրանն քաղաքին, և ՚ի միւսում աւուր ընդ առաւօտն մեծաւ զգուշութբ ՚ի քաղաքն մտանէր, և սաստիկ շրջադիտութբ գնայր ՚ի բերդն

քան

քան հազարօք, Եւ Մահմետ Շահն որդէն հրամայեալ էր զի 'ի մտանել տիրապետին ոզլին 'ի քա-
ղաքն բոլոր զօրանք տանց ևխաննութեան փակեսցին, և ըստ սովորութեան պատուոյ սու-
թագաւորին արևելեանն, մինչ երևեսցի 'ի փողոցս քաղաքին, և հրաման այսպիսապէս կատարեցին
այնպէս զի ոչ ոք 'ի յանդիմանս բնակչաց անտի եղև նշմարող յայտնութեան և հանդիսին մտիցն
'ի քաղաքն, և լռութեամբ խաղաղ լինէր 'ի մէջ քաղաքին, մինչև նախապատշաճել զզարհուրելի
թշուառութեան ինչ ողորմելի ժողովրդեանն:

Եւ յետ տիրելոյ նորա բերդին ընդ առաւօտ, էլանէր նմա Մահմետ Շահն և մեծածանէր զնա 'ի պալա-
տն Արքունի, և նշաւակին պատիւ մեծ ցուցանէր Հնդկաց Արքային, և բաժանէր զզօրս իւր
յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, և բարեկամս զզուշանայր զի մի ոք լինիցի հնազանդութեան
նուիրեսցէ հրամանի իւրում, մինչև գիրգաշանցն համառօտեսցի ձեռամբն Նիզամուլմուլքին,
և 'ի նմին ժամու կոչէր զնաւապետս և սասանիւ հրամայէր նմա՝ զի եթէ՝ յանդգնեսցի ոք փո-
տփինչ համայնել երկրականացն չարաչար գանիւ պատժեսցի, զականջս և զքիթս նոցին
հատցեն, բառնալով կեանս նոցին:

Եւ թէպէտ Պարսիկն քաղաքավար երևէին բանիւք այլ՝ զգեստիւք և բարուք կարի զարդարելի
ևսպա, 'ի համեմատին փափկութեան Հնդկաց, և բազում թաթարք կամ օգբէկք կային 'ի զօրս
նադրին, որոց զազիր դէմք երեսացն այնքան սոսկալի երևէին նոցա, մինչ զի բազէնց իբրև
փախչէին Հնդիկքն նոցանէ, որքան և կարէին:

Եւ Մաղաթ խանն էր այր զայրացօղ, էռանդոտն, և անհաստատ բնութեամբ, առաւատիկ ջանիւ
աշխատէր արդ՝ զսիրտ նոր թագաւորին իւրոյ յինքն յանկուցանել, ոպէրբէտն 'ի պատերազմին
Քամանալու ջանայր նուիրել զանձն իւր վասն սիրոյ ճշմարիտ թագաւորին իւրոյ ևտն: Եւ կնայր
սա արտաքոյ քաղաքին 'ի յայգեստանս շալիմարու հանդիպիլ նատիր Շահին, և ընդ նմա
մտանէր 'ի Դիլլի, և կնայր մինչև 'ի պալատան արքային,

Եւ վստահացեալ էր 'ի սիրտ իւրում թէ 'ի նատիրն խորհրդակից իւր առնելոց էր զինքն, և ասէ
թէ՝ 'ի միտի եղեալ էր նորբազում օգտակար շատիւք ցուցանել նատիրին, իսկ նատիրն որոյ
նրբութեան մտացն երաքանչելի, ոչ երբէք կարօտ էր խորհրդոյ այլոց, և կարի խստութեան խո-
րեցաւ ընդ Մաղաթ խանին, և ասէր ցնա, ընդէր տակաւին ոչ էս սկսեալ ժողովել շտուրան
արքանի:

Եւ խոցեցաւ սիրտ Մաղաթ խանին 'ի բանէ անտի, և առաջորդիւր հրով նախանձու, և համառօտապէս
կարծէր 'ի միտս իւր թէ՝ նիզամուլմուլքն երազատձու նախատանաց, և 'ի խորհուրդ անձկու ե
սաղանէր ևմանէր 'ի տուն իւր, և ըղեղ մահացուցիչ արբեալ վախճան բոթալից տայր կենաց
իւրոյ:

Եւ բազմիցս տարակուսի վախճանի Հանդիսիցն մարդիկ՝ որք հետոյն 'ի շաւիղ փառաց, և 'ի բարեծ
գործութեանց և շփոթեալ տոմկին 'ի միտս իւրեանց անօրէն յիմարութեան, իսկ յորժամ անյաջողութեան
համանէ 'ի վերնոցա ևանկանին 'ի վիշտս խառագոյնս, սկզբունք մտածմանցն (որով պատրին
նոքա 'ի բաց մերժել զօգուտ երկրին իւրեանց, առ 'ի լինել զզաղտնի նախանձարտից իւրեանց)
դժուարաւ կարեն գտանել նոցա:

Արդ որքան անցք ևանցին 'ի դաշտան քաղաքն, և որքան աւերումն որ եղև 'ի վարանութեան
և 'ի խոժվու

և ՚ի խոլոր, էին միայն ականատեսք վշտաց անեղութեան զորս հանդերձեալ էր տեսանել ՚ի վերայ դժբախտ ժողովրդեանն Գիլլիու, և արդ ՚ի միւսում աւուրն զկնի հասանելոյ Նատիրին ՚ի քաղաքն որ տասն երորդ օրն էր մարտի, երկրորդ պարեամ Հնդկաց, և նմետ զ Պարսից ազգին, առաքէր Թահմազ խանն զբազմութի նաւաղչաց ՚ի համբարանոցն քաղաքին, և հրաման տայր նոցա բանալ զշտեմարանսն պաշարեաց, և զգին դնել նոցա, և այս կարի անախորժ թուէր նախարակաւորչաց, ուստի ամենեքեան ՚ի մի ժողովէին, և բազմութիք արկեալ արանց միաբանէին ընդ նոսա, և Սեիտ Նիազ խանն ընդ այլ երևելի արանց գլուխ լինէր նոցա, և ապաստանէին զ-Պարսիկսն:

Եւ յետ այսպիսի անկարգ գործոց համբաւ ինչ տարածանէին ընդ քաղաքն թէ՝ Նատիր Շահն սպանաւ, և այնու ամբոխն և ևս զեւ աստականայր, և ամենեքին պարապորդք և յուսահատք միաբանէին ընդ նմ, և այսպէս զօրաժողովլեալ դէպ ՚ի բերդն դիմէին, և զմասն ինչ ՚ի հեծելոյն Պարսից որք պահէին զանցս ճանապարհացն վարէնին ՚ի տեղեաց իւրեանց, կորուսեալ զանձինս ոմանս, և ՚ի նմին ժամու զբազումս ՚ի Պարսից (զորս Սեիտ Նիազ խանն ընկալեալ էր ՚ի թագաւորէն առ ՚ի պահպանել զտուն իւր) պատրանօք մուծանէին ՚ի խաննակ մի, և կենդանւոյն այրէին զնոսա, և զինուորքն որք կայացեալ էին ՚ի վր տանն Դեվրան խանին, և ՚ի վերայ այլ տանց և քարվանսերայից, պարտաւորեցան խոտորիլ անտի և գնալ ՚ի տեղիս իւրեանց, և զգէն առեալ մինչև ցաւուօ սպանանէին, և զ թնդանօթն և զ զամպառակն որք կային ՚ի վր պարսպացն բերդին դէպ ՚ի յամբոխն արձակէին Պարսիկքն, և տակաւին ոչ կարացին դադարեցուցանել զամբոխն զայն:

Եւ ընդ այգ ընդ առաւօտն և Նատիր Շահն ընտիր և քաջամարտիկ զօրօք արտաքս ՚ի պալատէն, այնու դիտաւորութե զի՝ խաղաղացուսցէ զամբոխն, Արդ ոչ գիտեմք թէ՝ լուր սպանմանն զօրականաց իւրոց բորբոքեաց զսիրտ նր ՚ի խորհուրդ յուսահատութե մտանել, և հրամայել սատակել զհամայն ժողովուրդն Գիլլիու, թէ՝ այլ ինչ պատճառ առնէր զայն, ոչէ մեզ պարզապէս յայտնի, իսկ եթէ մտածեսցուք զբնական և զանողորմ բարսն և զանյագ ագահութի նորին, պարտիմք հաւատալ, զի նա միանգամայն զբոլոր քաղաքն տարաժամ եարկ ՚ի սրածութի և ՚ի յաւար, և հրաման նր ՚ի քթթել ական կատար իւրն այնքան սատակութե, մինչ զի եթէ զքաղաք միյարձակմամբ առնուցուն ոչ այնքան սարսափելի լինի տեսիլ նորին, և սփռեցան զօրք Պարսից ընդ քաղաքն, և սկսան խորտակել ըզդրունս տանց և պալատից, և կոտորել զժողովուրդն անսանց սրտմտութե, ոչ ՚ի հասակս և ոչ ՚ի սեռս խնայէին, Արդ արիւնահեղ և սարսուելի տեսիլս, մինչև ցվէց մղոն տարածիւր ՚ի մէջ քաղաքին

Եւ բազումք որք փախուցեալք էին ՚ի շրջակայ գաւառսն, և զ քաղաքն ապաստան արարեալ ինքեանց, ստանօր ՚ի մի ժողովէին ՚ի պահպանել զանձինս իւրեանց, և էին ճէվահիրչիք Սառաֆք, և այլ հարուստ կրպակաւորք և բժիշկն արքունի գլուխ լինէր նոցա, և ժամանակ ինչ արիաբար մարտն չէին, բայց որովհետև պատերազմն ոչ էր բնական գործ նոցա, ոչ այլ ինչ կարէին առնել, բայց միայն բաւականանալ ընդ ՚ի ձեռին մեռանել:

Եւ Լութֆալի խանն կարգեալ էր ՚ի վր գործոյս սպանութե և արիւնահեղութե որ լինէր ՚ի մէկողմ քաղաքին, և ընթանայր արտաքս Սարպօլանդ խանն ՚ի պալատէ իւրմէ, և երթեալ յերկիր անկանէր ՚ի վր երեսաց իւրոց առաջի Լութֆալի խանին, և ասէր ցնա թէ՝ ժողովուրդն

այնոքիկ

այնոքիկ որ բնակին 'ի յայնդ կողմն քաղաքին, ըստ ամի անմեղք էին։ Եւ Սարբօլանդ խանն էր մի 'ի նախարարացն Մուսաւմնայ, և էր այր արժանապատիւ, և մեծարեալ յաչս ամենեցուն Ռուստի Լութֆալի խանն պատկառեալ 'ի յազնիւ դիմաց նորին, որգէլոր զգործն պանութե Եւ խնդրէր Սարբօլանդ խանն զի անմեղք ժողովուրդք ազրեսցին 'ի յաստակմանէ, եւ խոստանայր գանձս մեծամեծս տալ թագաւորին վասն փրկանաց նոցա, Ես գաղարեցաւ գործն անողորմութե:

Եւ արդ Նիզամըլ մուլքն 'ի տեսանել զտեղի այսպիսի դառնագոյն գործոյ խայթեալ լինէր 'ի խղճէ, յիշելով զհեղանչելութի իւր, և զգայր 'ի սրտի, զի կերպիւ իմն ինքն էր պատճառ այսպիսի անողորմ վախճանին, 'ի Սարոյ երթեալ անկանէր առ ոտս Նատիրին, և զողորմութի հայցէր 'ի մանէ յաղագս ողորմելի մնացորդացն ժողովրդեան այնպիսի մեծահռչակ երամաժողով քաղաքի, Եւ Նատիրն (զկնի սաստիկ բարկութե զբանս նախատանաց խօսելոյ առ նա հրաման տայր յետ կոչել սատակիչան ժողովրդեան:

Եւ կոտորածն սկսանէր 'ի յուռթն ժամէ առաւօտուն մինչև ցերեք ժամն զկնի կէսաւուրն, այսինքն, յերկուց ժամուց առաւօտուն մինչև ցինն ժամն, Եւ արք իբրև չորս հարիւր 'ի Պարսից ազգէն մեռանէին, իսկ 'ի ժողովրդենէ քաղաքին ոչ նուազ քան հարիւր և տասն հազար անձնք կորնչէին, Եւ խանութք համայն ճէվահիրչեացն, և ոսկերչացն կողոպտէլ և հրձիգ լինէին Եւ զտունս հասարակաց անխնայ կողոպտէին, և այրէին հանդերձ բազում մեծամեծ ապրանքօքն պալատիւք, Եւ 'ի միւսում աւուր ընդ առաւօտն հրաման լինէր ժողովրդեան քաղաքին թաղել զմեռեալս իւրեանց, և եթէ ոչ վաղվաղակի կատարեսցեն զհրամանն մեծամեծ տուգանաց պարտապան լիցին, Արդ ապերջանիկ և թշուառ ժողովուրդ ոչ ունէին այնչափ ժամանակ զի զոնէ զանազանէլ կարասցեն զՄահմետականսն 'ի կռապաշտից, Եւ թէպէտ կռապաշտքն պիղծք համարին 'ի մէջ մուսուլմանից, և մանաւանդ զկնի մահուան, բայց այժմ թաղեալ լինէին ընդ մուսուլմանս, և մուսուլմանքն այրեալ լինէին ընդ կռապաշտան:

Եւ որք փախեալք մնային 'ի տունս իւրեանց, անդէն մեռանէին, և անդ մնային, զի ոչոք բերէր զնա արտաքս 'ի թաղել, մինչև զկնի գնալոյ Նատիրին անտի, Ո՛հ թէ որքան զարհուրելի էր տեսիլն, զի 'ի մտածելն զիրսն իբրև հարուած իմն լինի մարդկային սրտի, Եւ բազումք որք նախանձայոյզք էին կանանց և փառաց իւրեանց, կոտորէին նախ զկանայս իւրեանց և զաւականձինս, Եւ բազումք հրձիգ արարին զտունս իւրեանց և զինքեանս ևս այրեցան 'ի նոսին, և մանաւանդ կանայք և մանկունք, Եւ ոսկերն ոչ խնայեցաւ մինչև 'ի մանկունս 'ի ստինս մարց իւրեանց Արդ երկիւղն և յուսահատութի յայնպիսի վիշտս էարկ զժողովուրդն, մինչ զի կանայք իբրև տասն հազար 'ի ջրհորս անկանէին, և զմանս 'ի նոցանէ զկնի սրածութենն կենդանի հանէին 'ի ջրհորացն անտի, Եւ ասեն թէ այր մի այրեալ էր զքսան կին 'ի կանանեաց իւրոց, և ապա ինքն զինքն սպանեալ:

Ցորժամ սկսաւ սրածութիւն 'ի քաղաքին, արիկայքն (այսինքն խուարտայքն) որք յայտնի պատճառ էին սրածութեն այնորիկ փախեան ամենեքեան, և թողին զանմեղսն 'ի չարչարանս և 'ի մահ, Եւ պարագլուխն այսորդ առնամբոխի այնքան յիմար էր զի կարծէր թէ՝ այնպիսի ամբոխ կարէր առնել զայնպիսի ինչ զոր արքունի զօրք Մոդկաց ոչ կարացին, Արդ զբազումս 'ի նոցանէ կալեալ ածէին առաջի Նատիրին, 'ի մէջ որոց էր և լէնիդ Ցիադխանն, և Հինգին Նիզամըլմուլքին

հան

հանդերձ, բազում Աղերսանօք խնդրէին 'ի Նատիր Շահէն շնորհել նմա զկեանս, քանզի սէիտ էր նա, բայց նա ոչ անսայր Աղերսանաց նոցա, այլ հրամայէր պատառել զորովայն նորին․ և այնպիսի նախատանօք մեռանէր Սէիտ Նիազ խանն:

Եւ իբրև բերին զկալանաւոր որիկայն առաջի Նատիրին որք էին բազում հազարք, նըստ մեծի մասին կանայք էին, զբազումս 'ի նոցանէ (հակառակ կարգաց եկանմնայն կրթութեց զոր հաստատեալ էր Նատիրն, նաև հակառակ մարդկային մաքուր շաւղայն) կարի խայտառակ կերպիւ պախարակել հրամայէր, և ապա յուղարկէր զիւրաքանչիւրն 'ի տունս իւրեանց և անդ մնային սաստիկ վշտագնելով:

Արդ թէև համարոյ մնասուն որ պատահեցաւ մեանց, ստացուածոց եգանձուցն այսպիսի հարուստ քաղաքին էր յոյժ մեծ, բայց 'ի բազում մեծագին եպառուականն իրաց և ստացուածոյն որք կորուսեալ աներևոյթ եղեն 'ի մէջ աղմկաց և շփոթմանց, Եւ ստանաք զանձս բազումս ընուին 'ի գանձարանն Նատիրին: Եւ առաւ զօրայն էր անթիւ անհամար, եյոյժ մեծագին:

Յառաջ քան զսրածութին Դիլլիու, առաքէր Նատիրն զգունդ մի 'ի զօրաց իւրոց, բերել թնդանօթ մի մեծ կայր 'ի պալատի միոյ ուրումն հնդիկ իշխանի, և հնդիկքն զզօրս Պարսիցն պատրանօք 'ի ներքս տանէին և կոտորէին, և կոտորօղքն էին հնատսանայ օգէկք, զորս մղուլ փօրայ կոչէն, Եւ իբրև ազդ լինէր Նատիրին, առաքէր նա զգունդ մի մեծ 'ի վր նոցա, որոց յանկարծ մտեալ 'ի տեղին այն յանխնայս կոտորէին զվեց հազարս 'ի նոցանէ, Եւ բերէին անտի զհամայն մեքենայան պատերազմին հանդերձ երեք հարիւր գլխաւոր արամբք, որոց զգլուխսն վաղվաղակի հատանէին, հրամանաւն շահին, և զգէշս նոցա ալկանէին 'ի գետն բեթեի որ է Դիլլիու գետն:

Եւ յետ այնորիկ մունետիկ կարդայր, զի իւրաքանչիւր, որ պարտական էսցի 'ի զործս իւր, և մինչ 'ի Պարսից անտի իշխեսցէ վնաս ինչ հասուցանել ժողովրդեանն, Եւ առ 'ի խափանել զհասարակ պատահմունսն, հրամայէր Նատիրն կնքել զշտեմարանս պաշարից և պահապանս կարգէր 'ի վր նոցա, այլև հրամայէր զիբազմութի հեծելազօրաց զկուշասյին զքաղաքաւն, զի միոք առանց հրամանի ելցէ արտաքս 'ի քաղաքէն, Եւ արդ զբազումս որոց քաղցն նեղորմելութին պարտաւորեալ էին 'ի բաց փախչիլ 'ի սարսափելի տեսլեանն անտի և ելանել 'ի քաղաքէն կալեալ ածէին 'ի բանտ, և կնի' զքիթս և զականջս նոցին հատանէին:

Եւ հազարք հազարաց անձինք 'ի բազմապատիկ վիշտս և 'ի չարչարանս անկանէին, զի կողոպտեցան յընչից և 'ի ստացուածոց, և ոչ ունէին ինչ 'ի գնել կերակուր, և էր սղութի մեծ 'ի քաղաքին Եւ որք ոչէին բնիկ քաղաքացիք, մատեան առ Նատիրն, 'ի խնդրելով մանաւանդ փութով մեռանել, քան թէ ունել վշտութէ նորին, քանզի նեղութե և անձկութե սաստկէր 'ի սովու Որոց յերկիր անկեալ առաջի նր ցաւագին սրտիւ դառնապէս լային, և խնդրէին զկերակուր Արդ այնքան սաստիկ էր թշուառութի ժողովրդեանս այնորիկ, մինչև 'ի գութ շարժել զանգութ Նատիրն, վասնորոյ հրաման ետ նոցա գնալ 'ի ֆերապատ և անդ գնել զկերակուր:

Զօրութի ընդդէմ Գուլի միրզային, որ փոխանակ հովին Թաղաւորին՝ որ նստէր 'ի պարսկաստան, պատերազմութի արարեալ ընդդէմ Պարսից Թագաւորութեան, եւ վարք Պարսից դեսպանին 'ի կոստանդնուպօլիս:

Այդ յորժամ Պիլլի յայսպիսի Թշուառութե նշաւերութե կայր, պարտկաստան տակաւ [illegible] նայր բռնաւորական իշխանութեա, զանզի ուղղայ Գուլի միրզայն որ'ի հորէն վերատեսուչ էր կարգեցեալ պարսկաստանայ, սկսեալ էր 'ի գործ ածել զամ հնարս անողորմութե եւ անիրաւութե. Բնտի փութով առել լինէր ժողովրդեանն, եւ առ 'ի պատրուակել զանյագ ագահութիւն իւր զանուն վաճառականի առեալ, եւ բազմաձեւ իշխանութե ժողովեալ ամբարէր զ[illegible] ապէշուն որ գոյանայր անդ, եգնէր զայնս ըստ իւրոյ հաճոյից, եւ պարտաւորէր վաճառականս, կամ զ[illegible]գործան, գնել զայն յինքենէ թանկագին, ոմն եւ[illegible] հածել, Եւ [illegible]ութեան զոգուէր նա 'ի պարտ իւրում հակէր զինչն գրել զհայն [illegible] թէ [illegible] հերիւր հազար, մաուչիլ կամ զառ՝ չ չուհեալ առանց [illegible] ինչ [illegible]. Եւ նախանձէր Նատիրն ընդ չափազանց հարստութիւն որդւոյն իւրոյ, եւ խնդրէր 'ի նմանէ, զ[illegible] քեան, թէ իւր զ[illegible] կարգոյն գրանն, եւ պատասխանի առնէր նմա ուղղայ Գուլի միրզայն թէ վաճառականութե շահեցայ, եւ զթուղթ վկայական առաքէր առ հայրն իւր վասն ճշմարտութե պատասխանւոյն, բայց դժուարին իմն երեւեալ զՆատիրն բանից, Նշ որ գրեր նաւաորդ իւր, եգթուշացուցանէր զնա 'ի բաշկալ 'ի գրոց [illegible] [illegible] յաւել եւ ասէ, եթե այնքան սաստիկ իցէ սէր վաճառականութե 'ի սիրտ քում 'ի մի-նորութի կացուցից զքեզ, յորմէ առաւել շահեսցիս առանց յանիշտակելոյ զ[illegible] [illegible] վաճառականացն որք պատճառ հարստութե եղեալ 'ի մեր երկրի, եւ կարի խոժոռեցաւ Նատիրն ընդ արարս որդւոյ իւրոյ, մինչ զի առաքեաց զ[illegible] հրամանի 'ի պարսկաստան, որով պհամայն իշխանան, զ[illegible], եւ [illegible], հաստատէր յիւրաքանչիւր իշխանութե մինչև դարձի 'ի հնդստանայ. Այդ այս հրաման այնքան անարգութիւն պատճառէր արքայորդւոյն, մինչ զի արդէն իսկ նա զ[illegible] արկանէր ապստամբութե ընդդէմ հօրն, զոր առյապայն պատմեսցուք:

Եւ յետ Թագաւորելոյ Նատիրն ի[illegible] Բ[illegible] [illegible] կամ զոր Գասպի ծովեզերն [illegible] ամբաշխելով, այս [illegible] լինէր Պարսից, նիւէդ զյաղթութե թագաւորին իւրեանց 'ի վր Հնդկաց արքային, եթէ զանձն եհարստութին զօրէա նա 'ի թագաւորէն Հնդկաց էր ամեն եւ նա համար, Եւ որ կատահայոցանէր զժողովուրդն 'ի յուսալ եւ 'ի պատել առ որս խաղաղութեան եւ հանգստութե, երայս զի առ[illegible] ' հասանէր 'ի շահէն, հրամանաւ միով ազատել զժողովուրդն 'ի հարկաց ամ միբոլոր, սկսեալ 'ի ստանալերորդէ մարտի ամսոյն, Բայց պաշտօնէայքն որք արդէն սկսեալ էին ձեռնամուխ լինել 'ի ժողովումն հարկաց, 'ի ժամանել հրամանին վաղվաղակի 'ի բաց կացին 'ի գործոյ:

Եւ որպ Թեպէտեւ մեծին յաղթութե նշաջողութե Պարսից, բայց տակաւ ին պարսկաստան ոչ ազատէր 'ի խռովութեց, զանզի ամենայն 'ի նամարանդեցելոյ իւրոյ 'ի կողմանս հարաւու, զ[illegible] պուկ ժամանակ գտեալ յանհերկայութե Նատիրին 'ի բաց ընկեցին զլուծն 'ի յինքեանց, զանզի Նատիրն հրամայեալ էր զեսթն նաւս պատրաստել եւ առաքել 'ի կիրճս Պարսից ծովուն, վասն պատերազմին զոր 'ի մտի եդեալ էր առնել, Եւ նաւապետին զաջակեալ ժամդարեալ կալնոյր զնաւսն կամ կալբեթան, արաբացւոց որք հոլ, կամ հոլցիք կոչէին, եւ այնէլոյր զնն գնալ

՚ի սահմանս Հռոմայ, Եւ այս պատճառ լինէր ապստամբութեան նամբոնի, Որոյ վնասկալն արտաքսեցին զնա ՚ի Պարսից, եղմանս ՚ինոյանէ այրեցին:

Եւ Թաղի խան իշխանն Շիրազու, զկնի սակաւ աւուրց վաղվաղակի ընդ այր զօր բազում ՚ի փոքր նաւս մտեալ ՚ի պատժել զապստամբսն, Եւ ՚ինոյն ժամանակի այլ ցեղակետ միյարաբացւոյն մասքաթոյ գբազում նաւս պատրաստէր առ ՚ի գնալ շահանշահ ՚ի Պարսից, Եւ փութով ՚ի բաց մերժէին զերկիւղն ՚ի սրտից իւրեանց, քանզի ինքեանք հզօրէին քան զԹշնամին, և ՚ի բաց վարէին զզօրս Պարսիցն ՚ի սահմանաց իւրեանց կոտորեալ ՚ինոյանէ իբրև հազարս երկուս Եւ այս դիպուած քաջալերէր նորիցուցանէր զիմամն Մասքաթոյ, Եւ ընդ ունէր միաբանիլ ընդ հոլէցիսն, առ ՚ի հաստատուն պահել զազատութիւն իւրեանց, պահպանել նպաստապանել զինքեանս ընդ դէմ Պարսից:

Եւ կասկած մեծ կրէին պարսիկքն յօսմանցւոց անտի, Եւ Թէպէտ Նատիրն յոյժ հեռի էր ՚ինոցանէ, այլ տակաւին երկեցուցանէր զնոսա զնա ՚ի ձեռն զինուց իւրոց, միգուցէ ժամանակ գտցէն նոքա յաններկայութեան իւրում, և հաշտեսցին ընդ Ռուսացն, և ապա արշաւեսցեն ՚ի պարսկաստան, վասնորոյ զերկուս դեսպանս առաքէր առ նա ՚ի Ղանտահարայ, և վերջին դեսպանն էր Մահմետ Ռիզայ խանն, Սահասանէր ՚ի Կոստանդնուպօլիս յանցեալ ամսեանն նոյեմբերի, Եւ ՚ի սկիզբն դեկտեմբերի սանէին զնա առաջի Սուլթանին, Եւ Մահմետ Ռիզայ խանն գերագոյն իմն, և ազնիւ օրինակաւ սկսաւ հաստատել զսիրտ Սուլթանին թէ տէրն իմ շահ սաստիկ ցանկայ կատարեալ սիրով և բարեկամութեամբ միաւորել ընդ բարձրութեան քում, Այլ զայս միայն խնդրէ ՚ի քէն, զի բարձրութիւն քո յետս դարձուսցէս նմա զտիրապետութիւն, նովին կերպիւ որպէս յառաջնակայր մինչ էր ընդ Պարսից իշխանութեամբ, այսպէս և զայլ բազում իրս պահանջէր ՚ինմանէ պատճառանօք, նաև խոստացեալ խնդրէր զի Սուլթանն ՚ի բաց մերժեսցէ: զմիաբանութիւն իւր ընդ հնդկաց թագաւորին, այլև ասէր թէ չակէցէք զհամայն ամբոցն զօրս չինեցիք զկնի հաշտութեան զոր երեք ամօք յառաջ հաստատեցաք, և եթ թէ կարասցուք Պարսից ազատութեամբ և համարձակութեամբ անցցեն ընդ աշխարհն Օսմանցւոց:

Արդ յայսպիսի ժպիրհ և ՚ի յանդգամ խօսից դեսպանին յոյժ զժուարանային նախարարք Սուլթանին, և անհնարին էր նոցա ընդունիլ զայնպիսի զժպատեհ խնդիրսն, Թէև երկնչէին ՚ի պատերազմ մտանել ընդ Պարսից, Բայց պատասխանի տային դեսպանին թէ Սուլթանն մանաւանդ հաշտութիւն հաստատեսցէ ընդ կայսերն Հռովմայեցւոց, և ընդ Թագուհւոյն Ռուսաց և նորոգ պատերազմ յարուսցէ ընդ դէմ Պարսից քան թէ յանձնառուսցէ զայնպիսի անարգ դաշինս:

Եւ որ առաւել վշտացուցանէր զօսմանեան տէրութիւնն էր ապստամբութիւն Սարիբէկօղլուն ՚ի յանատօլի, Արդ Թէպէտ և Նատիրն կարէր վստահանալ ՚ի յերկարիրում առ ՚ի վաճառել զբարեկամութիւն իւր մեծամեծ գանձուց, բայց օգուտ իւր էր պահել զօսմանցիսն ՚ի խառնիկ պատերազմի ընդ Ռուսաց, զի ՚ի յետս դառնալն իւր ՚ի պարսկաստան, առաւել նուազեալ գտցէ զնոսա, և այնու ՚ի կատար հասուսցէ զյաղթութիւն իւր ՚ի վերայ նոցա:

Եւ առաքէր Նատիրն զդեսպան մի ՚ի դուռն Թագուհւոյն Ռուսաց, յորում խնդրէր ունէր զօգուտ բազում, բայց Թագուհին նախարարօքն իւրովք բարւոք զգային զանհաստատութիւն

բարե

բարեկամութեն նորա, եգիտէին թէ ոչէր կարելի ումեք յենուլ 'ի բարեկամութիւն նորա, Զի որ դեպ է տակաւին նոքա ունէին զբաւարարութիւն ինչ, քանզի գիտէին զի հեռի էր 'ի Նատիրէն զճշմարիտ բարեկամութիւն, կամ մտերմութիւն ինչ առնել ընդ տաճկացն, թէպէտև հաշտութիւն էր հաստատել ընդ նոսա:

Որպ բաշխէր Նատիրն զվարձս զօրաց իւրոց, Եւ որպ զդանձս մտիցն եհարկայն Ադիհու 'ի Դիլլի բերէին, Զիարդ Սարբօլանդ խանն գլուխ կարգեցաւ 'ի ժողովել զեկամուտն եգտուրմն Եւ որպ խօսեցաւ նա ընդ Նիզամըլմուլքին, Եւ զի արդ բարբարոսութիւն վարեցան հնդիկքն ընդ միմեանս 'ի ժողովելն զտուրմն Եւ որքան եղեն թիւ գանձուցն զորս ժողովեցին:

Արդ մեք անդրէն 'ի կարգ ճշմարտանայ պատմութեան մատիցուք, Եւ տեսցուք զիարդ հզօրն Նատիրէ աւերիչն աշխարհի (զկնի հեղլոյ զայն քան անմեղարիւնսն) վարէր 'ի Դիլլի Եգտանեմք զնա գոլ այնքան ագահ, որքան եւ էր անողորմ

Եւ լինէր Նատիրն տէր անհամար գանձուց եբաժանէր զխրուճիկս զօրաց իւրոց, Եւառ 'ի քաջալերել զնոսա 'ի ներքս բերել զաւարս իւրեանց, պարգեւս եւ բաշխէր նոցա, եգայս դրամ բաշխէր 'ի դրամոյն հատելոյ յինքենէ զորս հատին 'ի Դիլլի.) եմակագրութիւն այն դրամոյ էր այսպէս

Նատիր տէր յաղօղութեանց Եթագաւոր թագաւորաց, ամենահզօր իշխան աշխարհի:

Եւ 'ի միւս երեսն էր գրեալ այսպէս:
Աճ յաւիտենական արասցէ զթագաւորութիւնք:

Եւ ծանր գործէ զոր ունէր նա այժմ, էր ժողովումն գանձուցն զորս պահանջէր 'ի հնդկաց թագաւորէն, եւ 'ի ժողովրդեանէ նորա, Եւ թահմազ խանն էր յառաջնմէ կարգեալ վերակացու 'ի վերա գործոյն Սադաթ խանին, Եւ Սադաթ խանն յանձնառեալ էր ճնշել զքաղաքակիցս իւր եպահանջել 'ի նոցանէ զդանձն ըստ չափու պահանջման տրոյն, զորս պատէին նոքա վճարել, Բայց 'ի մեռանիլ Սադաթ խանին կոչէր Նատիրն զքեռորդի նորին Մահմետ խանն եհամարս խնդրէր 'ի նմանէ վ̄ լինչիցն քեռւոյն իւրոյ եւ եառ 'ի նմանէ զհամարն, որեւոյն Ութսուն լաք ըուփի, Եւ մեծագոյն մասն գանձուս 'ի դաւառաց նոր բերէին 'ի ձեռն հզօր գնդի միոյ Պարսից հեծելոց, բայց քան լաք եվաթսուն հազար ըուփի պակաս գտանէին 'ի գանձուցն

ծուցանգործ: Սադաթ խանն խոստացեալ էր տալ,

Եւ Սարբօլանտխանն (որ 'ի վերագոյն յիշեցաք թէ սորին միջնորդութեամբ արածութիւնն, դադարեցաւ,) թէպէտև էր այր չքաւոր, սակայն յոյժ յարգելի յաչս ամենեցուն, և ապականութիւնք նախարարացն արքունի ոչ կարացին խոտորեցուցանել զնա 'ի շաւղէ առաքինութեանց. Եւ Նատիրն ազատեաց զնա 'ի տորոց անտի գգալով զչքաւորութիւն նորին, և հաւատ մեծ նուիրէր բանիցն նորա, և յոյժ արժանաւոր անձն համարէր զնա վասն որոյ կարգէր զնա վերակացու առ 'ի ժողովել զտուրսն և զընծայսն 'ի ժողովրդենէն, այլ ծերութիւն հասակին, հանդերձ ցաւագարութեամբ ոչ թոյլ տային նմա յանձն առնուլ զայն, Ուստի հրաժարէր նա 'ի գործոյն խոկ Նատիրն ասէր ցնա, եթէ կամիս վայելել զբարեկամութիւն իմպարտիս յանձնառնուլ զգործն և սաստիկ ջանիւ աշխատել 'ի նմին, Եւ տայր նմա զերկու հարիւր զօրականս իբրև ընգպահապանիչ նպաստող լինել կատարման գործոյն, այլև կարգէր զնա 'ի վերայ պաշտօնէիցն կամ գործակալացն արքունի, առ 'ի ժողովել 'ի նոցանէ զծախս, զուղտս, և զփիղսն արքունի, յորոց լաւագոյնն ընտրեսցէն յաղագս Պարսից բանակին:

Յիրաւի արք քարիք որք անկանին 'ի մէջ այսպիսի դիպուածոց, յորում կայր Սարբօլանտ խանն, միշտ մտածէին թէ զիարդ թեթևացուցանել կարասցէն զցաւս ժողովրդեան, և կատարեսցէն զհրաման թագաւորին քաղցրութեամբ, և զթութեամբ, որպէս չարքն ջանան ծանրացուցանել զչարիսն և զթշուառութիւն 'ի վերայ ժողովրդեան, Ուստի 'ի տեսանել Սարբօլանդ խանին զանտանելի ցաւսն ժողովրդեան թէպէտև սաստիկ վշտանայր սիրտ նորա բայց ճնար ոչ գոյր նմա զերծանիլ անտի և պարտէր զի կատարեսցէ զայնպիսի վտանգաւոր հրամանն, Թահմազ խանն և Մոստաֆայխանն ստիպմամբ հարկէին զնա յանձնառնուլ զկատարումն գործոյն, Վասն որոյ ծերունի նախարարս այս 'ի սաստիկ ցաւոյ և 'ի փղձկմանէ սրտին ասէր ցՆիզամըլ մուլքն, այսպէս, Թէ ես 'ի վաղուց հետէ տեսանէի զթշուառութիւն որ հասանելոց էր 'ի վերայ մեր, և բազմիցս յիշեցի թագաւորին զգոյշ լինիլ 'ի վտանգէ անհոգութեան, և խնդրեցի 'ի նմանէ առաքել զդեսպան մի հաւատարիմ մեծամեծ ընծայիւք 'ի պարսկաստան, առ 'ի դադարեցուցանել զալեկոծութիւն որ յառնելոց էր յայնոսիկ կողմանցն աշխարհի, և կարողեաք այնու խաղաղացուցանել զբարկութիւն Շահին, և բարեկամութեամբ կալ ընդ նմա, բայց նախարարք արքային ոչ անսացին խրատուց իմոց, զբանս զոր ես խօսէի համարէին նոքա վասն անկելութեան շահու ինչ և վասն օգտի իմոյ, Եւ յերկրորդում անգամ յորժամ կրկին զանցարարին զխրատիւք իմովք, ոչ խօսեցան ինչ որ լսեր այլ տանի և զգուշանալ ինքեանց առ 'ի խափանել զմերձակայ վտանգն, մինչև յայսպիսի թշուառութեան մատնեցին զժողովուրդն, եթէ ունէի ես զգանձս, զբոլորն առաքէի 'ի զանտատահար առ Շահն, քանզի թէ զրգռեի զնա այսպիսի սաստիկ ևահագին մարտիւ գալ 'ի վերայ մեր, Արդ ճար ինչ ոչ գոյ մեզ, և ոչ հնար յուսալոյ, այլ պարտիմք այժմ լնուլ զքսան քրոր ռուփին, ոչ գիտեմ թէ կարեմք արդեօք հանել զայնքան դրամս յայսպիսի նեղութեան ժամանակի թէ ոչ, Տէր միայն գիտէ:

Եւ Նիզամըլ մուլքն ոչ ինչ տայր նմա պատասխանի քանզի գիտէր զպարտաւորութիւն իւրոյ բանականին, և զսխալանս իւր յաղագս պատճառ լինելոյ իւր թշուառութեան այնորիկ, Զգանձս զոր Նատիրն պահանջէր միայն 'ի նմանէ էր քրոր միակէս, Արդ յորժամ Նիզամըլ մուլքն, Դուլրան խանն, և Ղամարըդին խանն չունէին զօրսն իւրեանց ընդ դէմ Պարսից առ 'ի պատնարանէ թագաւորին զքրոր միռուփի, յաղագս ծախուցն բանակին, Եւ Նատիրն այժմ պահանջէր 'ի Նիզամըլ մուլքէն, և 'ի Ղամարըդին խանէն (որ վէզիրն էր,) նաև զհամար այսր միոյ քրորին, այլև հրամայէր նոցա գրել ցիւրաքանչիւր գաւառս իւրեանց, և բերել անտի

զգանձս

զգանձս, որք պատկանէին ինքեանց նարգունեացն:

Եւ Նիզամըլմուլքն ասէր թէ՝ յորժամ եկի ես 'ի Դաւչանու ինձ փոխանորդ կարգեցի զորդին իմ, եետունմա զամ տառայութեան իմ, եաշխաւհ ամագիւոյ զի՛ որդին իմ ապստամբեցաւ յինէն, եւոչ կամի յետս տալ զերկիրս իմ, վասնորոյ ոչէ ինձ հնարաւոր առնել զիրադ զոր հրամայես, այլ՝ դու միայն կարողես 'ի հնազանդութիւն ածել զնա, եզայլ ապստամբեալ իշխանն դաքանու: Արդ այս ոգիկ բանք Նիզամըլմուլքին կերպիւ ինչ էր ճշմարիտ, վասնորոյ դադարեր Շահն 'ի խստելոյ զնայսղանուս անկարելի իրաց: Եւ պարզապէս երեւէր, զի՛ ոչ բարւոք համարեցաւ Նատիրին միջամուխ լինել 'ի խորին աշխարհս Հնդստանայ, գուցէ միկսորասցէ կրկին ելանելանտի Եւ Նատիրն բազում խստութք վարէր ընդ Ղամարըդ ին խանին, քանզի գուն գործէր նա զերծանել 'ի տալոյ զմեծամեծ գանձսն, զորս պահանջէր 'ի նմանէ, վասնորոյ հրամայէր Նատիրն կայուցանել զնա 'ի տապս արեւուն, որէ պատիժ ինչ նախատանաց, յաւուրին եվտանդաւոր կենաց մայրկան յայսմ մասին աշխարհի, եւ 'ի վախճանի առնոյր 'ի նմանէ զմի քրոր ըռուփի լիովին, բայ 'ի բազում ականց պատուականաց, ոսկիակազմ, եականակուռ զարդուց, եւ 'ի փղաց, Եւ դպիր Վեզիրին էր այր երեւելի այլոց հարուստ, 'ի նմանէ եսզբազում գանձս կորզէր կեղեքելով, նյանձնէր զնա 'ի ձեռս Սարբօլանդ խանին, առ'ի տանջել եթէ ոչ տայցէ զդրամս վաղվաղակի, Ուստի յուսահատեալ նա 'ի յերկիւղէ տանջանացն, առեալ ըղբաժակ մահու, եվճարէր զկեանս իւր, եայնու խափանէր զկատարումն նախատանաց եչարչարանացն:

Յետ այնորիկ հարկաւոր լինէր զդրամ ինչ հանել 'ի գանձարանէն արքունի վն ծախուցն ճանապարհին յետուն արանց որոց հրաման լինէր գնալ 'ի բանկալայ, եառնել զհրաման Շահին առ իշխանն բանկալու, եբերել անտի զեօթն քրոր ըռուփիս, եւ զափի քեահլասլն, եամվեքիլն բանկալու իշխանն 'ի ներկայ էր 'ի Դիլլի Սահամարձակեցաւ ասել Նատիր Շահին թէ՝ ղաթար մի սայլից հազիւ կարէն կրել զայնքան գանձս եբերել 'ի Դիլլի՝ եւ եսկզն հարինզբրան նի եգանեցին զնա յոյժ սաստիկ վն Լաթիֆայինս զոր իշխեաց ասել Շահին, վասնորոյ 'ի տուն մտանէր նա, եվրէժխնդիր լինէր նախատանացն զոր ետուն նմա, ըմպելով զթիւնաւոր բաժակն ձեռամբն իւրով, եհրաման տուեալ ընտանեաց իւրոց, մեռանէր:

Արդ մի թէ դիւրին իցէ մտածել թէ զիարդ կամ որքան խստութք եբարբառութք այնքան տուրս գանձուցն ժողովեցին, եեսթէ որքան անձինք անձնասպանք եղեն, առ 'ի փրկել 'ի խստանալեացն չարչարանաց, Ամենայ ազգ բարբարոսութեանց գործեցան անդ 'ի պահանջել զգանձն 'ի ժողովրդենէն, եւ ոչ գոյր ոք զի գնիցէր զինչս նոցա բայց 'ի Պարսից ազգէն, որք հազիւ թէ զչորրորդ մասն արինաւոր զնոյն հատուցանէին նոցա, եւ յայսմ պատճառէ բազումք թողեալ զինչս եզընտանիսն իւրեանց 'ի ձեռս Պարսիցն փախչէին 'ի յաքսպարապատ լոկ անձամբ միայն եիշխանն Աքսպարապատու խնամօք ընդունէր զփախուցեալսն, եւ 'ի մտի դնէր ընդդէմ կալ Պարսից եւ ոչ թոյլ տալ չարհինից, կամ ասպատակաւորաց նոցա մտանել 'ի սահմանս տէրութե իւրոյ, վասնորոյ վեց հազար հեծեալս կայուցանէր 'ի պահպանութի այնց որք փախուցեալ կային 'ի տէրութի իւր վասն ապաստանի:

Եւ արդ համայն բնակիչք Դիլլոյ 'ի մեծամեծաց մինչեւ ցհասարակ ժողովուրդն, թուղթ գրեալ ձեռամբ իւրեանց դրոշմէին, յաղագս որքանութեան ընչից իւրեանց, եւ ուխտ դնէին այնու սայմանաւ զի եթէ զկնի այնորիկ յայտնիցի Շահին թէ՝ թագուցին ինչ 'ի ստացուածոց իւրեանց

պատիժ

պատիժս մեծամեծս կրեսցէն, եւ գիտելիէ զի յայսպիսի պատահմանս, կարծիքք միայն բաւ-ական հաստատութ̄ի համարին:

Եւ վերակացուք գործոյն 'ի ծագել արեւուն նստէին 'ի ժողովել զգանձն մինչեւ ցերեկոյն, եւ հա-գիւ խնայէին յոք յանարգելոյ և 'ի չարաչար նախատելոյ, եւ մինչեւ ցլրումն ապրիլի ամսոյն զչորս քրոր ըռուփին կեղեքելով առնուին 'ի վաճառականացն և 'ի հասարակ ժողովրդենէն, եւ զերիս քրոր ըռուփի 'ի գանձարանն արքունի գտանէին, իսկ 'ի ներքին կողմն պալատին այրք (կամ Մաղարայք) բազումք կային լի գանձիւք եփակեալք 'ի վաղնջուց ժամանակաց և 'ի բազում թագաւորաց, զբազում գանձս 'ի նոսա գտանէին, Արդ 'ի դէպէ մեզ յիշատակել նաեւ զթախտ թավզն արքունի, որ պճնեալ էր անգին ակամբ, եւ թիւ բոլոր գանձուցն զորս ժողովեցին համարի գոլ ըստ թուոյ ներքոյ գրեալ հաշուին:

Զարդք ակնեղէնք եւ ականակուռք զորս առին 'ի թագաւորէն, եւ 'ի մեծամեծ-աց̄ն հնդկաց արժէին: . . . . իե: քրոր

Թախտ Թաւուզն, կամ գահն սիրամարգաձեւ հանդերձ ինն հատ այլ գահոյիւք եւ բազում վահանօք եւ այլ զինուք յեռեալ ակամբ պատուականօք . . . թ:

Ոսկեղէնք, արծաթեղէնք, եդրամք, զոր Նատիրն ձուլեալ իբրեւ զկոճեղս. . . . . կազմեր . . . . . . ժօ:

Եւ մեք յաւելումք 'ի վ̄ր սոցա, զգինս պատուական Ճոթեղինաց հագանելեաց. ա:

Թնդանօթս, եւ այլ մեքենայս պատերազմի . . . . զ:

բովանդակեցաւ քանութիւնն եօթանասուն քրոր ըռուփի . . . . . հօ: քրոր

Իսայ անուանեալ յամար դրամոյն, երբեմն լաք, եւ երբեմն քրոր, սոքայ էն բառ հնդկաց որ յամապատասխանի ընդ Հայոց, լաքն տասն բիւր, եւ քրորն հազար բիւր:

Զկնի Նատիր Շահն հարսանիս առնէր երկրորդ որդւոյ իւրում ընդ եղբօր դստերն Մահմետ Շահին, եւ որպ̄ Նատիրն ընծայս մատուցանէր Մահմետ Շահին, եպարգեւս տայր ընդհանուր նա-խարարացն նորա, եզկնի Մահմետ Շահն տայր զհամայն եր-կիրն որ 'ի յարեւմուտ կոյս Սինտ գետոյն, եւ խրատ Նատրին առ-թագաւորն Հնդկաց: Եւ զկնի չուէր Նատիրն 'ի Դիլլիոյ, եւ որպ̄ հանդէս առնէր զօրաց իւրոց եւ թիւ ձիաւորն զոր հասուցին Պար-քնիկս Հնդստանայ

Մինչ դեռ Նատիրն լցուցանէր զագահութիւ իւր գանձիւքն Հնդստանայ, կամք լինէին նմա զմշտնջենաւոր բարեկամութիւն հաստատել ընդ թագաւորին Հնդկաց, եւ այսու դիտաւորութ̄ խնդրէր

տանսյփնդրէր զդամբարջին, որ էր եղբօր դուստրն Թագաւորին ՚ի կնութի, եւ երկրորդ որդւոյ իւրում Նէսրուլի միրզային, Եւ առնէին զհարսանիսն ՚ի տասն եւ եօթն երորդն մարտի խրախճանութբ ափառօք մեծաւ, ըստ արժանեաց Թագաւորաց, Եւ կայսութի Մահմետ Շահին ոչ բաւականանայր յայնմ ժամանակի զի ըստ իւրում արժանաւորութեն ընծայս շնորհիցէր գաւեսին եղբօր իւրում, Ուստի առաքէր նմա զարդս ոսկեղէնս եւ ակունս պատուականս որք արժէին իբրև յիսուն հազար Ռուփի, եւ Նատիրն ինքնին յաւելոյր ՚ի վր ընծային ոսկեղէն զարդս պճնեալս ակամբ պատուականօք որք արժէին իբրև հինգ լաք, եւ նուիրէր հարսին:

՚Ի դէպ է մեզ կարծել զի ընտանութին, զոր արար Նատիրն ընդ Թագաւորին Հնդկաց ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մարդելուզութի, որով հաստատուն պահել կամէր զիշխանութի իւր ՚ի վերայ Հնդստանայ, եւ ժառանգել զմասն ինչ երկրին զոր գրաւեալ էր իբրև զօժիտ (այսինքն ճհեզ) օրիորդին, Բայց այս ամ ոչ էին պատճառ դիտաւորութեանց իւրոյ, եւ զի ինքն բարւոք գիտէր զի անկարելի էր ինքեան թագաւորել ՚ի վերայ այնպիսի լայնածաւալ երկրի, եւ նուաճել զայնքան զանազան ազգս որք էին ՚ի Հնդստան, եւ զի Հնդիկքն նրբայոյնք էին եւ ազնիւ մտօք քան զՊարսիկս ամ մասամբք բաց ՚ի պատերազմական մասնէ, այլ նա յուսայր պահել զյաղթութիս ՚ի վերայ նոցա որքան եւ իշխանութի իւր ձգտիլ կարէր, ապա թէ ոչ միաբանութի հարսանեաց առ ոչ ինչ նշանակէր, եւ բաց յայսցանէ ամուսնութիք մահմետականաց իշխանաց կամ Թագաւորաց զկանայս բազումս առնուն, ոչ է հաւասար ամուսնութեն քրիստոնէից Թագաւորացն թէպէտև միջոց կամ պատճառ իցէ, որ երբեք ՚ի գործ ածի ՚ի մէջ նոցա նաև ՚ի մէջ քրիստոնէից հաստատել զբարեկամութիւնս իւրեանց նովաւ այսինքն այսպիսի ամուսնութբ:

Եւ կարելի է թէ՝ Նատիրն դիպուկ ժամ գտանէր այժմ յայտնելոյ զբաղձանս սրտի իւրոյ, զի գաւառք քաբուլայ հանդերձ համայն երկրաւքն որք ՚ի յարևմուտս կոյս Սինտ գետոյն ՚ի բերդէն աթաքայ յանձնեալ էին ինքեան, Այդ զինչ արգելոյր զզարհուրեցեալ Թագաւորն Հնդկաց տալ նմա զայնոսիկ գաւառսն, մինչ տեսանէր զինքն ՚ի ձեռս յաղթողի միոյ որ ՚ի շնորհելն զկեանս իւր զթութի մեծ համարէր:

Եւ մինչ այս ամ անցք անցանէին ՚ի Դիլլի, Պարսիկքն ոչ դադարէին յաւար հարկանելոյ զերկիրն, զի մինչև ցքառասուն մղոն շուրջ զքաղաքաւն արշաւէին եւ կողոպտեալ զգիւղորէսն աւերակ եւ ամայի թողուին զերկիրն, եւ որք ՚ի բնակչացն ընդ դիմանային նոցա սպանանէին, եւ սղութի մեծ լինէր ՚ի վր երկրին, եւ տառապանք ժողովրդեանն օրստօրէ աճէին:

Եւ կամէր Նատիրն զի լիապէս հնազանդութի մատուսցեն ամ հրամանաց իւրոց, եւ յիշէր զաղանդամն շիայից եւ սուննիից յաղագս տանի իմամ հասանին, եւ իմամ հուսէինին, որ հանդերձեալ էր լինիլ յամսեանն մարտի յայնմիկ տարւոջ, եւ հրաման առնէր մունետիկ շրջիլ ՚ի քաղաքին եւ պատուիրել ամենեցուն, զի մի ոք իշխեսցէ թէ ՚ի Պարսից եւ թէ ՚ի Հնդկաց անտի յիշել զբառսն Թաղիակամ մաթըմ, (այսինքն, սուգ, կամ մահ,) Եւ այսմիկ հրամանի ոչ անսային, քանզի ոմանք ՚ի զօրականաց իւրոց արտաքոյ քաղաքին, բախէին զկուրծս իւրեանց եւ սուգ առնէին ըստ նախկին սովորութեն իւրեանց, եւ նա զայնպիսիսն իսկապէս պատժել հրամայէր:

Եւ աստ էր տեսանել տեսիլ ազանչելի, Զի մեծամեծ նախարարք հզօր եւ մեծ Թագաւորի միոյ եւ մեծի ինքնակալի այժմ գան առ Նատիրն, զի շնորհս առատաձեռնութե ընկալցին ՚ի նմանէ

Եւ

Եւ հնդկիկ նախարարքն այնոքիկ որք վերակացու կարգեցեալ էին օգնել ևջանալ 'ի ժողվել զմեծամեծ գանձսն:

Եւ վասն Նախարարացս այսոցիկ, 42. խիլայս պատրաստէին, Եւ իւրաքանչիւր խիլայն էր երեք կամ չորս, կամ հինգ հազար ռուփեթել, կամ արծաթագարդ 'նիւթ հանդերձից ըստ իւրաքանչիւր արժանեաց եղասու, Եւ խիլայքն զորս պատրաստեալ էր վասն Նիզամ մուլքին Սարբուլանդ խանին, և Ղամարըդին խան ավէզերին, և Մահմետ խան բէնկուշին որէր զօրագլուխ ամենայն հնդկաց արքային, որ և աշխատեալ էր բազում վասն Պարսից ինքնակալին, էին յոյժ գերագոյնք նեռագատրկ (այսինքն երեք զաթ) Թուր Ջիկաշանէ կամ խանճալ, ընդ նմին, որոյ քունն կամ երախակալն, (այսինքս կոթն) էր ոսկի և մինագործ ; Եւ այս հանդէս կատարիւր 'ի խիզբն մաքիսի, Եւ հրաման լինէր համայն սպայիցն գալ 'ի հասարակ դիւան և Մահմետ Շահ Արքայն խելեանց և անել կայեր անդ ևկանխաճաշիկս եատայր նոցա :

Այլև բանս ինչ սքանչելագործս լուաք վասն Ղամարըդին խան Վէզիրին, քանզի ասէն թէ՝ որդի սորին Բդըրդին խանն կորեաւ 'ի քառնալ, և կարծեցին թէ՝ անկաւ նա 'ի հայիկէ 'ի պատերազմին եւ յետ սակաւ ժամանակի ռաձայն փրփրի, հանդիպէր երիտասարդի միում որ ունէր հանդերձս տէրվիշի, և կարծեաց ըզնա գոլ Բդըրդին խանն, զորոյ զկերպարան դիմացն բարւոք ճանաչէր նա, Եւ ռաձայն որ բալ էկամուլթի մեծունէր ընդ վէզիրին, փաղփաղակի սուրհանդակի առաքէր առնա առ եւ խ ասալ նմա վասն գտանման որդւոյն իւրոյ, Եւ ընդունէր ռաձայն զերիտասարդն քաղում պատուօք և մեծարանօք, և զարդարէր զնա մեծագին և ազնիւ հանդերձիւք ըստ իւրում կարծեալ սատիճանին, Եւ 'ի ժամանել լրոյն առ վէզիրն, ուրախանայր նա յուրախութի մեծ և շնորհակալ լինէր 'ի ռաջայէն, Եւ իսկոյն հրաման արքունի գնայր առ ռաջայն առաքել զկարծելի որդի վէզիրին 'ի Դիլլի, Եւ պատուական փաղաքի միփաղփաղակի պատրաստէին և դնէին 'ի վր փղի միոյ, և երիտասարդն նստէր 'ի վր նորա, մեծաւ հանդիսիւ և 500 հեծելազօրօք տանէին զնա մինչև ցաքպարապատ, և ընդունէին զնա մեծաւ պատուօք, և բազմութի զօրականաց և ծառայից եկեալ էին անդ 'ի վէզիրէն ապասել նմա, Եւ անտի էկն նա 'ի Դիլլի: Եւ իբրև եհասանանդ, խոյոյն վէզիրն ընկալաւ զնա 'ի գիրկս իւր և անկաւ զլանջօք նորա և էլաց լալին մեծ, և եհեղ զարտասուս հայրական գթոյ յաչաց իւրոց, և ինդայր յոյժ, քանզի այնքան նմանէր որդւոյ իւրում, մինչ զի զխորդութի ինչ ոչ կարաց նշմարել 'ի նմա, այլ կարծէր թէ՝ երիտասարդն այն ընդ խաղս ասէր թէ ինքն ոչ էր որդի վէզիրին, Եւ ռաջայն ևս այնպէս կարծէր, յորժամ ասէր նա թէ ես ոչ եմ Բդըրդին խանն, Արդ պատրանքն այնքան մեծ լինէր մինչ զի 'ի ներքս առկանայսն մուծանէին զնա, և տանէին առ կարծեցեալ մայրն նորա, և կերպարան դիմացն, հասակն, ձայնն, և դէմքն երեւաց խաբէին զունկնն վէզիրին, և հաւատայր թէ էր նա որդին իւր, Բայց երիտասարդն տակաւին վիճէր թէ ինքն ոչէր որդին նոցայ վասորոյ հարկ եղև տիկնոջն քննել զանդամս նորա, զի որդի վէզիրին Բդրդին խանն ունէր նշան ինչ յատուկ 'ի մարմնի իւրում, Արդ զինչ ասւց ևսուց ցուցանել կարէր զորոշմութի և զխտրութի նորին, յորժամ տեսանէր նա զի ոչ էր նա որդի իւր Եւ զի օտարական ոմն անարգ բերեալ լինէլով 'ի յապարանս իւր, յաճախեաց ցցաւ նորին, Եւ մինչ դեռ երիտասարդն գանգատէր զնոցանէ վասն ոչ հաւատալոյ նոցա բանից նր, և ստիպելոյ զնա հնազանդիլ և բերել յայնպիսի վախճանի, վէզիրն հրամայեր որդեգիր առնել զնա, ինքեան, որով համանգամայն երարց զխրութի և զմորմոք սրտից նոցա, և վայելել մասամբ ինչ զհայրական սէրն տեսութբ անձին միոյ որ այնքան նմանէր որդւոյ իւրում, բայց ոչ էր մարթ այսմ լինիլ, քանզի ճշմարիտ

հայրն

հայրն երիտասարդին, որ կարծէր թէ կորուսեալ էր զնա, իբրև տեղեկացաւ զնմանէ վաղվաղակի ցիցն՝ խնդրէր զորդին իւր, ուրախութեամբ մեծաւ, գիտէր ճշմարիտ ծնող նորա։

Արդ յայսմիկ հանդիսի Թագաւորն Հնդկաց եւ նշան բարեկամութեան ընդունէր ՚ի ձեռանէ պարսից ինքնակալին, այսինքն, զ Թագ մի, զապարզան՝ եւ բազբանդ մի, (այսինքն ապարօշ), զ գօտի մի, պճնեալ ակամբ պատուականօք, եւ աշտեան պատուական եւ մինագործ, եւ երկուս Թուրս որոց երախակալքն յեռեալ էին ակամբ պատուականօք, եւ Նատիր Շահն ձեռամբն իւրով դնէր զԹագն ՚ի գլուխ Թագաւորին Հնդկաց, իբրու թէ Թագաւորն Հնդկաց պարտաւորէր զինուց իւրոյ, յաղագս անկայլութեան իւրոյ, Ընդ եւ յայսերական դիմաց ինչ ասէր, եթէ նախարարք քո զանցառնիցեն զպարտաւորութիւնս իւրեանց, եւ վրէժխնդիր եղեցն նոցա, Զինուորս պարտին մտածել զինէն լինել մօտ ինքեանց, որովհետև կարեմ հասանել առ ՚ի Ղանտահարու ՚ի խուռն ժամանակի, եւ զայս ասելով, միանգամայն հաւատէր զնախատինս իւր ՚ի վերայ Հնդկաց, եւ դաստիկ ամբարտաւանական կարծիս կարողութեան իւրոյ։

Արդ ոչ ուրեք ընթերցաք Թէ արդեօք մասնաւոր արարողութիւն ինչ եղև ՚ի յանձնել Մահմետ Շահին զմասն ինչ տէրութեան իւրոյ, զոր Նատիրն խնդրէր, թէ ոչ, բայց յանձնելև տէրութեան այնորիկ արտաքոյ հասարակաց կարգի լինէր յոյժ, որպէս ՚ի ներքոյ ցուցցուք։

Այս հաստատուն պահեսցէ զԹագաւորութիւն Նատիր Շահին, որ բարձր է իբրև զսեթայն, փառաւոր իբրև զմարն, հռչակաւոր իբրև Զաղեքսանդր, Թագաւոր Թագաւորաց աշխարհի հովանի ատուէրի ամենակարողին, եւ պաստան ճշմարտահաւատից, որոց ընկերակցութիւն եղերկինս, Պաշտօնեայք զԹած Սուլթանիս, եւ դրոշմափառ Թագաւորիս, յառաջնմէ յղեցին մեզ դեսպանս, առ ՚ի խնդրել զպարտս ինչ զոր մեք պարտէաք ընդունիլ ՚ի վերայ մեր, եւ դեսպանն Թուրքման Մահմետ խան ոչ յետ բազում ժամանակի եկն ՚ի Ղանտահարայ ղեկուցանել մեզ անօտի, բայց նախարարք մեր յամեցուցին ըղդեսպանն, եւ զանց արարին գրել զպատասխանի թըղթոց ամենաբարձրալեռութեան Նորին, որոյ աղագաւ այնպիսի խռովութիւնք յարեան ՚ի միջի մերում զի յաղթող զօրք Նորին եկին ՚ի Հնդուստան, եւ պատահեցաք միմեանց ՚ի դաշտին Քառնալու եւ մեք յաղթեալ գտաք յանընդդիմահար յաջողութեան Նորա։

Եւ զի գերագոյն Թագաւորութիւն Նորին է հզօր իբրև զ ճիմշիտ մեծամեծքն Թուրքմանաց եւ զօրութ բարութեան նմանապէս եւ քաջութեան կախեալ կան ՚ի փառաց Նորին, եւ մեք բաւականացաք տեսութեան Նորին եւ վայելեցաք յանխառն բերկրութիւն երկնաւոր ընկերակցութեան Նորա, եւ զկնի եկաք ընդ Նմա ՚ի Շահջիհանապատ, ուր համայն գոհարք եւ գանձք Հնդկաց Թագաւորացն մատուցան առնա, եւ առ ՚ի ընդունիլ զաղաչանս մեր, բարձրագոյն եւ հզօր պետութիւն իւր ՚ի շնորհս մեր հաճեցաւ ընդունիլ զմասն ինչ ՚ի նոցանէ։

Եւ յաղագս գերափայլ ցեղին Թամուրլանգին, եւ յաղագս պատուոյն զոր ունի ինքն վասն զարմին Նորին, ՚ի մեծութեան հոգւոյ իւրոյ, եւ յառատահոս գթութեան հաճեցաւ յետս դարձուցանել մեզ զԹագն եւ զգահն Հնդստանայ։

Եւ վասն այնքան գործոյն առատաձեռնութեանց, զորս ոչ երբէք հայր ցուցանէ որդւոյն եւ ոչ եղբայր եղբօր, յանձնեցաք եւ տուաք Նմա, զայն երկիրն որք յարեւմտից կուսէ ատթաք գետոյն

Եւքինա

եւ Սինտ գետոյն, Նեալամնքրայ, (կամ Նալամնկուրի, որ է ձիւղ մի Սինտ գետոյն) այսինքն փիշհօռ հանդերձ գաւառօքն իւրովք, եւ իշխանութիւնք Քապուլայ, գազնայի. Հազարիջաթայ, եւ ըլեռնայինն երկիրսն Աղուանից, հանդերձ Բուքխոր, Մնքօր, եւ խնդապատ բերդիւքն անցս, սահմանս, եւ բնակութիւնս Զուքխուռ եւ Բալուչի, եւ զամ գաւառսն Թաթայու, այլեւ զբերդն տամու, զքաղաքն չունոյ, սումավալոյ, եւ քիթրայոռ, համայն բերդիւքն, քաղաքօքն (ծովեզերօքն) կամրանդարանաւքն, սահմանօքն եպիւղերէիւքն, եւ կամ արձակ երկրօքն 'ի ծագաց աթաք գետոյն, հանդերձ ամ երկրօքն որք համարին գոլ 'ի մէջ սորա, մինչեւ 'ի ծովն 'ի Նալանքրայ, ուր հեղանի եւ վերջանայ:

Զայս ամ երկիրս կամաւորապէս տամք տէրութեան հզօր Թագաւորին Պարսից, եւ յաւէտ եւ պաշտօնեայք, եւ հնազանդեալք մեր դատարկեսցեն զնա եւ իշխանութիւն երկրայն այնոցիկ յանձնեսցեն Պարսից Թագաւորին զի ըստ կամաց իւրոյ արասցէ ընդ նա, Եւ մեք 'ի բացթողումք ըստ բոլորին իշխանութիւն մեր իշխելոյ, առնելոյ, կամ ժողովելոյ զհասս եւ զհարկս երկրայն այնոցիկ, բայց բերդն եւ քաղաքն լահրիբանդար հանդերձ համայն գաւառօքն մինչեւ 'ի գետն աթաք, եւ 'ի ջուրցն սնտայ, եւ նալամնքրայ, պատկանեսցին Հնդստանայ Թագաւորին, որ յաղագս գրեցաւ 'ի Ջհանապատ 'ի չորրորդ աւուրն մահարամին 1152: եւ 'ի թուին 1739:

Արդ առաւելութիւն տէրութեան երկոյց կարեւոր քան զբոլոր գանձսն զորս Նատիրն կեղեքեալ 'ի Հնդկաց արքայէն, մանաւանդ գաւառն փիշհօռ, եթէ մտածեսցուք զբազմութիւն գանձուցն զորս եղիտ նա 'ի յաղթութեան յայնմանէ, անկրելեաւ նկարագրել ունէր նա զայնոսիկ եւ անկողոսւոտ քան զմուտս բնիկ երկրի իւրոյ:

Եւ արդ Նատիրն յետս տայր զպսակն Հնդկաց Թագաւորութեան օրինաւոր տն իւրում, եւ այսպէս ցուցանէր թէ յառնելն զայս բնաւին ոչ ինչ խորհէր զգործ իւր, 'ի գործոյ Աղեքսանդրի մեծի որ զպարծոյց զԹագաւորութիւն զոր առեալ էր 'ի նմանէ, հանդերձ աւելի սահմանօք, Եւ Նատիրն ոչ իմն կերպիւ նախանձ ինչ կրէր առ Մահմէտ Շահն, զի նա բնաւին չկամեցող էր պատերազմի, եւ ոչ իսկ ակնանէր առ յապայ գնալ հակառակութեան:

Արդ Նատիրն պատրաստէր զանձն դառնալ անդրէն յերկիր իւր, Ուստի 'ի դէպ ժամու խրատ ինչ կամեցաւ տալ Թագաւորին Հնդկաց, եւ 'ի պատճառս բարեկամութեան, զոլել զայնպիսի շաւիղսն որք յառաւել հաստատութիւնսն տէրութեան իւրոյ նորոգ սահմանացն զորս ետուն նմա, Եւ ասէն թէ խօսեցաւ նա այսպէս:

Պարտիս դու ամենայն ժրութեամբ տիրել երկրայն զորս տուեալ ես յուտեատ (կամ 'ի նպաստ) դատաւորաց կամ իշխանաց քոց, եւ տալ նոցա Ռոճիկս 'ի գանձարանէ քումմէ, մի տայր թոյլ ումեք 'ի նոցանէ, զզօրս պահել, եւ յայնժամ ունիցիս դու ոչ բազում հարկաւորութիւն այսպիսի բազմախումբ եպատրաստական զօրաց, Պարտիս դու ունել վաթսուն հազար ընտիր զօրս հեծելոց որոց տացես ամսական ցիւրաքանչիւր ռոճիկս, 'ի վր տասն հեծելոց դահպաշի մի կամ տասնապետ կարգեալ, եւ 'ի վր իւրաքանչիւր տասն տասնապետի Սդիվալ մի կամ հարիւրապետ մի, եւ 'ի վր տասն հարիւրապետի հազարի միայսինքն հազարապետ մի Ունի ջէր տեղեկութեան զերկրէր քումմէ զընտանեաց եւ զանուանցն գործակալաց քոց հանդերձ ար դեամբք գործոց նոցա եւ կամաց մի թոյլ տացես ումեք 'ի նոցանէ կամ հասարակ զինուորացն

դատ

դատարկ կալ 'ի գործոյ, յորժամ հարկաւորութիւն ինչ զխպեսցի ի մտ Թաւշիր առաքել զ բաւական զօրս 'ի ձեռն քաջամարտիկ հաւատարիմ և հմուտ սպարապետի, և յորժամ նա կատարէ զգործս իւր, կոչեա զնա առ քեզ, և այսու հնարիւ պակաս լիցի երկիւղ քոյ վասն մեծամեծ կարողութեանց նոցա:

Եւ յաղագս մեծամեծ նախարարացն պալատի քոյ, զգուշութեամբ ընտրեա զնոսա, և մի յառաջացուցես զ նարագործան ըզ փառամոլսն, կամ զանձնասէրսն 'ի նոցանէ, քանզի յաններկայութեան քում հազիւ պատկառեն, և ոչ փոյթ ինչ ունիցին զքէն, և հաստատապէս գիտասջիր զի եթէ ոք 'ի նոցանէ ապստամբեսցի եւ առաքեսցից զօրս իմ պատուհասել զնա, և եթէ հարկաւոր լիցի եւ ինքնին ժամանեցից քեզ յօգնութիւն, մի երբեք հեռի համարեսցիս զիս:

Արդ խրատս այս կերպիւ իմն համեմատեր սովորութեանց կառավարութեան Նատրին, և պատուիրերնա Սարբօլանտ խանին, Նիզամըլմուլքին, և այլ ամարայից Մահմետշահին, հաւատարիմ լինիլ առ տէր իւրեանց, և ասէր ցնոսա թէ հաւատով ոչ մնասջիլ ձեր 'ի պաշտօն ձեր առ թագաւորն ձեր, եղիցի հաստատութի վրէժխնդրու նորայ:

՚ի չորրորդ աւուրն մարտի հրաման տանէր զօրաց իւրոց չուել, եւ ազդեցութեամբ ազդ առնէր եթէ ոք ՚ի Հնդկաց թագաւորացն ոք ՚ի զօրաց կամ յարանց իւրոց, մահու պատժեսցի: Այլեւ հրաման տանէր զի մի ոք ՚ի զօրագլխաց կամ ՚ի զօրաց իւրոց տարցէ զկին կամ զայր ծառայ, բայց ՚ի նոցունց զորս գնեալ էին դրամովք, եւ ըստ յօժարութեան անձանց իւրեանց, այլեւ ըզ կին ամուսնացեալ ոչ ինչ ընդ նմա մի տարցեն ակամայ: Եւ թէպէտ ոմանք ՚ի զօրագլխացն նորա քաղաքավարութեամբ ցուցին նոցա քաղցրութիւն, բայց տակաւին կանայքն ոչ կամեցան ելանել յերկրէ իւրեանց, Ուստի Նատիրն պատուիրէր զզօրագլուխսն զայնոսիկ յետս առաքել զնոսա, կանայսն որք եկեալ էին ընդ նոսա արտաքս ՚ի քաղաքէն: Եւ ոչ է յայտ արդեօք այս սաստիկ հրամանն տանէր նա վասն ազատութեան զոր նա միշտ շնորհեալ էր կանանց, զոր նորէնք Մահմետականաց շնորհեն, թէ վա երկիւղի գուցէ կանայք այնոքիկ պատճառ լիցին հասուցանել ըզլուր երկրին իւրոյ առ Հնդիկս:

Եւ իբրեւ հասանէր նա յայգեստանս Չալիմարու, հանդէս առնէր զօրաց իւրոց, եւ արք չորեք հարիւր պակասէին ՚ի նոցանէ, սաստիկ քննութիւն ունել հրամայէր զնս, եւ զվաթսուն ՚ի նոցանէ գտանէին եւ ածէին ՚ի բանակ անդր, եւ խկոյն հրամայէր զգլուխս նոցին հատանել ՚ի հաստատութիւն սաստիկ կարգադրութեանց իւրոց, եւ այսու Հնդիկքն հրաժարէին ՚ի գործածելոյ եւ պահելոյ զայլ փախստականսն,

Եւ տանէր Նատիրն ընդ իւր հարիւր եւ երեսուն դպիրս ՚ի մէջ որոց բազումք էին որք եղեալ էին մտիցն թագաւորութեան Հնդկաց, որում ինքն բազում կարօտութիւն ունէր բարւոք գիտակ լինելոյ, Այլեւ տանէր ընդ իւր երեք հարիւր ճարտարապետս, կամ մեմարս երկու հարիւր դարբինս երկու հարիւր հիւսունս, կամ խարատս եւ հարիւր քարահատս, եւ ռոճիկս տայր նոցա առ ՚ի գնալ ընդ իւր ՚ի պարսկաստան, Եւ դիտաւորութիւն ունէր շինել զքաղաք մի նման Դիլլիու զորոյ զնկարագրութիւն տանէր ընդ իւր, եւ յետ շինելոյն Նատիրապատ կոչել զայն եւ յիշատակ թողուլ ապագայիցն վասն յաղթութեան իւրոյ ՚ի վր Հնդստանայ թագաւորին, եւ վա տիրապետելոյ երկրին Հնդկաց, Եւ Ռոճիկս առատս տայր արուեստաւորացս այսոցիկ, զձիս եւ զայլ պիտոյս յաղագս ճանապարհին շնորհէր նոցա, այլեւ դաշինս դնէր ընդ նոսա զի զկնի երից ամաց, ազատ լիցին նոքա գնալ ՚ի տունս իւրեանց, Զիարդ եւ իցէ, վստահանայր նա յայս խորհուրդ ամբարտաւանութեան, բայց ոչ երբէք կատարէր զայն, Ոմանք յարուեստաւորացս չեւեւս հասեալ ՚ի Լահօռ փախչէին եւ յետս գնային, եւ հանապազորդական մարտն յորում զբաղեալ կայր զկնի հասանելոյ նորայ ՚ի պարսկաստան, խափանէր զխորհուրդս նորին:

Բայց ՚ի գոհարաց յոսկւոյ եւ արծաթոյ, եւ յայլ մեծագին իրացն զորս ՚ի վերագոյնդ յիշեցաք, տանէր նա. 1000. փիղս. 10000. ձիս. եւ. 10000. ուղտս, որոց բազումք բարձեալ տանէին զաւարն Եւ զմեծագոյն մասն ոսկւոյն եւ արծաթոյն ձուլեալ իբրեւ զկոճեղս բառնայր ՚ի վր ուղտուց, ձիոց եւ ջորւոց եւ գրեթէ կէսն երեսուն քրօրին զոր ՚ի վերագոյն յիշատակեցաք էր ոսկի եւ կէսն արծաթ ըստ հասարակ սովորութեան բեռանցն, զորս բառնան ՚ի պարսկաստան ՚ի վր գրաստուց, համարեցաք զի. 5700. ուղտք, եւ 2050. ձիք եւ ջորիք, բարձեալ տանէին զայն, Եւ ճոթեղէնքն զարդքն, եւ մեքենայքն պատերազմի առաւել գրաստս պահանջէին քան զայն:

Եւ համարին թէ տուրք, ստացուածք, որք կորեան եւ ապականեցան հրով, եւ դաշոյնքն որք ամայիք եղեն, էին իբրեւ քան քրօր:

Եւ

Եւ վս որքանութեանց հօգւոյն որք կորեան մշանջենապէս յայսմ Թշուառ պատահմանց, չէին նուազ քան երկու հարիւր հազար, յորոց իբրև քառասուն հազարք 'ի մէջ Կանտահարայ, և 'ի մէջ Լահօրու, և փոքր մի յայնկոյս Լահօրու, անկանէին: Եւ իբրև հարիւր հազարք 'ի խաւծութեան մեռանէին, և 'ի գիւղօրէնս և 'ի սովու յետուն հազարք մեռանէին, արդ թողլով զայժմ զ հնդիկսն 'ի նորոգել զինքեանս, աշխատանօք և վաճառականութբ, յաւերութեանն զորս եած 'ի վր նոցա անյագ թշնամին, և մատիցուք անդրէն 'ի կարգ պատմութեան ճանապարհորդութեան Նատրին դէպ 'ի յերկիր իւր:

Ոպ չուէր Նատիրն 'ի յայգեստանեայն Շալիմարու, նշան ագահութեան և ամբարտաւանութեան նր, Անողորմութի նր 'ի վր չնաւկան այն, եւ տուրքն Լահօրու, եւ ոպ անցանէր նա ընդ չամրով, և արգելեալ լինէր, եյետ դառնայր դէպ 'ի Լահօր, եւ ոպ միաբանեցան աղունք և հնդիկք արգելուլ զնա յանցանելոյ ընդ կիրճս ճանապարհայն, եւ ոպ յափշտակեր զաւարն զօրաց իւրոց, եւ ոպ գնայր 'ի Փիշհօր, եւ զիարդ խուդաեար խանն ոչ ընդունի զ Թագաւորութի Նատիրին, և այպ ընդունի բռնութբ, եւ ոպ Նատիրն գնայ դէպ 'ի Կանտահար, և ոպ առաքէ զգանձս իւր 'ի Քալաթ, և տիրէ խեյվայու և բօխարայու:

Եւ զկնի հարկաւոր պատրաստութես առնելոյ 'ի վերջերոյն մայիսի չուէր Նատիրն զօրօքն իւրովք յայգեստանեայն Շալիմարու և գնայր դէպ 'ի դաշտն Քառնալու, ուր հնդիկքն նախ ընկալան զնա իբրև յաղթօղ ինքեանց, եւ վասն հասարակաց հարկաւորութեանց առ մեծամեծ տիրապետութես, զգուշութիւն զոր առնէր նա, արկանէր զնա 'ի մէջ մեծի անհանդարտութեան, վասն պահպանութե այնոցիկ, քանզի մեծամեծ զգուշութիւք և աշխատանօքն առանելոյ զայնոսիկ գանձսն:

Եւ իբրև եհաս նա 'ի քառնալ, կոչեաց զգլխաւորն քաղաքին և հրամայեաց նմա շինել անդ ուր բնակեալ էր նա, զգիւղ մի և կոչել զնա Ֆաթըհապատ, (այսինքն բնակութի յաղթութե) և վն այսորիկ ետ նմա 5000: ռուփի, եւ չէ ինչ անկարելի զի կամքն զոր ունէր նա առ'ի թողուլ զյիշատակ յաղթութե իւրոյ անդ, հարկեացէ զնա իւրով դրամովն շինել զայն, բայց սակայն սակաւութի գանձոյս պարզապէս ցուցանէ մեզ թէ որ քան սաստիկ էր ագահութի 'ի սրտի նր 'ի մէջ այնքան հարստութեանց:

Եւ 'ի ճանապարհորդելն նր զօրօքն, գիւղականքն 'ի գիւղս և ժամուկողոպտին և սպանանէին զոմանս 'ի զօրականաց նր, որք գնացեալ էին պատրաստել զպիտոյս վն բանակին, նաև կողոպտեցին զարտաքին մասն բանակին նորին գիշերայն, այնչափ մինչև կորուսանել Պարսից աւելի քան զհազար ուխտս զձիս և զջորիս, յաւաջ քան զհասանիլն նոցա 'ի թանիսէր, եւ սրտմտեալ 'ի վր նոցա վն գործոյն այնոցիկ, և հրաման ետ կողոպտել զքաղաքն Թանիսէր, և 'ի սայր սուսերի մաշել զբնակիչսն, և մնացեալ քաղաքն հանդերձ գիւղօրէիւքն զնոյն պատուհաս կրէին և զայսպանելով զարհուրեցոյց զայնոսիկ զալ 'ի հնազանդութի նմա, զորս ոչ ինչ իրօք կարաց յառաջն հնազանդեցուցանել ինքեան, առ'ի զկերակուրս հասուցանել բանակին իւրոյ:

Եւ

Եւ Զաքրիա խան իշխանն Լահօռու, հնազանդութե՛ նուիրեալ էր Նատիրին յորժամ անցանէր նա ընդ գաւառս փոնջապու, եւ գնայր ՚ի Դիլլի. եւ կարծէին թէ բնակիչք գաւառացն այնոցիկ ըստ իրաւանց զերկիւղ ինչ ոչ ունէին, բայց իբրեւ լուաւ Զաքրիա խանն զպարտութիւն Դիլլու եւ զխստութիւն որով կեղեքեալ էին զգանձն ՚ի քաղաքէ անտի, իսկոյն գիտաց զաղէկծութիւն բարկութե որ բորբոքեալ գ՚ի գանայր, Ուստի խորհեցաւ գուցէ վնաս հասցի ՚ի վիճ իւր, եւ հրաման արար, զի բոլոր վաճառականք, Սուաքք, եւ հարուստ բնակիչք երկրին, բերցեն իւրաքանչիւր զբաժին իւր առ ՚ի նուէր զմի քրոր ռուփին, եւ այս էր գանձն զոր պահանջէր Նատիրն ՚ի նմանէ, եւ նա հազիւ կարաց հատուցանել այս չափ եւ ոչ աւելի:

Եւ իբրեւ հասանէր Նատիրն յայգեստանս Շալիմարու, իսկոյն արձակեաց Զաբդլբաղի խանն հզօր գնդաւ միով պահանջել զբազում գանձս ՚ի Լահօռու, եւ անցեալ Բաղի խանին ընդ սերհինդ մերձենայր ՚ի քաղաք գաւառացն, յայնժամ ել Զաքրիա խանն արտաքս ՚ի քաղաքէն հանդիպիլ նմա, եւ մատուցանէր նմա զմի քրոր ռուփին, հաստատութե վկայից, թէ զայս քան գանձ յոյժ դժուարաւ եւ հազիւ ուրեմն կարացին տալ ժողովուրդք երկրին, իսկ եթէ կամք իցեն նմա, աւար հարկանել զերկիրն, եւ ՚ի սուր մաշել զբնակիչսն նոքա պատրաստ են հնազանդիլ, եւ ոչ որք է որ ընդ վզեսցի ընդ դէմ կամաց նր, վասնորոյ սպասեն ամենեքեան կամաց եւ հրամանի նր, Արդ թէպէտ Աբդլբաղի խանն հրաման առեալ էր պահանջել զմեծամեծ գանձս Բայց զայսպիսի ճշմարիտ բանս ազդ առնէին Շահին ընդունէր զքրոր ռուփին, եւ չուէր բանակ Պարսից եւ ճանապարհորդէին առ ճանապարս իւրեանց:

Եւ իբրեւ հասին յեզր Չանթրօ գետոյն, տեսին զի կամուրջ զոր կազմեալ էին յառաջ ՚ի նաւուց խորտակեցեալ էր յողէկծութենէ ջուրցն, Ուստի յեւս դառնայր Նատիրն եւ մտանէր ՚ի գաւառս փանջապու, եւ անուիգոյնս մի հեծելոց արձակէր ՚ի Լահօռ բերել անտի զպաշարս, եւ բնակիչքն որք հազիւ թէ զերծեալ էին յերկիւղէ հրոյ եւ սրոյ, ՚ի հասանիլ զօրացս անդր, իսկոյն ՚ի փախուստ լինէին առ ՚ի փրկել զգանձինս իւրեանց, եւ իբրեւ լուաւ զաքրիա խանն զյանկարծահաս երկիւղն որ զարհուրեցուցանէր զժողովուրդն, իսկոյն գնաց ինքն եւ անկաւ առոտս Նատիր Շահին եւ խնդրեաց ՚ի նմանէ մի մերձենալ ՚ի քաղաքն, եւ խոստանայր նմա զի, կամուրջն փութով շինեսցի, որպէս եւ լինէր այնպէս, եւ զօրքն անցանէին ընդ գետն:

Եւ գնայր Նատիրն դէպ ՚ի Չէնապ, ՚ի քաղաք միամուր, շինեալ բերդ իւք յայնկոյս անտ գետոյն մերձ ՚ի սուսաթ, որ էր ձիւղ մի գետոյն այնորիկ, եւ անտի յառաջ խաղայր ՚ի բերդն աթաք եւ ջանայր անցանել ընդ գետն սինտ, եւ մտանել ՚ի տէրութիւն այն զորս բաժին ետուն նմա ՚ի Հնդստանայ, եւ կորուսեալ աստանօր բազում նաւուց, առ ՚ի կազմել զկամուրջն, ուստի պարտաւորեցաւ զկայ առնուլ անդ, եւ այսպիսի յամեցուցմն նորա ժամ ետ աղուանիցն եւ հնդկացն որք բնակէին յարեւմտակողմ գետոյն, ՚ի զէն պատրաստիլ, եւ բազում աւարն, զոր պարսիկքն ժողովեալ էին գրգռէր զնս զփորձառնուլ յաջողութե իւրեանց, գուցէ զօրաժողով լինելով կարասցեն յափշտակել զմասն ինչ յաւարացն յայնցանէ:

Այլ դիւրին եզրակացուցանել թէ զինչ հարէին առնել ջանիւք իւրեանց նոքա եթէ ՚ի գործ ածիցէին զջանս իւրեանց, յիրաւի արքայն Պարսից աստանօր համարեաց զինքն զոլ ՚ի մէջ վտանգի, եւ ընտրեաց մանաւանդ դաշնադրութի առնել ընդ նս վասն ազատ անցանելոյ, քան թէ ՚ի վտանգ անկանիլ անդ, ուր ոչ գոյր ինչ նմա շահիլ, եւ մտածմունք մեծամեծ գանձուցն

առնէր

առնէր զվարհուրելի եզանէրկիւղ Նատիրն զգուշ և շրջահայեաց, ևմիտքնորին, ոչ երբէք բղխէր զբարի. այժմ շարժէր զինքն գրել Նասիր խանին, Նախկին իշխանին քապուլայ, զոր Թողեալէր 'ի Փիշհոր. և հրամայէր նմա գալ գործել առ'ի բառնալ զազգն Փայնոսիկ որք ժողովեալք էին 'ի լերինս, Եւ խանն վաղվաղակի կոչեաց զգլխաւորս ժողովոյն, հաւանեցոյց զնո 'ի բաց կալ 'ի խորհրդոյ իւրեանց, և խոստացաւ տալ նոցա տասն լաք ըռուփիս զի առցէ մեծ երևեսցի այս գանձն յաչս Նատրին, բայց էր դոյն ինչ, մտածելով ըզ մեծութիւն գանձուցն Նատրին, վասնորոյ վաղվաղակի առաքէր զդրամն ևգնէր նովաւ արձակ ճանապարհս:

Եւ մինչդեռ կազմէին զկամուրջն վասն անցանելոյ նր ընդ գետն Աթոկ, թուրհանդակք հասանէին առ նա 'ի Թագաւորէն Հնդկաց, որ խնդրէր արձակել ևթողուլ երկուս մեծագին ականս ճրագի մի որ էր գլխոյ Թագուհւոյն Հնդկաց, և Նատիրն իսկոյն հրամայէր որոնել 'ի գանձարանն Արքունի, բայց ոչ գտանէին այնպիսի ինչ: Հաւաստեաւ կարծէին զի ականքն այնքիկ բերեալ եղեն արտաքս յարքունեացն Հնդկաց, և 'ի հարկէ պարտին լինիլ 'ի ձեռն զօրականի ուրումն: Այս բաւականապէս պատճառ լինէր Նատրին առ 'ի պահանջել զբոլոր մեծագին ականս իբրև զստացուած իւր, և նմանապէս հրամայէր 'ի յոյզ և'ի խնդիր լինիլ, բերել զամ, 'ի գանձարանն իւր, և զայս հրաման առնէր նոցա սպառնալեօք մահու: Բազումք 'ի զօրաց նր որոց բաղձանք շահու ոչէր առաւել քան զ Թագաւորին իւրեանց, բարկացան 'ի տեսանել զի արդիւնք այնքան վտանգաւոր և երկար ճանապարհորդութեան յափշտակեալ լինէին 'ի ձեռաց իւրեանց, և արկանէին զամ'ի գետն սինտ, և այլք Թագուցին ընդ հողով, և այսքանէր այս'մինչ զի Թէպէտ բազում ականս ժողովեցին, բայց այս խորհուրդ անպատեհ Թուի Թէ բազում բիւրոց վնաս ետուն պարսկաստանայ, Եւ ականքն զորս յառաջ առեալ էին 'ի հաւարական արանց և'ի զօրագլխաց պարտին լինիլ յոյժ մեծ, Եւ ընծայքն և կաշառքն զորս նոքա առեալ էին էին գանձք, և մանաւանդ 'ի խրատութեան Դիլլու, զի բազումք 'ի մեծամեծացն ապրեցուցին զանձինս իւրեանց, բաշխելով զգանձս մեծամեծս, Եւ այսոքիկ գանձք, և մանաւանդ գոհարք որք դիւրաւ Թագուցին, մինչև ցարդ ոչինչ մասամբ եղեն բերեալ 'ի գանձարանն արքունի Եւ որքանութի ականց պատուականացն զորս ետուն Նատիրին յայսմիկ պատահման, էր յոյժ մեծ, Բայց յականցն յայնցանէ զորս խնդրէին, ոչ կարացին գտանել և ոչ զմին մինչև յետ բազում ժամանակաց անցանելոյ գտանէլ զմինն յայնց'իմէջ ստացուածոց ուրումն ապարապետի զորոյ զինչսն կնքեալ էին յարքունուստ, Եւ իբրև գտաւ, խոյն սպան զապարապետն, իսկ միւսն ոչ երբէք գտաւ:

Զկնի անցանելոյ նր ընդ գետն Սինտոս ուղղէր զճանապարհս իւր դէպ 'ի Փիշհոր, և անդ օԹևանս առնէր աւուրս ինչ, և կարգէր զզօրագլուխ մի բազում զօրօք 'ի Փիշհոր, բայց զՆասիր խանն իշխան կացուցանէր 'ի վր գաւառացն այնոցիկ, բազում և այլ խնամս և յարգութի շնորհէր նմա յաղագս մեծամեծ ծառայութեանց նր, Եւ անտի, ճանապարհ առնէր դէպ 'ի քապուլ և արձակէր Զաբդուլբաղի խանն հինգ հազար հեծելազօրօք գնալ 'ի վր խուդայեար խանին իշխանին փէջէիրայ առ'ի հնազանդութի հրաւիրել զնա իսկ նա հրաժարէր 'ի հնազանդութէ անտի, և գումարեալ զբազմութի զօրաց սպասէր տալ պատերազմ ընդ զօրացն Պարսից տեսանէր նա Թէ տէր իւր Մահամատ Շահ արքայն Հնդկաց ոչ կարաց օգութի ինչ հասուցանել 'ի մտի դնէր ջանալ զի Թէպէտ ինքնագլուխ իշխանութի ինչ կարասցէ առնուլ վն ինքեան

Եւ Աբդուլբաղի խանն փութանակի հասանէր 'ի սահմանս փէջէիրայ, բայց ոչ ունելով զկարողութի

րողութի ըստ բաւականին առ՚ի բռնութե՛ ՚ի հնազանդութի ածել զխուդաեար խանն առաջէ առնա զպատգամաւորս ազդել նմա զգալուստ իւր, և յորդորել զնա գալ ՚ի հնազանդութի իսկ խուդաեար խանն ոչ անսայր խրատուն այլ անարգէր զպատգամաւորսն նր և Աբդուլբաղի խանն ծանուցանէր զայն Նատիր Շահին, Եւ յայնմիկ ժամանակի Նատիրն էր մերձ ՚ի դանահար, և առաջէր զգանձս իւր եզկահս կամ ծանրոցս բանակին յամուր բերդն դանտահարայ բազում զօրօք և ինքն դառնայր ՚ի հալաւկոյս եգնայր ընդ միջերկրեայսն Հազարիջաթից Եւ ՚ի լսել խուդաեար խանին զամբաւ գալստեան նր խսկոյն հրաման զմայրի մի, աւերակ ևամայի առնէր զդաշտսն բոլոր նաև Թիւնաւորել ջանայր զջուրսն:

Եւ մինչ լսէր Նատիրն զյուսահատական հնարսն զորս կալեալ էր նա ՚ի պաշտպանել զինքն հրով արտաքս առաջէր առ Ջաքարիայ խանն իշխանն լաշգառու եարդեայ իւրում Հայեաթուլահ խանին իշխանին մաւլթանու վաղվաղակի ՚ի բանակ իւր հասանիլ և բերել զպաշար զօրաց իւրոց Եւ այս հրաման Նատիրին Թեպետև էր խիստ եյոյժ դժուարին և հակառակ կամացնոցա սակայն տակաւին անյապաղ հնազանդէին, քանզի անճրակք էին, Եւ Ջաքարիայ խանն էր յոյժ քաղաքավար և խոհեմ եյայսմիկ դիպուածոջ կարստանայր Նատիրն հնարիւ նր, ոչ միայն ՚ի-նուլ զԹերութի բանակին պարէնիւք այլ ՚ի հնազանդութի յորդորել զխուդաեար խանն Եւ ՚ի վախճանի անսայր խուդաեար խանն խրատուց նորա, և խոստանայր զընծայս նուիրել Նատրին ըստ չափու կարողութե իւրոյ՝ այսու դաշամբ զի զօրք Պարսից մի մտցեն յերկիր իւր այլ՝ գնասցեն դէպ ՚ի Դանտահար առանց վնաս ինչ տալոյ սահմանաց երկրին իւրոյ:

Արդ այսպիսի առաջադրութեինք խուդաեարխանին ստար իմն Թուէր յաղԹօղ Արքային Պարսից, ուստի հրամայէրնա Ջաքարիա խանին ածել ՚ի բանակ իւր զայնս ՚ի գլխաւորացն երկրին որք արդէն հնազանդեալք էին ինքեան, և պահել ընդ նմ մինչ զերաշխաւորս և զպատանդս վն վարուցն ծախողդոց իւրեանց, նաև տանել զզօրս իւր ընդ այնպիսի ճանապարհ յորում զվնաս ինչ եզպակասութե մի կրեսցեն առ՚ի հնազանդութե ածել զխուդաեար խանն:

Եւ ՚ի մերձենալ Նատիրին առ խուդաեար խանն, խոյս տայր նա համայն գանձիւք և ստացուածովք իւրովք յամուր բերդն էմիր քիօԹ կոչեցեալ որ շինեալ կայր յայնկոյս հեստնուսա գետոյն, Եւ յայնժամ Ջաքարիայ խանն կրկին միջնորդ լինէր և աղաչէր վասն խաղաղութե և հաստատէր զմիտս խուդաեար խանին Թէ Նատիրն Թողու նմա վասն իրացն անցելոց և հաճի առնուլ ՚ի նմանէ զչափաւոր ընծայն, Եւ խուդաեար խանն հաւանեցաւ առաքել զորդին իւր առ Նատիրն և՚ի ձեռն նորա մատուցանել նմա զհնազանդութի իւր, Եւ Նատիրն զԹութե և խնամօք ընդունէր զիշխանորդին այն, և բարձր չքով պատուէր զնա եզարս նր, Եւ ՚ի նմին ժամու հրամայէր զօրաց իւրոց տիրել նաւակացն, յորս եկեալ էին հնդիկքն և գնչէր այն անցանել ընդ գետն, և այս հրաման այնպիսի հնարիւք կատարիւր մինչ զի պահապանք բերդին էմիր քիօԹայ կարծէին Թէ զօրքն այնոքիկ էին յարանցն այնոցիկ որք ընդ խուդաեար խանի որդւոյն գնացեալ էին ՚ի բանակ Նատիրին և Թոյլ տային նոցա մտանել ՚ի բերդն, և այսու հնարագործութե տիրէին բերդին Եւ խուդա խանն միայն ղեբծանէր անտի, բայց ՚ի վախճանի պատշաճաւոր համարէր հնազանդիլ Շահին և տալ նմա զբոլոր գանձս իւր

Եւ այս համբաւ հասանէր ՚ի տուն Թագաւորին ՚ի Դիլլի և լուր տարածէր ընդ քաղաքն բոլոր Թէ անյաղթութե ապահովութե Նատիրին կրկին բերէ զնա ՚ի սահմանս հնդկաց, ՚ի յերկիւղէ

և՚ի յասկածանաց այսոցիկ համայն երկիրն վրդովմամբ անկանէր, և յափշտակիւր միոջ ծովորդեանն, բազումք ՚ի լեռնաբնակ ռաջայիցն կամ իշխանացն միաբանեալ խորհուրդ առնէին խափանել զճանապարհս նր, և ոչ թոյլ տալ նմա մտանել ՚ի տէրութիւնս իւրեանց, և պատրաստ էին մեծամեծս առնէին ընդ դիմակայել և հակառակիլ նմա:

Արդ դժուարին է կարծել թէ ախորժակ զոր ունէր Նատիրն վասն ոսկւոյ ընչէր զմտածմունս փառաց պատւոյ և բնական կարգի մարդկութե ՚ի սրտէ նորա և հակէր զնա գործել զայնպիսի զկծեցուցիչ գործ այսինքն ընջումն դաշանցն զոր նորոգ հաստատեալ էր ընդ Հնդկաց արքային նաև համանգամայն ՚ի բաց բառնալ ՚ի սրտէ իւրմէ զյիշատակ թագաւորութե իւրոյ, ՚ի ձեռն այնպիսի անագորոյն գործոյ, Եւ արդ աստանօր յաճախէր փառք և պատիւ Ջաքարիայ խանին և մեծարէր զնա Նատիրն պատուական ընծայիւք, և առաքէր զնա ՚ի Դիլլի բազում գեղեցկայարմար ձիովք վասն Մահամետ Շահին թագաւորին Հնդկաց, և՚ իբրև լուան ժողովուրդք Հնդկաց թէ զօրք Պարսից անցին ընդ ղանտահար իսկյն փարատեցան երկիւղք կասկածանաց ՚ի սրտէ նոցա:

Արդէն իսկ ասացաք թէ մինչդեռ Նատիրն էր ՚ի Ղանտահար որդի նորա Ռուզայ ղուլի մըրզայն արշաւեալ էր մինչև ՚ի պալխ, և պալխ հնազանդեալ էր նմա բայց ոչ էր կարացեալ նուաճել զօզբէկսն խէյ վայու և պոխարայի, որք ՚ի ժամանակի հասանելոյ խռովութեց նվշտաց ՚ի վր պարսկաստանի բազմիցս, ապստամբ տուեալ էին ՚ի խօրասան և զբազում հազարս ՚ի բնակչացն անտի գերեվարեալ, Եւ Օզբէկքն էն, ազգ զարմանալի սիրող քաջութե և ազատականութե և էն ունիք ըստ մեծի մասին, և յոյժ ատէն զպարսիկս բայց ոչ այնքան զանազանութե հաւատոյ կամ կրօնից որքան մօտակայութեն պատճառ լինէր այնքան յաճախակի առար հարկանելոյ նոցայ զերկիրն զայն, ուստի աւերութիս մեծամեծս տուեալ էին խօրասանոյ և գրեթէ մինչև ՚ի ժամանակս յետինս յորում զօրք Պարսից էին ՚ի Հնդուստան, տակաւին ոչ բնաւ դադար ձնեցին նոքա, Եւ ժամանակ ինչ յառաջ Նատիրն առաքեալ էր Ջդեստան միառ խանն խէյվայու առ՚ի պահանջել ՚ի նմանէ զբազմութի գերեացն զոր ունէին նոքա ՚ի Պարսից, բայց նոցա վստահացեալ յառաջին յաղթութիս իւրեանց, փարելով ազատական կեանս և վայելելով անխախտ հաստատութիս հարուստ ամանակաւ, համայն մտածմունք վտանգի միանգամայն ՚ի բաց մերժեալք էին ՚ի նոցանէ, զդեսպանն զայն հակառակ օրինացն ազգաց սպանեալ էին հանդերձ արամբք նր, զայր միևեթ ՚ի փոքրկանցն կենդանի յետս առաքեալ հատանելով զքիթն և զականջսն նր, Այսպիսի գործ անտանելի նախատանաց ՚ի սաստիկ սրտմտութի բարկութե բրդէր զհզօրն Նատիր և զհուր վրէժխնդրութե և յասման բորբոքէր ՚ի սիրտ նորա:

Եւ արդ դիպուկ ժամանակ էր նմա նուաճել զօզբէկսն զայնոսիկ, Եւ առաքէր զգանձս իւր ՚ի քալաթ մեծամեծ պնդովք զօրաց, և ուղղէր զընթացս իւր դէպ ՚ի յերկիրն խէյվայի, Եւ անցեալ ընդ գետն Ամօ զնայր և՚ի մերձենալ ամսեանն հոգտեմբերի հասանէր ՚ի սահմանս պօխարայի յիսուն հազար զօրօք Եւ բնակիչք պօխարայի վաղվաղակի հնազանդէին նմա, և ազատէր նա զպարսիկսն զորս յառաջնմէ գերեալ էին նոքա, և իբրև զերեսասան հազար ընտիր Օզբէկս զինուորեցուցանէր ինքեան, Եւ այսոքիկ Օզբէկք գերագոյնք էին քաջութե քան զայլ Օզբէկսն թաթարստանայ Եւ վասն փութանակի հնազանդութեն Օզբէկի խանին պարգևէր նմա զիշխանութի ընդ հանուր երկրին բօխարայի և մինչև ցհիւսիսային կողմն Ամօ գետոյն, հանդերձ ազնիւ ընծայիւք, և համայն իշխանսն նր մեծարէր խիլայիւք և պարգևօք:

իսկ

Իսկ խանն Պալխու ՚ի պէտս մատուցմունս պատրաստեալ ՚ի դաշտ ելանէր քան հազար զօրօք, և հազիւ տեսեալ էր նա զօրս հզօրագոյնս քան զզօրս իւր, ուստի վստահանայր յաջողութեան յուսով, բայց յորժամ լսէր զհամբաւ բազմութեան զօրացն Պարսից, և ես թէ Նատիրն էր ՚ի մտի նոյա վաղվաղակի հալածեալ տագնապաւ յետս դառնայր ՚ի քաղաք իւր, եւ իբրև հմտանայր Նատիրն զօրպետութեանց նորա այնքան սաստիկ պնդէր զնի նորա մինչզի պարտաւորէր զնա զկայ առնուլ ՚ի Ճամխայ՝

Աստանօր խանն պալխու քաջութեամբ ընդդիմանայր պատերազմաւ զօրացն Պարսից, բայց ՚ի վախճանի պարտաւորիւր յանձնել զերկիրն իւր արքային Պարսից և հնազանդիլ նմա, եւ Նատիրն վրէժխնդիր լինէր նմա վասն արեանցն դեսպանաց իւրոց զորս առաքեալ էր առ նա անօգուտ սպանեալ էին, և խանն պատասխանի տայր թէ անպարտեմես յարենէ նոցա, քանզի արարին զայն առանց իմոյ հաւանութեան և գիտութեան, իսկ Նատիրն վերապատասխանէր նմա թէ՝ որովհետև ոչ ունիս կարողութիւն կառավարելոյ զսակաւ ժողովուրդն որք ընդ իշխանութեամբ քոյին, չես արժանի մնալոյ, և վասն նախատանացն զորս ետուր ինձ սպանանելով զդեսպանսն իմ, ոչես արժանի զմահ հասարակաց կրել այլ պարտիս իբրև զշուն սատակմամբ լինիլ, և յայնժամ հրամայէր դահճին հատանել զգլուխ նորա նաև զգլուխս երեսուն նախարարացն որք առ նովաւ կային, և այս տեսակ սպանութեան պատիժ մի անարգ ՚ի մէջ Պարսից և բոլոր երկիրն նորա ՚ի լսել զսպանումն խանին իւրեանց հնազանդէին Նատիրին բաց ՚ի մայրաքաղաքն Խէյվայ։

Արդ թէպէտև պարտեցան զօրք Օզբէկից առաջի Պարսից սակայն տակաւին բնակիչք Խէվայի փակէին զդրունս քաղաքին ընդդէմ յաղթողին, և ՚ի մտի դնէին չտալ նմա զքաղաքն՝ այլ մարտնչիլ ընդ զօրացն Պարսից մինչև ՚ի վախճան կենաց իւրեանց բազումք ՚ի նոցանէ զգալով զվաղճան խորհրդոյն այնորիկ թողեալ զքաղաքն փախչէին և զօրք պարսից սպանանէին զնոսա ՚ի ճանապարհի։ Եթէ պարսից կոտանաւորացն կամ գերեացն այնքան մեծ էր ՚ի քաղաքի անդ մինչզի յերկիւղէ ապստամբելոյ նոյին զմտօն ինչ ՚ի նոցանէ կոտորէին, և զմնացորդսն ՚ի բանտի պահէին։

Եւ յութներորդն նոեմբերի պաշարէր Նատիրն զԽէվայ յարևելից կուսէ, և բազմիցս առաքէր նոցա զպատգամաւորս ՚ի դաշինս հնազանդութեան հրաւիրել զնոսա, բայց Օզբէկքն բնաւին ոչ անսային նմա, և զօրք պարսից պաշարէին զքաղաքն շուրջանակի յամենայն կողմանց, ութուտասն թնդանօթս և վեցտասան ռմբարտակս յարդարէին դէպ ՚ի քաղաքն ՚ի զանազան տեղիս, և կանգնէին զպատնէշս փայտեայս յոյժ բարձր և անտի նշմարէին զպարիսպ քաղաքին, և ինքեանք պաշտպանեալ անվնաս մնային յետոյս պատնիշին կամ մաթարիզին ՚ի գնդակացն և ՚ի հրացանիցն քաղաքին, և սկսան պաշարել զքաղաքն սաստիկ պատերազմաւ, եւ Օզբէկքն ունէին տակաւին զփոքրիկ թնդանօթ, զորս կոչեալ էին ՚ի դժբախտ բէքաւիթս իշխանէն եւ ՚ի չորեքտասաներորդն նոյեմբերի հրամայէր Շահն կործանել զպարիսպ քաղաքին թնդանօթիւք և ռումբաձիգքն, այնքան սաստիկ սրտմութեամբ հարկանէին զքաղաքն և այնպիսի հնարագործութեամբ զի բնակիչք քաղաքին փութով զգային զսխալանս իւրեանց, եւ դնտակարկուքն խորտակէին զպարիսպ քաղաքին ՚ի բազում տեղեաց, և լցեալ լինէր խրամն, յայնժամ հրաման տայր Նատիրն զօրաց իւրոց յարձակիլ ՚ի վերայ քաղաքին, և Օզբէկիցն զարհուրեալ անտի հաւանէին յանձնել նմա զքաղաքն, եւ մտին զպիրքն արքունի ՚ի քաղաքն և նօտարեցին զինչս և ատացուածս քաղաքին և հրաման լինէր համայն օտարազգացն յանդիման լինիլ Շահին։

՚Ի քսան

'Ի քան և ութն երորդն Նոյեմբերի էլ Նատիրն 'ի Խէյվայու ևհանէր անտի իբրև զքան հազար պարսիկս 'ի գերեայն այնոցիկ, և տանէր ընդ իւր ութն հազար Օզբէկս եղինուրեցուցանէր զնոսա ինքեան, Եւ կարգէր իշխան մի 'ի վր երկրին սակաւ ինչ պարսկական զօրօք, թնալ 'ի Խէյվայ, և ապահովանայր 'ի կողմանէ հնազանդութե Օզբէկիցն ևփոյթ ինչ ոչ լինէր նմա մե-ծամեծ զօրս դնել 'ի վր Նոյա 'ի Խէյվայ:

Դարձ Նատրին 'ի պարսկաստան, և թէ զիարդ Ռըզաղուլի միր-զայն սպանանէ զՇահ Թահմազն, և զի գուն գործէ բառնալ զկեանս հօր իւրոյ, զիարդ և որով կերպիւ վարէր Նատիրն ընդ որդւոյ իւրում և զի դնայր նա 'ի կողմանս Սպահանայ:

Արդ յետ յաղթելոյ Նատրին զհամայն Թշնամիսն որք 'ի յարևելեան կողմանս տէրութենն նորա էին, պատրաստէր զինքն դառնալ անդրէն 'ի պարսկաստան, զլխաւոր ևնախկին փոյթ նորա էր պաշտպանութի գանձուց իւրոց վասնորոյ գնայր նա 'ի քալաթ որ սակաւ աւուրբ հեռի է 'ի-մաշատոյ 'ի հարաւակուսէ Եւ կարգէր անդ զգունտ մի 'ի յընտիր զօրաց իւրոց ըստ բաւականին ևկարգէր զմի ոմն 'ի յեղբարցն Լութֆալի խանին 'ի վր զօրացն այնոցիկ:

Արդէն իսկ պատմեցաք թէ 'ի նախկին ամի աններկայութի Նատիրին այնքան ախորժակ իշխ-անութի եդ որդւոյ իւրում Ռըզա ղուլի միրզային մինչ զի բացարձակ ևանսանձ դժնդակութ ևանխափան ստահակութբ վարէր զիշխանութի զայն 'ի պէսպէս պատահմունս, առ'ի ձնշել զժողովուրդն ևյագեցուցանէլ զքաղց ագահութե իւրոյ, ևևսթէ' 'ի տեղեկանալ հօր նր այն-պիսի բացարձակ վարուց իշխանութե նորա սաստէր ևսանձահարէր զնա, Եւ արդ 'ի խնդրան տարւոյս համբաւ ինչ տարածիւր 'ի խապահան թէ զօրք Պալսից պարտեցան 'ի Նստուստան և-Նատիր Շահն սպանաւ, ևՌըզայ ղուլի միրզայն յայտնապէս խնդութբ լսէր զլուրն և ըստ ներքին շարժմանց ըղձից իւրոց հաւատայր թէ' է ճշմարիտ, ևարդէն իսկ ունելով կերպիւիմն զկարողութի թագաւորի, հրամայէր սպանանել զողորմելի ևզտարաբախտն Շահ Թահմազ հանդերձ համայն ընտանեօքն որք 'ի կալանս կային սաբզուար Եւ հանգամանք գործոյս ար-խինահեղութե հաստատէ զմիտս մեր զի Նատիրն ոչ դժուարացաւ ընդ գործ որդւոյ իւրում ևզգակաւիկ ինչ հարցափորձն զոր արար ընդ որւոյն ոչ թէ յիրաւի վասն գործոյս սպանութեն էր, այլ վասն ձեռն էրկց լինելոյ նր յիշխանութե իւրում, ևվասն, սաստիկ բաղձանացն զոր ունէր նա վասն թագաւորութե:

Եւ կարգէր Նազրմահամատ Հուսէին խանն կատարել զգործն արինահեղութե ևնա քաջա-հնար լինէր 'ի գործն անիրաւութե, Եւ արդ կարելիէ թէ' կասկածէր Ռըզայ ղուլի միրզայն զիէթէ յիրաւի գիպուած ինչ ձախորդութե հանդիպեալ իցէ Նատիրին Շահ Թահմազն անդ-րէն կարէ դառնալ յաթոռ թագաւորութե նախնեաց իւրոց, Եւ արդ կատարած անօրէն գոր-ծոյն սպանութենն այնորիկ լինիլ ասէն այսպէս, թէ' Մահմատ խանն պատրուակաւ բարեկամութ ազդէր Թահմազ Շահին թէ' 'ի վտանգի տեսանեմ զկեանս քո, վասնորոյ բարւոք է քեզ խու-յս տալ 'ի տաճիկս, (այսինքն փախչիլ յերկիրս Օսմանցւոց) ևկամ 'ի Ռուսս, ևես ինքն զփոյթ յանձին կալեալ գիւրագոյն ճանապարհաւ հանից զք քեզ աստի, Եւ այսպէս խաբէր նա ըզ

Շահ

Շահ Թահմազն, և իբրև հաւատայր նա զանձն իւր նմա, նա չարաչար անարգէր զնա երկչոտ կանարի կոչելով զնա, և ևս ասէր թէ ոչ բնաւին արժանի ես ունելոյ զպսակ, արքայական 'ի գլուխ քո, և ապա ակնարկէր առ ախոռապետն իւր հանդիպել նմա, այսինքն սպանանել զնա:

Եւ այսպէս անկաւ վերջին շառաւիղն հռչակահամբաւ Սեֆւոյն, որոյ տոհմն լեալ էր գահթու Պարսից թագաւորութեան ամս իբրև երկու հարիւր եյիսուն, Եւ զարմանամք զի 'ի միջեօթն և տասն ամաց տարաբախտութեան կամ ձախորդութեան բազմիցս կամեցաւ ամենախնամն Ած փրկել զայս թագաւորս, թէպէտև չէր նա այր խոհական և կարող ըստ բաւականին, և ոչ ունէր զհանճար ինչ արժանի գովաբանելոյ, սակայն կարելի էր նմա յերջանիկ վախճան ինչ հասուցանել զժողովուրդն իւր եթէ սակաւ ինչ հեռի լինէր յապականացեալ վարուց, և պաշտպանելով զտոհմն իւր, խափանէր զհեղումն արեանց որով նուաղեցան ժողովուրդք պարսկաստանի եզի միանգամայն փոխադրեցաւ այնպիսի հին թագաւորութիւն յաղագս խանգարիչ կենցաղավարութեան կամ վարուց նորա:

Արդ թէպէտև Նատիրն յաղթանակօքն անթիւ աւարօք դառնայր 'ի պարսկաստան սակայն դառնակսկիծ իմն ձախորդութեան հանդիպէր, և զրեթէ նախասահմանօղն Ած իբրև զպատիժ իմն ածէր զայն 'ի վր նր յաղագս անագորոյն վարուց իւրոց և զայրագութեան, քանզի անդրանիկ որդի իւր Ռզղուլի միրզայն զոր հայրախնամ գթով սիրէր նա 'ի համախոհութեան միաբանէր ընդ ոմանս առ 'ի սպանանել զհայր իւր, Եւ 'ի կատարումն գործոյս զաղվան ոմն գտանէր 'ի զինուորացն անտի զի գնտակաւ հրացանի, հարցէ զթագաւորն 'ի դառնալն նորա 'ի քալաթոյ:

Եւ հասանէր Նատիրն 'ի տեղի ինչ անձուկ և ծառուտ 'ի լերինս այնոցիկ որք բաժանեն զգաւառսն խորասանու 'ի յաստրապատայ, և ունէր ընդ իւր կանայս և ներքինիս իւր, աստանօր քաջափորձ աղուանն այն փորեալ էր զփոս մի առ 'ի թագ չիլ կամ դարանակալ լինիլ անդ և անտի դիտել 'ի նպատակն և արձակէր զգնտակն 'ի նա, և մխիւր զգնտակն 'ի ձախն ձեռն նր 'ի յաջն նր ահեակ և վիրաւոր իւր զվիզ երիվարին, 'ի կայծէ և 'ի զարհուրմանէ երիվար թագաւորին յերկիր գլոր իւր, և մինչ դեռ աղուանն այն աճապարէր ընթանալ առաջս 'ի մօրենւոյն և հատանել զնա սրով և 'ի կատար հասուցանել զգործն ներքինիքն արքունի փաղփաղակի սուսերամերկաւէրն իւրեանց ընթանային և պաշտպանէին զնա, Եւ արդ Նատիրն փարձ մեծամեծս խոստանայր առ 'ի իմանալ զնիւթ գործոյն, ուստի և զթողութի շնորհել խոստանայր առն որ իշխեաց հարկանել զինքն գնտակաւ հրացանի եթէ յայտնեսցէ զանձն իւր, բազումս 'ի բնակչացն լերանցս այսոցիկ առաջի նր ածէին, և յոլովք 'ի նոցանէ խոստանային տալ զարծաթ զօրականացն զի միածցեն զնս առ թագաւորն, և այս զերիժմութի պատճառէր զօրականաց թէ սոքա իսկ էն մեղապարտքն, իսկ Նատիրն հրամայէր արձակել զնս խաղաղութբ, և ասէր թէ այրն որ իշխեաց ջանալ ընդ դէմ կենաց իմոյ պարտէ լինիլ ընտիր և յոյժ սրտեղ, և արիութի նորա յոչ նուազ քան զիմն:

Յետ ոչ բազում աւուրց յայտնեցաւ խորհուրդն այն գաղտնի, և իմացեալ եղև զի հնարօղ գործոյն դաւաճանութեան էր Ռուզղուլի միրզայն անդրանիկածին որդին Նատիրին զոր մէ արդէն պատմեցաք թէ ամվարուք հանգիտանայր հօրն, Եւ իբրև ածին զնա առաջի հօրն աղաչէր զնա հայրն ընդունիլ զմեղս իւր և զթողութի հայցել և խոստանալ իւրն հնազանդութի հաւատարմութե, Եւ ասէր ցնա այսպէս

պէս եսեմ սպարապետ և զօրագլուխ քոյ, եսեմ թագաւոր քոյ, բարեկամ և հայր քոյ, խելամուտ լեր 'ի միտ քում և քննեա չափ պարտուցն քոյ առ իս, և զմտաւած զսակաւութի հատուցման և զճարմանն և զթեթեւութիւն խոստովանութե զոր 'ի քէն պահանջեմ, Ընկիմ զքեզ 'ի ձեռին խում բայց ոչ կամիմ զկորուստ քոյ, վարեայ զկեանս քոյ երջանկութբ, և թագաւորեա յորժամ արարիչն ած փոխեսցէ զիս յաշխարհէ աստի, Եւ ժողովեաց զբազումս 'ի նախարարաց իւրոց զի թերեւս կարասցեն խրատիւք 'ի զղջումն ածել զորդին իւր, բայց Ռիզաղուլի միրզայն ևսքանզևս խստանայր և ասէր թէ զուն գործելով սպանանել զհայրն իմ չէմ ինչ մեղուցեալ և յանդգնութբ ասէր հօրն թէ դու բռնաւոր ես և արժանի մեռանելոյ, և ես կիտեմ առաւել ինչ ոչ կորեսանել ինձ քան զսպանանելն, Եւ արդ վհատեալն Նատիր աստանօր բարկութինն խառնեալ ընդ գթութ պատասխանէ որդւոյն թէ՝ ոչ այդպէս, քանզի ոչ բառնամ ես զկեանս քոյ այլ բրեցից զաչս քոյ և զօրինակ արարից քեզ հասայն թագաւորազարմիցն աշխարհի Պատասխանի ետ Ռիզաղուլի միրզայն սաստիկ սրտմտութբ թէ հան զաչս իմ և արկ զնոսայ յառակ անա կնոջ քում, (ասրդ 'ի դէպ է մեզ մտածել թէ՝ որքան ամօթէ զկին մի որիցէ արժանի փառաց եղատաց այնպիսւ. տեղ ասնվայել բանիւք յիշատակել 'ի հարկէ ուրեմն որ քանամօթէ ենախատինք մեծ այնպիսի ամօթալից բանիւ յիշել ըզ սիրելի կինն թագւորի միոյ):

Արդ հարկն աստանօր պարտաւորէր զՆատիրն զրկել զորդին իւր սիրելի յերկոցունց աչաց և 'ի ժառանգութէ կորովամտութի և քաջութիւ այս երիտասարդ արքայորդւյն լցեալ էր զՆատիրն ջերմագին և սաստիկ յուսով թէ պատիւ թագաւորութեն դադարեսցի 'ի ցեղի իւրում, Այլ րաւի դժուարին էր ումէք կառավարել զթագաւորութեանն թէ չիցէր ամ պարագայիւք համահաւասար Ռիզաղուլի միրզային, Եւ յետ սակաւ աւուրց կոկին բերէ զնա Նատիրն առաջի իւր և հայրախնամ գթով հարցանէ զողջունէ նորին, իսկ Ռիզաղուլի միրզայն տակաւին զայրացեալ սրտիւ և հակառակ հնազանդութե որդւոյ, զսաստկութի վհատյն առ ոչինչ համարեալ, պատասխանի տայր հօրն թէ ոչ թէ զիս կորուսցուցեր, այլ զբոլոր պարսկաստան, և կատարածն որ հետեւելոցէ անտի յայանեսցի յիւրում ժամանակի, Եւ արդ զարմանք իմնէ զի Նատիրն զկնի այնորիկ ոչ թայլ ետ որդւոյն ունել կանայս, և ոչ հաւատայր հեռի պահել զնա յինքենէ.

Եւ յամսեանն փետրվարի յայսմ ամի եկն Շահն զօրօք իւրովք 'ի շրջակայս սպահանայ
Եւ ուրախութբն զոր պարսիկք ունէին վասն դարձի Նր ընտ մեծի մասին էր մեծա-
մեծ զանձուցն զորս էբեր ընդ իւր, և արդիւնք երեքամեայ պատերազմին,
կարծէին թէ՝ փրկելոց էին այնու 'ի ծանրութեց տրոց իւրեանց յօդնոտ
թէնէ բազմութե զօրացն զորս ունէր նա բայց թէ որ քան անդրա
դարձ ևընդունայն էին յուսադրութիւքն այնոքիկ իբր անհն
արին'ի մէջ փութով ձեռներէց եղէց 'ի պատմել:

յամի

յամի ամն 1740: Զիարդ Նատիրն առաքէ զդեսպան մի փառաւոր յերկիր Ռուսաց, եզիւր դեսպան յերկիր օսմանցւոց, եւ որպէս ուխտինք օսմանցւոց յայնմիկ ժամանակի եպահանջմունք Նատրին 'ի Նուշանէ, եպատերազմ պարսից ընդ արաբացիսն, եթէ որպէս վարեցաւ Նատիրն ընդ Հայրապետին Հայոց եզիարդ խորհէրնա զնոր կրօնս հաւատոյ հնարել 'ի պարսկաստան, եզիարդ հրամայեր թարգմանել զաւետարանն:

Եւ արդ կսկիծ դառնութեց զոր բնականապէս պարտէր նմա զգալ 'ի սրտի իւրում յաղագս անտանելի դժբախտութեն որում որդի իւր անդրանիկ եարեկլի դիպեցաւ, պատճառէին ընդերյաձախելոյ զչարիս եզչափ ամբարտաւանութե իւրոյ:

Եւ պատշաճէ մեզ կարծել 'ի հանճարոյ մտաց Նորին զի խնդութիք փառացն յաղթութեց նր միանգամայն կիսով չափ բարձան 'ի նմանէ, եւ բազմութի զանձուց զորս ժողովեալ էր նա առ ոչ ինչ օգտեցաւ, այլ առաւել աճէր եզօրանայր ախտ ագահութին 'ի սրտի նր, եւ քանզի յաճախէր 'ի բռնաւորական իշխանութի, եայնու ընկճէր զպարսկաստան 'ի խասաւիկ թշուառութի. Եւ առաքէր Նա զդեսպան մի փառաւոր առ Թագուհին Ռուսաց ազնիւ եմեծամեծ ընծայիւք, եզայլ դեսպան այնպէս եընծայիւք առ խոնդքարն առաքէր:

Եւ մինն 'ի դեսպանաց այնորիկ որք առաքեցան առ Թագուհին Ռուսաց էր Սայիդար խանն եւ դեսպանքն այնորիկ ունէին իբրեւ զերկու հազար զօրականս ընդ ինքեանս եատնէին զտասն փիղս բազում գոհարօք եայլ պատուական ընծայիւք, եւ Սայիդար խանն մեռանէր 'ի ճանապարհի, բայց Հուսէին խանն անվնաս հասանէր 'ի Յաշտար խան, Արդ այսպիսի դեսպանք ջանան յաճախել զփառս տէարց իւրեանց յորոց առաքին, ուստի եառաքողք նոցին պարտեն ծախս մեծամեծս առնել, Եւ արդ մինչև 'ի վերջն հոկտեմբերի 'ի հեռանալ ամին մտանէր Դեսպանն 'ի Սանթ պետրպուրք հանդիսիւ մեծաւ, եորք սակաւ ինչ տգեղութի պատճառէին հանդիսին այնմիկ էին դասք զինուորացն Պարսից, Եւ կայսերուհին Ռուսաց ըստ արժանւոյն պատուէր եմեծարէր զԴեսպանն, եւ Դեսպանն պատմէր Թագուհւոյն զմեծամեծ յաղթութիս տն իւրոյ 'ի վր հնդկաց, եառ 'ի ճշգրտաբանութի մեծամեծ աւարացն զոր բերեալ էր 'ի հնդստանայ նուիրէր Թագուհւոյն զփիղսն զգոհարսն եայլ պատուական ընծայսն. եասէր թէ տրն իմ արքայ կրկին շնորհեաց զհնդստան Թագաւորին հնդկաց եայժմ նուիրէ զբարեկամութի իւր Թագուհւոյդ, եէ յօժար միաբանութբ եռիրով մնալ ընդ պետութե քում, բարեկամ լինել բարեկամաց քոց, եթշնամի լինել թշնամեաց քոց:

Եարդէն եսկ յիշեցաք թէ մինչ դեռ ինքն զբաղեալ կայր 'ի պատերազմունս 'ի յաղթութիւնս եւ'ի հնդիկս առաքեաց անտի զԴեսպան միաբանութեն օսմանցւոց, եխնդրեաց անցանել ընդ երկիրս Նոցա եգնալ 'ի Մաքայ, Եւ նախարարք տաճկաց այսպիսի խնդիր նորին չնորք համար էին որով հետև ոչէ կարէլի ումեք կարծել թէ հաւանեալ էին տաճկքն ընդ այնպիսի խնդիրս նր, եթէ այնու կամէր ասել թէ յուխտ եկանել կամիմ զօրօքս 'ի մաքայ ուրեմն խորհէր մանաւանդ կողոպտել զբազմութի կահուցն եմեծամեծ հարստութեն որք էին անդ քանզի բռնաւորական աչօքն մատուցանել տյ վասն յաջողութեց իւրոց 'ի հնդիկս

Եւ

Եւ տաճիկքն յիրաւի կասկածէին թէ գուցէ սաստկութիւն ագահութեան նորա առիպեսցէ զնա հակիլ յայնպիսի խորհուրդ։ Եւ որ յաւելոյր զտարակուսանս նոցին զմեծամեծ յաջողութեանն և զօգնութեանն երկնային որ էր ընդ նմա, քանզի զհաշտութիւն առնելով ընդ ինքեանս կարող եղև տանիլ զզօրս իւր յերկիր հեռագոյն կանոնի յետս դառնալ այնքան մեծամեծ աւարօք և տեսանէին թէ առ նմա միայն կարէր յայնմիկ ժամանակի դարձուցանել զզէնս իւր, զի նոքա էին միայն հզօր թշնամի նորա, վասն որոյ խորհեցան ըզխաղաղութիւն հաստատել ընդ Ռուսաց և ընդ Ալամանաց։

Եւ յետ սակաւ ժամանակի առաքէ Նատիրն ըզդեսպան մի առ Թագաւորն Օսմանցւոց ազդել նոցա թէ թէպէտև դուք ոչ կամեցայք տալ ինձ զճանապարհ գնալոյ 'ի Մաքքա' տակաւին կամքէն ինձ բարեկամութիւն մնալ ընդ բարձրութեան Սուլթանին, և դեսպանս այս բազում ազնիւ և մեծամեծ ընծայիւք գնայր 'ի Շահէն առ Սուլթանն, և տանէր նա գոհարս և զինն փիղս առ 'ի ընծայել Սուլթանին 'ի Շահէն, և ունէր ընդ իւր հանդէս մեծ որպէս վայելէր թագաւորին իւրում, և այնքան մեղմ ընթացիւք գնայր զի հազիւ թէ 'ի սկզբան ամին հետևելոյ ժամանէր նա 'ի Կոստանդնուպօլիս, և Վէզիրն մեծ փառօք և պատուովք ընդունէր զնա, և 'ի հարցանելն Վէզիրին զպատճառ գալստեան նորա սակաւ ինչ գայթակղութիւն լինէր դեսպանին, և ասէր թէ պարտ էր ինձ անձամբ անձին պատմել զպատուէր տեառն իմոյ Սուլթանին, և այնու նախառարք Օսմանցւոց իսկոյն ծանեան թէ առաւելեալ էր ամբարտաւանութիւն Նատրին, և կամէր զդաշինս անհնարինս պահանջել 'ի նոցանէ վասն հաշտութեան, և առաւել համարէր զայնքան զպարծանս զանձուցն իւրոյ զոր երևէր 'ի ընծայիցն զորս առաքեալ էր առ Սուլթանն, վասն որոյ կասկածէին զդեսպանէն, և զգուշանային 'ի նմանէ իբրև թշնամւոյ գաղտնւոյ,

Եւ Նադիրն կրկին նորոգէր զվէճն, իւր ընդ Օսմանցւոց, և պահանջէր 'ի նոցանէ զայնոսիկ քաղաքսն որք 'ի ժամանակս յառաջինս պատկանէին Պարսից տէրութեանն, և զծախս, պատերազմին անցելոյ, կամ թէ յետս տալ նմա զոմանս 'ի գաւառացն անտի փոխանակ ծախուցն Արդ այսպիսի խստութիւնք պահանջմանց իբրև ըզբռնաւորական և անտանելի իմն երևէին տաճկաց պատասխանի ետուն թէ' Շահն զպատճառ խնդրէին նորոգել զթշնամութիւն իւր ընդ մեզ, վասն որոյ հրաման առաքէին առ փաշայսն ընդ իշխանութեամբ իւրեանց ժողովել զաւրսն և վաղվաղակի հասուցանել 'ի Կոստանդնուպօլիս յաղագս Ռուսկի զօրաց։

Եւ յայնմիկ ժամանակի ջանայր Նատիրն նուաճել զապստամբեալ արաբացիսն, այսինքն զհօլն (կամ հօլլէցիքն) որք վտարանջեալք էին մինչդեռ Նատիրն էր 'ի Հնդուստան, և զՕզբէկսն Խէյվայի, որոց զէն բարձրացուցեալ Սպանանէին զխանն Պարսից զոր Նատիրն իշխան կարգեալ էր 'ի վերայ նոցա, նոյնպէս և զհամայն ազգն Պարսից որք էին անդ 'ի սուր մաշէին, Եւ միւս ցեղք Օզբէկքն արշաւէին 'ի վերայ երկրին Պարսից և զաւերութիւնս մեծամեծս տային երկրին և այնու խափանէին ճանապարհքն, Եւ Նատիրն պատրաստէր զինքն գնալ 'ի վերայ նոցա Եւ չուէր նա բազում զօրօք և գնայր 'ի Թեհրան 'ի պաշտպանել զգաւառն Խորասանու։

Եւ 'ի մտանել ամին, (կամ 'ի սկզբան տարւոյս) հակառակութիւն ինչ յառնէր 'ի մէջ Հայրապետին Հայոց և 'ի մէջ պատրիացն Ֆռանկաց, յորոյ պատճառէ առ Նատիրն բողոքէին նա տուգանէր զՀայրապետն քսան և չորս հազար դուռուշով ասելով թէ զինչ օգուտ է Քահանայապետին ունել զգանձս, և զի հարստութիւն բնաւին ոչ է պիտոյ նոցա, և առ ոչ ինչ օգուտ էթէ

ոչ

ոչ ապրելն վրդովել զմիտս նորա, նայնու հետև նոքայ ՚ի շաւղացն կրօնից, ի՛նչ գանձն է
յոյժ պիտանի և հարկաւոր ինձ առ ՚ի օգնել զօրաց իմոց որք պաշտպանք են աշխարհի:

Եւ արդ ոչ է զարմանք զի թագաւոր մի որ իշխեաց յափշտակել զհամայն մուտս հասիցն կրօնաւորաց, և կարգաւորաց իւրոյ օրինացն, այսինքն մոլլայիցն, ընդ հարկաւ արկանիցէ զգլխաւորս հնազանդելոց իւրոց, Արդարև բազմիցս նկատեցաք զնա, աղաւրել և արհամարհել զկրօնս հաւատոյն զոր ժողովուրդ իւր պաշտէին նայնու նշանակէր թէ աղանդ ինձ նոր հնարելոց
էր ինքն ըստ իւրում դիտաւորութեան:

Եւ ՚ի ժամանակս այսոսիկ հրամայեաց ըզգմբէթ մի փառաւոր շինել ՚ի մաշատ մեծամեծ ծախիւք, յորում ասէր դնել զմարմին իւր զկնի մեռանելոյ իւրոյ, և ՚ի շինել զայս մատուռ զգանձս իւր ոչ խնայէր, և հրամայէր հանել զյասպիս կափարիչն, (այսինքն աշմէ կամ եշիմ զերեզմանաքարն) ՚ի գերեզմանէ թամուր լանկին ՚ի պայխ նաանել անդ, ապայ վասն ոչ յարմար լինելոյ տեղւոյն զոր շինեաց նա յետոյ առաքեր զվէմն կամ կափարիչն զայն ՚ի տեղի իւր Եւ այս իսկ էր սքանչելի զի ճարտարապետք կամ համայն արուեստաւորք մատուռանս հայք էին և ՚ի նմին ժամանակի հրամայէր զեղկեղեցի մի ևս շինել վս ազգին հայոց, որոյ արուեստաւորքն
քոլոր Մահմետականք էին, և զի այսպէս էր հրաման նորա:

Եւ Նատիրն բազմիցս կամեցաւ զգործս այսոյն ընդունայն և անարգ ինձ ցուցանել՝ յորժամ կարգադրէր զիւրոն իբրև զքննուօր, և ասէր թէ ՚ի յածելն զոտս իւր յերկիրս ապաբացեացս այլն կորոյս զբազում ՚ի նոցանէ առ ՚ի չգոյէ ջրոյ, նաև զժողովուրդն ասէր թէ ընդէր փոխանակ աղօթելոյ այնչափ առ Ածութին ոչ աղօթէք, և ոչ կոչէք զԱծ ՚ի յօգնութին ձեր, Եւ գրեթէ առնելն նորա զայսպիսի հնարագծութիւնս վասն հաւատոյ կամ կրօնից ոչ էր առանց պատճառոյ, և զի կամէր նա զմիտս ժողովրդեանն առ ինքն յանկուցանել, և այնու յաճախել զհամբաւ իւր հաստատելով զհաւատ կամ զկրօն ինչ ըստ Նախնի թագաւորաց, Եւ որպէս եբարց նա զազգատոհմն Սէֆեայն որով լեալ և հաստատեալ էր աթոռ Պարսից թագաւորութեան, սոյնպէս եցանկայր ակիզբն, (կամ
իբրև հիմն) լինել նորոգ ցեղի թագաւորաց, ընդ նմին և զնոր կրօն հաւատոյ հնարել:

Եւ ՚ի մերձանալ լրման տարւոյս հրամայէր թարգմանել զչորս գլուխ աւետարանն ՚ի պարսկական լեզու, Եւ ձեռնարկութեան նորին յայս գործէր մանաւանդ ՚ի յախտոյ ցնորից քան թէ յայլ ինչ մտածմանց և կամ ՚ի հաստատ դիտաւորութենէ ինչ, Եւ յանձնէր նա զգործն միրզայ մէհդիին որէր սըր գիտուն, և իշխան կարգէր զնա ՚ի վը գործոյս, և նա հրաման առաքէր կոչել զեպիսկոպոսունս ոմանս և զքահանայս ՚ի յազգէն հայոց,, և զպատրիս ոմանս ՚ի ֆռանկաց հանդերձ Պարսից մոլլայիւք ՚ի սպահան, Եւ մոլլայքն ՚ի մէծի տարակուսանս կային յաղագս վաղճանի գործոյս՝ զի եթէ փոփոխութիւն ինչ լիցի կրօնից պարտէր լինիլ ՚ի վնաս Մահմետականաց, Եւ շատ իցք Նատիրին առ մոլլայսն երկարի խստագոյն և անհամեմատ, ուստի բազումք ՚ի նոցանէ կաշառէին
զմիրզայ մէհդին զանց առնել զնոքօք:

Եւ ՚ի միջ ազգացն քրիստոնէից որոց հրաման լինէր գալ ՚ի սպահան վասն կատարման գործոյն թարգմանութեան, պատրի միմիայն (որ ծնեալ էր ՚ի պարսկաստան) էր հմուտ Պարսից լեզուին ըստ բաւականին առ ՚ի կատար հասուցանել զգործ ինչ այսպիսի նուրբ և խորին, Եւ որքան վս հայոց թէպէտև նոքա ծնեալ են ՚ի պարսկաստան, և են սեփական ժողովուրդ երկրին այնորիկ

և

Եփեսոնին խառն ընդ Պարսից բնակչացն, սակայն հազիւ գտանին ինչ որք որք հմուտ լինիլ Պարսից լեզուին կատարելապէս, եւ 'ի դէպ է մեզ կարծել զի միրզայ Մէհդին հանդերձ մօլլայիւքն Պարսից մանաւանդ ջանային հաճել զՆատիրն եւ ժամանդակ լինել հաստատելոյ զբանս Մահմետին քան թէ զգաստել զանձինս իւրեանց 'ի վտանգէ, եւ արդ թարգմանութիւն այս լինէր բոլորովին այնպիսի մեկնութիւն զոր առասպելաբանութիւնք եւ շփոթմունք զօտանին խոստանալ կարէին, եւ գլխաւոր առաջ նորգօղ գործոյն էր հին թարգմանիչ մի, ապաբացոց 'ի Պարսից լեզուացն։

Եւ հայր Դիւպլինեան որ էր պատրի միսիոնարաց էր մին 'ի թարգմանչացն, եւ մինչեւ ցվեցամիս դժուարին զթարգմանութիւն, եզօրինակ բազում գրեին անտի։

Եւ յամսեանն մայիսի յայսմ ամի միրզայ Մէհդին հանդերձ Պարսից մօլլայիւքն եւ քրիստոնեայ քահանայիւք ոմամբք եկեալ 'ի պալահանայ առ թագաւորն Պարսից գնային եւ յայնմիկ ժամանակի թագաւորն բանակեր մերձ 'ի Թիֆլիսան, եւ Նատիրն յարգութեամբ ընդունէր զնոսա, եւ էր 'ի վերայ կերպիւ նշմարէր զապրմանութիւնս, եզմասն ինչ անսի ընթեռնուին յառաջին նորանա բազում ծաղրական մեկնութիւնս տայր խորթին մասանցն քրիստոնէական կրօնին, եւ ծաղր առնէր, ըղ զհրէայսն, սոյնպէս եւ զՄահմետն եւ զԱլին այպանէր կամ ծաղր առնէր, եւ այսու պարագայիւքս երեւէր զի գործս այս ոչ ցուցանէր զվախճան ինչ բարի։

Եւ տեսանէր Նատիրն զի բանք աւետարանչացն ոչ համեմատին ընդ միմեանս, եւ ժամայր նա 'ի նմին տարակուսանս յոյժ յառաջն կայր, եւ ասէր թէ, եթէ կամեսցէ տր շնորհել ինչ զկեանս յերկոցունց կրօնից կամ օրինաց այսոցիկ զկրօն մի հնարեսցից որ բարեգոյն լիցի քան զամ կրօնս հաւատոց որոց յառաջն վարեցան մարդիք աշխարհի, հանդերձ բազում ընտիր եւ քաջանշէլի մակաբերութեամբ եւ օրինակօք, եւ յայնժամ արձակեաց զքահանայսն եւ զեկեղեցականսն զոյն ինչ ընծայիւք որ ոչ էր բաւական ծախուցն ճանապարհին։

Այս

Ապստամբութի Մունթիֆիքին 'ի տաճկաց տէրութենէն, եւ համառօտ պատմութի ազգին այնոցիկ եւ երկրին իւրեանց, եւս թէ զի արդ 'ի վրդովումն անկանէր պասրայ 'ի յարաբացւոց անտի, եւ զի արդ վարեցաւ Ահմէտ փաշայն, եւ ով պաշարեցաւ քաղաքն պասրայ 'ի Պարսից եւ զի արդ ճատիրն գնայր 'ի վր լեզ կեայց եւ որպէս լեզ կիքն բազմիցս անկանէին 'ի վր ճատիրին պատերազմաւ եյետս կացուցանէին զնա 'ի դաղստան, եւ որպէս վրդովեցան ազգ Ռուսաց 'ի մերձենալն նորա եւ զի արդ լեզկիքն խնդրէին զպաշտպանութի 'ի ռուսաց, եւ ով պարսիքն պատերազմեն ընդ արաբացիսն, եւ Արաբացիքն յետս վարեն զնս եւ յաղագս, վշտաց հասելոց 'ի վր երկրին Պարսից եւ ով վտանգաւոր լինի կացութիւն օսմանցւոց, եւ զի արդ հարկանէն օսմանցիք զապստամբեալ արաբացիսն նուաճէն զնս եւ յաղագս մեծամեծ պատրաստութեցն որք եղեն 'ի պարսկաստան վասն պատերազմի:

Յամի 1741. 'ի սկզբան տարւոյս, մունթիֆիկքն, հանդերձ այլ արաբացւոց գլխաւորօք կամ շէխերով որք էին ընդ իշխանութբ Ահմէտ փաշային 'ի բաց թօթափէին զանձինս 'ի լծոյ օսմանցւոցն եւ արդ ազգ այսոցիկ արաբացւոց 'ի հասարակի բնակին 'ի յանապատն պասրայու յամառնայում ժամանակի եւ գետն եփրատէս որ ոռոգանէ նջէգերկիրս զայս արգասաւորեալ ծոխացուցանէ զնա բարեօք եւ ընդ գեղջիցն առատութբ ինկոց նբուսոց, եւ զարմանամք յոյժ զի այս ցեղ կամ միւս այլ ցեղք արաբացւոց կարի յոյժ զանազան եւ արտեր երեւին 'ի դաշտի սոյնպէս եւ վարք նոցա էն զանազանք մինչ էն 'ի քաղաքունս, եւ մինչ ընկերակցութիս առնէն ընդ մերձակայից կամ դրացեաց իւրեանց զարմանալի քաղաքավարութի եւ ազնութի ցուցանէն եւ էն ինքեանք քաղաքավարք իսկ յորժամ 'ի դաշտ ելանէն զուարթութի օդոյն 'ի զանազան խորհուրդս յորդորէ զնս, եւ հմտութի նոցա 'ի նիզակ եւ 'ի սուրէ ազանչելի եւ յոյժ զարհուրելի եւ էն քաջասիրտք, եւ կարի հմուտ ձիավարութե, եւ էն երիվարամարտ, եւ զարհուրելի երեւէին 'ի յարշաւեցուցանելն զձիս:

Եւ յաղագս կարօգութեն զոր ունին 'ի տնել եւ 'ի հանդուրժել սաստկութե տապոյ արեւուն համբաւ մեծ առացեալ էն, եւ յաղթօղ գտանին թշնամեայց իւրեանց եւ վասն այսորիկ պատճառաց փոքրիկ իշխան մինոցին յիւրում գաւառի իբրեւ զինքնա գլուխ եւ զինքիակալ թագաւոր կարծէ զինքն, եւ առնու զհարկս 'ի յանցաւորաց, եւ վասն այսպիսի վարուց նոցա բազմիցս նշմարին իբրեւ աւազակք, թէպէտ եւ բազումք 'ի նոցանէ էն հիւրընկալք եւ առատաձեռն սոյնպէս եւ էն արիք եւ հանճարեղք եւ որք դիմեն առ նոսա վասն պաշտպանութե եւ օգնութե առանց անակնկալութե շնորհէն զխնդիրս նոցա եւ օգնէն նոցա յօժարաբար, եւ բազումք 'ի նոցանէ յաղագս այսպիսի առաքինութեց եւ յաղագս նրբութեց մտաց եւ հանճարոյ նոցին յառկանան բարի համբաւօք եւ գովաբանին յազգացն էն հմուտ բանաստեղծութե եւ աստղաբաշխութե արհեստին եւ 'ի հասարակի ամուսնանան 'ի ցեղս իւրեանց կանայք սոցա էն յոյժ պարկեշտք, եւ յիրաւի սպանանէն նոքա զանպարկեշտան վկայութիւք բազումք գոն վասն սոցա զի հարք արդարեւ

սոյա

սպառնեալ էին զդատերս իւրեանց վս̄ լրբութեն եւ անպարկեշտութեն, բայց տակաւին վս̄ կողոպտելոյ կամ սպանութեն ՚ի դաշտի հազիւ պատժէին զոք, եւ էն ազգք զանազանք եւ մարտնչէին ընդ միմեանս եւ զկողոպուտն զոր առնէին ՚ի պատերազմի ընդ միմեանս փոխանորդաբար տիրէին, եւ յորժամ աւար հարկանէին զկարաւանս որք անցանէին ընդ սահմանս նոցա, զաւարն զայն իբրեւ զհատուցումն փոխանակ համարէին զորս կրէին ՚ի տաճկաց եւ ՚ի պարսից, որք բազմիցս արշաւէին յերկիր նոցա, եւ աւարածէին զպարէնս եւ զջոկս ոչխարաց նոցա:

Եւ իշխանութիւն Ահմէտ փաշային տարածի մինչեւ ցկիրճն պարսից, եւ պատրաստ է ընդ իշխանութեամբ նորա, եւ նախարարք ՚ի յապարանս թագաւորին Օսմանցւոց նախանձէին ընդ նմա, ուստի եւ զիշխանութիւն Բաղդատու միայն թողուին նմա, յորոյ պատճառէ մուտ կամ հաս երկրի նորայ իբրեւ զհազար քիսայ, պակասեցաւ, վասն որոյ եւ փոյթ ինչ ոչ լինէր նմա հոգալ վասն պաշտպանութեան պարսից, եւ պարսից ժամանակ ինչ ՚ի վրդով մտնս անկանէր ձմռան Թիֆլիզն զարհուրեցուցանէր զբնակիչսն եւ սպառնայր աւար հարկանել զքաղաքն, եւ յիշխանի դիւրին էր նոցա եթէ կամէին ջանդնել, եւ քանզի բնակիչքն բոլորովին անպատրաստ էին պաշարման եւ իշխան քաղաքին բոլոր ջանիւք աշխատէր վասն պաշտպանութեան եւ քաղաքին, եւ գրէր Ահմէտ փաշային կամ ինքն գալ կամ զօրս առաքել յօգնութիւն նոցա, եւ փաշայն էր ՚ի պատերազմի ընդ բիլբազ կոչեցեալ քուրտին, եւ իբրեւ լուաւ նազպատամբութիւն արաբացւոց զարչաւանտի՞ իբաղդատ եւ անդ զօրաժողով լինէր իբրեւ զքառասուն հազար օգնական յօգնութիւն ժամանել պարսից:

Թուեցեալ յամի հնարաւոր էր Ահմէտ փաշային կորուսանել զարաբացիսն զոյնորիկ բայց նա ըղկնի թեթեւ ինչ պատերազմ տալոյ նոցա անդրէն դառնայր ՚ի բաղդատ, Սա հնարագիտութ̄ կառավարէր զնոսա, եւ հնարիւք ունէր զկշիռն, եւ ինքն առնէր զդատ եւ իրաւունս գլխաւորաց (կամ շէխերից) ինքն կարգէր եւ ինքն արտաքսէր ըզ զշէխս կամ զգլխաւորս նոցա ով եւ ինքն օգուտ համարէր, եւ այսէր պատճառն զի ոչ կամէր նա պատերազմաւ ապաժանել զնոսա եւ բայց յայսցանէ բարւոք համարեցաւ փութով դառնալ ՚ի բաղդատ եւ քանզի նախապէս տեսանէր զի Նատիր Շահն իջանելոյ էր յերկիրս օսմանցւոց, զի եթէ ինքն զօրաժողով գտանիցի ՚ի դաշտի եւ արտաքոյ սահմանաց երկրին իւրոյ, յայնժամ կարելի է խնդրելն զհրաման սպարապետութե առաքեսցէ նմա գնալ ՚ի պատերազմ ընդ դէմ Պարսից որում ոչ էր յօժար բնաւին եւ գիտէր զի այնու անկանէր նա ՚ի ձեռս խնդրելին յորմէ ունէր զպատճառ ինչ կասկածանաց կամ եթէ հարկաւոր լիցի ինքեան ՚ի մարտ մտանել ընդ թշնամւոյն բարւոք գիտէր զի ՚ի մէջ պարսպաց իւրոյ քաղաքին կարէր ընդ դիմանալ նմա, եւ բարեպէս պաշտպանել զքաղաք իւր:

Եւ յայսմիկ ժամանակի Հօլլեցիքն ազգ մի արաբացւոց, քաջութ̄ մեծաւ ընդ դիմամարտէին Պարսից, եւ պարսիկքն ոչ կարէին յաղթել նոցա վասն պահպանութե նոցունց, եւ բազմիցս արշաւէին նոքայ ՚ի վր̄ սահմանացն Պարսիցն որք ՚ի ծովեզերսն կային, եւ զբազումս ՚ի բնակչացն ՚ի գերութի վարէին, եւ ՚ի լրանալ այսորիկ ամին առաքէ Նատիրն զնախարար մի ՚ի պատերազմ առ ՚ի պահանջել զժողովուրդս իւր որք բնակէին անդ, եւ սպառնայր պաշարել զքաղաքն եթէ ոչ անսայցեն նմա, եւ յայսմ ժամանակի Ահմէտ փաշայն զքաջութի ինչ ցուցանէր իրակութեցն եւ օգտի տաճկացն, եւ վասն այսորիկ կասկածէին զնմանէ զհամախոհութի ունել ընդ Նատիր Շահին, եւ այսպիսի կարծիքն վրդովմունք մեծ պատճառէին ՚ի կոստանդնուպօլիս:

Եւ առակ ասեն պարսիկքն թէ որ ազէան է ՚ի Պարսից թագաւորաց ՚ի պատերազմ գնայ ՚ի վր̄

լեզ

լեզկեաց, եւ այսու իմանի զի դիրք կամ կացութիւնք լերանցն կովկասու են այնպիսի ինչ, եւ ժողովրդք որք ՚ի նմա են այնքան արիք, զի զօրիցէ հզօր զօրք եթէ հանդիպիցի գնալ ՚ի վերայ նոցայ է յոյժ դժուարին յաղթութիւն ակնունիլ, եւ եթէ յաջողեսցի նոցա զյաղթութիւն ինչ առնել պարտէ լինիլ քաղցրութեամբ եւ խնամօք նշմարութեամբ երկրականացն՝ Եւ արդ Նատիրն որում ոչինչ ՚ի Պարսից թագաւորաց հաւասար գտաւ հարկեալ ՚ի փառամոլութենէ ՚ի մտի դնէր փորձել զբախտ իւր գնալով ՚ի վերայ նոցա, եւ լեզկիքն վնաս եւ գայթողութիւնս բազում տուեալ էին նմա բազում անգամ, նշաւակապէս ասպատակ տալով երկրին Պարսից մինչ դեռ ինքն էր ՚ի Հնդստան յորոյ պատճառէ եղբայր իւր ՚Իբրահիմխանն սպանեալ էր եւ Շիրվան ոչ երբեք դադարէր նեղեալ ՚ի յարշաւանաց նոցա, եւ մեծ մասն գաւառացն այնոցիկ աւերեալ էին, եւ ՚ի փոխման տարւոյս գնայր Նատիրն երեսուն եւ հինգ հազար զօրօք ՚ի Շիրվան, եւ անտի ուղղէր զընթացս իւր դէպ ՚ի լերինս լեզկեաց, առ ՚ի դիւրացուցանել զյառաջութիւն գործոյն հրամայէր հատանել ըզ բազմութիւն ծառոցն որք կային յերկուս կողմանս ճանապարհին զի մի կարասցեն լեզգիքն թագչիլ ՚ի մէջ նոցա եւ դարան հնարել նոցա, եւ այնու վնաս տալ զօրաց իւրեաց. Այսպէս եւ այլ բազում հնարս խորհէր ՚ի մտի քանզի բարւոք գիտէր զի ոչ միայն քաջամարտիկք այլեւ հնարագէտք են նոքայ:

Յամի 1742: ՚Ի սկզբան տարւոյս, մտանէր Նատիրն ՚ի Դաղստան, եւ անդ տեսանէր զժողովուրդ մի յոյժ տարբեր եւ զանազան ՚ի ժողովրդենէն հնդկաց զորս նորապէս յաղթահարեալ էր:

Եւ քանզի փոխանակ գնալոյ, ընդ դաշտս պարզս եւ արձակս եւ բնակեցեալս հարուստ եւ կանացի ժողովրդեամբ, էր նմա եղանել ՚ի գաւառ անմատչելի եւ անտառիկ լերանց ըստ մեծի մասին որք բնականապէս են իբրեւ պարիսպ եւ բերդս ամուրս ձորոցն այնոցիկ ուր միայն յուսայր նա գտանել պարէնս զօրաց իւրոց, Եւ ձորքն այնոքիկ ամրացեալք էին քաջամարտիկք եւ հզօր արամբք զորս սէր ազատութեան ՚ի վաղնջուց ժամանակաց հետէ յանյաղթելի, էր արարեալ եթէ կարելի եւս լինէր նմա անցանել ընդ կիրճս լերանցն այնոցիկ եւ մտանել ՚ի ձորսն, տակաւին հնարաւոր էր թշնամեաց իւրոց ապաստան առնել զլերինն եւ այնու ընդունայն առնել համայն ջանս նորա:

Զի արդ եւ իցէր յերկիւղէ զինուց նորա ոմանք ՚ի նոցանէ որք ՚ի հարաւային կողմանս էին հնազանդութիւն խոստանային նմա, առաքելով առ նա պատանդս եւ նա զբազումս ՚ի նոցանէ առաքէր ՚ի Խորասան առ ՚ի բազմաբնակ առնել զգաւառս Խորասանոյ, նաեւ խափանել զապագայ արշաւանս նոցին յերկիրս Պարսից, Եւ այս հընարք նորին յոչ այլ ինչ օգտին եթէ ոչ ՚ի նախանձ սրտմտութեան գրգռել զմիւս լեզկիսն, եւ թողեալ Նատիրն զօրագլուխ մի ութն հազար զօրօք ՚ի միում ՚ի յանցիցն ճանապարհացն յորմէ կարելի է ելանել ՚ի լերինսն, յառաջ խաղայր հետամուտ լինիլ ղարաղայթու լեզկեացն, եւ նոքա խոյս տային յերեսաց նորայ, եւ այսու հնարիւք ածէին զնա ՚ի խորս երկրին, եւ դղրդեցան բնակիչք բոլոր եւ լերանցն, եւ յետ զօրաժողով լինելոյ նոցա, իջանէին նոքա ՚ի լերանցն անտի գիշերայն եւ անկանէին ՚ի վերայ զօրացն Նատիրին, զաղմուկ եւ դղրդիւն մեծ արկանէին ՚ի բանակ նորա եւ հասանէին մինչեւ ՚ի վրանն արքունի, զմասն ինչ գանձուցն Նատիրին եւ զբազումս ՚ի կանանց նորա յափշտակեալ տանէին:

Եւ ՚ի նմին ժամու յարձակէին լեզկիքն նովին սրտմտութեամբ ՚ի վերայ զօրաց գլխոյն Պարսից որ

հազարօք պահէր զանցս, ճանապարհին առ՚ի խափանել զհաղորդութի՛ լէզկեացն ընդ Շիրվանու, և սարսափ մեծ արկանէին ՚ի վ՛ր Պարսից, Եւ օժանդակութե՛ գերամբարձ և ծառուտ տեղւոյ միոյ վնասս և ապականութի՛ս մեծամեծս տային Պարսից այնքան մինչ զի մի՛ն օգնութի ժամանէր միւսոյն:

Եւ յետ բազմատեսակ ընդունայն ջանայն տեսանէր Նատիրն զզօրս իւր ՚ի մեծի տառապանս յաղագս պակասութե՛ պարէնից եւ շիրվան յայնքան դառն աղքատութի էր մնեալ զի անկարելի էր օգնութի ինչ հասանիլ անտի Նատիրին Երթ և եկութի կարավանից բնաւին խափանեալք էին վասնորոյ ուղղէր զընթացս իւր դէպ ՚ի դարբանդ, և բնակիչ դարբանդու իսկոյն ՚ի մերձենալ նո՛ր զգային զդառնութի նո՛ր, Եւ աստանօր զգայր նա զի հարկաւորութի մեծ ունէր նաւուց, և այնու կարելի լինէր նմա պարէնս հասուցանել զօրաց իւրոց ՚ի հարաւային տաճկանայն Կասպից ծովուն:

Աստանօր տիրապետ եւ յաղթօղն հզօր Նատիրն այնքան խոնարհեցաւ, մինչ զի քսան հազար խորտակեալ զօրօք միայն մնայ որք ապաքէն կորնչելոց էին բնաւին եթէ ոչ առայր նոցա ռուս տն պարէնս, Արդ ունիմք օրինակս յա՛մ աշխարհաց կամ երկրաց, յաղագս շահասիրութե՛ որ ածէ զմարդն անդր քան զօրէնս, այսինքն վ՛ս սիրոյ շահուն անցանէն զպատուիրանօք թագաւորաց, եւ ոչ բնաւին երբէք կարծէին թէ Նատիրն զդիտաւորութի ինչ ունէր արշաւել յերկիրս Ռուսաց, այլ սակայն ջանալով նո՛ր նուաճել զլէզկիսն զվրդովմունս մեծ պատճառէր ռուսաց, վասնորոյ ել հրաման ՚ի տէրութե՛ ռուսաց, զի մի ոք իշխեսցէ նպարս տանել եւ վաճառել ՚ի բանակի Պարսից, Զի արդ եւ իցէր մթերաւորք որք տուր եւ առս առնէին ՚ի Յաշտար խան հաստատուն միտս ունելով ՚ի մեծամեծ շահուց ոչ կարացին հակառակ կալ փորձութեան, բայց բնակիչք դարբանդու այսու ամ՛ր այնքան վտանգային մինչ զի ըստ մեծի մասին կորնչէին ՚ի սովու:

Եւ Նիրհումն Պարսից զօրաց մերձ ՚ի սահմանս ռուսաց, տագնապմունս եւ տարակուսանս պատճառէր նոցա թէ՝ գուցէ Նատիրն ՚ի վէճ մտցէ ընդ նոսա եւ պահանջեսցէ զգիլար, եւ քան զի գիլար շինեալ էր ՚ի սահմանս Պարսից, Եւ ճշմարիտ է այս զի Նատիրն ստուգիւ խռովեցաւ ընդ արարս միոյն ՚ի զօրագլխացն ընդ գնդի միոյ Պարսից որք քաջամարտ լեալ էին ՚ի բերդն գիլարու, բայց թագուհին ռուսաց զբաւականութի տայր նմա վ՛ս վնասուն, այնորիկ Եւ թէպէտ ջանացողութի վասն շահու հակէր զմիտս վաճառականացն ռուսաց վաճառել Պարսից, զնպարս տակաւին տէրութի նոցա այնքան փոփոխեալ դղրդիւր ՚ի մերձենալ Պարսից զօրացն առ նմ՛ա մինչ զի հրաման լինէր շինել ըշտեմարանս մեծամեծս ՚ի Յաշտար խան եւ բարուք ամրացուցանել զքաղաքն զայն, եւ գունդ մի քսան հազար զօրաց ընդ իշխանութե՛ Թարաքանօֆ սպարապետին ՚ի գնալ դէպ գիլար:

Յորէ մտանելոյ Նատիրին ՚ի դաղստան, լէկզիքն խորհէին արկանել զինքեանս ընդ պահպանութե՛ ռուսաց եւ յիրաւի օգտակարէր ռուսացն ՚ի թիկունս ժամանել նոցա եւ պաշտպանել զազատութի քաջ լեռնաբնակացս այսոցիկ որք հաստատուն խոչնդակք էին ընդ դէմ Պարսից Եւ արդարև ՚ի ժամանելն ռուսաց խափանիւր խորհուրդ Նատիրին, եւ պարտաւոր իւր ՚ի բաց ընկենուլ զխորհուրդն որում բախտ եւ հնարագիտութի իւր ոչ բաւէին հասանել:

Եւ

Եւ ՚ի հասանիլ սպարապետին ռուսաց ՚ի սահմանս դաղստանի դիմէին առ նա լէկզիկքն և-
յաղագս կասկածանացն վտանգի զորս ունէին նոքա ՚ի Նատիրէն գուցէ ոչ ՚ի բաց կացցէ նա ՚ի
խորհրդոց իւրոց առ ՚ի նուաճել զնոսա գրէին առ սպարապետն ռուսաց այսպէս:

Ամենապատիւ և ամենակատար սպարապետիդ ծանուցանեմք ամենախոնարհ ծառայական մերով
զի համայն բնակիչք դաղստանի լեալ զ ժամանակս քոյ մերձ ՚ի Ղզլար գնդաւ միով Արքունի
զօրաց, և հմտացեալ դիտաւորութեան քում զի ճգնեալես պաշտպանել զ հնազանդեալս ամենա-
բարձր տէրութեան թագուհւոյն որքեն ՚ի յանդրիւսքայ, և ՚ի պարզկան, սոյնպէս և համայն գլխաւ-
որս իշխանս եղատաւորս որքեն շուրջանակի տէրութեան մեծի կայսերուհւոյն սաստիկ բաղձա-
նօքյուսան տեսանել զքեզ ՚ի սահմանս իւրեանց և պատեն հասանելյման քոյվս այսորիկ ա-
ռաքեցաք պատգամաւորս առ քեզ յանուն բոլոր ազգի մերոյ առ ՚ի խնդրել ՚ի քէն միջնորդ լին-
իլ վս մեր առ կայսերուհին զի ընկալցի զմեզ ընդ հովանեաւ ամենազօր պահպանութե իւրոյ և
ընդունիլ զծառայութիւն մեր ինքեան, և մեք ամենայօժար սրտիւ ՚ի միտ հասաւանեալեմք կալ-
նուլ զօսկեզօծ քղանցս կայսերականն հանդերձից նր, և այն լիցի մեզ վահան և պահպանութեան
ընդդէմ բոլոր հակառակորդաց մերոց և չարեացն որք զարհուրեցուցանեն զմեզ ոց զի մի եր-
բեք կարասցեն չարք տիրել մեզ, և մի երբեք կարօտասցուք այլոց պաշտպանութեան և մի ծա-
նիցուք զայլ թագաւոր ՚ի ներքոյ այլ բայց ՚ի կայսերուհւոյն:

Ահա մեք երդնումք հաչակօրէն, առ ՚ի հաւատարմութիւն հնազանդիլ կայսերկան, բարձրութեան
նորա, և խոնարհօրէն աղաչեմք զնա պահպանել զմեզ ընդ դէմ թշնամեաց մերոց, Եւ ծան-
ուցանեմ հզօր թագաւորութե նորայ զորքանութիւն գնդից մերոց զորս գրեալ ՚ի թղթի առա-
քեցաք:

Ահմէտ խան օսմայիս ունի արս	12000:
Ցեղադլուխն ափարսու ունի արս	13000:
Ամէտխան իշխանն շաւնքեանու	2700:
՚ի սահմանս քանաշաւքուլան գտանին արք	8000:
՚ի Յաբէ գտանին արք	5000:
՚ի Յաբուկաղ և ՚ի Քալաքսի գտանին արք	7000:
՚ի Քարաք գտանին արք	7500:
՚ի սահմանս Ռուստու են արք	500:
՚ի սահմանս Քիլլու են արք	2500:
՚ի Ջէդադ արք 4000: և ՚ի Քինձատ արք 1000: և ՚ի Քուրադայ արք 1000 հովանդակ	6000:
Ներոյ տան յատոր բովանդակնէն արք	64200:

Քաջութիւն և ճշմարիտ սէր ազատընտրութեան ազգիս այսորիկ են հռչակաւորք և յայտնի ամ աշ-
խարհի, և մանաւանդ Պարսից սոքա զպահպանութեան ստանան այժմ ընդ դէմ տիրապետութեան
Նատիրին որ, հզօրագոյն էր քան զամ թագաւորս, արևելից, Եւ ետես Նատիրն զի ջանք
իւր ընդունայն լինէին, եդարձ իւր անդրէն ՚ի պարսկաստան տկարացուցանէր զօրութս իւր, և
մանաւանդ պակասութի լինէր համբաւոյ, իւրում, նաև հաստատապէս գիտէր զի, լեզիկքն
քաջալերեալ ՚ի դարձմանէն նորա սպատակեսցեն զսահմանս Պարսից, և համարեսցեն զնոսայ
իբրև զյաղթեցեալս յինքեանց, եդայն ամ վնասս կրեսցեն պարսիկքն որք են ՚ի կողմանսայնոսիկ
եթէ ոչ կարգեսցէ անդ գունդս հզօր և մեծամեծ զօրաց ՚ի պահպանել զշիրվան, տարակուսեալ

վասն

վարանէր նա յայսպիսի խորհուրդս:

Եւ յայսմ հետէ տեսանեմք զՆատիրն ծպտիլ խորհրդով ընդդէմ Ռուսաց, զիարդ եւ իցէր զ-կնի դարձի նր 'ի Պարսկաստան կոչէր զնախարարն Թագուհւոյն որ կայր 'ի բանակի անդ, և ասէր ցնա զարմանամ թէ՝ զիարդ է կարելի ումեք կարծել յինէն զխորհուրդ ինչ ունիլ արշաւ-ելոյ յերկիրս Ռուսաց, արդարև պարտ գտանի Ռուսացն 'ի պատուոյ իմէ զի զանց արարին առաքել զդեսպան մի հրաւիրակ առ 'ի շնորհաւորել զԹագաւորութիւն իմ 'ի վերայ Պարսից եւ գիտելով իմ զմեծամեծ փոփոխութիւնս որք եղեն 'ի Սանթ Պետրբուրգ Թագուհւոյս զպակասութի անքաղաքավարութեան նախարարաց նոցա, և 'ի նմին ժամու խնդրէր Նատիրն 'ի Ռուսաց նախա-րարէն զսուրհանդակ մի արձակել առ Թագուհին Ռուսաց եւ ծանուցանել նմա թէ՝ ինքն բո-լորովին յօժարէ հաստատուն և անքակտելի պահել զխաղաղութի եւ զբարեկամութիւն որ կայր 'ի մէջ երկոցունց թագաւորութեանց:

Եւ մինչդեռ ձախորդութիւնք պատերազմին հանապազորդէին 'ի հիւսիսային կողմն նշան ինչ երջանկութեան ոչ երևէր 'ի հարաւային կողմանս, քանզի Թաղիխան իշխանն Շիրազու կարգե-ցեալ էր 'ի Պարսից Թագաւորէն իբրև զիշխան ծովակալ երկրին հաւմուզ առ 'ի կազմել զնաւս 'ի Բանդարն աբուշահըր, արդ իբրև հասանէր նա 'ի ծովեզերն խնդրէր պահանջէր յազգայն ֆը-րանսզի վոլանդզի, եւ այլ Եւրոպացւոց, զնաւս եւ զնաւակերտս, և 'ի վախճանի թէ գանձիւք և թէ բռնութեամբ կազմէր եւ պատրաստէր բազմութիւն նաւուց: Եւ եւս ամենայր յաճախէր սաստկան-այր գործ անողորմութեան եւ անիրաւութեան Նատիրն 'ի վր ժողովրդեան վս բռնութեան պարտաւորելոյ զնոսա հատանել զփայտ 'ի Մազանդրան եւ տանել անտի 'ի Բանդար բուշեր, որէ 660: մղոն-աւ հեռի յորժամ ուղղապէս չափեմք, իսկ եթէ զբոլորակութի տեղւոյն կամ ճանապարհին մտա-ծեմք ընդոր տանելոցէին զգերանսն, է իբրև 900. մղոն, եւ յայսմանէ պարզապէս երևի զի նա ոչ բնաւ զմտաւ ածէր թէ՝ զիարդ էր կարելի գործոյն այնորիկ 'ի կատար հասանիլ, այլ զայս միայն նշմարէր զի հրաման իւր յամ իրս անխափան կատարեսցի, եւ բազմութիւս գերանաց հատա-նելին յաղագս շինութեան նաւուցն, բայց սակաւիկն միայն հազիւ կարացին հասուցանել 'ի սահ-մանս վերամիհու, ուր կան եւ անդ մինչև ցայսօր:

Եւ իմամն Մասկաթու զահրնկեց լեալ փախչէր ընտանեօք եւ դանձիւք իւրովք 'ի նաւս իւրորք կային 'ի նաւահանգստի անդ, եւ նաւորդէր 'ի Ղուրֆէքխան եւ անդ ելանէր 'ի ցամաք, եւ անտի գն-այր 'ի Ջուլֆար ուր Թաղի խանն կայր Պարսից զօրօք: Եւ կամք իւր էր առ պարսիկս դիմել վս պահպանութեան եւ օգնութեան, որով կարող լինիլ նուաճել զապստամբեալ ժողովուրդս իւր եւ զիրկին տիրել երկրին զոր անջատեալ էր յիշխանութենէ իւրմէ, եւ խորհուրդ իւր յայտնի լինէր արանցն որք ընդ նմա էին, ուստի բազումք 'ի նոցանէ 'ի բաց թողուին զնա, եւ նաւուն յետս տանէին 'ի Մասքաթ, Եւ մասքաթցիքն միաբանեալք ընդ հոլլեցիսն, Եւ նոր իմամն մասքաթու հմտա-նայր զի Թաղիխանն խրատիւք եւ յորդորմամբն անկեալ իմամին զօրս առաքելոց էր 'ի վր իւր 'ի-մտի դնէր հանել զհամայն զօրս իւր 'ի քաղաքէն, եւ գնայր նոքօք 'ի Մաթրա, 'ի տեղի մի երեք մղ-ոնաւ հեռի 'ի Մասքաթու, եւ Մասքաթ մնայր դատարկ 'ի զօրաց եւ բնաւին անտէրունջ, եւ պարսիկն առանց կասկածանաց վտանգի անզգուշաբար մտանէին 'ի քաղաքն, Եւ արաբացւոցն տեսեալ զապահովութի եւ զանզգուշութի թշնամւոյն դիպուկ ժամանակ խորհցան յարձակիլ 'ի վր նոցա եւ այսու հնարիւք կոտորեցին զզօրս Պարսից: Եւ այսպէս մասքաթցիքն յաղթող գտան 'ի վր Պարսից ոչ միայն 'ի ցամաքի, այլև յերեսս 'ի ծովու:

Եւ

Եւ մինչ Նադիրն կայր յայսպիսի պատերազմունս 'ի ցամաքի և 'ի ծովում, կրկին զօրաժողով լինէր մեծաւ պատրաստութեամբ ընդդէմ Օսմանցւոց, նզայսու ժամանակաւ պարսկաստան ճնշիւր 'ի մեծի նեղութեան յաղագս անհանդուրժելի եւանբաւելի տրոց եւանիրաւ հարկաց, եւ զանձք հնտտամնայ յոչ այլ ինչ օգտէր եթէ ոչ յաճախել զողորմելութի 'ի վերա ժողովրդեանց հանապազորդէին 'ի վը նոցա յաղագս անյագելի ագահութեան թագաւորին իւրեանց, եւ թէպէտ զանազան խորհուրդս առնէր Նադիրն եւ զօրս բազումս գումարէր առ 'ի լուծ հանել զ[illegible] բռնակալոյն տակաւին ոչէր մերձեցեալ նա զանձանց իւրոյ զօրս բերեալ էր 'ի հնտտամնայ եթողեալ 'ի քաղաքի:

Եւ արդ 'ի դէպէ մեզ զմտաւածել թէ այսուքիկ արարք Նորին, եւ նաանկութիւնք անիրաւ հարկապահանջութեանց հանդերձ կեղեքիչ եղառն հանգամանօք զօրպիսի վախճան պարտէին ածել 'ի վը երկրին եթէ որքան ազդու լինէր անիրաւութի նը 'սիրտս ժողովրդեան, այնքան մինչզի հազարք հազարաց միանգամայն 'ի յուսահատութի վարէին, բազմութիւք 'ի բազում գաւառաց եւ 'ի քաղաքաց խոյս տուեալ 'ի լերինս փախչէին, առ 'ի զերծանիլ 'ի բարբարոսական եւանողորմ հարկապահանջից, եբազումք փախնուին 'ի հիւսիսային կողմանս հնտտամնայ, այլքն յՕսմանցւոց տէրութի դիմէին վը պաշտպանութե եազատութե, եբազումք 'ի հարաւային սահմանացն ծովուն 'ի յարապստան փախչէին, այլքն 'ի դիպուկ ժամանակի խոյսային ընդծով 'ի տէրութիս հնդկաց զնային՝ եժողովուրդքն որք 'ի միջերկրայն պարսից բնակէին զոյն իսկ ճանապարհ կալնուին վասն փրկութե, հայք եայլ օտար ազգիք համահաւասար փոխչէին, ենովինչափով ձնչէին 'ի ներքոյ ծանր հարկապահանջութեանց, թողեալ զբնակութիս իւրեանց 'ի պատճառս վաճառականութե կամ ւխտագնացութե փախչէին յերկիր օտար, այնքան մինչզի հրամանս տուէին առ մաքսաւորսն ճանապարհաց քննել զճանապարհորդսն եառանց հրամանի միումէք թոյլ տալ անցանել, եստանոր ազատութի ելիցն խափանեցաւ, եզի դարուղայք եմաքսաւորս մեծաւ զգուշութեամբ կատարէին զհրամանն, եազգ պարսից սովորքէին ճանապարհորդել կանամբ իւրեանց եհամայն իրօք հարկաւորօք 'ի պէտս իւրեանց, յայսմիկ վաղճանի դժուարին լինէր ազատութի նոցա, թէև գիտիցէին կարողէին արդեօք ապրուստ հնարել ինքեանց յօտար երկրի:

Եւ այս լինէր գլխաւոր պատճառ զի Ջուղայ միահաղոյն ոչ դատարեեցաւ 'ի հայոց, եիշխանութին Սպահանոյ զոր վարկմամբ համարի զոլ 702: մղօն ընդերկայն, նոյնչափ ելընդ լայնութիւն, եպարունակէ զբազում գաւառս, եոմանք 'ի գաւառացս յառաջ բարեշէնքէին եբազմամարդք, բայց այժմ թշուառապէս աւերեալ ամայի լինէին, եզնշմարողս 'ի նոսա 'ի յողբ շարժէին, եքանզի բազումք 'ի բնակչացն փախուցեալ անհետ լինէին, եբազում ըղլերինն լուսանի ապաստան առնէին, երկիրք նոցին առանց հերկելոյ մնայքն տունք եբնակութիւքնոցա քակտեալ աւերէին, եայնքան մեծ լինէր աւերութի նոցա մինչզի գրեթէ՝ նեղութիւնք ձախորդութեանց պատերազմի եարշաւմունք բարբարոս թշնամեաց ոչ կարէին արկանել զժողովուրդն յայնպիսի ողորմելութի, որքան յաղթութի բռնաւոր թագաւորին իւրեանց արար զնս, որոյ համայն ջանքն թուէր խոնարհեցուցանել մանաւանդ զժողովուրդս իւր քանթէ զթշնամիս իւր:

Եւ յայսմամի տէրութի Օսմանցւոց վրդովեալ կայր 'ի պէսպէս կասկածանս, քանզի անուն Նադրին սարսափելի լեալէր նոցա վեցամօք յառաջ, եմինչև ցայսօր ոչ էր մերժեալ տակաւին 'ի սրտից նոցա երկիւղ համբաւոյ Նորին, եապստամբութի արաբացւոց (որք քանիցս անգամ պաշարէին զպարսպ եզ հաղորդութինս ճանապարհացն խափանէին) առաւել խռովութիս պատճառէին նոցայ

ցայ գուցէ միաբանեալն նոքա ընդ Թշնամիս իւրեանց, Թէպէտև Նատիրն տակաւին ոչէր յայտնեալ զպատերազմն. բայց նոքա միշտ իբրև զԹշնամի նշմարէին զնա:

Եւ խօսակցուԹիւնք վն դաշանցն որք եղեալ էին ի յարզրում յամնեանն յունվարի առ ոչ ինչ օգտէր, և Նատիրն հրամայեալ էր որդւոյ իւրում յխուն հազարօք ծնալ մերձ ի համատան ուր բազում Թնդանօթս ձուլել տայր, և վնայնորիկ տաճիկքն հարկաւոր համարէին զմեծամեծ զօրս պահել ի սահմանս Բաղդատու, բայց տակաւին յոյս ունէին ի հաստատել զդաշնադրուԹիւնս հաշտուԹեն, և առաքէր խոնդքարն զՄարուֆ Աֆէնտին ի դաղստան և անդ խօսիլ ընդ Նատրին յաղագս դաշանցն, իսկ Նատիրն ոչ կամեցաւ ըզխօսակցուԹի ինչ առնել վասն դաշնադրուԹեանց, այլ միայն խոստանայր Մարուֆ աֆէնտուն տալ նմա զպատասխանի ի յամնապատն մուղան, և ետ պատերազմին ընդ լեզկեացն զկերպ իմն ցուցանէր պահանջելոյ ի տաճկացն զհամայն պաւառսն որք ի Հայաստան ի փոքր ասիայ, և ի Վրաստան որք յառաջնումն տիրապետեցեալ քէին ի Թամուրլանկէն, և տաճիկքն այնքան աղմկեալք լինէին յաման խօսից նորա մինչ զի բայ ի մեծամեծ զօրացն զօրս գումարեալ էին ի Բաղդատ, և զօրում և այլ գունդս գումարել հրամայէին եմիաբանիլ յեղերս եփրատ գետոյն մերձ ի յարզրում:

Ի լրանալ ամին Նատիրն զԹուղԹ գրեաց խոնդքարն յորում կերպիւ իմն յօժարական ցուցանէր զինքն ի հաստատել զբարեկամուԹիւն ընդ ՍուլԹանին նաև գրէ զԹուղԹ առ Ահմէտ փաշային Բաղդատոյ յորում յիշատակէր նմա վն հաստատելոյ զդաշինսն ընդ Օսմանցւոց այնպիսի կերպիւ իբրուԹէ՝ որդէն երկոքին Թագաւորքն ի պատերազմ մտեալ էին ընդ միմեանս, և այս հնարս կալնուլ նա ոչ այլ ինչ աղագաւ այլ միայն վասն նենգելոյ զօսմանցիսն, և ի ձեռն մուծանելոյ զնոսա խաղաղուԹեն յուսով:

Եւ Ռուէսքն յայնմամի զմարտ յարուցանէին ընդդէմ Ռուսաց, և բազմիցս ջանային նոքա ի պատերազմ դրգռել զօսմանցիսն ընդ Ռուսաց առ ի զօրեղացուցանել զկողմն իւրեանց. բայց տաճիկքն տեսանելով զվտանգն ի կողմանէ պարսիցն՝ ոչ սահէին յորդայԹ նոցա, մանաւանդ զինորապէս բարձեալ էին ըզտարաձայնուԹիւնս ի միջոյ իւրեանց յաղագս դաշանցն նաև փոփոխուԹի ինչ ոչ պատահէ կարգայ եկամնայ տէրուԹէ Ռուսաց յաղագս խռովուԹե որ ի վաղճանի անցեալ ամին յարեաւ ի մէջ Ռուսաց:

Եւ տաճիկքն նուաճէին զերկուսին գլխաւորսն արաբացւոց որք զբէին ամուգան հոչէին և ապստամբեալքէին նոցանէ, տեսանելով Ահմէտ փաշային զի այսոքիկ գլխաւորք արաբացւոց յօժարեցեալքէին արկանել զինքեանս ընդ պահպանուԹբ Նատրին և հնազանդիլ նմա, առաքէր զքեահիայն իւր սուլէյման բազում զօրօք ի վրնոյա, և սուլէյման քեահիայն եհար զնոսա և դարձաւ անդրէն ի Բաղդատ մեծամեծ աւարօք:

Եւ բազմիցս պատշաճաւոր լինի Օսմանցւոց խաղաղուԹբ վարիլ ընդ արաբացւոցն որք բնականակէս են ապստամբք և անհաստատք ի կողմանէ հնազանդուԹե, ուստի քաջագոյն հնարն հնազանդեցուցանելոյ և խոնհարեցուցանելոյ զնս էր ի մէջ աղքատուԹե պահել զնս, և յաջողուԹին պատերազմիս այսորիկ կրկնապատիկ օգուտ լինէր ՍուլԹանին, այսինքն նախ յերկիւղի պահել զարաբացիսն զայնոսիկ և երկորդ զզգուշացուցանել զայլսն:

Եւ

եւ տաճիկքն դադարէին ՚ի խռովութենէ ՚ի կռուանէ գիտաւորութեան պարսից գրաւելոյն ՚ի վր պասրայու ; եւ զի նադիրն արդէն շինեալ էր շտեմարանս բազումս մերձ ՚ի սահման պասրայու եւ լցեալ զնո նպարակօք ; բայց յամենայնն , սեպտեմբերի հրամանս առաքէր վաճառելոյ նպարակն , եւ երջանկութի քաղաքին այնորիկ կրկնապատիկ լինէր ; քանզի ՚ի պատճառէ պատերազմին ընդ արաբացիսն աղքատութի մեծ լինէր ՚ի պասրա , եւ Ահմէտ փաշայն ոչ հաւատալով խոստմանցն բարեկամին իւրոյ նատիրին հրամայեալ էր հաւաքել ըղբաշխութի պաշարաց ՚ի կողմանցն պասրայու. եւ լինել զբաղմամբ , վասնորոյ վաճառումն պարէնից այնոցիկ օգնութի մեծ պատճառէր պասրայու , ուր ՚ի վերջոյն գետոյն եփրատայ ըղձալինդութի մեծ լինէր ՚ի մէջ բնակչացն բասրայու :

Արդէն իսկ նշմարեցաք զի զօրաւոր գոլն շահասիրութեն ՚ի մէջ ռուսաց , որդերագանց զտաւքան զհամայն մտածմունս ; եւ քանզի տաճիկքն եւս շահս ինչ հաւաքեցին ՚ի գնումն զայսոսիկ պարէնից , բայց զայսու ժամանակաւ վաճառէին նոքա պարսից ըղբաշխութի ձիոց ՚ի քիւրտուստան երկրէ տեղիս առեւտրութե օսմանցւոց ; քանզի անխափան պատերազմունքն այնքան վնաս եւ աւերութիւն պատճառէին պարսից հեծելա զօրաց զի մինչ կարօտանային ՚ի գնել ՚ի ձիս ՚ի տաճկաց եւ առանց ունելոյ զայս օգնութի ՚ի տաճկացն ոչ կարէին վարել զպատերազմն ընդ նո Թեպետեւ ագահութի փաշայից դատաւորաց եւ իշխանացն օսմանցւոց եւ տաճկաց պարտաւորէր զնոսա ՚ի շատ լինել , առայնպիսի տուրեւառութեն , այնքան մինչ զի յայսմ ամի աւելի քան զվաթսուն հազար ձիս օսմանցիքն եւ արաբացիքն վաճառէին պարսից , բայց ՚ի բազում ուղտուց եւ ջորւոց ՚ի պէտս բանակի թշնամւոյ իւրեանց նադիրին ,

Խորհուրդ Նատիրին վշտացուցանելոյ օսմանցիսն, և Նրբաղղնին պարագայք գործոյն Ահմէտ փաշային Բաղտատու, և եթէ որպէս Թողու Նատիրն զԲաղտատն, և հնարագործութիւն նախարարացն օսմանցւոց և որպէս առաքէ Նատիրն զդեսպան մի 'ի Բաղտատ և զիարդ խոնդքարն զպատերազմն հնչակէ ընդ դէմ Պարսից և որպէս Նատիրն պատրաստութիւն առնէ վասն այնր պատերազմին։

Եւ արդ կասկած պատերազմին տակաւին չփոթէր զգործս արքունի 'ի կոստանդնուպօլիս քանզի սոյնիսկ համահետևութիւն կրօնից զոր տաճիկքն այնքան շտապմամբ պահանջէին տալ 'ի խափանել զհեղումն արեանց աստանօր լինէր ենթակայ զարհուրման նոցա, քանզի վճիռն զոր Նատիրն հաստատեալ էր 'ի նստիլն իւր յաթոռ թագաւորութե ոչ երևէր զներգործութի ինչ առնել 'ի միտս Պարսից ազգին ուստի 'ի մերձ վախճանի այսամին հրամայէր Նատիրն հուչակել ազդել ամենեցուն թէ որովհետև ինքն խոստովանէր զկրօնս սուննիսն գալ ուղիղ, կամի զի համայն հնազանդեալք իւր հետևեսցեն շաւղաց իւրոց։

Եւ տաճիկքն արդ էին 'ի մեծի կասկածանս լինելով, յորժամ լսէին զլուրն զայն յաճախէր կասկած նոցին 'ի յապարանս արքունի, և գիտէին զի հուչակումն այսպիսի հրամանի էր ոչ այլ ինչ եթէ ոչ հնարագործութի Նատիրն զոր ունէալէր նայորինակէ աշխարհին առ 'ի գրաւել կամապականել զմիտս տաճկաց 'ի ձեռն նախանձաւորութեց կամ միաբանութեց կրօնից, և կարելիէր զի սոյն իսկ հնարիւք որով յաջողութի ընկալաւ, աշխարհն 'ի պատերազմին ընդ տաճկաց Նատիրն ևս 'ի կատար հասուցանիցէր զյաղթութի իւր 'ի վէր իւրեանց։

Եւ 'ի ժամանակս յայսմիկ 'ի պէսպէս կարծիս կասկածանաց անկանէին 'ի կողմանէ Ահմէտ փաշային Բաղտատու և նա կայր 'ի մէջ վտանգի փառամոլութե Նատիրին և 'ի մէջ վտանգի սաստիկ նախանձու նախարարացն արքունի, որք առ թագաւորաւն կային, թէպէտև Նատիրն բարեկամ ցուցանէր զինքն փաշային և անդնասէր ջանիւք փափագէր տիրել Բաղտատու, և ապարան թագաւորին 'ի մեծի տխրութե կայր յաղագս Բաղտատու, զի իբրև զանջատեալ համարէին զԲաղտատ 'ի տէրութէ իւրեանց, Արդարև եթէ չիցէր Բաղտատ ընդ իշխանութե և կառավարութե այնպիսի կարող և իմաստուն առն իբրև Ահմէտ փաշայն, դիւրաւ անկանէր Բաղտատ 'ի ձեռն Պարսից, տակաւին բազումք 'ի տաճկաց կոչէցին նմա զատելի անունն Նիզամ ըլմուլքին իբրև զ մանիչ թագաւորին իւրոյ։

Զոր ինչ և նկարծիս յամեցին կարծել 'ի Ցահմէտ փաշայէն նախարարք տան թագաւորին բայց զոր գրեմք աստանօր վասն նորա է յոյժ ճշմարիտ, զի նա 'ի ձեռն կորովամտութե և հանճարոյ իւրոյ, և 'ի ձեռն ամենախոհեմ գնացից իւրոց պաշտպանեաց զինքն, և ոչ թէ մատնելութե և կամ դաւաճանութե քաւ լիցի, և այնու շահեցաւ բարեկամութիւս ամենեցունց որք ծանեան զնա կամ ունեցան զմտաւնակցութի ինչ ընդ նմա պաշտօնեայք և նախարարք իւր ծառայեցին նմա յոյժ հաւատարմութե և յամի կախեալ կային 'ի նմանէ, և զյաջողութի նորա ինքեանց համարէին բայց վս առաւել առատաձեռնութե իւրոյ գանձարան իւր միշտ դատարկ լինէր, և վս այնորիկ դոյն ինչ չարիք մտին 'ի գործ առատաձեռնութե նորա, և քանզի բամիս պարտաւորեցաւ խնդրել գանձս 'ի թագաւորէն և այժմ վեց հարիւր քսակս դրամոյ 'ի յարքունեացն պահանջէր

զորս

զորս քէահիայն իւր Սուլէյման արդէն հարեալ էր, նաև հրէայք Բաղտատու, պարտաւորեցան տալ նմա զերկու հարիւր քսակս քանզի սառաֆ պաշին մուշի անուն մատնեցաւ վասն անօրէն գործոյ ընդ դստերն ամիրի միոյ ուստի և պարտէր նմա կորուսանել զկեանս իւր եթէ ոչ տային նոքա զերկու հարիւր քսակն, թող ըզեօթն հարիւր քսակն զորս փաշայն արդէն պարտիւր սառաֆպաշւոյն, Արդեօք յիրաւի էր թէ զրպարտութիւն ի վերայ սառաֆ պաշւոյն ոչ գիտեմք, բայց այնու վճարեցաւ հաշիւն:

Բարեկամութիւն զոր կարծէին հաստատ գոլ ի մէջ Նատիրին և ի մէջ Ահմէտ փաշային ոչ սակաւ խռովութիւն պատճառէր տաճկաց, և ոչ ունէին զկարողութիւն առ ի բռնութեամբ հանել զնա յիշխանութենէ իւրմէ նվասն երկիւղի զուցէ յուսահատութեան պատճառ լինին նմա թագաւորեցանելն զկասկածս սրտից իւրեանց, և ի ծածուկ զուն գործէին կատարել զհաւատարմութիւնս իւրեանց վասն նորա ուստի և հնարս բազումս խորհէին վասն որ ի մէջ որոց մինն առէն զոլ այս թէ առաքեսցուք զփաշայս ոմանս զօրօք ի Բաղտատ ի պատճառս օգնութեան ընդ դէմ Պարսից բայց ընդունայն լինէր այսպիսի խորհուրդ նոցա, քանզի Ահմէտ փաշայն նախազգած լինէր խորհրդոց նոցա և ոչ ընդունէր զօրսն զայնոսիկ գրելով թագաւորին թէ ես ունիմ զօր բաւական ի պահպանել զԲաղդատ և զսահմանս նորա:

Եթէ Ահմէտ փաշայն ըստ կարծեաց նոցա միաբանիցէր զօրսիւր ընդ զօրսն Նատիրին զհնազանդութիւն տիրապետելոյ երկրին տաճկաց, էր նմա կարելի, թէպէտև ոչ ունէր նա զայնպիսի զհաւատարմութիւն (զի յիրաւի անկարելի էր այնպիսի հանճարեղ և արի անձին գործել զայնպիսի անէքի գործ) արարողութիւնք նախարարացն արքունի ի կոստանդնուպօլիս, տակաւին երկուհեմութիւն զի պարտէին նոքա զգուշանալ յամենայնից կողմանց վասն փրկութեան տէրութեան, և հանգամանք կացութեան Ահմէտ փաշային յայնմ ժամանակի հարկէր զնա ցուցանել զինքն այնպէս առ ի յերկիւղի պահել զխոնդքարն, զի մի մինն խապառ յաղթելով միւսոյն պարտաւորեսցէ զինքն եղանել յիշխանութենէ իւրմէ:

Եւ արդ եթէ տաճիկքն վարէին զմասն ընդ դէմ Պարսից, ազմնեալ կացութիւնքն յորս սահեալ էր Նատիրն ի տաղստան էր դիպուկ ժամանակ վասն նոցա յաջողիլ ի գործս իւրեանց. Զիարդ և իցէր զմխիթարութիւն ինչ ստանային նոքա ի տեսանելն զպատկութիւն յառաջադիմութեան Նատիրին հանդիպել հարուածոց ինչ, և այնու քաջադէպ, ժամանակ գտանէին զօրս գումարել ըզգանձս ժողովել, և պատրաստութիւնս, մեծամեծս առնել վասն պատերազմին:

Յամի 1743. յամսեանն փետրվարի յայսմ ամի ի բաց մերժէր Նատիրն համայն խորհուրդս իւր վասն Տաղստանի, թողեալ զդարպանտ գնայր յանապատն Մուղամ, վարանելով ի մտի զուցէ տաճիկքն իջցեն ի վերայ պարսկաստանի, և ինքն անպատրաստ գտանիցի:

Եւ խոնդքարն զճշմարիտ պատճառ ունէր խորհելոյ զի անկարելի էր իւրն հաստատուն հաշտութիւն ունիլ ընդ Նատիրին մինչև ունիցի զդիպուկ ժամանակ, խոնարհեցուցանելոյ զնա և նախարարք արքունի աներկմտաբար կարծէին զի, յաջողութիւն նորա էր ի խորագիտութենէ և ի զօրութենէ տրոյն՝ յարիութենէ, և ի քաջահմտութենէ նորին զինուորական հնարագիտութեան, ոչ այքան վտանգաւոր համարէին զնա, որքան յառաջն կարծէին, նորա և խորհէին զի ոչ ինչ կարաց առնել նոցա մատնողական և նենգաւորական հնարիւք, և օրըստօրէ բանային զաչս

իւրեանց

իւրեանց ծնգաւորս իւրեանց խնամային, այլև զգոյն սխալմամբ իւրեանց յաղագս կորուսանելոյ զազգում յաջողակ ժամանակին, ուստի և այլ պէտ օգտակար և պիտանի պատրաստութիւն առաջին հնարս մարթելոյ առ՚ի փրկել զինքեանս յաղագս վրդովմանցն:

Եւ ալի փաշայ վ՚ազիրնյամ զօրութե՜ ջանայր ՚ի բայց հանել Ջահմէտ փաշայն ՚ի Բաղդատու, կյամախէր նախանձ նորին այնքան մինչ զի ասէին, թէ գրէր սուլթան փաշայի միոյ որ յայնմ ժամանակի կայր ՚ի Բաղդատ զհնար ինչ կարասցէ մարթել վասն նորա, նաև ասէին թէ զափտշիկ ուղարկեալ էր առ ՚ի բառնալ զգլուխ նորա, և իմանայր փաշայն զդաւաճանութիւն նորա և խափանէր զգործն հնարիւք, և ճանայր յիշխանութեան իւրում ա(թ)շնամինք, իւր փութով անկանէին յիշխանութենէ իւրեանց, և յամեան ապրէլի հրաման վերահաստատութեան զնայր առնա ՚ի Թագաւորէն, և իշխանք արքունի բարւք համարեցին առնել զայն զի բարձցեն զվէրմն ՚ի սրտէ փաշային զոր ընկալեալ էր նա ՚ի վէզիրէն:

Եւ Նատիրն առաքաէր միրզա զէքի անուն նախարար մոր կրայր հաւատարիմ, ՚ի Բաղդատ իբրև զդեսպան առ Ահմէտ փաշայն, և նա բազում խնամօք և յարգութեամբ ընդունէր զնա Եւ տաէր դեսպանն զփաշայն թէ տէրն իմ յուխտ եղանել կամի յիմամ ալի, և յայլ տեղիսն շուրջանտակի Բաղդատու զոր Պարսիկ սովորէին առնել, Եւ այս, խնդիրք անախորժ թուեցաւ Ահմէտ փաշային, Ջիարդ և ոչ էր ՚ի վճար պատույն զոր նուիրեալ նմա Նատիրն ՚ի ձեռն այս դեսպանին ինքն և առաքէր նմա զընտանին իւր Մահմէտ քեահիայն ընդ միրզայ զէքայն հանդերձ մեծամեծ ընծայիւք և թղթովք, և Նատիրն մեծաւ խնամօք ընկալաւ զՄահմէտ քեահիայն ՚ի մէջ ընծաւին այնորիկ կային, տասն ձիք յոյժ գեղեցիկ և ազնուեալք մեծագին զարդիւք և կազմուածովք, Եւ այս դեսպանութիւն յոչ այլ ինչ նշանակէր այլ միայն թէ հաստատէր զայն խաղ համբաւն և փառսն զորս Նատիրն միշտ յայտնապէս տայր Ահմէտ փաշային:

Մինչ դեռ այս տեսակ բարեկամութեան կայր ՚ի մէջ Նատիրին և Ահմէտ փաշային խանդքարն նկատէր զալէկոծութիւն որ հանդերձեալ էր լինել, ուստի ՚ի մեծասպան երորդն յունիսի զադին ձիոյ կախէին արտաքոյ պալատին ՚ի կոստանդնուպօլիս ՚ի նշան պատերազմին, և հրաման եղանէր յարքունուստ զի համայն զօրքն գումարեսցեն յեզր եփրատ գետոյն մերձ ՚ի յարզրում, և պարսիքն արդէն սկսեալ էին զպատերազմն և պարսրայ պաշարեալ կայր երեսուն հազար Պարսից զօրօք որոց միաբանեալ լինդ զխաւարս ամսոյս արաբացւոց առին զկիրզլան, յանդ իմամ պարբայիւ յայնկոյս գետոյն և աւերեցին բազում գեղօրայս ամենր քաղաքաւն և զբազումս ՚ի բնակչացն կոտորեցին և գկայնայս նոցա ՚ի գերութի վարեցին սոյնպէս և ՚ի սահմանս Բաղդատու բազումս քսասս հասուցին ժողովրդեան:

Եւ տաճիկքն մեծամեծ զօրս պատրաստեցին ՚ի կոմանս արզրումոյ և միւս բանակ մի ՚ի կողմանս Դիարպէքրու, և խորհէին գնալ ՚ի վերայ թշնամոյն, Եւ հրաման լինէր, նաև զօրացն Պարսից որք կային ՚ի սահմանս Բաղդատու և պասրայու փողփողակի գումարիլ ՚ի մուսուլ և անտի գնալ ՚ի Դիարպէքիր, և յորժամ կատարեցան համայն գործիք պատերազմին և պատրաստեցան զօրքն ՚ի պատերազմ, չուեաց Նատիրն ՚ի տեղւոյն և գնաց դէպ ՚ի վան, զխոհեմութիւն պաշարելոյ զորս սամանցւոց որք էին ՚ի Յարզրում և պարտաւորելոյ զնոսա ՚ի պատերազմ եղանել, և յայնժամ յերկուց կողմանց անկանիլ ՚ի վերայ երկրի նոցա, և առնել զյաղթութիւն իւր մինչև ՚ի բրատամպոլ Եւ այսպիսի դիտաւորութեամբ պատրաստէր զինքն ՚ի պատերազմ, բայց ոչ այնքան քաջաքերմ

արտին

որոնք ակնկալէր զպատերազմ՝ որպէս զառաջին անգամն, քանզի, Հայրաբեն զորս ընկալա-
ւեալ 'ի դաղստան կերպիւ իմն նուաճեցուցանէր զհամբաւ յաղթութե նորա որով ձախացեալ էր
'ի հնդկաստան, նաև նոյնու միափակ զօրաց իւրոց վասն պատերազմի յամ կողմանց պակասեալ էր:

Յայս Օսմանցիքն պահպանին զինքեանս եւ զի արդ Քանդահարօ-
թիքն, ևբնակոչեանքն ապստամբեին, եւ այս տաճիկքն առաջեն
զայրումն 'ի պարսկաստան, նաև միաբանին ընդ գնդի միոյ լեզկեաց
և Պարսից 'ի Շիրվան, և այն զօրք Պարսից (որոց գլխաւորն էր
Զենարալի միրզայն) հարկանէին զնոսա և զիւարդ նուաճեցան զա-
պատամբութի թագի խանին Դեշիրայ:

Եւ արդ զկնի չորեքտասան ամեայ ժամանակաւ պատերազմելոյ ընդդէմ Պարսից զօրաց սկան-
դի ջանիլ, և տաճիկքն սկսան քաջալերիլ, եւ ամրացուցանէին զմուտս ընդ դէմ Պարսից
և պարսիկքն 'ի դուր, մեծամեծս աշխատէին առնել Մուսալայ, զոր բազում կորուսանէին
յառաջի քաղաքին այնորիկ, և 'ի վախճանի պարտաւորէին 'ի բաց հեռանալ անտի, եւ Ալի
փաշայն իշխանն դիարպէքրու իշխէր բազմախումբ զօրաց ազգուշանայր յամեցից կողմանց եւ բե-
րդ հմուտ և քաջ Սպարապետ առ 'ի խափանել յառաջադիմութի Պարսից, այնքան, մինչ զի թէ
կարող և ոչ էին պաշ[illegible] քն յաջողել 'ի գործս իւրեանց 'ի վե Մուսալայ, կայր յանդիման նոցա
Ալի փաշայն ամ պատրաստութե, բայց ոչ կարացին առնուլ զմուտսն, և [illegible] զօրան
մուսուլէցիքն առ 'ի յոչ յառաջ խաղալ որով հետև ունէին զերկիր մի յետոյս իւրեանց որում
թշնամին չէր տիրապետեալ:

Եւ ետես Նատիրն զի Օսմանցիքն յամ ուրեք 'ի պատրաստի էին պատահել ինքեան պատե-
րազմաւ զգաղաքս բազումս ամրացեալք էին քաջամարտիկ զօրօք ընդ դէմ Պարսից, ամենա-
խոհ լինէր Նատիրն զի ոչ նենգութե և կամ պատրանօք կարէր առնել քաղաքս այնոսիկ և ոչ
երկիւղ քաջութե իւրոյ 'ի հնազանդութի կարէր ածել զնոսա, նաև իմացեալ էր զի անկեալ
գործոց իւրոց և բարք խորընդ ազգին իւրոյ յայնպիսի վախճան յուսահատութե ածեալ էին զպար-
սից զի պատրաստ էին վտարանջել, կամ ապստամբել նզբէթէ իւրեանց պատասխանելոց էին եթէ
հարուած ինչ հասանիցէր նմա 'ի յՕսմանցւոյն, և այնու թշնամութի իւր չարաչար լինի, և
քանզի տաճիկքն պահպանէին զինքեանս և զերկիրս իւրեանց, վարէին զպատերազմ ընդ նմա
և այնու ոչ էր կարելի վճար լինել պատերազմին 'ի սուղ ժամանակի, վասնորոյ բարեգոյն համարո-
էր թողուլ 'ի կողմանս քաղաքացւոյն և անդ թողլին զնա տաճիկքն անվնաս մնալ:

Եւ յայսմ իժամանակի իբրև երկու հազարաւուն Քանդահարիք զօրս արքայն Պարսից տարեալ էր և
բնակեցուցեալ 'ի գաւառն Խորասանոյ, յետ գաւառային 'ի սեֆհական երկիր իւրեանց և անտի խայա-
տային 'ի լերինս 'ի մտի դնելով Թ․Թափել զանձին, իւրեան 'ի լծոյ Պարսից և երկնչէր Նատիրն
զի ուսէ մի ոսքն ևս հետևեսցին օրինակի նոցա, վաղվաղակի առաքէր զգունդ մի հզօր 'ի յեզ-
դեկից առ 'ի նուաճել և յերկիւղի պահել զնոսա, եւ բալուչեանքն ոչ առաքեցին նմա զօգնու-

ոչ զօրաց եւ ոչ զրահից, և հարկանէին զգունդն որք գնացեալ էին 'ի վերայ նոցա:

Եւ բազում բնակիչք 'ի շրջակայից հարաւային կողմանցն, նաեւ բնակիչք ծովեզերայն առեանելով զխախտումն տէրութեան Նատրին զէնս կալնուին, եւ Թաղի խանն իշխանն Պարսիստանի եւս ապստամբեաց, ոչ միայն էր խան, այլև բէկլարբէկի, և ունէր շնորհս մեծամեծս յառաջի Նատիրին, և ունէր հրաման կրելոյ զփետուր 'ի ձախակողմն գլխոյն նմանելոյ 'ի վերայ փողի եւ այս փառք մեծութեան երկուց կամերից միայն էր շնորհեալ 'ի ընդհանուր թագաւորութեան Պարսից, և պատերազմունքն զորս արար Թաղի խանն 'ի վերայ Մասկաթու նուաճութեան ինչ պատճառեաց համբաւոյ իւրում յառաջի Շահին, և քաջ բազմախան ոմն ընտանի Շահին է. և 'ի ներքոյ հրամանի Թաղի խանին, առ այնքան առաւել լինէր Նատրին, և լսա [illegible] այնքան սրտմտէ. վճ զօրամինչ զի հրաման առաքէր առ Թաղի խանն համանել զդլուխ նորին, իսկ Թաղի խանն միջնորդլեալ աղաւտէր զնա 'ի մահու, եւ յետ սակաւ ժամանակի Թաղի խանն գգայր զմատնելութի ինչ ընդդէմ իւրոյ անձին, քանզի Նատիրին շնորհս մեծամեծս խոստանայր վերոյ իշխալ ընտանեաց իւրում առաքէր զԹաղի խանն կապեալ 'ի բանակ իւր, բայց տատանի ոմն որ կայր 'ի միջի նոցա 'ի հարկէ արտայայտէր զբանն, և երկոքին սոքա ատեանէնին յայտնապէս զի հատատութիւն փրկութեան իւրեանց էր նոքա որոնել հակառակելոյ բռնաւորին, որոյ յետոյն խաբէութիւն կարի անողորմ երևէր նոցա:

Յարմարին կացութեան խորհուրդ 'ի մէջ առնելով Պարս փրկութեան որոնէին, առաւել և 'ի յետոյ զնէին ապստամբել, Եւ առ 'ի զիւրացուցանել զկատարումն խորհրդոյն դաշինս կուէին 'ի միջի իւրեանց այսու կերպիւ, Թաղի խանն առաջարկէր նոցա եթէ զնալ կամ 'ի բանակն թագաւորին առ 'ի ծանուցանել զուղղութիւն իւր Շահին, նաև ասել թէ Քալբալի խանն եւ յետ երկուց կամ յերից աւուրց գնալոց է, և պատճառս ոչ ժամանակի երանելոյ նորայ անուն է, զի նշան ինչ ապստամբութեան երևէր անդ յորոյ պատճառս հարկ լինէր նմա այսպէս, Քալբալի խանն մնալ անդ 'ի Շիրազ առ իւր ինչ, Եւ յետ այսպիսի Պարսից յետս դառնայր Թաղի խանն անդրէն 'ի Շիրազ, և պատճառելով թէ շրջակաց ժողովուրդ երկրին զէնս բարձրացուցեալ ապստամբեցան ընդդէմ թագաւորին հինգ հազար զօրս ժողովէր նաև կալնոյր զհամայն զօրս նաւացն որք էին 'ի կիրճն Պարսից ծովուն:

Եւ մինչդեռ այսպիսի ձայնք դղրդմանց և ալէկոծութեանց լինէին 'ի հարաւային կողմն սահմանացիքն դիպուած ժամանակ համարեցին դուդուել և բորբոքել զապստամբութիւն ինչ 'ի հիւսիսային կողմն, Եւ գործիքն 'ի գլուխ հանելոյ զդիտաւորութիւնս իւրեանց էին լէզգիքն, Եւ նախանձ վրէժխնդրութեան որ կայր 'ի սիրտս ազգիս այսորիկ յաղագս մեծամեծ ջանիցն զորս արդ Պարսից արարին յանցեալ ամին առ 'ի նուաճել զնոսա, տատանի ցանկութեան դիպուկ ժամու ապստամբելն վշտացուցանել զազգն Պարսից Եւ տաճիկքն բարւոք իմանային զի թագաւորութիւն Նատիրին արդէն իսկ առաւել լեալ էր Պարսից, նաև կարծելի է զի եթէ Դաղստանի գլուխ չարժեալ է առնելով թէ 'ի Յուհմէ Սէֆոյն եմ ես բազում վրդովմունս կարէր յարձակել 'ի վերայ Նադրին Եւ այստու դժուարութեան գուգուէին զայր մի պարսիկ Սամ անուն, որ ասէր զինքն զոլ կրտսեր որդին Շահ Հուսէնին, նաև համբաւ տարածէին թէ Սէֆի միրզայն մեծ որդին Շահ Հուսէյնին էր տակաւին կենդանի, և է 'ի միջի իւրեանց այսպիսին սամանցուցեալ, և ինքեանք պահէին զնա Եւ այրս այս Սամ անուն ինչ յառաջ երևէրի երբեմն 'ի պարսկաստան 'ի ջգեստ Դաւրիշի եւ ծածուկ քարոզէր ժողովրդեանն թէ ինքն էր 'ի Յուհմէ Սէֆոյն եւ առ 'ի սանդալաթ եւ մանծանօթ պահել

զծնա

զծնունդ եղբօրորդւոյն իւր պղծեցեալ էր զայն կերպարան, եւ Իբրահիմ խանն եղբայր Նատ-իրին դալեալ էր զնա եւ Նիշխան անարգանաց նորա, հատեալ էր զծայր ունգաց նորա, եւ պանծ-կեալ զնա, եւ յայնուհետեւ կոչէին զնա քիթն կտրած:

Եւ այժմ բնակիչք Շամախու ընդունէին զպահանջօղն թագաւորութեան մեծաւ պատկառանօք եւ հնազանդութեամբ, ուստի կարողութիւն առեալ Սամն զօրաժողով լինելոյ եգումարէր իբրեւ զվ-եցտասան հազար արս որք ըստ մեծի մասին լեզկիք էին Եւ այս քաջամարտիկ լեռնականք արշաւեալ էին ի Շրջակայս Դարպանդու զկնի Նատիրին չուելոյ անտի, եւ խռովեալ էին զքա-ղաքն, Եւ օգնութեամբ խաւարային գիշերոյ զվառօդ բազում լցեալ էին ի պատառուածս պարսպացն եւ զհրդեհ եդեալ ի վերայ փառեալ էին զայն եւ այնու վնաս մեծ հասուցեալ էին քաղաքին, թէպէտեւ ոչ կարողացեալ էին առնուլ զքաղաքն, սակայն զհնարագործութիւն զայն բազմիցս ի կիրարկեալ էին, Եւ բազում անգամ եհեղ մեծամեծ գնդօք գիշերայն եղեալ իբրեւ զկարկուտս ածեալ էին ի վերայ զօրացն որք զպարիսպն պահէին, եւ փութով խոյս տուեալ փոխեալ էին զտեղիս իւրեանց, եւ պարսիկքն այսպէս շուարեալ էին թէ զի արդ կարասցեն ի գործածել զթնդանօթս եւ զհրազէնս իւրեանց ի վերայ նոցա, Եւ հնարս բազումս խորհեալ էին երբեմն խորախտական եւ երբեմն համոզական բանիւք մինչեւ ի հնազանդութիւն ածել զլեզկիսն Եւ բազմիցս ելեալ էին գունդք զօրաց ի քաղաքէն արտաքս եդրեմեալ ի վերայ նոցա պատերազմաւ եւ չարաչար անողորմութեամբ գործեալ էին յերկոցունց կողմանց բազումս ի զինուց իւրեանց Եւ որք յանձնեալ էին զինքեանս առանց հակառակելոյ եւ երդուեալ էին ոչ երբէք զսուր առնուլ ընդ դէմ Շահին զազատութիւն առնուցեալ էին ի Պարսից Այլ վասն ինչ առեալ էին վասն լեզկեացն զի եթէ որք ի նոցանէ տուրեւ առս առնիցէ ի պարսկաստան ազատ լիցի ի ծառայից եւ հրամա-նագիր շնորհեսցին նոցա ի պաշտպանել եւ ազատ պահել զնոսա բայց այս ամ առ առկաւ եգրե-թէ առ ոչինչ օգտէր:

Եւ վասն հանդարտեցուցանելոյ այսպիսի պատերազմաց եւ խռովութեանց այնքան մեծամեծ վիշտս կրէր Դարբանդ եւ գրեթէ նովին չափովորով կրէաց ի ժամանակ եկանելոյ Նատիրին անտի, եւ համայն սուրբ նոցա, անդր քան զվեցտասան ամեայն, պարտաւորէին զառ րառնուլ, եւ զնոցա այնդր քան զչորեքտասան ամեայնստային նորագումար զօրացն ընկնանելու եւ ինքնորէն հրամանաւն իշխանի քաղաքին, բաց ի խողութենէ կերակրոյն յորմէ բազմութիւնք ի քաղաքս մեռանէին:

Յամի 1744: ի սկզբան տարւոյս պահանջօղն թագաւորութեան Սամն չունէր զօրս երովք որք ըստ մեծի մասին լեզկիքէին, եւ առ այր հարկանելով զօրս գտանէին ի Ճանապարհի յառաջ խա-ղային, եւ որք երկու հազարք ի Պարսից զօրացն որք հաստատեալ էին Շահին ջանային հա-կառակիլ նոցա պատերազմաւ, իսկոյն խորտակեալ առաջի Սամին ի փախուստ դառնային, զար-հուրեալ դղրդեցուցանէին բոլոր յերկիւղէ ապականութեանց նոցա, եւ առաքէր Նատիրն զօր-դի իւր Նէսրալի Միրզայն քսան եւ հինգ հազար զօրօք, եւ լեզկիքն միաբանեալ բազում արամբ գաւառին այնորիկ խստապէս ընդդիմամարտէին ընդ նմա, եւ յետ բազում արիանալութեանց խորտակէին նոքա առաջի զօրացն պարսից մերձ ի տեղին ուրգեան կուր եւ երասխ միաբանեալ ընթանան, եւ այսէր տեղին ուր Նատիրն ի թագաւորութիւն ընտրեցաւ, եւ ի նմին տեղոջ ուրժա-ղովելոց պարսից ցուցին զապացուցութիւն յիմարութեան եւ ապականութեան իւրեանց կանգնեցաւ ար-ձանագիր կամ յիշատակարան զորութիւնեաց եւ թշուառութեանց նոցա, քանզի յայսմիկ տեղւոջ հր-ամայէր Նատիրն շինել զարձան ի գլխոց մարդկանց ի յիշատակ այսորիկ յաղթութեան, առ ի խր

ատ

առելնիլ Քանդայորդայ բնակչաց գաւառին, գտաւ Շահնայ յաղագաց ինչ յաջողութեան:

Եւ փախնոյր Լքանն Եօթմանասուն արամբք բայց փութով կալնուին զնա, եւ հրամայեր Նատիրն որդւոյ իւրում՝ բրել զաչս նորա, եւ առաքել զնա 'ի դուռն խոնդքարին պատգամաւս այսուիկ, թէ Նատիրն անարժան համարեաց սպանանել զայսպիսի այր մի անարգ եւ Թշուառական, թէպէտեւ խոնքարն զպահանջմունս իւր կնքեալ երգոլ Ճշմարիտ, նա 'ի Յորհմէ Սեփեայն

Եւ արդ 'ի պատճառէ այսորիկ աջողութեան, գրեթէ համայն գաւառք աւերեալ ամայի լինէին, եւ յայսմիկ ժամանակի աջողութեամբ Թաղի խանին, լինէր յոյժ զգալի, Սաէբ միոյն 'ի հնազանդացն վերջին ազնուականացն Պարսից թէպէտեւ տարաբախտութեաց դիպեցաւ 'ի ծովային պատերազմունս իւր ընդ արաբացին, բայց ունէր տակաւին ընդհանրաւ կարող եւ գործունեայ նախարարի եւ քաջ սպարապետի, եւ այսպիսի յառկութի նորա արարեալ էին զինքն ենթակայ չարակնութե, (այսինքն հաստատութե) Առաքէ Նատիրն զունդ միտասն եւ ութն հազար արանց 'ի Շիրազ 'ի ձեռն միոյ 'ի հնուստ ուպարապետացն իւրոց, եւ այս զօրք այնքան հզօր եւ առելի էին քան զօրս Թաղի խանին մինչ զի Թաղի խանն ոչ իշխէր ընդ առաջ ելանել նմարտնչել ընդ նոսա 'ի դաշտի, այլ ամրափակէր զինքն 'ի մէջ քաղաքին:

Եւ մինչ ցայսր ժամանակի Շիրազ որ մայրաքաղաքն է Պարսաստանի երկիցս անկեալ էր 'ի Թշուառութի, անգամ մի 'ի թուին 1724. եւ կրկին Թուին 1729. եւ այժմ դարձեալ վճռեցաւ նշաւակ լինել Թշուառութե եւ պատուհասի. Եւ արդ Թաղի խանն պաշտպանէր զքաղաքն քանի շաբաթս ինչ բայց 'ի վախճանի զրոհ տային 'ի վե քաղաքին եւ առնուին զնա յարձակմամբ եւ պատժէին զբնակիչսն չարաչար պատուհասիւք, առաջնորդս նոցա ըստ մեծի մասին կնքեալ 'ի յարքունիս տիրապետէինս եւ բազում այլք զոր ամբարձեալ էին ընդ դէմ թագաւորութե մահու կորուսանէին կամ զաչս նոցա բրէին, փախչէր Թաղի խանն քանի մի բարեկամօք այլափոխեալ բայց փութով գտանէին զնոսա մատնողութե ապաստանողաց նորա, եւ տարան զնա 'ի սպահան հանդերձ սիրելի կնաւ իւրով եւ բազում մեծամեծօք ընտանեօք եւ բարեկամօք որք էին իւր անձինք քառասուն:

Եւ տեսեալ այս բռնաբարեցան յանդիման աչաց առն իւրոյ միոյ հասարակ զօրականէ որեք աստիկ եանչարի աղձատանն եապականեաւ փառաց առին առն այնորիկ, եմանաւանդ ներհակ բնական շնորհաց եպատուոյն զոր ունէր Նատիրն առ կանայսն 'ի հասարակի, Այդպիսի եբարեկամք Թաղի խանին մահու հորնչէին եւ յետ բրելոյ զմին յաչաց նորա հանին եւ զամոլձս նորա աստիկ հրամանաւ զի մի մեռցի 'ի վշտաց եւ ասէն թէ Նատիրն երդուեալ էր չսպանանել զԹաղի խանն, վն որոյ այսպիսի յնորքական պատժիւք պատժէր զնա առանց 'ի բայց բառնալոյ զկեանս նորին, Շահն համարէր զնա այր ուղիղ եառաւել գործունեայ քան զայլ բազում նախարարարս իւր, եշնորհելով նմա կեանս յուսայր 'ի նմանէ մեծամեծ հաւատարմութիս, Արդ զինչս արդեօք կարեմք տրամախոհել վասն այսոցիկ գործոց նորա, որ յետ այսպիսի կերպիւ վրէժխնդիր լինելոյ նմա տայր նմա զիշխանութին քաբուլայ, ուրեմն ընդէր առնիցէր նա զայս ուստի երեւի գոլ 'ի նիւթոյ եւ 'ի ներգործութեց յնորից զոր բազմիցս նշմարեցաք 'ի յայլ բազում գործս նր զայս առնելով նշանակել կամէր թէ ինքն էր սիրող հաստատութե կրօնից եկանոնացն օրինաց թէպէտեւ գործքն այնոցիկ բնաւին հակառակ էին դիտաւորութե մարդկան:

Յաղագս ապստամբութեան որ եղև յառօրապատ Էւս թէ որպէս կլցի վաճառականաց կողոպտեցան Եւ որպէս Նատիրն դարձաւ 'ի տաճկաստանայ 'ի պարսկաստան, Եւ թէ որպէս հուչակ տարածեցաւ թէ Նատիրն 'ի բաց հրաժարեցաւ 'ի թագաւորութենէ թըշուառութի պարսկաստանի, Եւ մեծամեծ պատրաստութիւնք պատերազմին, 'ի կողմանէ տաճկացն, Եւ որպէս Նատիրն գնաց յերկիրս տաճկաց, Եւ որպէս լինէր պատերազմն մերձ 'ի յերևան Եւ զի արդ յաղթեցան զօրք օսմանցւոց։

Եւ արդ պատերազմունքն յաղագս տարաձայնութեց 'ի մէջ մի և նոյն տէրութե ընթանայր իբրև արշաւանս սաստիկ ջրոյ, Եւ յամսեանն յուն վարի յայսմ ամի, ղաջարքն ասորապատու 'ի բաց ընդ կենու քն գլուծն 'ի յանձանց իւրեանց, և ընտրէին զՄահամատ Հասանն իւրեանց առաջն որդ և գարագլուխ Եւ գումարեալ զգունդ մի 'ի թուրքմանից և թաթարաց, որք սահմանակիցք էին ինքեանց տէրէին գաւառէն, և տանէին ընդ գանձս Շահին և կողոպտէին զհարուստ կարաւան մի ինկլիզի կոմպանոյն որք բնակէին յերկրին ռուսայնորք 'ի ժամանակս յայսմիկ ջանային աւերանս հասարէլ ընդ ծովն կասպից 'ի մաշատ որ յաժմ իբրև զթագաւորանիստ համար իւր:

Եւ արդ զինչ և կարէր լինիլ աւելի ապացուցութի բօթալից նիւթոյ քննարական իշխանութեն քան զապստամբութի բարբարոսութեցն որք հասին 'ի վերայ գաւառի, Եւ Մահամատ Հասանն ունէր զհամապատասխանութի ընդ վերոյ յիշեալ Սանին և ընդունէր զնա իբրև զթագաւոր Եւ յառաջադրեալ էր 'ի միտ թէ մինչ Սանն ափրապետէր արևմտեան սահմանացն ինքն նուաճեսցէ զծովեզերան կասպից ծովուն 'ի հարաւային կողմանէ, Եւ հազիւ կարէր երիս հազար զօրս գումարել Եւ թէպէտև Սանն իշխէր տասն և վեց հազարաց բայց ոչ էր կարող ընդդիմանալ բազմախուռն զօրաց Նատիրին, տակաւին կողոպտումն գանձուցն կարաւանին 'ի կորուստ և 'ի յապականութի ածէր զյիմար հետևողսն Մահամատ Հասանին զմանաւորն և զմիամիտքն այսորիկ ապստամբութեց յայլում հատորի պատմեալ եմք, այլ զայս միայն յաւելում ասել, զի այսորիկ զօրք ղաջարաց և թուրքմանաց, 'ի յամսեանն հետևելոյ խորտակեալ ցիրեցան լինէին առաջի տասն և հինգ հազար զօրացն Շահին որք հասին 'ի խօրասանոյ և այսու պատճառաւ գրեթէ բոլոր գաւառն այն յապահովութի վարեցաւ, և զկնի այնորիկ, Նատիրն խորհեցաւ առաջել ընդ զխումբ մի զօրաց և շինել զբերդ մի 'ի ծովեզերն կասպից յարևմտեան կողմն, առ 'ի յերկիւղի պահել զթուրքմանս բայց պակասութի ջրոյն 'ի յանապատս գաւառացն այնոցիկ խափանէր զկատարումն խորհրդոյն

Արդ եօք մտածմունք կատարգործութեցն կամ թէ զինչ այլ դիտաւորութիք հակէին զՆատիրն աստանօր իսկապէս ցուցանել զնշանս աիրոյ առ յիրաւունս, Ահաւասիկ տեսաք զարդարութի բղխեալ 'ի յանիրաւէ, և զբարութի 'ի չարադաւնեղէ Եւ զոր շնորհս եցոյց նա յայսմիկ դիպուածոյ ինկլիզ վաճառականացն պարտին անմոռաց լինիլ, քանզի համայն գանձս զորս կողոպտեալ էին 'ի նոցանէ հրամայեաց տալ նոցա փաքտօրանոյն, կամ պալիօզներին:

Ոչ ուրեք ընթերցաք արդեօք Նատիրն զաւակ ինչ առաջաւ 'ի հօրքուերէն Շահ Հուսէյնին թէ ոչ, սակայն գժբախտ որդի իւր Ռուբղայղուլի միրզայն որ ունէր զմին 'ի քուերցն այն իսկ թագաւորին 'ի կնութէ, ունէր զորդի մի 'ի նմին կնոջէն որոյ անուն էր Շահռուխ և էր այժմ իբրև տասն ամաց, և աւէն թէ Նատիրն յամիկ ժամանակի խորհէր հաստատել զթագաւորութիւն յանուն Շահռուխին եգի կարգաւ իշխեալ էր նա 'ի տոհմէ Սէֆեւոյն 'ի կողմանէ մօրն, և եթէ ինքն գնալ կամէր 'ի քաղաքն Ղանդ դադարել 'ի յաշխատանաց իւրոց, և անցուցանել զմնացորդ մասն կենաց իւրոց հանդարտութեամբ, և այս միտք նորա երևի բաղկանալ մանաւանդ 'ի յաղմկեալ պարագայիցն գործոց, քան թէ 'ի ձանձրութենէ, և ևս եթէ յիրաւի կամէր նա իբրաւ թողուլ զթագաւորութիւն իւր, կամ եթէ կարէր նա հաստատապէս խաղաղութեամբ և առանց վտանգի 'ի–բաց թողուլ զհրաման և զիշխանութիւն զօրաց իւրոց, նաև թէ կարելի էր արդեօք զի Շահռ–ուխն որ ծնեալ էր յայնպիսի վրդովեալ ժամանակի յորում հայր իւր զրկեցաւ յաչաց իւրոց վ̃ն ապստամբութեան ընդ դէմ ծնողի իւրում, և որոյ մայրն կամաւ առեալ էր զդեղ մահու զի մի տեսցէ զմահ բազմաց 'ի յընտանեաց իւրոց, զոր կոտորեցին 'ի պատճառս ապստամբութեան այնորիկ, և մանաւանդ թէ զիարդ կարելի էր Շահռուխին, (թէև ծննդեամբ էր թագաւորազու–) հանդարտապէս և խաղաղութեամբ տիրապետել զթագաւորութ̃ յայնպիսի աղմկեալ ժամանակի:

Յայսպիսի վրդովեալ ժամանակի թագաւորութեան, յանուանէ Նատիրին զայնպիսի փոխանորդ 'ի տեղի, իւր կարելի էր գահընկէց առնիցէր զինքն, և այր խոհական նախապէս տեսանէր զդղրդմունս որք հետևելոցէին զկնի մահուան Նատիրին թէև ժողովուրդք ջերմեռանդն ըղձիւ ցանկային լսել զմահ նորա, և բնականէ կարծել զի որովհետև Նատիրն զրկեալ էր զաչս անդրանիկ որդւոյն իւրոյ՝ Ռուզայղուլի միրզայն, երկրորդ որդի իւր Նէսրալի միրզայն հարկ էր ընդունակ և ժառանգորդ լինիլ Պարսից թագաւորութեան, բայց սա զոչ ինչ նշան քաջութեան երբէք էցոյց արժանի թագաւորելոյ 'ի տեղի Նատիրին, և ալի Ղուլի խանն որդին իբրահիմ խանին էր արդէն համարեալ ընդունակ փոխանորդելոյ Նատիրին և ամենեքեան զնա նշմարէին արժանի կրելոյ զպսակ թագաւորութեան 'ի գլուխ իւր, և այնպիսի կարծիք առաւել հաստատեալ լինէին իշխանութեամբ նորին 'ի վ̃ր խորասանոյ, յաղագս աշխարհաշէն լինելոյ նորա և մանաւանդ վասն բազմաքնակ աշէն առնելոյ զգաւառն խորասանոյ առանց վշտացուցանելոյ զժողովուրդն, և յաղագս առատաձեռնութեան նորա:

Արդէն իսկ ասացաք թէ յորպիսի թշուառութի̃ վարեցաւ պարսկաստան յաղագս ագահութե̃ Նատիրին և վասն անգթութեան, որոյ նորա զհետ յաղթութե̃, և յաղագս երկիւղի ցրուելոյ զօրացն յինքենէ, բազմիցս տեսանեմք յամ բարեկարգեալ երկրի, զկնի հերկար պատերազմաց հետևին խաղաղութիւնք բազում ժամուք, և մանաւանդ 'ի յապարէն և յանկարծ գնացից այնպիսեաց որք դատարկ և թափուրք էն 'ի հանճարոյ և 'ի բարեպաշտութենէ, առ 'ի վաստակել ապրուստ անձանց իւրեանց, Ապա երկիր մի, ուր բնութին ոչ գտանին միտք բարոյականք գործոց և որոց ժողովուրդն են այնքան վշտացեալ 'ի ներքոյ ծանրագոյն լծոյ յափշտակողին առանց երկմտելոյ պարտիմք հաւատալ զի նախկին ապստամբքն լինելոյ էին զօրք Նադիրին յորում ժամու և արձակիցէր զնոսա 'ի գործոյ, և քանզի արդէն իսկ անիծանէին զնա ոչ միայն սրտիւք այլև բերանովք իւրեանց և յայտնապէս ասէին թէ ոչ ունի նա զսիրտ մարդկային, և զինուորական քաջութի̃ իւր չէ բաւական արժանաւոր ցուցանելոյ զնա թագաւորելոյ 'ի վ̃ր իւրեանց և բայց յայսցանէ բնական պարսիկք որք էին 'ի բանակի նորա յոյժ նուազ էին թուովք քան զթաթարսն կամ օզբէկսն և զայլ ազգս նորա 'ի հարկէ և պարսիկքն համարէին զինքեանս

իբրև

իբրև զպատերազմօղս ՚ի ներքոյ այնոցիկ ազգաց, զորս ինքեանք արհամարհեալ ասէին: Եւ ժողովուրդք երկրին առհասարակ յուսահատեցան տեսանելով ստացուածս իւրեանց կեղեքեալ ՚ի յինքեանց, ուստի այնքան ժամանակ միայն դադարէին ՚ի յապստամբելոյ՝ որքան սանձեալ լինէին ՚ի յերկիւղէ մեծամեծ զօրաց:

Եւ արդ ոչ գոյ առաւել նշան չարութեան ՚ի մէջ մարդկային ազգաց որով ինքեանք պատճառէին զպատիժս անձանց եւ զխոնհարումն փառաց իւրեանց, քան զարհամարհելն զօրինաւոր թագաւորին իւրեանց, եւ այսպէս ազգ պարսից այժմ ողբային եւ աշխարհն ՚ի ներքոյ բռնաւորական լծոյ յափշտակչի միոյ՝ որոյ եղեալ գոտսիր ՚ի վր ուսուց նոցա անխափան անողորմութեամբ ճնշէր զնոսա, եւ մեք առաւել զարմանամք ընդ այսմ թէ զիարդ երկիր մի ներպիւին աւերեալ նամայի եղեալ, կարող լինէր պարէն տալ այնքան բազմաթիւ զօրաց:

Եւ արդ դիւրին է մեզ մտածել զի ըզբաւարարութիւն զոր ընդ այսմ տէրութիւն Օսմանցւոց յապստամբութենէն որք եղեն ՚ի պարսկաստան որով ստուգապէս յայտնեցաւ նոցա տկարութիւն թշնամւոյն իւրեանց, բայց տակաւին զվրդովմունս ինչ ուն էին ՚ի կողմանէ Ահմէտ փաշային Բաղտատու, քանզի վասն ակամայութեան զոր ցուցեալ էր նա ՚ի պատերազմին ընդ Պարսից (զորօգուտ ինքեան համարէր եւ որով դիտէր նա հաստատուն պահել զինքն յիշխանութեան իւրում ՚ի Բաղտատ) զրպարտեցին զնա թշնամիք իւր յապարանս թագաւորին, ՚իբրու թէ փախչի նա յաշխատանաց վասն փառաց տէրն իւր, եւս թէ բոլորովիմբ ջանայ անձնիշխան մնալ եայլն:

Արդ տաճկայն հոգնեալ եւ խոնջեցեալ ՚ի պատերազմաց ամս բազումս, սկսան ամբոխել եւ պառնալ զփոփոխութիւն նախարարաց, երկիւղ նոցա ցուցանէր զՆատիրն խորտակիչ եւ սատակիչ զօրաց իւրեանց, եւ աւերիչ երկրին իւրեանց, եւ զնշան խաղաղութեան եւ ինչ ոչ տեսանէին ՚ի նա եւ նախարարք արքունի մեծաւ ջանօք ճնարս որոնէին առ ՚ի համոզել զժողովուրդն, եւ ասէին թէ՝ հաշտութիւն հաստատեալ է ընդ պարսից միջնորդութեամբ Ահմէտ փաշային, եւ զայս ասելով ՚ի բաց մերժել կամէին զկասկածս ժողովրդեան զորս ունէին զԱհմէտ փաշայէն, եւ յուսադրէին զժողովուրդն հանգստութեամբ յուսով, Եւ տէրութիւն օսմանցւոց այսինքն թագաւորն նախարարօքն հանդերձ բարւոք հմուտք էին ցնորքամտութեան Նատիրին ՚ի կողմանէ բանից շրթանց նորա, եւ մանաւանդ զի այլ ոչ ինչ կերպիւ դաշնադրութիւն կարէին հաստատել ընդ նմա, եթէ ոչ ձեռս ՚ի սուր արկանելով, Զանազան մտածմունս առնէին յաղագս գումարելոյ զօրս մեծամեծս ՚ի դաշտի՝ եւ յառաջադրէին անցուցանել զգունդս ինչ ՚ի թաթարացն ղրիմոյ ՚ի տրապզոն նաւուք ընդ ծովն սեաւ, նաեւ ժողովել զզօրս ՚ի մսրու ՚ի յԱղեքսանդրիայ, այսպէս եւ բազմատեսակ պատրաստութեամբ որք հնարաւոր էին նոցա ձեռնամուխ լինէին ընդդէմ Նատիրին որոյ բախտ տեսանէին յաղթահարել զանթիւ ապստամբեան որք յարեան ընդդէմ թագաւորութեան նորա:

Եւ յամսեան յուլիսի դառնայր Նատիրն յերկիրս օսմանցւոց, երեւելին այնպէս ցուցանէր թէ նպարակել կամէր զզօրս իւր յերկիրս թշնամեաց իւրոց, զոր ոչ կարէր առնել յերկրի իւրում եւ շրջակայ սահմանք տաճկաց երկրին երկար ժամանակօք ոտնակոխ լինելով ՚ի զօրաց աւերեալք էին եւ յայսմիկ ժամանակի տուգանքն զորս ժողովէր ՚ի ժողովրդենէ իւրմէ ոչ բաւէր հասարակ ծախուցն վասնորոյ պարտաւոր էր, ձեռս արկանել ՚ի գանձսն զորս եբեր ՚ի հնդստանայ բայց այնքան խնայելով զի բնաւին թեթեւութիւն ինչ ոչ լինէր ժողովրդեանն:

Եւ

Եւ մնայր ժամանակ ինչ 'ի մէջ Ղազբինու և Համատանայ երեսուն հազար զօրօք, որով նուաճէր նյերկիւղի պահէր զժողովուրդն իւր, նյատկապէս զբնակիչս ծովեզերայն կասպից որք առհասարակ յօժարէին յապստամբել. Եւ այսպիսի կարգադրութբ համակցորդութի ունէր ընդ զօրայն զօրս Եթող 'ի կողմն Խորասանայ, և ընդ զօրայն զօրս Թողեալ էր մերձ 'ի Քերքուդ. Եւ ինքն սպասէր ստ զօրայն զօրս առաքեալ էր 'ի վր Շիրազու և 'ի գաւառսն շուրջանակի գալ և միաբանիլ ինքեան:

Եւ պատերազմ ինչ յառնէր 'ի մէջ Պարսից և օսմանցւոց 'ի դարս, ապայ որովհետև անվճարև անվերջանալի էր պատերազմն այն յոչ ևայլ ինչ օգտէր բայց միայն յաճախէր զցասումն սրտից նոցա և խափանէր զհաշտութի որում նախարարք օսմանցւոց այնքան փափաքէին ևայսպէս Օսմանցիքն ոչ կարային արտաքսել զզօրս Պարսից 'ի տէրութէ իւրեանց և ոչ պարսիկքն կարող եղէն առնուլ զլորս, և զի Օսմանցիքն այնքան քաջութբ պաշտպանէին զքաղաքսն մինչ զի համայն ջանք և փորձառութիւնք թշնամւոյն իւրեանց ընդունայն եղէն:

Եւ զօրք Պարսից անսուսյին զձեռն առ սահմանօքն պարսկաստանի Եւ Թուրք զի Շահն համար էր 'ի պատրաստի պահել զինքն յաղագս ներքին խռովութեց երկրին իւրոյ 'նաև սպասել օսմանցւոց եթէ շարժեսցին 'ի վր իւր, զի 'ի ստր եղեալ էին նոքա սաստիկ ջանիւ տալ պատերազմ ընդ նմա 'ի հանդերձեալ ճակատ մարտին:

Ի Ներձի լըման այս ամին, սպարապետ մի Պարսից Ահմատ խան անուն փախնու 'ի կոստանդնուպօլիս յերեսաց բռնաւորին, Եւ տաճիկն ընկալան զնա երկմտութբ, գուցէ թէ կեղծեալ փախուստ նորա էր մին 'ի յօգուտ խնամակալութեանն զօրս որոգայթադիր թշնամին իւրեանց նատիր բազմիցս 'ի գործածեալէր ընդդէմ նոցա, բայց խանն բազում նշանս հաստատութեան ցուցանէր յաղագս ճշմարտութե իւրին 'ի պատճառս որոյ թողեալէր ինքն զտէր իւր, և հաւատային բանիցն իւր, և իբր և զայր հաւատարիմ ընդունէին զնա, և առ 'ի համոզել զնոսա ասէր ընդ նոսա խանն թէ եթէ լինիցի ձեզ անպամիս հանել զգունդս մեծամեծս զօրաց 'ի դաշտի, բոլորովին ցրուեսցէն պարսիկքն և զի արդէն իսկ զայրացուցեալ էն նոքա, և զայսպիսի կարծիս իւր հաստատէր նա ցուցանելով զատելութի բազմաց նախարարաց և զինուորայն բանակին առ Շահն

Եւ արդ յիշումն յնւ սոսուն որում դիպեցան լեզկիքն 'ի սկզբան ամին անցելոյ' բորբոքէր զփափագ նոցա տեսանել զխոնարհումն ամբարիշտ թշնամւոյն իւրեանց, վն այնորիկ առաքէին երկուս դեսպանս 'ի կոստանդնուպօլիս և 'ի ձեռն նոցա խոստանային օգնական լինիլ Սուլթանին զօրօք եթէ հաճեսցի նա, տալ նոցա վարձս ինչ զրամոյ, նյայտնէին Սուլթանին թէ որքան արիաբար ընդ դէմ կացեալ էին թշնամւոյն, 'ի պահպանութի ազատականութե իւրեանց, և տային 'ի նմին խորհուրդ հաստատել կային յաղագս պաշտպանութե իւրեանց ընդ դէմ զարհուրելի յափշտակչին, Եւ արդ, 'ի փաղնջուց ժամանակաց հետէ ոչ էր լեալ սովորութի լեզկեացն մատնել 'ի ծառայութին Թագաւորի ինչ, և ոչ բազմիցս ձգտիլ 'ի հեռաւոր սեղի անդր քան զՇիրվան և վ ասոտան յաղագս պատերազմի, բայց ներկայ կացութի իւրեանց պարտաւոր էր զնոսա նուիրել զծառայութիս իւրեանց խնդ քարին որպէս առ ի սւրդն առնէն Փրանգից, Եւ Սուլթանն, ընկալեալ դեսպանս զայսոսիկ ընտիր պատւօք, և ստուգապէս խոստմունս առնէր նոցա յաղագս պաշտպանելոյ զնոսա բայցոչ երբէք երևեցաւ զի, Օսմանցիքն հաճեալ էին ընդունիլ զլեզկիքն 'ի յօգնութի զօրաց իւրեանց:

Յամի

Յամի 1745: յայսմ ամի պատրաստութիւնք մեծամեծք և հզօր սկսան լինիլ 'ի յօսմանցիսն: այնքան՝ մինչզի ոչ երբէք երևիլ այսպիսի հզօր նկազմախումն զօրաց 'ի դաշտի ընդդէմ պարսից, և զօրք բազումք իջանէին 'ի Սիրվիայու, 'ի Պօսնայու և 'ի Յուռումէլու, յիւրաքանչիւր գաւառէ ըստ չափու, և տեղի միաբանելոյ այսքան բազմախումբ զօրացս էր 'ի Ղարս, և անդ պատրաստ լինիլ վ̄ չուելոյ 'ի սկզբան ամբէլի, և այսպէս սաստիկն առնէին ջանիւք աշխատէին զերծանիլ 'ի կասկածանաց թշնամւոյն իւրեանց՝ յորմէ անհնարին էր նոցա զերծանիլ մնալով 'ի մէջ պարսպաց իւրեանց, քանզի ձախորդութիւնք պատերազմին հանապազ եղեալ էին 'ի վերայ նոցա և առնելով ընդ երկար ժամանակս զարհուրեցուցանէր զաչսահակոն զօրաց նոցա, նաև ոչ զօրք Եւրոպիոյ այսինքն Ռուռումէլու բնաւ ինչ յօժարէին անցանել ընդ առխայ, քանզի խաւթայ հասարակօրէն զերեզման լեալ էր նոցա:

Եւ արդ խափանումն ապստամբութեանցն արքեղէն 'ի Շիրվան, 'ի Շիրազ, և 'ի Յաստարաբատ, կէր պիտի խոնարհեցուցանէր զժողովուրդն պարսից, թէպէտև մրմռջէին 'ի ներքոյ բռնաւորական տէրութեան, իսկ ոչ երևէր թէ համարձակէր նոցա դնել զինքեանս ևնսալ 'ի ներքոյ այնպիսի հնազանդութեան, և արդ ապահովանայր Նատիրն 'ի կասկածանաց իւրոց 'ի կողմանէ ժողովրդեան և թողլոյր զորդին իւր Նէսրալի միրզայն երեսուն հազար զօրօք 'ի շրջակայս պարսկաստանի, և խաղայր զօրօք իւրովք՝ 'ի սկզբան ատարւոյս դէպ 'ի Ատրպատական, իւրդ իւրագոյն համարէր նպարել զզօրս իւր առանց վճռաց, վասն որոյ և առաձինքն կարողութիւն առանձին զօրաժողով լինելոյ և կազմելոյ զբանակս իւրեանց, և ապահովութիւն լինէր այնուհետև քաղաքաց զորս կարծէին պաշարեալ Շահն:

Եւ արդ եթէ Օսմանցիքն կամէին զառաջնակ պատերազմ ինչ առնել Նատիրին, և վճարել զմարտն շարժմունք Նատիրն պարզապէս ցուցանէր զի բոլորովին ջանիւք իւրեր 'ի մի տեղ նուազել 'ի վաղճան ածել զպատերազմն, քանզի ոչ ինչ կերպիւ ջանայ նա խափանել զհամախմբութիւն զօրացն նոցա, և յամենայն մայիսի առաջէր զհրամայն որդւոյ իւրում չուել զօրօք իւրովք եդնել դէպ 'ի յերևան, և անդ 'ի վերջնումն յուլիսի ամսոյն երկոքին գունդք պարսից զօրացն հասանէին 'ի շրջակայս երևանոյ:

Այլ երկուց հոմբռաւ պատերազմին ոչ երբէք դադարեցաւ, և կասկած մարտին հանապազ կայր, թէպէտև հարուածս ինչ էառուն միմեանց ուրեք ուրեք յայսմ միջոցի բայց ոչ արժանի յիշատակի պատմութեանցս, և երկարութիւն դիպուածոյ ժամանակին կարողացուցանէ ըզդաշնակիցն կազմել զբանակս զօրաց իւրոց և զգուշանալ զօրաժողով լինիլ, և սարասքար Մահամետ փաշայն իշխէր 'ի վր հարիւր հազար զօրաց, և իբրև լուաւ նա զշարժումն պարսից զօրաց չուեաց 'ի յարզրումոյ եգնաց 'ի Ղարս և անդ միաբանեցաւ ընդ Աբդլայ փաշայ քէօփրուլուին, և զօրքն որք էին ընդ իշխանութեամբ Աբդլայ փաշային էին իբրև երեսուն հազարք, և զամարումն այսուցիկ զօրաց, ամրացեալք բազում թնդանօթիւք, վստահացուցանէր զառաջինն 'ի կարծիս ինչ, թէ ահա այժմ իւրեանց կարգն էր յաղթանակել թշնամւոյ միոյ որ այնքան երկար ամանակաւ առէարան զարհուրանաց եղեալ էր նոցա, և արդ Մահամետ փաշայն, ուղղէր զլն թայս իւր դէպ 'ի յերևան, և 'ի ճանապարհի իւրում հարկանէր և վարէր բազում գունդս պարսից որք չորս, կամ հինգ հազարօք պատնէշս արկեալ 'ի սահմանս ... ճանապարհացն:

Եւ

Եւ Նատիրն բանակեալ էր յիսուն հազար արամբք իբրև երեսուն մղոնաւ հեռի 'ի յերևանայ եարդի իւր Նէօրալի միրզայն և երեսուն հազար արամբք, այնքան 'ի բացեալ բանակ, հարեալ սպասէր, Եւ յառաջ ընթաց զօրքն Նէօրալի միրզայնին հանդիպէր նախ ընթաց զօրացն Օսմանցւոց և մարտնչէին ընդ միմեանս, և պարսիքն իսկոյն յետս փախնուին դէպ 'ի մեծ բանակն որում իշխէր Շահն անձամբ անձին։ Եւ շարժէր Նադիրն 'ի տեղւոյն և առաքէր զգունդ մի ընդ դէմ նախընթաց զօրացն Օսմանցւոց 'ի յետուստ, որև քաջարիւք ըստ դիտաւորութեան իւրում, և հասանէր Նադիրն 'իբրև վեց մղոնաւ հեռի 'ի բանակէ թշնամւոյն, և հարկանէր զօրան իւր 'ի վր բարձր գետնի միոյ գնդին մերձ Աբդլայ Քէօփրիւլօղլուն, Եւ մեծ բանակն Օսմանեան գնդին որք ընդ ձեռամբ Մահմետ փաշային էր ճակատ կազմեալ կայր կարի յարմարաբար կարգութբ, ամրացեալ պատնիշօք և բազմաթիւ թնդանօթիւք, և հրացանիւք վառեալ ընդ դէմ Պարսից։

Եւ Մահմետ փաշայն քանիցս անգամ յառաջ խաղայր հանդիպիլ Շահին անձամբ անձին այլ պատերազմ ընդ նմա, Եւ յերորդ աւուրն օգոստոսի հանէր նա զգունդ մի մեծ 'ի հեծելոց զօրաց թնդանօթիւք ինչ 'ի հանդէպ մարտին, և յառաջ խաղային ոտքա ընդ դէմ Պարսից զօրացն և փաշայն և 'ի պատրաստի կայր մնացորդ զօրօքն համայն, յօգնել գնդին այսորիկ Եւ Նատիրն և արձակէր զգունդ մի նուազ քան զտաճկացն ընդ յառաջ նոցա, և հրամայէր նոցա զի 'ի դատարկելն հրացանս իւրեանց իսկոյն ձեռս 'ի սուր արկեալ յարձակեսցին 'ի նոյն պատերազմին, Եւ տևէր մարտն յառաւօտէ մինչև ցկէսաւր յերկոցունց կողմանց անդադարելի մնալով և յայնժամ էր Շահն հզօր և սաստիկ գնդաւ միով և մղեալ զինքն 'ի ճակատ մարտին, և սաստկանայր պատերազմն յոյժ յոյժ և համայն գնդիք յերկոցունց կողմանցն 'ի ճակատ մղեալ սրամտութբ մեծաւ մարտնչէին՝ և տաճիկքն սաստիկ յամառամբ զդէմ կալեալ հակառակէին պարսից, իսկ 'ի յերեկոյին ամփոփեալ յետս դառնային 'ի բանակ իւրեանց, կորուսեալ արս իբրև զքսան հազարս յաւուրն այնմիկ, որք ըստ մեծի մասին հետևակքէին բաց 'ի բազում կալանաւորաց, և պնդեալ պարսիկքն զհետ նոցա մինչև ցպատնէշ նոցա, և ապա յետս դառնային 'ի բանակ իւրեանց աւգտաւիկ (?) ինչ զկնի մտանելոյ արեգական,

Եւ արդ զինչ արդեօք պարտէ այսպիսի մեծի կորուստեանն պատճառել, եթէ ոչ որոտաքեկ (?) պանել զտաճիկսն, որք առանց պարտաւոր լինէին ամրափակել 'ի մէջ պատնիշաց, և Շահն զգալով զերկիւղ նոցա, դիպուկ ժամ գտանէր հատանել ըզհաղորդութի բանակի նոցա ընդ զաւառօրովն (?) գրիկեր զնա յանձն օգնութեան, ուստի պարտաւորէին նոքա 'ի հարկաւորութէ անտի կրկին անագամեղանէլ 'ի պատնիշէ իւրեանց ոչ այնքան զխորհրդութբ պատերազմելոյ, որքան յուսահատական կերպիւ 'ի լոյս տալոյ 'ի յութն երորդն օգոստոսի յառաջ խաղային տաճիկքն մեծամեծ թնդանօթիւք և հարկանէին զթշնամին հրացանիւք ցասմամբ մեծաւ և յարձակէին 'ի վերայ նոցա և պարսիկն դիմակայեալ ժուժէին հարուածոյն, և 'ի ձեռն թնդանօթից իւրեանց յետս դարձուցանէին զնոյն կրկին 'ի պատնէշս իւրեանց և շրջապատէին զբոլոր բանակ նոյա, և յինն երորդ աւուրն օգոստոսի իբրև գիշեր լինէր թողեալ զհամայն աղխս բանակին և յինն արտաքս 'ի պատնիշաց իւրեանց ևդիմեցին դէպ 'ի Կարս։

Եւ 'ի յիմանալ Նատրին զշարժումն նոցա իսկոյն հրամայէր գնդի միոյ մեծի հետամուտ լինել նոցա, և զշփոթումն արկանէին 'ի նոսա, և դղրդումն մեծ լինէր 'ի մէջ բանակին նոցա, և 'ի միաւումաւուրն մինչ նոքա հետամուտ լինէին տաճկաց իբրև տասն և հինգ մղոնաւ հեռի 'ի յայնկոյս գե-

տոյն

տոյն արփիաշխայի, յետ դառնային տաճիկքն և անդէր տեսանել զ սաստկութիւն յաւ սահմանականն պատերազմին, յորում սերասքեարն մահուամբ փոշւոյ յերկիր անկանէր, և պաշտօնիկքն յետ դառնային յաղթանակօք 'ի բանակ իւրեանց հինգ հազար կոտորեալ սպօք եւ գլխովն սերասքեարին և Օսմանցիքն խառնակեալքն զ կորուստ իւրեանց յետ և յառաջ յաղթին պատերազմի լինել իբրև զ քսան և ութն հազար, հանդերձ երկք փաշայիւք եւս 'ի սարասքարէն, 'ի մէջ որոց էր Լեգու- լայ քեօփրիւլիւեան որդին առին նախնի սարասքարին մեծի ջէօփիրլուին, որ անկաւ 'ի պատերազմին ընդ յաղթող Նադիրին ինն ամօք յառաջ:

Եւ զարմանամք, զի՛ Նադիրն յայսմիկ պատերազմի յորժ զգուշանայր ոչ թուլ տալոյ զօրաց իւրոց մտանել 'ի բանակ Օսմանցւոց զկնի փախստեան նոցա, մինչև յիսակս ատուգանայր թէ՛ փախուստ նոցա ոչ էր պատերազմութիւն 'ի դարան անել զօրս իւր, քան անձինք ութն հազարք անկանէին 'ի Պարսից անտի յայսմիկ պատերազմի զօրագլխօք ամամբք, և երեւելւոք երկու յերե- կիր անկանէին 'ի նոցա Նադիրին յառաջնում նուագի պատերազմին:

Եւ Թօփալ զօրայն տաճկաց 'ի Չարօ ժամանէին առանց կահուցեալ թնդանօթիցն յորժ աղմկեալ ասանց կառավարչի երեւանակ նոցա զհագուցեալ անկանէր 'ի ձեռս թշնամեաց իւրեանց, քայց ոչ այնքան երկնչէին յաղագս այսորիկ դիպուածոց որքան 'ի յառաջին պատերազմունս, զանզի գիտէին թէ որքան հեռանայր Նադիրն 'ի պարսկաստանեայ եւ յառաջ խաղայր ընդ երկիրս իւրեանց այնքան առաւել վշտանայր 'ի յապստամբութէ ժողովրդեան իւրոյ վասնորոյ նախարարք որքանի զօրեալ քաջալերէին զինչեանս, և խոստանայր 'ի մտի դնէին կրկին զօ- րութիւն առաջել յաղագս նորոգութե պատերազմին, և յամենայն զեկուցմերի յայտնէին զ- կամս իւրեանց առ 'ի հաստատել 'ի միտս ժողովրդեան զատուցիկ հարկաւորութիւն պատերազմին ընդ դէմ Նադիրին, և հաստատուն պահել զայն մինչև Նադիրն յօժարեսցի չափաւոր դաշնա- դրութեամբ, և մի լիցի պակասութի փառաց իւրեանց, Եւ առ 'ի կատար հասուցանել զդիտաւոր- ութիւն իւրեանց հրամանաւացեր վէզիրն, զի համայն զօրք Օսմանցւոց որք 'ի յանտառոյ կէին պատրաստ լինիցին 'ի չուել անտի և միաբանել ընդ զօրսն որք կէին 'ի Չարօ

Որ հաշտութիւն առնէ Նատիրն ընդ Օսմանցւոց. Եւ զի առեր Օսմանցիքն առաջին առ Նատիրն, եւ ո՛չ պատահեցան խաղաղութեք 'ի Խորասան, եւ ո՛չ քաղաքարութեք վարեցաւ նորին ընդ բնակչացն Սպահանայ, Եզրումնայ, Եւ ո՛չի լինէր ամբոխութեն թամարազ միրզային եւ Ալլի Ղուլի խանին:

Արդ պարզապէս տեսանելով Նատիրին զմերձեցումն վտանգին որ լինելոց էր 'ի Ներքին խռովութեան երկրին իւրոյ բարւոք համարէր վաղվաղակի 'ի դաշին մտանել ընդ տաճկաց, եւ վ̃ն այսորիկ առաքէր զԱլլիբէկն վաթսուն արամբք իբրև դեսպան առ խոնդքարն, 'ի տասն եօթներորդն յունվարի յանդիման լինէր Ալլիբէկն Սուլթանին որ ընկալաւ զնա բազում մեծարանօք, Եւ զկնի աւէր մնա վէզիրին, թէ խոկալէս հաւատոյ զորս առեալ քեզ Եւ թեպէտև ձախորդութե հանդիպեցան զէնք մեր 'ի պատերազմի ընդ Պարսից, այլ սակայն եթէ հրամարեսցի Շահն 'ի չափաւոր դաշնադրութեց, նխստացի 'ի վերայ դաշանց որք են վտանգաւոր փառացն Սուլթանին, անհնարին է մեզ ընդունիլ զհաշտութիւն, Եւ արդ թեպէտև Դեսպանն ոչ ունէր կատարելապէս իշխանութի ձեռնամուխ լինելոյ հաստատութե դաշանցն, բայց սակայն 'ի հրամանագիրն Նատիրին զոր ունէր նա պարզապէս երեւէր զի մտօք Նատիրին ուղղէր վասն հաշտութե, Ուստի պատասխանի առնէր նմա Սուլթանն, թէ եւ յօժարեալ բան անմի խաղաղութեք կալլընդ Շահին, եւ հաշտութի հաստատել ընդ նմա յօրում ժամու որ ինչ կամեսցի եւ վաղվաղակի հրամայեցին նախարարաց իւրոց որք էին 'ի սահմանս Պարսից, հանդերձ Ալլի փաշայ սալաւաթյարին մերով որք 'ի դուռն, ընտրեսցեն ընդ Շահին զուեզի ինչ պատիանաւոր յաղագս խօսակցութեց 'ի վ̃ը դաշանցն։

Յամի 1746. Եւ 'ի լրանալ ամսեանն փետրվարի երեք նախարարք իսկապէս առաքեցան 'ի Սուլթանէն, Եւ յետ աւուրց ինչ Դեսպանն Պարսից ներկայանէր 'ի կոստանդնուպօլսոյ, Եւ առ 'ի ներքօրծել զբանս (զորս խօսեցան նախարարք Օսմանցւոց) 'ի ձեռս Պարսից արքային 'ի կողմանէ կերպի դաշանցն հաշտութե, հրամանս առաքէին յաղագս կրկին պատրաստութեց պատերազմի զի եթէ Նատիրն բան հաստատ բարւոյ իւրոց յամառեսցի 'ի կամս իւր, եւ հրաժարեսցի յուղիղ հաշտութե, եւ խորհեսցի 'ի զբօսանս դաշնադրութեց պահել զինքեանս, մինչև դիպուկ ժամանակ գտցէ վարելոյ զպատերազմն առաւել սաստկութբ քան զառաջին պատրաստ լիցի տալ նմա պատերազմ վաղվաղակի:

Եւ յայտ իսկ է զի Նատիրն ոչ ունէր զկատարութի հաշտութե ընդ տաճկաց, բայց յաղագս պաշտպանութե անձին իւրոյ պարտաւորիւր առնել զայն, թէև նախ քան զմտանելն 'ի պատերազմ ընդ տաճկաց 'ի վերջին անգամ յայտնապէս խօսեցեալ էր յականջս զօրաց իւրոց քաղցրութբ թէ 'ի կանդնեցուցանելն զդրօշակն իմ 'ի վ̃ը պարսպացն կոստանդնուպօլսոյ մեծամեծ ընծայիւք վարձատրեսցից զձեզ. Եւ խորհուրդս այս ոչ էր միանգամայն անհնարին 'ի նմանէ, եթէ նուիրել կարիցէր զզգածութիւն փառամոլութե, եւ այնու ազատիցէր զժողովուրդն իւր 'ի թշուառութէ յոլով տառապանաց, հանապազ:

Եւ զարմանք իմն է զի ՚ի համայն պատերազմունս Նատիրին ընդ տաճկաց, Եւրոպիոյ տաճ-իկքն այսոքիկ ունին եղեալ Թուրքն, տկարասրտեալ քաջութեան ՚ի մտանելն ՚ի յասիայ Եւ բայց յայտնանէ զգեստ Նոցա էն կարի երկայն քան զգեստս Պարսից և ՚ի դժուարութի անէր զնս ՚ի մէջ պատերազմին։ Այդ տակայն տաճկաց լին փառք համարի ՚ի մէջ մարդկային ազանց հետևել բարուց եւ հայրական նախահարց իւրեանց, և մանաւանդ, զի Երկնչին զուցէ փոխարկութի ձևոց հանդերձից ձախորդութի լիցի, բախտից, քանզի տեսանեմք զի տաճիկքն տակաւին այնու կան ՚ի վճ ձևոյն սոյն իսկ զինուորական զգեստուց զոր ՚ի նախնեաց ունէին Եւրոպիոյ, և աւելորդապաշտութիւքն ոչ այնքան ընդարձակին կարեն ՚ի յեւրոպիոյ վասնորոյ ևանհեթեթ սովորութիւքն բռնեալ ելոյ զինս որոն անդ պէս զգեստիւք փոխարկեցան յիւրաքանչիւր երկրի որք յառաջացեալք եղեն գիտութեէ իւրեանց և ուսմանց զինուորական հնարից, ուստի և Նատիրն ըստ ամենից մասանց գերազոյն կարէր լինել ՚ի մէջ տաճկաց, եթէ ոչ այնքան սաստիկ մոլութեամբ հետևեցեալ էր յաղթութեէ, ոչ թագաւորք ՚ի հասարակի առնէին, բայց նախատեղանոցն ան տանցէ զայնպիսին որք ոչ կարեն տանել կամզակել զինքեանս։

Յետոյ ՚ի վերջնում մարտի էլ Դևեպանն Թարվից Ալլիբեկ ՚ի հրամանդնումպալուայ զինի մուստաֆայ աֆանդոյն, եգիպտուրութի Դևեպանիս էր ծանուցանել ան իւրում զբարի կամս Սուլթանին յաղագս խաղաղութե, Եւ յաւուրս յայտնի նորա օգնութիս զորաց առաքէին Օսմանցիքն ընդ ՚ի ղարս եդեալ ՚յարզրում, ՚ի փառաւորութի դաշանցն զորս կռւելոց էին ընդ Նատիրին, Եւ յայտնի չամ ղէ Նոցա յայտնապէս երևէր զի տաճիկքն զամ դժուարութեամբ յանձն առեալ էին ՚ի պահել բարեաւութիւ զորաց ՚ի դաշտի ընդ դէմ Նատիրին, քան թէ մասամբ ուք զտեղի տալոյ Նմա խոստանալ ՚ի վեր ինքեանց ՚ի կողմանէ չափազանցութե դաշանց, Եւ մա Նոցա էր կարծանր վասն ունելոյ այնքան բազութիւ զորաց ՚ի սահմանս արևելեան մասին նութութե իւրեանց, ուստի յամ ուրէք Երկիրն աւերակ և ամայի լինէր, այլ առ՚այն կարի հարկաւոր էր Նոցա առնել զայն չորքան ժամանակս Նատիրն ունէր այնպիսի ահագին զօրս ընդ ձեռամբ իւրով։

